ՊՐՈՖ. Դ-Ր
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

ՓՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՃՈՒՂՆԵՐ


27/IX 1940.

891.99-192
Հ-13

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1981 Թ.



ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԵՐ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՓՈՔՐ ՅԵՐԳԵՐ ԻՐԵՆՑ ՓՈՓՈԽԱԿՆԵՐՈՎ

3754
A III 2048

Խմբագրեց
ՊՐՈՖ. Դ-Ր
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ
ՄԱՍՆԱԿԻ ԱՇԽԱՏԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ԿՈՄԻՏԱՍԻ



Հայպետհրատ
1940

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՅԵՎ

ՍՈՍՔԱԲԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԻԿՆԵՐ

1. ԽԱՂ ՈՒ ՏԱՂ

Ժողովրդական յերգը, հատկապես սիրո յերգը, դրեթե ամեն ազգի մեջ ունի մի գլխավոր հիմնական տիպ, վորից իբրև մի սաղմից զարդացել և ժողովրդական ընդարձակ յերգը:

Սիրո յերգի այս հիմնական տիպն և այն փոքրիկ տնսակը, վորի բուն ձևն և քառատողը դլխավորապես, և յերկրորդաբար յեռատողը և նույն իսկ յերկատողը: Յերկու, յերեք կամ չորս տողը միայն կազմում են մի ամբողջ բանաստեղծություն: Դրանից ավելի փոքր յերգ յերևակայել կարելի չե հարկավ: Դա ժողովրդական յերգի տարերքն է: Ցնվ ժողովուրդը, կարելի յե ասել, ամեն տեղ,— Իտալիայում լինի թե Գերմանիայում, Հունգարիայի թե հայերի մեջ, մեր դրացի Թուրքերի թե ասորիների և նույնիսկ հեռավոր Աբեսինիայում՝ հնդիկների ու չինացիների մեջ,— մեծ սիրով բանեցնում է այս փոքրիկ յերգերը նույն և նման մոտիվներով: Մի քանի պարզ բառեր, յերկու կամ յերեք, շատ շատ՝ չորս խոսք բավական են ժողովրդի մարդուն իր սրտի զգացմունքը զեղեցու և սիրուիվելու համար: Այս շատ հասկանալի յե: Վորքան արտադրական հարաբերությունները հետամնաց են, կուլտուրան ցածր է և մարդկային միտքը «պարզ է», չդիտե վերլուծել իր զգացումները, մարդ վոչ շատ բան ունի ասելու, վոչ էլ շատ պահանջ: Զգացմունքի մի խաղ, հոդևական մի շարժում, կյանքի մի կամ յերկու դիծ՝ ըմբռնած և խոսքով ու յեղանակով արտահայտած՝ հերիք են նրան:

Մեր այս փոքրիկ յերգերը, սակայն, դրեթե բոլորն ունին դարձ կամ կրկնակ (հանդերձ), այսինքն՝ բառեր ու խոսքեր, յերբեմն և տողեր ու յերկատողեր և նույնիսկ քառատողեր, վորոնց դառնում են, ժողովրդական բառով, «զարձ են գալիս», կամ վորոնք կրկնվում են ամեն տողի սկզբում կամ վերջում, կամ յերկու տողից հետո և այլն. ինչպես են՝ «Ջան ջյուլում ջան, ջան. ջան ծաղիկ ջան, ջան». «Երնեկ են ոգեր, վոր կ'ելնենք սարեր», «Ֆիխի լուբիկ, լուբիկ, լուբիկ, Գարնան քարեր վարդ արեր, լուբիկ». «Աբի՛, յա՛ր, արի՛, խռով մի՛ կենա. Աստվորիս բան մեզի չի մնա»: Հաճախ կրկնակները լոկ ձայնարկություններ են. ինչպես են՝ ա՛խ. վա՛յ. կամ վա՛յ լե, լե, լե՛, վայ լո, լո՛, լո, լո՛. կամ տողի վերջի մեկ յերկու բառն են կրկնվում և այլն:

Կրկնակները պարզում են բանաստեղծության մխոցը, բայց անհրաժեշտ են դիմավորական յերաժշտական տեսակետից: Վորովհետև վոտանավորը շատ կարճ է, թույլ չի տալիս յերկու անհրաժեշտ յերաժշտական նախադասություն կազմելու, ուստի և ավելանում են կրկնակները, վորոնց մեջ յեղանակը փոխվում է և վարիացիաներ կազմելով՝ առաջ բերում յերաժշտական յերկրորդ, վոր է՝ բացատրական նախադասությունը:

Կրկնակներով են առհորաբար վորոշվում և կոչվում յեղանակները. որինակ՝ Ջան դյուրում. Ջան իման Ջան. դհէհ ղընդ ղընդ. Հայ նարե. դյուրում Ջան. իմ չինարի յարը. ախ մարալ Ջան և այլն: Իսկ բուն յերգը կամ քառատողը, ինչպես և յերկատողն ու յեռատողը, չունի և չի ել կարող ունենալ առանձին անուն: Դա ընդհանուր անունով կոչվում է խաղ: Այս բառը, սակայն, ավելի ընդարձակ դործածություն ունի. նշանակում է աշխարհիկ յերգ, լինի աշուղական*) թե ժողովրդական, նկատմամբ հին սիրու և ուրախության և այլ դրական ու կրոնական յերգերի, վոր կոչվում են տաղ: Այս ընդարձակ իմաստով դործածված ենք դտնում «խաղ» բառը հենց այս ժողովրդական մանր յերգերի մեջ.

Աչուղի պես խաղ ասա,
Բլբուլի պես տաղ ասա.
Վորքան վոր դուխ՝ արժեմ,
Իմ նանի ալիղ վեսա:

Վոմը դանի բուլիաբին,
Վոմը դանի քամանչին,
Վոմն ասի խաղ, վոմը տաղ,—
Վո՞վ կըմնա տաղ:

Բուսել եմ բաղի մեջին,
Շամամի Քաղի մեջին.
Գիշեր ցերեկ մխալաք
Դու յես իմ խաղի մեջին:

Ղուշ մի դառնա Քևավոր,
Դու խաղ կանչի ճևավոր.
(Վաբխանա՝ ճննավոր).
Ցաբաբ կլնի են սըր,
Վոր դա՞ մեր աուն Քաղավոր:

Խաղ ասեմ խաղի դլխին,
Իմ հերանց բաղի դլխին.
Գաչալն իրեն դեղ ի՛անի,
Հողս ասեմ կաղի դլխին:

Վաբդ եմ քաղել մաղերով,
Վեր եմ դրել չաղերով,
Տեանեմ՝ յարս դալիս ե,
Առաջ դնամ խաղերով:
(Վաբխանա՝ տաղերով):

---

*) Աչուղներն իրենց յերգերը «խաղ» են կոչում: Այսպես, որինակ, Սայաթ-Նովայի Իգ. յերգի Ծանոթության մեջ. «Քեռս մըղըջում վուրքի Աբուքինս պատուց ինչըի յարսուն տարին դլուխ դրի ամենուն խաղին. ամա Սուրբ Կարապետի կարողությենով սովրեցա քամանչին»... Նույնի ԽԲ. «Խաղ կանչինք հանդուղ». ԽԳ. (վերջի տան մեջ) «Բարլիքիավուր խաղն». ԼԲ... վուբանդ սոլրաք խաղ ե ըլում... վուր տիղ սիրով տաղ ե ըլում». ԼԴ. «Խաղերումեն բեզար ել իմ». ԼԶ. «Մենլիանները խաղն դուն ես, վանքերումն տաղն դուն ես»:

Բայց պիտի նկատել և հետևյալը: Արդարև այդ վոջը յերգերի մեջ նույն այդ յերգերի համար դործածվում է հաճախ խաղ (բարբառային ձևով՝ նաև հաղ) բառը, բայց դրանց մեջ, ինչպես վերջին քառյակից կըրելի յե նմանալ, «խաղ» և «տաղ» բառերը վարիանտների մեջ փոխանակում են իրար: Այսպես և հետևյալների մեջ:

Ման կը դամ բաղի մէջին,
Վառներս չաղի մէջին.
Թող աղբեր ինձ դովեն
Իրանց լավ հաղի մէջին:

Այս քառյակի վերջին տողի մի վարիանտն է՝

Սբառչարժ տաղի մէջին:

Կան քառյակներ էլ, վորոնց մեջ խաղ ու տաղ յերկուսն էլ դործածվում են իբրև համանիշներ:

Հաղ կ'ասեմ հաղի դէխին,
Ջորնիվերս բաղի դէխին.
Ճես են հաղը վաղ եմ ասել,
Գիշեր ցերեկ տաղ եմ ասել:

Բլբուլ ես, մի խաղ կանչի,
Մարալի պես տաղ կանչի.
Նազանի յար, քեզ մեռնեմ,
Թող աշխարքը ամանչի:

Կան քառյակներ էլ, վորոնց համար «խաղ» բառը չի դործածվում, այլ միայն «տաղ»:

Ինձոր ես ծառի վրա,
Մաղիկ ես սարի վրա.
Անուշ տաղ ասող բլբուլ,
Կայնել ես քարի վրա:

Այ բալա Շաղեր,
Կ'առնեմ քեզ աղեր,
Կանչեմ կը տաղեր.
Գյուլ Շաղեր ջան:

Ցերկինքն ամպել է, գետին չաղերով,
Ճես քեզ սիրել եմ անուշ տաղերով:

Կայնել ես բաղը,
Ցերդում ես տաղը:

«Տաղ» բառի հին դործածությունը հայտնի յե: Բայց «խաղ» բառն էլ աշխարհիկ յերգի նշանակությամբ գտնում ենք հենց մեր դրականության սկիզբներում: Շահապիվանի ժողովի*) ԺԵ· կանոնը մենակներին համար իբրև արդելք դնում է. «... Մի՛ չարակամ, մի՛ ամբարտաւան, մի՛ ի խաղս երգոց, մի յերգս լկտեաց...»:— «Խաղք երգոց» կապակցության մեջ համանիշ բառերից յերկրորդը դրված է սեռական հոլովով, ինչպես սովորական է մեր հին մատենագրության մեջ:

«Խաղ» բառը միաժամանակ նշանակում է և պար: Այս ցույց է տալիս, վոր «խաղ» կամ «խաղք երգոց» սկզբնապես կոչվել են պարերգերը, իսկապես այն փոքրիկ յերգերը, վորոնց մասին է խոսքս, վորովհետև քառատողերն ու յեռատողերը, մանավանդ յերկատողերը, դրեթե բոլորը սկզբնա-

*) Կանոնագիրք Հայոց, Թիֆլիս, 1913, յերես 76· «Կանոնք Շահապիվանի ժողովոյն. ԺԵ·»:

պես պարերգ են: Այժմ ևս, սակավ բացառությամբ, երբև պարերգ բա-նում են միայն այս փոքրիկ յերգերը· այնպես վոր յեթե խաղ բառն իր սկզբնական նշանակությամբ դործածելու լինեյինք, այս բառով միայն կարելի յեր կոչել ժողովրդական յերգի այս տարրական տեսակը: Բայց վորովհետև բառի իմաստն ընդարձակված է, աշուղական յերգն ևս խաղ է կոչվում, ուստի յերգերի այս փոքրիկ տեսակը կոչում ենք ժողովրդա-կան խաղեր: Սակայն այս կոչումն ևս ճիշտ չէ, վորովհետև դա իսկապես հավասար է ժողովրդական յերգ բառին: Ինչպես եյլ լինի, ամենից հար-մար այս «խաղ», ավելի ևս «խաղիկ» անունն ենք դոնում, մանավանդ վոր արևելյան հայերը գրեթե ուրիշ տեսակի ժողովրդական խաղեր չեն ճանաչում, բացի այս փոքրիկ յերգերից, և վոր գլխավորն է՝ «խաղ» բառի սկզբնա-կան նշանակությունն է այդ:

Ի՞նչ են մեր ժողովրդական խաղիկները, վորոնք իրենց յեղանակների համար հաճախ սիրված են, իսկ իրենց բառերի համար՝ բանաստեղծական տեսակետից՝ շատ անդամ ծաղրված և անմտություն են հայտարված, կամ թե, ընդհակառակն, անմտություններն ևս մեծ դեղեցկություններ են կարծված, մի միայն նրա համար, վոր ժողովրդական անունն են կրում:

2· ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԳԵՂԶՈՒԿ ԽԱՂԱՍԱՑՆԵՐ

Այս ժողովածուի մեջ տպագրված հազարավոր փոքրիկ յերգերը զերա-զանցորեն գյուղական բանաստեղծություններ են, սիրու յերգեր, մեր գյուղացության արտադրությունը մինչև 1914 թվականը:

Մինչդեռ մեր հին Գուսանական յերգերի, հայրենների մեջ գյուղի հիշատակություն անդամ չկա,— վորովհետև դրանք այլ դասերի, ազնվա-կանության ու քաղաքացության, ստեղծագործություն են,— այս խաղիկ-ների մեջ, ընդհակառակն, հաճախ հանդես է գալիս գյուղը:

Ահա մի յերգ, վորի հորինողը հիշում է իրենց գյուղը·

Աղջիկ, ես ըզուն սբի,
Մեր գեղի դեղուն սբի···

Ուրիշ յերգիչներ նկարագրում են իրենց գյուղը, կամ պատմում են գյուղ գնալու մասին:

Գեղին վերեվ ծառ սալորի···
Գեղին վերեվ հերիկը-մերիկը···
Ամառ ելեր կ'երթա է գեղ···
Երթամ գառի գեղ···

Եկանք, հասանք գիմաց գեղին···

Դիլբար ելավ, գնաց ողին,
Գնաց, կայնավ վերեվ գեղին···

Ահա և մի յերգ, վորով ծաղրում է աղջիկն իրենց գյուղի տղաներին·

Ծաղիկն եր ծաղիկ գեղին,
Շատ ախմախ կա մեր գեղին·

Մենակ բարեկրոյ գյաղեն
Ելի, կայնե վեր թեղին·

Կան խաղեր, վորոնց մեջ յերգվում է միասին ծաղիկ քաղելն ու փնջելը և խաղ ասելով գյուղը տանելը։

Ման գալով տունն լավ տեղ՝ — փնջեք կապենք միասին,
Գաղնենք ծաղիկ միասեղ։ — Խաղ ասելով տանենք գեղ։

Մի ուրիշ խաղի մեջ յերգիչն ամաչում է գեղը գնալուց։

Իմ դուլին ա փիչանլըղ, — Սաբիբ, քու բալեն մեռնի,
Ճես ի՞նչ կրոով կընեմ գեղ։ — Կարամ իմ երեսառեղ։

Ահա և մի գեղջկուհուս դիմումն իր ամուսնուն, նրա տենչն ու յերջվեցումը։

Հանդին գաս, գեղը մանես, — Ինձնից այրի յար բանես,
Իմ դցած տեղը մանես։ — Բեմուրադ հողը մանես։

Մի ուրիշ գեղջկուհի, վորի ամուսինը բացակա յե, փափաքում է նրա գալուն։

Գեղով ըլնի՝ քու յար ‘էրի, — Եազար էրի, լա՛, մեր տուն չէրի,
Թաղով ըլնի՝ քու յար էրի։ — Գաբնան գիշեր գի քուն չէրի։

Լսենք և մի դժբախտ գեղջկուհուս, վոր ունեցել է անհամապատասխան ամուսին։

Առակ ելար մեջ գեղին, — Քու հոգն ու մոգն ի՞նչ ասեմ,
Սիրտդ ընկավ ոճուն լեղին։ — Վոր քե տվին տախ աղին։

Ահա և մի գյուղական խաղ, վորի յերգիչն ուրախանում է իր յեռահասի աջողությանն համար։

Գալամ եմ ցանև ճամբեն, — Ինձ մի նազան յար ունեմ,
Գառեր եմ գեղի համբեն։ — Կըցալա կ’ամն կանքեն։

Լսենք և մի ուրիշ գյուղացու, մի բախտավոր սիրահար աղայի խոսքն իր ընկերին։

... Մեր գռան առաջ արա գաքնցան, — Գեղով քալան, չճանչըցան,
Ջուխա ըմ չկըրան մինով անցան։ — Մեկն ի՛մ յարն եր, մեկ քո՛ յարն եր։

Գեղացի աղջիկն ու աղան ուրախ են, վոր իրենց սիրածն իրենց գյուղից է։

Աղջի, դու մեր գեղեցիկ, — Ծաղիկ ունեմ, գեղին ա,
... Ազատ տղին գեղեցիկ։— — Իմ ուզածը գեղին ա։
Ա՛յ, տղա, դու մեր գեղացիկ, — Ելն էլ գիտե, ալամն էլ,
Ոտաբ տղին գեղեցիկ։ — Ն՛ երեցի տղեն ա։

Սրա փոփոխակն է։

Կ’ուզեք՝ հարցրեք, իմացեք,
Մեր գրկըցանց տղեն է։

Գովվում է «գեղի վեսան»։

... Գեղի կ'ըսեն գեղի վեսա...

Ահա և իր յարով պարծեցող գեղջկուհու յերգը։

Հաց եմ թխել գաթացու,
Իմ յարն և մեվիքացու։

Գեղումն ախոը տղա կա,
Իմ յարի նոքարացու։

Կան խաղեր, վորոնց մեջ աղջիկ յարն ուրիշ դյուղացի յե։

Ծաղիկ ունեմ գեղին ա,
Իմ յարը ձեր գեղին ա։

Հիլ ու մեխակ չատ ունեմ,
Հերին յարիս ձեռին ա։

Մի քանի յերգերի մեջ հիշվում են՝ քաղաք, քաղաքացի, բայց այդ յերգերն ել պարզապես դյուղական են։ Այդպես են հետևյալները։

Ես յանը պապոք,
Են յանը պապոք։

Քաղքցուն կ'առնեմ,
Հագինն է սապոկ։

Տեսեք, թե գեղ մարդու գնացած այդ քաղաքացին ինչպես ցավում և իր աղքատ վիճակի համար և ինչպես իրեն բարձր է դասում, մեկն նրա համար, վոր ինքը քաղաքացի յե։

Քամին եկավ, հով բերեց,
Կարկուտ եկավ, սով բերեց։

Քաղաքացի աղջիկ եմ,
Ինձ ես գեղ տեղն ո՞վ բերեց։

Այդպես չի մտածում ուրիշ դյուղ մարդու գնացած դյուղացի աղջիկը։ Նա սիրում է իր յարի դյուղը։

Ցես ղուշ եմ, Թեվըս գեղին,
Ման կու գամ յարիս գեղին։

Գլուխըս ղուբան կուսամ
Իմ յարիս նսամած տեղին։

Կան, հարկավ, նաև դժբախտները, վորոնք չեն սիրում իրենց այդ նոր դյուղը։ Ահա մի մանկամարդ կին, վոր ստիպված վերադառնում է իր ամուսնու դյուղը։

Ցես ղուշ եմ, Թեվըս գեղին,
Ման կը գամ Նանխս գեղին։

Նանըս ինձ տեղակ չթավ,
Ցես դառնամ քամբախ գեղին։

Կան ուրիշ խաղեր ել, վորոնց մեջ յերգվում է դյուղը։

Քաղաքը չափազանց քիչ խաղերի մեջ է հիշվում։ Այսպես որինակ՝ մի յերգի բաղմաթիվ վոտիոխակներից հետևյալի մեջ, վոր գրի յե առնված Թբիլիսում (Թիֆլիսում)։

Մեր բաղումը բաղմընչէ,
Շըվին չըվէ նման չէ։

Քաղքումը սըղերք չատ կան,
Մեկն իմ յարի նըման չէ։

Քաղաքացու յերգ է և հետևյալ խաղը, վորի փոփոխակը նույնպես գրված է Թբիլիսում (Թիֆլիսում)։

Մի բարձ եմ աբել, իմն ա.
Մինն էլ եմ աբել, իմն ա.
Դյանջու քաբվանն դալիս ա,
Մինի Թավադն էլ իմն ա.
Վաբխանա՝ Մինի մեծ խոլեն իմն է։

Ջաղաքացու յերգ է և՛ այս.

Իմ յարը բաղարբալի,
Ջաբմերը բարակ կաշի.
Եկավ, դրունքն անց կացավ,
Ցեռ ասի՝ բարով մաշի։

Այսպես ուրեմն դյուղական բանաստեղծություններ են մեր այս վոգբիկ յերգերը, և դրանց հեղինակներն ու յերգիչները, խաղասացները, դյուղացի պատանիներն ու յերիտասարդներն են։ Ինչպես հենց այդ յերգերից իմանում ենք, խաղ ասել են և ասում են վոչ միայն տղաները, այլև, և ավելի ևս, աղջիկները.

Աչըղ չեմ, աչըղի ճուտ եմ...
Աղջիկ չեմ, վոր ամաչեմ.
Տղա յեմ, խաղ կըկանչեմ։

Այսպես է ասում տղան։ Բայց աղջիկը, հենց նույն յերգի փոփոխակով, պատասխանում է տղային՝ ասելով.

Տղա չեմ, վոր ամաչեմ,
Աղջիկ եմ, խաղ կըկանչեմ։

Ճիվ խսկապես։ Մեր դյուղերում յերբեք նորահարսները մի ժամանակ չխոսկան եյին մեծերի մոտ, աղջիկներն, ընդհակառակն, ազատ եյին միշտ և յերգում եյին տղաներին հավասար։ Այս պատճառով և շատ խաղեր, նայելով իրենց փոփոխակներին, թե՛ տղայի և թե՛ աղջկա յերգեր են։ Աղջիկները յերգում եյին և ցերեկը և գիշերները։ Նրանք իրենց խաղերն ասում եյին և այգիներում, և ուխտերի ժամանակ, և պարելիս։

Նրանք ասում եյին և վիճակի յերգերը վիճակահանության ժամանակ՝ Համբարձման կամ Վարդավառի տոներին։

Համբարձումը գալիս ա,
Ծաղիկը ցնծալիս ա.
Համբարձում կանչող աղջիկ,
Ձենըդ ծըվըլալիս ա։

Փոփոխակների մեջ է.

Ա՛յ դյուղում ասող աղջիկ...
Վարթեվոր ասող աղջիկ...

Մի ուրիշ յերգի մեջ լսում ենք.

... Լավ գյուղում ասող աղջիկ,
Անունէ կենա բերանըդ։

Ճիվ վերջապես տղան ասում է.

... են խաղ ասող աղջիկը,
Բռնել եմ ինձի բութիս:

Նախ եյին ասում տղաները, հարկավ, նաև ուրախությունն անելիս: Խաղ ասելը պատանիների համար մի պահանջ եր: Տղան խաղով դալիս եր իր սիրած աղջկան, աղջիկը՝ տղային:

... են չոլիվիր գնացող տղին՝
Բնքանի չես խաղը պիտի:

Այսպես է ասում յերգող պատանուհին իր խաղի մեջ: Մի ուրիշ բանտավորը յերդում է.

Ա՛յ տղա, դու բաղի մեջին,
Վառնեըդ չաղի մեջին.
Կանչե՛, կանչելուլ մեռնեմ,
Ճես եմ քո հավի մեջին:

Իսկ տղան էլ ասում է.

... Մի դովլի յար ունեմ
Իմ բոլոր խաղի մեջին:

Ճերմակասարդները հաճախ խաղերի մեջտեղում մեմյանց հայհոյում էյին իրենց մեջքը:

Վանքի ձորում խաղ ասի,
Խաղի մեջ քեղ բան ասի.
Ինձի եղուց առնում են,
Սուրբ Սարգսի պես հասի:

Այսպես է յերգում աղջիկը, վորին չուտով պիտի ամուսնացնեն վոչ իր ուզածի հետ:

Տղաներն էլ խաղով կանչում են աղջիկներին:

... Խաղ ասեմ, յարս իմանա,
Գլուխ դնեն հանա դուս,
Բալքի իմ աչքեր դո լուս:

Մի ուրիշը յերդում է այսպես.

Բլբլուլ, աբի մեր բաղը,
Ասա իմ յարի խաղը.
Խաղիդ մեջով իմանա
Հասցերու յարիս քաղը:

Աղջիկն էլ խաղով ղրկուշացնում է տղային, ասելով.

Ա՛յ տըղա, խաղով աբի,
Վառնեըդ չաղով աբի.
Մեր քաղը ղալմաղալ ա,
Դու վերին քաղով աբի:

Այսպես է ուրիշ խաղերի մեջ: Խաղերի այսպիսի կիրառությունից են ծագել «խաղով մի բան ասել մեկին», «խաղով հասկացնել» դարձվածները, վոր նշանակում են՝ ակնարկելով հայտնել մեկին մի բան:

3. ԳՑՈՒՂԱԿԱՆ ՍԻՐՈ ԵՐԳԸ

Այդ վաքրիկ յերկերի նյութը չատ պարզ բան է: Ամենից առաջ ղրանք, ինչպես ասվեց վերևում, սիրո յերգեր են, դյուղացի նորահաս ու նորատի մարդկանց, սիրահար պատանիների ու պատանուհիների, մասամբ և ընդհատապարդ ամուսինների յերգերը, վորոնց մեջ մեծ պարզամտությամբ յերևան է դալիս նրանց սիրո պլացմունքն իր անվերջ բազմազանությամբ, իր պնսպես վիճակներով:

Սակավաթիվ խաղիկներ միայն կան, վորոնց նյութը չի վերաբերում սիրուն, կամ առհասարակ ամուսնության և ամուսիններին, այլ վորևե դյուղական հասարակական խնդիրների: Այս վերջիններս, վորոնցով չատ հարուստ են մեր դյուղական աշխատանքի երկերը, չեն հետաքրքրում այդ խաղիկների պատանի հեղինակներին: Բայց ղրա փոխանակ այդ յերկերը բազմակողմանի կերպով հարուստ են սիրո հետ կապված իրական կյանքի զանազան դրություններով ու զարծողություններով, լի յեն ժողովրդական սովորություններով, գյուղական կենցաղային պծերով ու բարքերով, վորովհետև ղրանք, ինչպես մեր հին դուստանական յերկերը, բանաստեղծություններ են պատահած, ապրած դեպքերի:

*Այստեղ կարիք չկա մանրամասն խոսելու այդ ամենի մասին: Խաղերի մեջ յերևան յեկած կենցաղային դծերն ու մոտիվները, համեմատության մեր հին հայրենների, մասամբ ուսումնասիրված են սրա հեղինակի մի աշխատության մեջ**): *Այսպես, որինակ՝ սիրուց հիվանդանալն ու յարին հիվանդության բժիշկ համարելը, պատանուհու «Թևլիկ-մեվլիկ պալը» տալյին դրավելու համար, լվացք անելը, ջուր բերելը, ծնողների արգելք լինելը տալչի և աղջկա սիրուն, թաքուն սիրելը, բամբասանք, աղջկա համբավություններ ու բամբասանքից չվախենալը, նշանածի դիմերային այցելությունը, նուիրելս և վարձանքը (դլխաղին), բանի ամուսնացումը, աղջիկների չհետաքրքրվելը ծնողների կամքին, աղջիկ վախցնելը, այլ և հարևաններին սիրելը, աչքերին դեղ դնելը, սիրականի հետ այդում դբոսնելը, յարին սպասելը, սուտ բանի դնալը՝ յարին տեսնելու համար, և բազմաթիվ նման մանր բաներ, վորոնք սիրահար պատանության սրտի համար արժեքավոր են հանդիսանում:*

Բացի դրանից՝ խաղերի մեջ չատ կան և ուրիշ այսպիսի մանր սիրային մոտիվներ, ինչպես որինակ՝ ժամադրություն, դիմավորում յարին, հանդիպում, տեսակցություն դիշերով.

---

*) Մ. Աբեղյան, Հին դուստանական ժողովրդական յերկեր. (Աբեղյան ՀՍԽՀ գիտ. Համալսարանի «Տեղեկագիր» №№ 2—3, 4 և 6-ից), Յերևան 1931. յեր. 142—160:

Տա՛ աղա, բաղով արբ,
Դուն վերբ թաղով արբ.

Իմ մեր քեզ աղջիկ չի տա,
Լուսնակ դիշերով արբ:

Սիրված մոտիվներից է վորևէ ցանկությանն արտահայտությունը, ինչպես՝ ցանկություն յարի դալուս, նրա հետ խոսելուս, նրա մոտ լինելուս, նրա համար զոհվելուս, նրա վրայի զարդարանքը դառնալուս և այլն: Հաճախ յերդվում է՝ լուր ուղարկելը մորը կամ յարին լուսնի կամ թռչունի միջոցով, ծաղիկ ուղարկելը յարին, այցելության դնալը, ամոթն ուրիշներից, աղջկա վախը թե յարն իր թարկը տվել է, վախ քնած յարի համար, վախ մոռացված լինելուս, դեչ խոսքից վիրավորվելը, հոգացողության ճանապարհ դրած յարի համար և շատ նմանները: Այստես և սիրու վիշտն ու տանջանքն ընդհանրապես՝ յարի համար դարդով լցվելը, լալը, բախտավոր ու դժբախտ սերը, սիրված լինելու ուժնը, յերդում հավատարմության, յերազում յարին տեսնելը, վիշտ յարի հեռանալուս մասին, և այլն և այլն:

Կայնել եմ, դալ չեմ կարող,
Լցվել եմ, լալ չեմ կարող.
Քանի վոր դնացել ես,
Ամուռդ տալ չեմ կարող:

Ձեր բաղի դուռը բաց ա,
Վոտնիքս շաղով թաց ա.
Ինձանից հեռացել ես,
Աչքերս լիքը լաց ա:

Սովորական մոտիվներից է նաև խաղերի մեջ հաճախ կրկնվող անեծքը՝ մերթ իր սիրած յարին առնողին, մերթ չտվողին, կամ իրեն չսիրողին, կամ թշնամուն ու խանդարողներին:

Հագել ես կարմիր կապս,
Մինթանդ խաս զարբաշ ա.
Թե չսիրես ինձ արտավ,
Ձեր տունն ընկի խարաբա:

Աբեմն ա՛խ փովել է,
Ալ ֆաս գլխին ծովել է.
Ով վոր առնի իմ սիրած,
Թաղը գլխին չվելե:

Կան բազմաթիվ քառյակներ, վորոնց մեջ յերևում է աղջկա արհամարհանքը տղայի նկատմամբ, կամ ընդհակառակն.

Սարի տակը տուն ունեմ,
Մեջը վոսկի սուն ունենեմ.
Գալվի, գոբի, չան տղա,
Քեզ պես տասը շուն ունեմ:
Ձեռ մորս մինուճար եմ,
Լավ տղերանց համար եմ.
Սև մաղա սիպտակ կանեմ,
Քանց քեզ լավը կը ճարեմ:

Այ տղա, նէ ես—մէկ ես,
Խանչալը մեջդ նետես,
Դու գլուխդ տղամարդ ես,
Մամակի վերուկ վեռ ես:

Տղան էլ այդպիսի աղջկան գարճնում է.

Ժամի դուռը տաշ կ'անեմ,
Մահտդ չուխա քաշ կ'անեմ.

Շատ աղջիկ, շատ մի՛ հավի,
Քեզի հալ ու մաշ կ'անեմ:

Առանձնապես աչքի յե ընկնում այն, վոր յերկտասարդները, բնականաբար, միշտ աղատ սիրո և աղատ ընտրության կողմնակիցն են, հաճախ

դժդոհ են խանգարող ծնողներից, հատկապես աղջկա մորից, և բողոքում են ծնողների և ընդհանրապես ուրիշների ճնշման դեմ:

Կարմիր վարդը ճամով ա,
Սիրած յարը համով ա.
Ետեղ զուռի բան չկա,
Սերըն էրեն կամով ա:

Ճրաղը վառա, վառա,
Հոր հետ վառամարդ դառա.
Մեր ու աղջիր թող ալի,
Ձես իմ սիրածին առա:

Բաղի բոլորը պատ ա,
Հերն ու մերըն ի՞նչ գատ ա.
Ձես սիրել եմ, յես ի՛առնեմ,
Վերեվ աստված չհաղ ա:

Բայց չպիտի կարծել, թե ամուսնությունը յերիտասարդների կամքով և կատարվել ընդհանրապես: Ընդհակառակն, հին կենցաղի, հետեվաբար և դեռ արտահայտիչ խաղերի մեջ ևս աղջիկներին սովորաբար ամուսնացնում են ծնողները:

Մա՛րս, մանա մանածս,
Գնա, քաղա ցանածս.

Գասպ հարսնիք ա բռնել,
Ձեմ ճանչնար նշանածս:

Ահա հին ամուսնության մի այլանդակ տիպը: Ամուսնացողները նույն իսկ չեն ճանաչում միմյանց:

Հին ամուսնության այլանդակություններից մեկն ել յեղել և անհամեմատ տարբերներ ունեցողների ամուսնացումը— աղան շատ մեծ, աղջիկը փոքր, կամ ընդհակառակն: Այս յերգիկների մեջ հաճախ ծաղրվում և այդպիսի ամուսնությունը:

... Ցարըս մին քերծ ա դառել,
Ձես հլա մի պիծի խոխա:

... Եղ իմ սիրած ալ յարը,
Դրել եմ ծնկիս ծալին:

Աղջիկները և հարսները համալրված բողոքում են այդպիսի ամուսնությունների դեմ.

... Ձես բոյավոր մեծ աղջիկ,
Ին երեխու քայը չեմ:

Տիններն եղնեմ, ի՞նչ ընեմ,—
Վարդի տերեվ չորցընեմ.
Ձես պըղտուտիկ (վար. պըլպլուվ) հարսնուկ եմ,
Մորվոջ (մերուքով) երիկն ի՞նչ ընեմ:

Մնողներն այսպիսի ամուսնությունները կատարում են հաչիվներով.

Թամահ արին հարըրնոցին,
Ինձի ավին դրկանոցին...

Ա 2048 III

Թեպետ և խաղերի մեջ հաճախ կրկնվում է այս տողը՝

Սկըել հնգ, իրար կ'առնենք.

Բայց ավելի ևս հաճախ յերգվում է.

Սիրած սիրածի չեն առ։

Սիրում են իրենց դրկիցին, իրենց համադյուզացուն։ Աղջկա համար մեծ դժբախտություն և համարվում ոտար տեղ մարդու դնալը։

Զարչին նախում ա՝ քաթան,
Աղչկան չկա վաթան.
Աղչկին են վախը մեանք,
Վոր բոլ ա մի դող պատան։

Թախանի մարդը փուշ ա,
Սրտով սիրածն անուշ ա.
Ալամ ախպերն էլ դինա՝
Աղչկին անվաթան դուշ ա։

Մեր խաղերն ամենամեծ մասով դալիս են շատ հին ժամանակներից. դրանց մոտիվներն ավանդական են։ Նման բաներ, նման կենցաղային դեպքեր մինչև կրկնվել են կյանքի մեջ, քանի իշվել են նույն բարքերը. ուստի և հին խաղերը շարունակել են ապրել։ Բայց դրանք, հարկավ, նորոգվել են՝ ժամանակի նորություններն ընդունելով իրենց մեջ։ Այդպիսի մի նորություն, մի նոր մոտիվ և մտնում մեր սիրուն խաղերի մեջ 1887 թվից իվեր, յերբ Անդրկովկասում սկսվում է հայերի զինվորագրությունը։ Եղերական դարերի ընթացքում զինվորական ծառայություն չկատարած ժողովրդի համար՝ դա համարվում եր մի աղետ, վոր և անդրադարձել է դյուղական սիրո յերգի մեջ։

Երկանքը դողում ա,
Սաթերը սարսում ա.

Եկան սալդաթ չափելու,
Իմ սիրտը մրմում ա։

Մինչդեռ այժմ մեր աղջիկներն ևս զինվորական վարժություններ են անում մեծ սիրով և ուրախությամբ, այս հին յերգերի մեջ վոչ մի մայր չի ուզում, վոր իր տղան զինվոր դնա։ Մայրը նախապաշարված նվերներ է տալիս՝ վորդուն ազատելու համար.

Սալդաթի մեր լվացք կ'անեն,
Շուշպին ավետրներին տանեն,
Սալդաթ աղեն ազատ անեն։

Իսկ ի՞նչ է ասում սիրող աղջիկը.

Հանդովը սել (հզել) ա եթում,
Մարդովը ջուր ա եթում.
Գացեք տանեք սալդաթին՝
Ինձ թողե՝ ո՞ւր ա եթում։

Կողքս քամին բոլորավ,
Ճարխ բեխերն ալորավ.
Ճարխ գրեցին սալդաթ,
Սիրտս փորիս մոլորավ։

Սիրանի ծառ ծավել ա,
Ճարս սալդաթ գրվել ա.
Ճար չեն, սալդաթ մի՛ դնա,
Ձո հղնիկը կը մնա։

Եկավ սալդաթ թուղթը...
... Բաշլնու տեղն ապեն,
Վեց տղա չունեն, ասքան,
Ջեռերը կապեն վարեմ։

Հարուստների վորդինեբը կաշառով ազատվում էին. նրանց փոխանակ աղքատներն էին դնում ծառայելու։ Դրան է ակնարկում հետեվյալը.

... Նալբանիկը մեզ կբկանչէ,
Բյասէբ տղին հէչ չի ճանչէ։

Զինվորի վիճակը նկարագրվում է դժվար, և յերիտասարդն ինքն էլ չի ցանկանում զինվորական ծառայությունը.

Բալաբաննէբը զարկէն,
կազարմեն սալդաթ լինեմ։
Սալդաթ զոմի տուն չունեբ,
Գիշեբ անուշ քուն չունեբ։

Աբաբ տաբեք, տաբե՛ք, ձորե՛ք,
Հաչել եմ սալդըտի չորեբը,
Լաց եղնելէն ընդում սրեբ։

Անցնենք խաղերի այլ կողմերին։

Մեր այս սիրո յերգերի մոտիվների մեջ մեծ տեղ է բռնում նաև յարի գովքը, տղայի թե աղջկա կողմից ասած։ Ներբեմն նաև խաղի ամբողջ բովանդակությունն ինքնագովք է։ Գովքի յեղանակները բազմազան են. բայց դա ընդհանուր առմամբ մարմնի և հագուստի նկարագիրն է վորևե նմանությամբ։ Նույն պատկերները կինոջ մարմնի համար՝ չարունակ կրկնվում են, ինչպես և մեր հին դուռանների սիրու յերգերի մեջ*)։

Խաղերի մեջ վոչ միայն կինն է նկարագրվում, այլ և սիրված տղան։ Թե տղայի և թե աղջկա գովվում է հասակը չափով և թուխը և շեկը. «շեկ աղջիկ», «շեկ տղա», «թուխ աղջիկ», «թուխ տղա», «շեկ աղբեր», «շեկլիկ աղբեր» (=շեկ յար)։ Ներբեմն տղայի համար հիշվում է սև գույնը, իսկ աղջկա համար՝ սպիտակ։

... Բաղի մեջէ շեկ աղջիկ
Ուչքա–միտքս տարել ա։
Եդ շեկ մազավոր աղջիկ...
Շեկ աղջկա առնողն եմ։
Կորցրել եմ շեկլիկ յարս...
Շեկլիկ յարս տուն եկավ։
Տեղո՛ր, դու շեկլիկ յար...

... Շեկ տղեն քեզի մեռնի...
Շեկ տղա, սպիտակ աղջիկ...
Շեկ մազավոր լավ տղեն...
Եդ թուխ ու խումար տղեն...
Բեհեն ալտըտ, ճավը թուխ։
Բուխը սպիտակ, բեխը թուխ։
Սեվ տղա, կարմիր աղջիկ...
Սեվ տղա, դուլդուլ աղջիկ...
Երես կարմիր, աչքեր թուխ։

Շատ գովվում են աղջկա մազերը, ծամերը— ոսկի, սրմա, շեկ, շեկլիկ, շեկլիկ, սեվ, աբրշում, չաղ տված, ուսերին փռված, թե–թել արած, ոսկի թելերով հյուսած, սղալած, համբա–համբա։ Մազերից ավելի յերգերի նյութ է դառնում կինոջ աչքունքը. աչքերը— սեվ, թուխ, թուխ–թուխ, խաժուժ, չալ–չալ, բալակ, խումար, ֆինջան, կլոր, ծով–

*) Մանրամասն բացատրություն այս մասին կարելի է գտնել Մ. Աբեղյանի «Հին Գուսան. ժողովրդ. յերգերի» մեջ, յեր. 122—142։

Ծով· տունքերը— սեվ, Թուխ, կամար/, կեռ, կեռ ու մեռ, կալամքաշ· Թար— Թափիները՝ կալամով քաշած։

Թուխ աչքեր դեղ դրեր ես։
Աչքերդ բոլորել ես·
Իրենք որ ա տեսել չեմ,
Իմ սիրտը մոլորել ես։

Դինուն կարմիրը սիրե՛,
Աչեքնին (աղջիկների) Թուխը սիրե·
Սեվ աչվին մոլորանց պետք ե,
Սիրտին քաշվին ինչ անե։

Բայց և այնպես մի քանի խաղի մեջ հիշվում և աչքերի դեղը, և մազերին ու ճեռներին հինա դնելը·

Ջուխտակ աչքեր քաշեր ա դնդ։
Թուխ աչքեր դեղ դրեր ես։
Աչվին ծարուր քաշեր, ընքուներ Թուխ եր։

Նպիշում մազերդ դրեր ես հինա։
Ձեռներդ դրել ես հինեն։

Մատները, ինչպես դուռանական յերգերի մեջ, բաշակ են, յերևսը՝ կարմիր, նռան հատիկ, շարմաղ, բոլոր, գուլգազ, լուսնակ, Թշերը՝ կարմիր, կակուղ, «Լլոր Թշիկ ճերմըկուկ», բերանը՝ պատիկ, «պատկաբերան», ճակատն սպիտակ, բուկն՝ սպիտակ, «կուլ-բոխախ սպիտակ»։ Ցավ վերջապես յերգվում է կնոջ սպիտակ ծոցը,— ծծերը՝ բամբակի քուլա, շամամ, ոսկի ջամ,— և նույնիսկ յերեսի խալը, վոր դեղեցկություն է համարվել։

Ցեղ եմ քցել ալվալա,
Երկու Թշերիս խալ ա։
Կայնել ես աղբեքակին,
Շող կը տաս արեգակին·

Ես չոդ երեսին մեռնեմ,
Ունքերդ աղեղնակին։
Փեշդ կը տա արեգական,
Կարմիր երեսդ արունկաթան։

Կան մի քանի խաղեր, վորոնց մեջ դուվվում է «կոլոտ» ու «խորոտ» աղջիկը· բայց նորատի աղջիկը պատկերացվում է ընդհանրապես բարձր հասակով և բարակ, նազուկ մեջքով։

Ջինար բոյիդ յես ղուրբան։
Թևվերդ չինի բլլազուկ,
Բոյըդ երկար, մեջքդ նազուկ։
Մեջքդ բարակ, խանչալի բուռ...

Բոյ մը ունի քյալաչ նման։
Բոյըդ ղարղոս ղամիչ։
Թառ բոյիդ մատաղ, նշանլու աղջիկ։
Բոյը բարակ չիմչատ ա։

Այս և խաղերի մեջ յերգված կնոջ նկարագիրն ընդհանուր առմամբ։ Նրա շարժվածքը «չորոր-մորոր» է· Նա չորորում է կաքավի նման և տղաների խելքը տանում։

Փեշդ կաքավի նման
Ինձ անում է հոդնհան։

Ինքն այդ աղջիկը «խելքով» է·

Գելի՛, քելի՛, քելքով աղջիկ,
Գանգ քու մերը խելքով աղջիկ։

Ցղան եւ ձրոյով» ե և չենք ու չնորհքով: Աղջկան առանձնապես դրա-
լում են տղայի բնդերը, նոր ծլած, ոլորած:

Թուխ բնդավոր տղեն...
են չեկ բնդավոր տղեն
նեչքո դլխես տաբել ա:
Ֆո բոյ-բուսաթին մնռնեմ,
Նոր դալած բնխդ մնռնեմ...

Իմ յարխս չեկլիկ բնդերը
Գյուլսաթինու նման ա:
... Նոր ծլած բնդիդ մնռնեմ,
Ոսկեթելի նման ա:
Սիրել եմ յես նահիլ տղին,
Մնռնեմ յես նոր ծլած բնդին...

Ցեվ վերջապես առանձնապես աչքի յե ընկնում տղայի քաքուլը (ցցուն-
քը), վոր շատ հին սովորութիւնով պահում եյին յերիտասարդները դեռ
մինչև մեր որերը, մինչև 1870-ական թվականները:

Առանց քաքուլ յար չենի...

Այսպես և ասվում մի խաղի մեջ: Ցեվ այդ քաքուլը— սեվ, թուխ,
չեկ, դասատ, դալին, վոր տղամարդութեան նշան ե, հաճախ յերգել են աղ-
ջիկները իրենց խաղերի մեջ.

... Մռնեմ բոլոր քաքուլին,
Մեջեն վարդահոտ կը դա:

Իմ յարին մին քաքուլ ունի,
Ոսկի թելի նման ա...

Գալով հագուստներին՝ պետք է դիտել հետևյալը: Այս փոքրիկ բա-
նաստեղծութիւնները շատ ժամանակների և շատ կողմերի յերգեր են. դրա
հետևանքով այդտեղ գտնում ենք հիշատակված բազմաթիվ հագուստներ,
փոփոխակների մեջ հաճախ տարբեր հագուստներ, կամ միևնույնը տար-
բեր անուններով:

Հին կենցաղի հագուստ ու կապուտի մի նկարագիրը և հետևյալը, վոր
ամուսնացած կնոջ յերգ է.

Ֆքիկալը քիթս եմ քցել,
Իմ յարը մխոս եմ քցել.

Ետոր եր'կոր չեմ տեսել,
Կրակը սիրոս եմ լցել:

Դրա փոփոխակների մեջ գտնում ենք՝

Ցայլուխը ճխոս եմ քցել...
Սեվ փուչին ճխոս եմ քցել...

Ուսկալըն ուսս եմ քցել...
Լաչակը բուկս (վ. ճխոս) եմ քցել...

Մեկ խաղի փոփոխակի մեջ՝ «քոս խեղճ յարըդ (վ. սիրածդ տանն)
անտեր ա» տողի վարիանտն է՝

Ֆքիքը կալածն անտեր ա:

Մի ուրիշ յերգի մեջ,— վորի ասողը տղա յե,— սիրականը, յարը
(վարիանտների մեջ՝ քույրը) նկարագրվում է այսպես՝

Ֆքիքը կալած, (վ.վ. վարսը, ծամը) թուխ:

«Ֆքիկալը» ուրիշ յերգերի մեջ չի հիշվում, դի խաղասացները «քքիկա-
լավորներ» չեն: Մյուս զգեստները— աղլուխ, փուչի, լաչակ կամ լաչիկ—

Հաճախ նյութ են դարձած յերգերի: Նոր ամուսնացած կնոջ «փուչին» հիշվում է այլ և իբրև «գլխի փուչի», մահրամա, վալա, յաղմա, մեռակ: Կա նաև լաչիկի տակի «կոտիկը», և նույնիսկ «բաղալինդը», այլ և գլխի չարդաքը:

Գլխս քցին կաթսիը փուչին,
Քարով ղարկին սրտիս չուչին.
Սաքդաքը ձեռքս խլեցին,
Ինձ ավին ես բայդուչին:

Բաթակ ճամբեն ժանկ ես,
Կոքցրածդ դանկ ես.
Նոր վալով վոչ վայելես,
Ինձ քու մաթե քցել ես:

Սրանք նորահարսի յերգեր են, կամ յերգեր են նորահարսի մասին: Աղջիկները շատ անգամ յերգում են իրենց աղլուխը, բվի աղլուխը:

Ջաղացիս դուռը տաշած,
Աղլուխս դյուլը (վ. վարդը) նախշած.

Կես կես ունքերիդ՝ մեռնեմ,
Ոսկե ղալամով քաշած:

Աղջկա բվի աղլուխը— մոմ, քուխ, կարմիր, ալ— հիշվում է և իբրև բվի բաղդատիչ, մանդիլ, դաստակալ, բվի կապ և այլն: Կա նաև ձեռի յաղլուխ (քաշկինակ):

Աղջիկները գլուխները կապում էին քաշկինակ, աղլուխ, կամ դնում էին, ինչպես և աղայքը, փաս, վոր շատ հաճախ հիշվում է— ալ փաս, վեսախուղ փաս, փինո փաս: Ահա թե ինչպես է յերգում մանկամարդ կինն իր սիրած յերիտասարդին.

Նախշուն ելակ կաթիր ես,
Կոճկներդ չարիր ես.
Մեռնեմ դաստա գյաքուլիդ,
Ալ փասը ծուռ դիր ես:

Ֆասդ գլխիդ դիր ես,
Փյունգյուլ վրեն ծռել ես.
Ինչ ասալ՝ փյունգյուլն ասվել,
Ջոռով սավդի տեր ասվել:

Աղջիկների փասը — քաոսակը — սովորաբար զարդարված եր լինում դրամներով չարսով.

Աղջի, ասի քե փաս առնեմ,
Ֆասի բոլոր վոսկի չարեմ...

... են ալ փասով աղջիկը
Ինձի ավել են բաւքա:

Ահա մի զարդարված աղջիկ.

Գլուխն եդիր Փինո Փաս,
Փուսկուլն ի կախ, չորեր խաս,

Կարմիր մարլան վեր բվին,—
Շանորդիք Քող ծիկին:

Հաճախ դուվվում է կնոջ չրջազգեստը — մինթանա, չիթ մինթանա, դեչյա — շալ, կարմիր,— ճուպա, ջուբա:

Մինթանեդ բուքա-բուքա,
Մեջդիդ ա բալաք փուքա.
Սիրել ենք, իրար կառնենք,—
Թող դեղով ասեն՝ ասա ա:

Աղջի, անուշդ Շուշան,
Դեչյեն ժ'ուռնիս խլխլան.
Աչի երքանք Սուրբ Նշան,
Վոսկի մատնիք քեզ նշան:

Նաղ մի անի, նաղ մի անի, նաղ աղջիկ,
Մինթանեդ Քող մի անի, լան աղջիկ:

Մի քանի խաղերի մեջ յերգվում է քաթիպան, վոր հարուստ կանանց վերնաշղթան եր, թեվերի ու լանջի զարդարանքներով.

Ալ քաթիպս կոբել եմ,
Քաս կոճակը չաբել եմ.
Դե՛ գնա կորի՛, դեղ տղա,
Քանց քեղ լավը հաբել եմ:

Փոխոխակների մեջ քաթիպայի տեղ են՝ ապխտակ դեյրա նախշուն կոճակներով, քաթան հալավ և այլն. տղայի համար՝ արխալուղ:— Հարուստ աղջկա յերգ է և հետևյալը.

Ես աղջիկ եմ, ալ կ'ուզեմ,
Բողչաս ծալեծալ կ'ուզեմ.
Ճերմակ յարխ տուն երթամ,
Դռանիկս թիլմա չալ կ'ուզեմ:

Շապիկին ել շատ անգամ յերգվում է: Ահա մի հարուստ աղջկա գովք.

Աղջիկ կուզեր կալենը խեա;
Կը զընդզընդեր չուչենը խեա.
Շապիկն եր շաբե, կոճակն ալծըքե,
Մինաց քամաբե ակնունք, գոհար է:

Այսպես և՝ մինիկալ շապիկ դեղին կոճակներով, քաթան շապիկ, կարմիր շապիկ, կապուտ շապիկ, շիլա շապիկ, նույնպես՝ մոլ հալավ (= շապիկ), քաթան հալավ և այլն:

Ինչպես հին հայրեններն մեջ՝ այս խաղերի բանաստեղծների համար ել կարեվոր տեղ է բռնում կապան,— թե տղայի և թե աղջկա,— կանաչ կապա, կարմիր կապա, դուբնի կապա, հարուստ տղայի համար՝ նաև սամուր կապա: Կա նաև «բաբա» կոչված անթեվ վերարկուն:

Մեր տուն, ձեր տուն մեկ դառաբով,
Եչննենք իչննենք կանանչ կապով.
Ղբար խառնք, ղբար առնենք,
Ձիբար սիրենք առավածն տպով:
Ծո՛ տղա, տղա, դու ալ կապով,
Ներիք կան դա մեր պառով...
Աղջիկ, կապեզ ալ պիտի,
Բողչեզ՝ ծալեծալ պիտի...

Աղջկա զգեստների մեջ աչքի յեն ընկնում նաև գոգնոցը, մեզարը— դեյին, նախշուն, կարմիր, կապույտ:

Կարմիր մեզարով աղջիկ,
Շերմ չակավոր աղջիկ,
Ինդիր ունիմ ասելու,
Գա մարն առա՝ քեզ առ ձիկ:
Նախշուն մեզար, ալ քնդիր,
Ձես ի վառեց քո գնդիր (=ականջի ողիր):

Հիշվում են նաև՝ բլուզ, տղայի և աղջկա համար, ալ դոշամա և վառուտ խրխան, կարմիր վալենն աղջկա համար: Ճերմակ առարկա յեն դառնում նաև կնոջ հագնիկները՝ սոլեր — կարմիր, սաղրի, մաշիկները— կարմիր, սաղրի, «մաս բաբուճ» և այլն: Ձի մոռացվում. նույնիսկ սոլերի նալչեն:

Դու երեք ես, ի'երթաս բաղչեն,
Կը չընկըշնակ սոլի նալչեն,
Աչեվ գարկեր հակոդ թախչեն:

Վաքխանաը՝

Կը վղվղա ճակոխ մաղչեն,
Կը չընկչընկա կոնգուսվ նալչեն։

Տղայի հագուստներից հաճախ հիշվում է՝ չուխա— թուխ, կարմիր, սեվ, յերկայն, «թուխ չուխա, կարմիր յախա», կարմիր մահուդի, «թուխ յախավոր, բոզ չուխավոր»· ղըզլ, արխալուղ — բամբեջով, ալ, չիթ, լաստիկ· ելակ, ջովդա, գոտիկ դոշլուկ, կարմիր չալվար, յափնջի· գլխին՝ արախչին, քոլոզ, փափախ· վոտնամաններըը՝ քոշ, չաքմա, սապոգ, տրեխ, չարուխ, պաճուճներ, խետ գուլպեք և այլն։

Ալ տղա սեվ չուխավոր...
Երնեկ կըտամ են որը,
Մեր տունը գաս թաղավոր։

4· ԱՇԽԱՏԱՆՔԸ ԽԱՂԵՐԻ ՄԵՋ

Ինչպես տեսանք, գյուղի բնակիչը, պատանի կամ յերիտասարդ գյուղացին ու գեղկուհին են խաղերի յերգիչները։ Նրանք յերգում են իրենց սպրած տենչանքները, իրենց սիրո մասին։ Բայց բազմազան ձևերով արտահայտված սիրո հետ՝ այդ խաղերի մեջ միաժամանակ շատ կարեվոր տեղ է բռնում նաև գյուղական աշխատանքն իր բոլոր տեսակներով, այնպես վոր կարելի յե ասել, վոր այդ սիրո խաղերը հաճախ մի կողմով նաև աշխատանքի յերգեր են։ Ցեվ այլապես էլ չէր կարող լինել, քանի վոր դրանք գյուղացու արտադրությունն են. իսկ գյուղերում մարդիկ մանուկ հասակից սրտեն մասնակից են գյուղական աշխատանքներին։ Այս է պատճառը, վոր խաղերի մեջ գտնում ենք ընդհանրապես մեր գյուղը, հին հայկական գյուղն իր բոլոր չինական պարապմունքներով։

Գյուղական աշխատանքի մեջ առաջին տեղը բռնում է հողագործությունը, վոր ընդարձակ չափերով յերգվում է սիրո խաղերի մեջ։ Գարունը բացվում է թե չէ, գյուղացին դաշտում է. նա տան յերես չի տեսնում.

Կը գնամ չոլը վաստակ...
Թուխպըն առաջս կոբեց,
Մնացի բոյիդ հասրաթ։

Իսկ տանը մնացած կինը յերգում է.

Շեկո՛ ջան, տուն արի արտեն,
Դու ինձ ազատ՛ ես դարդեն։

Վարը լինում է դուքանով· «դուքանը վարի հողը»։ Մի յերգի մեջ միայն գուքանի հետ հիշվում է նախնական արորը— «չութը»·

Ցես ի՞նչ անեմ կով ու կթան,
Վար մենք չունենք չուբ ու դուբան։

Մի ուրիշ յերգի վարիանտներից մեկի մեջ դուբանի փոխանակ անցել և «չուբ»։ «Դուբանը վարափոսին» տողի փոխանակ է՝

Ջուբն են վարում ես փոսին...

Ցեվ վերջապես մի ուրիշի մեջ էլ հիշվում է «հարորվար».

Բոլոլիկ վերևվ դար եր,
Ջորս բոլոր հարորվար եր,
Ըմենց քաղցր իմ յար եր։

Գուբանի աշխատանքն, ընդհակառակն, շատ հաճախ յերգվում է խաղերի մեջ։ Կան մի քանի փոքրիկ յերգեր— յերկյակ, յեռյակ ու քառյակ, վորոնք աշխատանքի խաղեր են ըոկ, բայց վոչ գուբանի յերգեր իրենց հոռովելներով.

Ցես գուբանն եմ, անդին քար եմ,
Հերկերըս կը վարեմ։—
Իրիկվե դեմ աղոթքան,
Դաշտ կու բանի ձեր գուբան...
Ջընց ղրմեն քաղցր և վաքան։

Բերեմ և հետևյալը.

Գուբանը հանդին լարած,
Մշակնին մեջեն չարած.
Մղափուն գուբ, ա՛ մշակնի,
Սեվ հողն ջերի դառած։

Այս քառյակի յերգիչը խղճում է մշակներին, վորովհետև գուբանավորի, մանավանդ մաճկալի աշխատանքը շատ ծանր է։ Ահա՛ թե ինչ է յերգում ինքը մաճկալը։

Ջրանիք մեջքես առել ա,
Մաճը բուռս առել ա.
Են չեկ ծամերով աղիկ
Ուչ ու միաքս առել ա։

Աշխատավորներին նեղում է արեգակը, շոգը. ուստի գուբանի վարն առավոտը վաղ, հովով է սկսվում.

Վեր կացած հավախոսին,
Գուբանն ա վարում փոսին.
Բարկ արևը յերկնքում,
Շողն ա դիպել ակոսին։

Հենց այդ ծանր աշխատանքի համար գեղջկուհին առանձին հոգացողությամբ և վերաբերում իր սիրածին։

Գուբանս վարի հաղերումը,
Իմ յարս չոլերումը.
Գլուխս ղուբան կը տամ,
Մի՛ ման գա չոդերումը։
Գուբանս աքերումը,
Իմ յարս ցելքերումը.
Ջեզ ղուբան, իմ սիրուն յար,
Ման մի՛ գա չոդերումը։

Սիրահար աղջիկա յարն էլ մանանախից և այդ ծանր աշխատանքին.

Ես որ դուքանը մերն ա,
Մած բանողն իմ հերն ա.

Ցեղնաբած չեկիկ տղեն,
Ախպերս դիտի, իմ տեր ա։

Նա իր սիրած հոտաղին վարդ կամ սիրո խնձոր է ուղարկում.

Դուքանը վաթափսին,
Շաղքն ա դիպել ակոսին.
Կարմիր խնձոր եմ քաղել,
(վ. Մի ապուխտ վարդ եմ քաղել),
Տարեք իմ նանի փեսին։

... Կարմիր խնձոր քիչ անեմ,
Ղրկեմ իմ նանի փեսին։

Բայց նա, այդ սիրող աղջիկը, ցավեր էլ ունի։ Նա հիշեցնում է տղային իրենց պայմանաժամը.

Իմ աղբերն (= յարը) են անցումը,
Դուքանի եղնանցումը.
Գիր եմ գրել, ուղարկել,—
Վաղաս ա Համբարձումը։

... Նհախ մարդի երեսից՝
Իլլաջ չկա իմ ջանում։

Դուքանի քեվը դուն ես,
Անմեղ ես, խաթաբ չունես.
Գարշդ առան, դնացին,
Մադաթ դու նամուս չո՞ունես։

Դուքանը դաշտն ա բանում,
Բեղ մատհան չեմ անում.
Թե սիրում ես, ինչի չես՝
Դարդը արտից հանում։

Իսկ ի՞նչպես է յերդում «սիրու տերը», «սիրատեր» հոտաղը.

Դուքանի երկեն ծերը (ծիրը),
Սիրել ա սիրու տերը (վ. սիրատերը),
Սիրուն աչքեն իմնէ անի,
Աբենաբ ա հերն ա. մերը։

Դուքան վարենք պտերով,
Բեղ քաշենեմ ճաներով.
Ինձ քեզանից չոհացին՝
Կանչեն ընկնի կողերով։

Ցերեկվում է նաև դուքանավորին հաց տանելը, որը կանանց, աղջիկների գործն է։

Մանկլն է կային մաճեն,
Հաց է բերել խանդաղեն.
Ցարս աչքով-ունքով արավ,
Ոսկի աղբեր անկաղեն։

Շարժաղ երես աղջիկը
Սիրտս բացեց, վարդ արավ։

Դուքանը ման եմ ավել,
Սիրել եմ, կան եմ ավել.
Դուքան վարեց, արտ արավ,
Դուշմանի սիրտ դարդ արավ.

Ոխտը տարի սերուքյուն,
Մեկ ոչ պայման եմ ավել։

Այս փոքրիկ յերգերի մեջ, առանց դուքան հիշելու էլ, հաճախ հիշատակվում են՝ արտ հերկել, արտ վարել, վարած արտ, վար անել, հերկ, ցել և այլն։

Կաքավն եկավ, արտս մնաց հերկելու,
Գունս տարավ, յարս մնաց դրկելու։
Բերդի տակին ցել ունեմ...
Ձեր տան տակին վար կանեմ...

Ես դիշերը երազ տեսա,
Հերկերս վարած տեսա...

Եվ չատ ուրիշները քե դուքանի և քե ընդհանրապես վարի մասին։ Վոչ միայն վարը, այլ և հողագործական աշխատանքի մնացած բոլոր կողմերն էլ անդրադառնում են խաղերի մեջ։ Վարից հետո գալիս է ցանքը։ Ցանում են՝ ցորեն, գարի, բրինձ, բամբակ, կանեփ, կորնկան, յոնջա և այլն։

Ախաւմա ցանել եմ գարի...
Ախա եմ ցանե, հըմեն բրինձ...

Ցորեն եմ ցանե գուքին ական,
Ելի, ճաղ ավե խեա արեգական.
Ելավ քաղելու, ձի կոմաք չելավ,—
Ին նազու յարիկս ինձնից խռովավ։

Գարունը բամբակ ցանեմ,
Ամառը քախան անեմ,
Աշունքը չնաք անեմ,
Ցար Ջան, մալըն ըլնի, քեզ կ'առնեմ։
Մեր տան եսեվ ախա կորնկան...

Ցերկվում է արտի կանաչելը կամ կանաչ արտը, ցանած արտի լավ չբուսնելը, արտի չորանալը, խորշակահար լինելը, մեջը կամ չորս բոլորը յեղեգ, փուշ բուսնելը և այլն, և ուրիշ պատուհասներ՝ կաղկուտ, մկներ, անժամանակ ճյուն և այլն։ Լեռնային արտերն անջրդի յեն, իսկ դաշտերում՝ ջրովի։ Արտ ջրելը դժվար աշխատանքներից է. պետք է ջրի բանը կապել ու պահել։

Մեր հանդերը ջրով ա...
Իմ յարը հանդին տեսա,
Ջրերի բանդին տեսա...

Իմ աղբերս հանդումն ա,
Սոված, ջրի բանդումն ա։
Թազա յոնջեք ջրեցի...

Հասնում է արտը և հնձում են, տեղը մնում է խոզան։

Ախրը հասել ա գոսիկ...
Ախրին գարին ա հասել...
Մեր տան յեսեվ գարի խոզան...

Բայց հունձը ավելի ևս ծանր և հոգնեցնող է, քան գուքանն անելը։ Պետք է չտապել, քե չէ հացահատիկը կրկնդի։ Շատ խաղերի մեջ յերգվում է հունձը և նույնիսկ մանգաղն ու մանգաղ սրելու եսանը։

Գեղի բոլոր կնդել է,
Մեջը վարդով լցվել է...

Ցար, յար, յարս քնել ա,
Հավ ծառի տակ քրանել ա.
Հավ, հավ, հավը քներ ա,
Հունճ ա անում բեզրեր ա։

Հունճին մասնակցում են նաև աղջիկները։ Հնձից հետո գալիս է խուրձ կրելը։

Իմ յարս խուրճ եր առնում...
Խուրճը ծանր եր առնում...

Խուրձը, որանը (քյուլաշ) կրելու համար առանձնապես կարեվոր է սայլը, վոր նույնպես յերգվում է այս սիրո խաղերի մեջ.

Մեկի չըլնի արաբա,
Մեր բաները խարաբ ա...

Ելել ես, կ'երթաս որանը,
Կոտրեցավ սեղի մատանը...

Խուրձը կրելով՝ մի տեղ դեղ են դնում.

Դեղ եմ դրել, հավան չեմ,
Ինձ ու դխու դիվան չեմ.

Ինձ դանակամորի արեգ,
Ցես են տվին հավան չեմ:

Ցեվ վերջապես դալիս է կալը, վոր առանձնապես կարեվոր տեղ է բռնում աշխատանքի յերգերի մեջ, նույնպես նաև բազմաթիվ խաղերի մեջ: Կալսելուց առաջ հաշան են անում.

Աքել եմ ցորենի աշան,
Բոլըս բոլիդ վերուշան...

Կալն էլ, ինչպես կանաչ արտը, պատանիների սիրած տեղն է:

... Երեկ կուտամ են ամուր,
Ցես, դու ի'նքդանգ մեր կալը:
Ցես քեղ վո՞րտեղ սիրեցի,—
Քու հերանց կալին, աղջիկ:

Կալ եմ դցել, կալսել եմ,
Ալ արբշում դարսել եմ.
Սրտումս ինչ խորհուրդ կա,
Են քաֆուրին ասել եմ:

Հաճախ յերգվում է կալը իրրեվ կալատեղ, ուր ժողովում են, ինչպես հետեվյալների մեջ.

Կաքավ եմ հաղար դունով,
Ինձ կալերն երամով.
Ասրեցիր, խելքս առար...

Ըսկսի կալ բոլորպար,
Սակկուլս ի մեջ կու խաղար.
Ծամեր Թալուկ էր յեռով,
Կու Թավրեր շատ Թեքեվ:

Կալսելուց հետո Թեղ են անում, էրնում, քամում, ապա չեղջը մաղում են: Հիշվում է նույնիսկ կալատակը:

Թեղ ի'նանես, Թեղիդ մեռնեմ,
Նոր գալած բեղիդ մեռնեմ...
Ջամին գալես հով ու հալին,
Նանը գուբրան երեսդ կալին...

Կալը ցորեն ես մաղում,
Սորը բանիլար ես քաղում...
Ախալը ման եմ ածել,
Բոլիդ նման եմ ածել...

Ցեվ վերջապես սրտուռ ցորենը լցվում է հորը, և աշխատավորը պարծենում է իր վաստակի արդյունքով.

Բառատ եմ դրել ձորում,
Ցորենը լիքն ա հորում...

Ցորեն ունեմ հոգեպով,
Ջենս ա ընկել ձորերով.
Առուվան գուլպաք ա ավել,
Ալիքը մեաց պատռելով:

Այնուհետև գալիս է ցորեն աղալը, ջաղացը, վոր խաղերի սիրած մոտիվներից մեկն է.

Ջաղացս բանէ, բանէ,
Դարդու քունս չի տանէ։
Ջաղացս ման եմ տվել,
Սիրել եմ, ջան եմ տվել...

Ջաղացս կ'աներ ալուր,
Դուշմանիս աչքը մաղուլ.
Սիրել ենք, իրար կ'առնենք,
Թող հեռը բերի բալուլ։

Այսպես՝ հողագործությունը— վար անելուց մինչև ջաղացում ալյուր աղալն— անդրադարձած է սիրո խաղերի մեջ, այն եղ նույնը բազմաթիվ խաղերի մեջ։ Վերնվում բերված են միայն սակավաթիվ օրինակներ։ Պետք է ասել և հետեվյալը։ Կան առանձին «քաղհանի» յերգեր, վորոնք մեր աշխատանքի յերգերի մի տեսակն են։ Բայց սիրո խաղերի մեջ եղ յերգվում է քաղհանը, կամ քաղհանի յերգերը միաժամանակ նաև սիրո խաղեր են։

Բախանի մարդը փուշ ա,
Սրտով սիրածն անուշ ա...
Բախանում եմ հնձիքը,
Հագած եմ լավ չիքը։

Երնեկ կըսամ են օրին,
Վոր կ'ընկնեմ յարիս ճամբու։
Քաղհան եմ անում, ընկել եմ հավես.
Են աղեն կառնեմ, անունը չանես։

Անցնենք դյուղացու պարապմունքների ուրիշ կողմերին։

Հայաստանի շատ կողմերում զարդացած է յեղել խաղողի մշակությունը— այգեգործությունը, ինչպես և պարտիզպանությունը (horticultur)։ Պարտեզը լինում է ալուչատու ծառերի պարտեզ, ծաղկանոց պարտեզ, բուրաստան պարտեզ կամ բուրաստան— բոստան, բանջարանոց, ուր մշակում են բանջարեղեններ և մարդկանց սննդի համար կարեվոր այլ բույսեր—կանեփ, վարունկ, ձմերուկ և այլն։ Մեղնում, ինչպես որինակ՝ Ցերեվանում, այդիներում սովորաբար նաև պտղատու ծառեր են տնկում, հաճախ նաև ցանում են բանջարեղեններ ու ծաղիկներ, այնպես վոր այդիները իսկապես այգի ու պարտեզ են։ Այդին ու պարտեզը, բաղ ու բաղչան և բոստանը, այդեգործությունն ու պարտիզպանությունը,— վոր միայն դյուղացիների պարապմունքը չեն յեղել, այլ նաև քաղաքացիների,— հաճախ յերեվան են գալիս խաղերի մեջ։

Ղուշը կըծըվիա բաղումը,
Կանաչ խոզը թաղումը.
Ցես մին սաքջան սուրաթ պիտի
Իմ յարի ոթաղումը։

Բուլբուլը կանչից բաղումը,
Գունս տարավ վոչ՝ տեղումը.
Կանչի՛, բուլբուլ իմ, կանչի՛,
Թեկուզ քու տերը տան չի։

Մեռա բաղում բանելեն,
Մի կողմեն ջուր տանելեն...

Բաղչի մ'եմ տնկի դարեն...
Մեր տան յեռանն բաղչա կա,
Բաղչի մեջին ուհան կա...
Բաղչի մեջին կա հաճիմ...

Աբի՛ երթանք մեր տան բաղչեն,
Ցես վարդ քաղիմ, դու՝ ալուչեն...

Այսպես յերգվում է նոր տնկած այգին, այգում զբոսնելը, այգու ցողը, պարտեզի կարմիր խնձորը, այգու հնձանը, այգի դնալը, այգու

դուռը, պարտեզի պատերը, դինու կարասը, և այլն. նույնպես հաճախ՝ բոստանը, բոստանի քալամը, պաղպաղը, տաքսեղը, սոխ ու սխտորը, դդումը, բաղուկը, յամխը, ղուռան, կանաչին, շամամը, բոստան ջրելը, և նույնիսկ բահը:

Մարդիս մեջ ուհան կանեմ,
Հատերը մին մին հանեմ.
Տեսնեմ՝ աղբեր (=յաղթ) գալիս ա,
Ուհանը փեչքիչ տանեմ:

Բոստան եմ գրել վերիվ են գալին...
Շամամ մի չեղավ, ուղարկեմ յարին:

Կան բազմաթիվ խաղեր ևս, վորոնց մեջ այս ամենը մտնում են բանահաղեցիկական պատկերավոր արտահայտության համար:

Ճես աղչիկ եմ բաղի պես,
Շամամներըն թաղի պես...
Բաղչան յես եմ, բաղը՝ դու,
Իմ սերբելի յարը դու:

Վո՞նց բաղչա յես, բար չունես,
Վո՞նց ջահել ես, յար չունես,
Ճերկինքի ղուշ ես դառել,
Վեր գալու հնար չունես:

Բուն գյուղական պարապմունքի մեջ կարեվոր տեղ է բռնում և անպատճառ պահանջությունը: Հողագործությունն չէր կարող լինել առանց լծկանների:

Գութանիս լուծը պետի,
Դուշմանիս աչը պետի...

Մորա գոմէշ լծի տակ,
Քող գլուխը պըտի տակ:

Այսպես և խաղ ասում հողագործ գյուղացին. խոհ նրա ընկերը, սերտահար հոտաղը, յերգում է.

Հելի՛, վելի՛, Մորա՛ գոմէշ,
Իմ ձեռ քալեմ գյալշի բէշ,
Ջուլան եղնի ինձի փեչքիչ:

Վոչ մի գյուղ չկա առանց նախրի. նախրապահն ու նախրագնան, տավար արածացնելը, յեղները, հորթեր ու կով, տանը պահած հորթ, խոտի գնալ, հորթի համար խոտ քաղել, նախրաթող ու հորթաթող, տավարի հիվանդություն, մարազ, զոմ ու մսուր, ուր պառկում է հոտաղը, նույնիսկ դռանը դրած աղաքարը՝ անասունների լիզելու համար— այս ամենը դառնում են խաղի նյութ:

Նախրապահին ուրախ ծառ,
Ինձար գցեմ, որ սար...

Մեր տուն, ձեր տուն մտիկ մտիկ,
Ոչխարնըք քաղնըք հորթիկա խտիկ,
Բերեննք, դնեննք մսրա մտիկ,
Տեսնենք՝ վո՛ր յարն ա խորտիկ:

Ահա և յեղան կռչելու մասին մի խաղ.

Ծոր նորը նորել է,
Ծարխ յեղը կռնել է.

Ով վոր գալ է՝ քաղ առ,
Գամաշա կը տամ մանաշա:

Գյուղերում արջառի հետ պահում են և խաշներ, ուստի վոչ միայն յեղնաբածն ու տավարածն և յերզվում, այլ և հովիվը, խաշնարածության յունն իր զանազան կողմերով— վոչխար արածացնելը, մակաղատեղը, գառներ պահելը և այլն.

Ջուրն կայներ մեջ գառներուն,
Երես կարմիր աղբրանց պուն...
Վոչխարն արել եմ բակը,
Դեմ ավել սեվ ակը...

Հովիվ խոսվավ,
Ոչխար մոլորավ,
Բերվոր չիվարավ,
Կթոց դլորավ...

Խաշնապահությունը պահանջում է ամառանոցը խաշնը սար, մարմանդ (յեյլաղ) տանել.

Մեր դռնովը քիչ ա գնում,
Ոտ քոչի մեջ ա գնում.
Երնեկ են քովը աչքին,
Ոխան աղբր մեջ ա գնում:

Իմ աղբերը սարումն ա,
Շվին դոակածալումն ա...

Ցարխ տեղը յայլաղ ա,
Ծաղկով բաղչա ու բաղ ա...

Ջադը եմ դարկել սարին...

Այսպես և ուրիշ շատ խաղերի մեջ, նույնիսկ վոչխար խուզելը և կթելը:

Ես սարը ծաղկոտել ա,
Ոչխարը բզդոտել ա...
Ցայլեն գառներ կը խուզեն,
Ֆեզ ուրիշները կ'ուզեն...

Ոչխարն եկել ա բերը,
Գառներն արել են մերը.

Խաղերի մեջ զորեղ կերպով անդրադարձած են և մեր գեղջկուհիների աշխատանքները: Կինը գործում է գլխավորապես տանը. նա պատրաստում է կերակուրներ, յեփում, թխում է. մանում, գործում է. կարում, կարկատում է: Մի խոսքով նրա ձեռին է ամբողջ տնարարությունը: Բացի այդ՝ նա գնում է սարը բանջարի, մասնակից է տղամարդի դաշտային աշխատանքներին՝ բանվորներին հաց ու ջուր տանելով, խուրձ կրելով, կալսելով, մաղելով և այլն:

Գութանը հաց եմ բերել...
Կուժն առա, ելա սարը...

Կինն է զբաղվում կաթնատնտեսությամբ, վոր կապված է անասնապահության հետ: Նա կթում է կովեր, մաքիներ. բերի ժամանակ էս կթողները կանայք են.

Ելել ես, կ'երթաս կը բերը,
Ոչով չիյտեր սրտիդ սերը...

Կաթ տաքացնել, մածուն մերել, խնոցի հարել, յուղ հալել և այլն, այս բոլորն էլ զարգած են խաղի նյութ:

կաթնս տաքացնեմ, վեր դնեմ...

Մեկս մածուն ա մերել,
Փեսեքին տուն ա բերել.
Աստեր մնա դող կառուն,
Փեսեքի վրեն ա կերել։

Ցեքիմ բերեն հեր աննենք,
Կաթն ու մածնեն մերան ննք.
Լավ դյուլում ասող աղջիկ,
Մինչեվ լուսը սեր աննենք։

Տապկած հավի ճուտ բերեմ,
Վոչխարի մածուն մերեմ...

Հաճախ հիշվում են՝ սեր, մածուն, քան, խնոցի հարել, նույնիսկ խնոցու բերանի սերկևը և մածնի քսակը, վորով մածունը քամում են։

Ինոցին նոր եմ հարել,
Թազա կարագ եմ արել.

Ջառ մինքանիս ղրաղին
Ղանավուղ քյալա կաբել։

Կինն է զբաղվում հացաբարութեամբ։ Նա մաղում է ալյուրը.

Ալուր մաղեմ, թեփ կու դա,
Շեկլիկ աղջիկ ի՞րը կուգա...

Սիրուն հարսը ալիր մաղեր,
Ջուխա չամամը ծոցին խաղեր...

Ճանի գնալ, Թոնիր ու բոխարիկ վառել, հաց թխել, գաթա, բոքոն թխել, ինչպես և ցան, ցանի ամբոց, վառ Թոնիր, ծխացող Թոնիր, թազա հաց, առաջին հաց, մինչև անուշամ հացահանն ու կուտը, վոր ընկնում է Թոնիրը,— այս ամենը շատ անուշամ յերգվում են խաղերի մեջ.

Հաց եմ թխի մշակին,
Ցեխ եմ նամի դուշակին.

Ցաքիս հենց կարսակ եմ,
Վանց որ վարդ—մանիշակին։

Գյուղական կեցակուրներից յերգվում են՝ ապուր (եփել), սպաս (անել), կաթնով, կաթն ու բրինձ, կորկոտ (դնել), խորոված, քուֆթա, տոլմա (փաթաթել), նոր ճուկ, ճվածեղ, տապկած ճուտ և այլն, այլև ճու խաշել, ճու նախշել և այլն։ Չի մոռացվում նույնիսկ վեճ ղազանի քափը գալը։

Մածուն եմ մերել, սեր չունի.
Ջուկն եմ եփել, փոր չունի...

Գալիս հետդ խիար բեր,
Ինչ պահել եմ կաթի սեր.
Ղաբլու փլավ եմ եփել,
Աբի ինձ հետ մի՛տեղ կեր։

Կերակուրների հետ կապված և սանդ ծեծելը (քակելը) ճավարի համար, վոր կարևոր տեղ է բռնում գյուղական ուտեստի մեջ։

Սանդ կը քակեմ՝ հախ ա...
Եբկանքս կ'ապա ճավաք,
Դուշմանս, քու աչքը խավաք.
Ցեխ սերել եմ, յես կ'առնեմ,
Ջանիմ քեզ չունի տավաք։

Եբկանքով աղ աղալն էլ կանանց գործ է.

Եբկանքս աղի վրա,
Շամամը քաղի վրա.

Ցեխ մի պռալիկ ղուշ եմ,
Իմ հերանց բաղի վրա։

Կնոջ աշխատանքների մեջ մեծ տեղ է բռնում նաև տնային ապահովությունը, որը մեծ չափերով արտահայտված է խաղերի մեջ։ Մանկամարդ հարսների ու նորատի աղջիկների դործն է ջրի գնալը, աղբյուրից կամ այլ ջրատեղից ջուր բերելը, ջրհորից ջուր քաշելը, լվացք ու սրբոտ անելը, ավելել, սենյակ սրբել և այլն։

Ջրի ճամբեն աշ կ'անեմ,
Շերմակ ձեռքեն քաշ կ'անեմ.
Կոթի, գնա, չան տաս,
Բնդի հալ ու մաշ կ'անեմ։

Ջրհորից ջուր ես քաշում,
Տակնըվան ինձ ես աշում.
Հեռվից ուրիշներին
Մոտիկից ինձ ես խաշում։

Իմ յար նման բանն է լվաց,
Մարմար ծնդիկը, դոշը է բաց...

Կանանց սպասակալության մեջ է նաև թափ տալը (թաղիք), խալիչեք փուել, անկողին քցել (դոշակ դցել, լհեր բանալ), բարձ դնել (բմբուլ կոպենք, տոլստ լհեր, զարբաթ դոշակ)։

Խալիչեքը փուել եմ,
Նախշուն բարձեր դրել եմ...

Տեղ եմ քցել, վոթ կը գա,
Բարձ եմ դրել, սոթ կը տա...

Հիշվում է նուիրական հավաքած անկողնի ծալքը.

Մալք եմ սարքել, դավան չեմ...

Ցեղ վերջապես ամեն տեսակի ամենօրյա մանր-մունր գործերն էլ տնարժեք չեն համարվում յերդված լինելու համար, ինչպես են՝ մառան գնալ, գինի բերել, կրակի գնալ, կավի գնալ, վոտները թոնիրը կախել, ճրագը լուս տալ, ճրագ դնել, ուլունք չարել, և նուիրական հավեր քշել, հավի թառը, հավանոցն ու հավաբունը և նման բաներ։

Կանանց աշխատանքի մեջ կարևոր տեղ են գրավում և նրանց կարն ու մանածները և գործվածքները, վորոնք իրենց զանազան տեսակներով հաճախ յերևան են գալիս խաղերի մեջ, ինչպես են՝ բուրդ գզել ու մանել, ճախարակ մանել, արշկան մանել, կազ մանել, կար անել, գուլպա գործել կամ գուլպա անել, թաթ անել, զանազան ասեղնագործություններ՝ ազլուխ անել, նախշ անել, բարձ անել, արախչի անել, քոլոզ գործել. թալա գարձյալ՝ քարգահ անել, անոռակ (գայթան) գործել, քուղ գործել, խալի ու խուրջին գործել և այլն։

Ժամի դռան հինած ա,
Հինածը հատհրատած ա...
Ջրի ուղին սառել է,
Մատս ասղ տարել է.
Են քաքլիկ (քաքլավոր) պուլիկ ապան
Ուշ ու միտքս առել է։

Ասեղ մտանոց կը բանցեմ,
Գուլպա, զանուճ կը գործեմ.
Թանկ ու եժան կը ծախեմ,
Քե չատ ուրախ կը պահեմ։

Մինչդեռ կանանց այսպիսի աշխատանքները հաճախված են խաղերի

մեջ, միայն մի քանի արհեստներ են հիշվում, այն էլ ամեն մեկը մի կամ յերկու անգամ: Դրա պատճառն այն է, վոր մեր գյուղերում արհեստավորները շատ չկային: Նրանք քաղաքի բնակիչներ են յեղել: Մեկ ընդարձակված խաղի մեջ միայն աղջիկը չի ուզում, վոր իրեն տան նախշորդի, մաճկալի, կարղացվորի, սուկարի, քյուջարի— չոբանի, փոփոխականների մեջ նաև վանա խոջային, տիրացուի, դուլգարի, սարկավագի, (բայց այդ չի նշանակում, ինչպես այդ ներքևում կըտեսնենք, թե կարղացվորը, սարկավագը հարգի չի յեղել ըստ քաղյակների), վորոնք մենից բացակայելով՝ կը մոռանան իրեն, այլ նա ասում է մորը.

... Ձի տա՛ւ դործավոր (վ. խնաք) մարդու,
Մջուք թալա, պադա պիս.

Իսկ վարիանտի մեջ՝

... Մարի՛, ձի տա՛ւ խնաքին,
Թալի մջուք, սիրի պիս,
Հորին եղնի, դրկի պիս:

Դործավորությունը կամ դործարարությունը (վոստայնանկությունը, կտավագործությունը) մի ժամանակ շատ դարդացած է յեղել մեր գյուղերում, առանձնապես դաշտային գյուղերում յեղել են բավական թվով դործավորի հորեր: Դյուղացիներն այդ արհեստով պարապել են ձմեռները:

Աղջիկ, չիլեն ծալ երա,
Եիլեն ծալ ու մալ երա.

Սդ քու կարմիր քիներաց
Գալ մի տուր, հալալ երա:

Մի յերկու խաղի մեջ հիշվում է դարբին, մեկի մեջ էլ նալբանդ.

Գուրը զուրբան են աղբոր,
Համ դլավի, համ դարբին...
Գաշկա յես նալբանդ ըլնի...

Մեկ խաղի մեջ էլ կա հյուսն.

Սիրածդ ա խառատ-դուրդյար...

Կա նաև հետևյալը, վոր ըստ յերեվույթին գյուղական յերդ չե.

Գլոնիկը փես տալի,
Գուչա քուչա կը յալի.

Կուժն ուսեմ, ջուրը գնամ,
Կը յաշեմ՝ Թառանչ քաշի:

Գյուղական յերդ է, անշուշտ, հետևյալը, վորի մեջ պատմվում է փայտահատությունը, վոր կատարում են վշշ անպայման արհեստավոր մարդիկ.

Ես գնչեր լուսը տեսա,
Յիմ յարս դուքսը տեսա.

Ելեր եր, մերին կ'ելքաթ,
Կացինըն ուսը տեսա:

Ցերկուս յերգի մեջ ել հիշվում և ծմակում, սարերում վորս անելը, վոր սովորական չի յեղել մեր գյուղերում.

Ծմակին հորս եմ սրել,
Աչքերս չորս եմ սրել.
Վատ խաբարդ լսել եմ,
Արինդ փորս եմ սրել։

Ցեվ վերջապես մի քանի անգամ հիշվում և վոսկերիչ— արծաթագործը (զարդար) իրրև հարուստ մարդ, յերեվի, այն պատճառով, վոր վոսկու, արծաթի հետ գործ ունի.

Մեջքիս քամբը ծուռն ա,
Աչքս զարդարի դուռն ա.
Զարդարը շատ փարալու,
Սիրտս քաղեց յարալու։

Զարդարն ա բաղ չուխավոր...
Հալա մին քամբ կ'ուզեմ...

Մի ուրիշ խաղի մեջ աղջիկը յերգում է.

Արծաթ ավի զուլումչին,
Ոսկա չինե իմ քթին,

Քամար չինե իմ մեջքին,
Ղուլլաղ չինե իմ ականջին։

Ահա են խաղերի մեջ հիշված արհեստավորները։ Թևպես և մեր գյուղերում հարուստների համար սովորական և յեղել արծաթի, նույնիսկ վոսկի զարդարանքների գործածությունը, ինչպես և դրանք հաճախ հիշվում են բազմաթիվ խաղերի մեջ, բայց դժվար թե շատ գյուղերում բանած լինեն վոսկերիչներ։ Այդ զարդարանքներն, ինչպես և ադնիվ կտորները— խաս, ղանավուզ, զարբաթ և այլն— քաղաքից են տարվում գյուղերը։

6. ՀԱՅԱՐԱԿԱԿԱՆ ԽԱՎԵՐԸ ԽԱՂԵՐԻ ՄԵՋ

Առհասարակ սոցիալական խնդիրները, դասակարդային պայքար համեմատաբար քիչ է յերևում այս խաղիկների մեջ։ Դրա պատճառն այն է, վոր դրանք, սակավ բացառությամբ, սիրո յերգեր են կյանքի ծանրությունը դեռ շատ չզգացած պատանիների և յերիտասարդների, վորոնք, ինչպես ասվեց վերևում, չեն հետաքրքրվում այդպիսի խնդիրներով։ Նրանք յերգի նյութ դարձնում են այն, ինչ վոր իրենց սիրտ հուզվերին և վերաբերում։ Բայց և այնպես այստեղ ել գյուղական աշխատավորների հոգ բազմության միջից ջոկվում են գյուղի «հարուստները», ունեվորները, վորոնք և իշխանները են. վորովհետև տնտեսապես ունեվորը և իշխող և հարստահարող։

Ամենից առաջ աչքի յե ընկնում գյուղի հոդեվորականը։ Նորատի յերդչուհիները նրա մասին առնում են իրենց հետաքրքրող մի քանի գծեր միայն։ Հոգեվորականը հին գյուղի միակ կարդացվորն եր, իսկ կարդալը գովվում է.

Ծաղիկ անեմ նարնջի,
Ադա, վեր սրի վնջի՛.
Կարդալը լավ բան կ'ըլնի,
Մանչ մի՛ սրի յալնջի։

Ա՛յ տղա, ալ կապավոր,
Ինչի՞ չելար կարդացավոր.
Ինչի՞ սիրեր ու չառար,—
Դատաստանին պարտավոր։

Կարդալը կատարվում է, հաջկավ, հին յեղանակով, կրոնական դրքերի վրա։ Հիշվում են Սաղմոս ու Նարեկ։

Աղրեր նուռն տակին,
Սաղմոսը կտան տակին.
Սաղմոսն անդիր ա սրել,
Լիդուն բլռուլ ա դառել։

Սաբեն եկավ ձեավոր,
Սաղմոսը ծոցին սավոր...

Ծերդչուհին առանձնապես սիրով և վերաբերում կարդացվոր պատանուն, սիրացուին, սարկավագին.

Գաքուլիդ կալին մեռնեմ,
Երեսիդ խալին մեռնեմ.

Լսել եմ՝ կարդացող ես,
Սաղմոսիդ ծալին մեռնեմ։

Հին դյուղի աղջիկը սիրով ցանկանում է այդպիսի աղայի հետ ամուսնուն, սիրացուին, սարկավագին.

Ա՛յ տղա, սեվ չուխավոր,
Նարնիկը ծոցիդ ասվոր.
Երանի կը տամ են սրը,
Վոր դաս մեր տաս Թագավոր։

Եսոր ծառաքդաք պլտեր,
Տէրացուն իմ յար պլտեր...

Տէրացուն ցանկալի վեհացու յե և այն պատճառով, վոր գրել գիտե։

Ճնա հաղերի աւետքն եմ,
Լիք Ջորերի կուղպն եմ.
Ա՛յ դալամ քաշող տղա,
Ծնկանդ ծերի Թուղքըն եմ։

Ալվան չինող իմ յարը,
Դալամ բանող իմ յարը...

Ամեն սիրացու, հարկավ, գրել չգիտե։ Ահա դյուղացու ծաղրն այն, սիրացուներին, վորոնք գրել չգիտեն.

Ջուր կուղար արփին—արփին,
Համ սիրացու, համ դաբրին.
Ջուր չեր ըրև ծառներըս,
Գիր չեր գրե մառներըս։

Տէրացուն արժանանում է դյուղական խաղերի մեջ մտնելու և նրա հատարը, վոր նա «գիր է անում»։

Ծառից ընկած ծերան եմ,
Տէրացու չեմ, վոր գիր անեմ...

«Գիր անելը» կամ «Թուղթ անելը» կարեվոր արժեք ունի պատանիների համար։ Դա, ըստ նախնական համայնական ինտելեկտի, սիրահարեցնելու միջոց էր համարվում.

Երեվան ուխտ եմ արել,
Թաք ծամս չուխտ եմ արել.
Շան տղեն՝ սերվել վրես՝
Դիսուս ս՝ Քուղբ եմ արել։

... Ա՛յ տղա, խոստ չուզա,
Ին համար Քուղբ եմ երթ։

«Գիր անելով» ղբաղվում են և մոլլանները.

... Իմանամ՝ ինձ չես տանի,
Կ՝երթամ, մոլլին Քուղբ կ՝անեմ։

Բայց մոլլաններից պակաս չեն պարապում այդ խաբեբայական գործով նաև տերտերները.

Ա՛յ տղա, իր անել տուր,
Միրուդդ վեր անել տուր.

Հերս քեզ աղջիկ չի տա,
Տերտերին դիր անել տուր։

Սիրահար աղջիկն ու տղան տերտերին, ինչպես և վարդապետին, հիշում են նաև չհաստության դեպքում։ Նրանք դառնացած բողոքում են չհաստության դեմ։

... Ինձ չհաս հանեցին
Գլխատեռ տերտերները։
... Մեռնի տերտերի վորդին,
Ինչի՞ ասավ՝ չհաս եր։

... Հոդիդ դատի, վարդապետ։
Ախ՞աս իր ասում՝ չհաս ա։

Ցեկեղեցական կանոնը չափազանց հեռացրել եր աղջակիցներին ամուսնության. «Յոթը պտրան» անցնելուց հետո միայն աղջակիցներն իրավունք ունեյին իրար հետ ամուսնանալու։ Ահա՛ թե ինչ է ասում այդ մասին յերգը.

Եսը չաբաթ, պա՞ռ կ՝ըլի
Ծոցին աբծաթի թաս կ՝ըլի.
Վարդապետ, բալեդ մեռնի,
Սիրածն էլ չհա՞ռ կ՝ըլի

... Սիրած սիրածի չեն տա,
Տերտերն ա մեղքի տակը։

Չհաստությունը տերտերներին ու վարդապետներին համար դարձած եր յեկամտի աղբյուր։ Նրանք կաշառքով թույլ եյին տալիս մերձավորներին ամուսնություն ըստ հին ասության՝

Հիսուն ֆլորին,
Կաթմիր ղորին,
Մեռնի կին,
Առնի քնին։

Իսկ խաղի մեջ յերգվում է.

...Մինաթ աննանք մեր տերին (տերտերին),
Չհասը հաս աննանք,

Ցեվ այդ հնարավոր եր, վորովհետև ինչպես յերգն ասում է.

... Տերտերը փարին կարտա ա։
... Նախշած աղուխ եմ պահել
Մեղ պահող տերտերին։

Տերտերից շատ ավելի բարձր է դասվում գյուղի ֆյոխվան, ռեսը, մե-լիքը, պաշա։

Իմ յարը սիրացու յա,
Հատուկ տերտերացու յա։

Մազերը վոր վեր տնկ,
Մեր գեղի գյոխվացու յա։

Կինը պարծենում է, վոր ինքը «Մուսես աղայի» թոռը կամ հարսն է, վոր իր յարը մելիքացու յե։

Հաց եմ թխել գաթացու,
Իմ յարը մելիքացու։

Գեղումն ոխտը աղա կա,
Իմ յարին նոքարացու։

Ինչո՞վ է գյոխվան, ռեսը, մելիքը (=գյուղի տանուտերը) ավելի հար-գի։— Նրա յեկամուտն ավելի մեծ է։

Մաղիկ ունեմ՝ հինց ես ա։
Ցեղըն մեր գեղի ռես ա՝

Ըռեսին խալաթ պիտեր,
Խալաթը մանեթ-կես ա։

Նա կողոպտում է գյուղը և ապրում նրա հաշվին։

Գամ չարաթ որ վեր ճաշին,
Գամ կիրակի վեր խաշին։

Հացը գեղին, քան գեղին,—
Դարտակ ռես, քու տունը շեն։

Մինչդեռ աշխատավոր գյուղացու արևն անջուր մնալով՝ չորանում է,

... Մեր ռեսի դաշին հաղար ու մաղար։

Ցեղ գտնում են գյոխվան, վորովհետև նա էլ վերցրել է մեծերին։ և նա իր «վերցրածը» տանձնապատիկ հանում է աշխատավորներին հարստա-հարեշով ու բանտարկելով։

Ցաքս դուքատ ես սրած,
Աքունս թողել սառած։

Գելն ուսի քո եչ գլուխ,
Փողով գյոխվա յես գառած։

Գյոխվի, ռեսի ուժը կախված է քեհ նա ինչ երևոյթեղ ունի իր մեծ մոտ։

Մեր հանդերը ջրով ա,
Մեր ռեսը քրով ա։
Վոր մեկ խանի (վ. դասավորի) մոտ երթա,
Ոսոքը վոսկե ջրով ա։

Աղաների մեջ բավականի հիշվում են՝ թավաղ, բեկ, բեկզադա, աղնիվ և այլն։ Գյուղացու համար դրանք ցանկալի վիճակի մարդիկ են. ուստի գեղջկուհին իր յարին գովում է՝ անվանելով նրան՝ թավաղ, սարդար և այլն։

Ա՛յ ավատա, ավատա՛
Թոխկին վոսկի սավադ ա.
Ինձ մի սարդար յար ունեմ,
Կ՛ասես՝ քաղքի Թավադ ա։

... Ման յարս մեկիք ա։
... Ինձ մի Թավադ յար ունեմ
Համ մեկիք ա, համ աղա։

Սա մի պատկերավոր արտահայտություն է, ինչպես և հետևյալների մեջ.

Աչքով, ունքով հերիք անես,
Ուրիշների նաղը տանես—
Ախտոս աբի Լիվան Չանիբ,
Ինձ համար սուլթան ու խան ես։
Թառ խորտիկ ասլի զադե...

Մատանիք ոսկեզրած,
Ա՛յ աղա, դու ինձ դրված.
Դու խանին նազար պիտիս,
Ցես քո ծոցին զանգրված։

Սրա մի վարիանտի մեջ «նազար» բառի փոխանակ է «չաթիր»։ Շաթիրները հագնում էին կանայք ու կարմիր, ինչպես հետևյալի մեջ.

Թաղավորը Թախտով ա,
Իմ յարը շատ բախտով ա.

Կանաչ-կարմիր հագնող ա,
Նամեհանիկի կայնող ա։

«Ման նազար թե չաթիր» (=ծառայող), «նամեհանիկի կայնող» (=փոխարքայի սպասավոր), դրանք արդեն հին դյուղացու համար ամենաբարձր աստիճանն էին համարվում։ Գեղջկուհին շատ դոհ էր յարի արտաքին նմանությամբ միայն.

Են աղան եկավ, անցավ,
Իրմոքը (=իբենով) բեկ կըլմանիք.

Եկավ, անցավ չան աղան,
Գիտցա քի ջոջ կըլմանիք։

. Մի քանի խաղերի մեջ միայն կինը պարծենում է իր ազնվական յարով.

Մի բաբե եմ ասել՝ իմն ա,
Մինն էլ եմ ասել՝ իմն ա.

Գյանջու քարվանն դալիս է,
Մեկի Թավադն էլ իմն ա։

Վարիանտների մեջ «Թավադ» բառի փոխանակ է «մեծ խոջա», «ազնիվ», «Թոռուն» (=ազնվական)։ Սա արդեն ազնվականի ու առևտրական քաղաքացու յերդ է, ինչպես և հետեվյալները.

... Ցես են Թավադ յար կ՛ուզեմ,
Ջուամարդ կանդնի խալխումը։

... Ինչի՞ա բեկի տղան,
Իմ յարը շահբազ պիտի։

Մի ուրիշ խաղի մեջ էլ կինը պարծենում է ասելով՝ «Ցարս իշխանի տոյ ա»։ Բայց դրանք, յեթե իրոք լուկ գովեստ չեն ասված, դյուղացի աշխատավորի արտահայտություն չեն։ Ահա թե ինչպես է աշխատավորը, հովվի կինը, գովում իր ամուսնուն, կամ տավարածի համար սեր և հայտնվում։

Ջուր եմ դրել՝ կեծ ա,
Վոչխարիս աղաքն եծ ա.

Մեռնեմ մեկի չոբանին,
Վոր Թավադիցն էլ մեծ ա։

Ծառին տակը հել ունեմ,
Հատ տըրեխում թել ունեմ.
Ծո՛ տանչ, տավարը վար քո՛,
Ցես քո վրա սեր ունեմ։

Ա՛յ աղա, տավարած աղա,
Ջոտով ճարած աղա.
Ոբախ սրբեմ, չոր ջեմ,
Նոսիր բեղարած աղա։

Բայց և այնպես տոհմը, ծագումը, վիճակը, դեռ ևս մեծ նշանակություն ունի.

Աղա, դու ի՞նչ աղա յես,
Աղա չես, բեկզա՞դա յես.
Հալարաւբյուն մի՛ անի,
Դու մի թուրք գյաղա յես։

... Հենց դիտես՝ շահզադա յա.
Շատ մի՛ ուռիլ, արտաքին,—
Նդ քո սրբած՝ գյադա յա։

Առանձնապես շատ է հիշվում «խանը», և նույնիսկ մի քանի հատուկ անուններ են հիշվում խաների համար։ Դա հիշողություն է 17 և 18-րդ դարերում Արևելյան Հայաստանում նստող խաների։

... Խանին չեմ տալ իմ աղջիկը,
Գյալաչայի Սուլթան աղա։

Կան, հարկավ, խանին աղջիկ տվողներ էլ.

Մեր բաղը եղիեն բաղ ա,
Ինձար ջեմ՝ կը խաղա.

Խանին եմ աղջիկ ավել,—
Կան դեղի՝ (ասաց)՝ Սուլթան աղա։

Սույն ամուսնությունն է յերզվում և հետևյալի մեջ.

Նշանածիդ (=քո, վոր նշանած ես) հինեն բերին,
Կեսրանցդ տանեն բերին,
Վերեն ալ քաղով ծածկած,
Մեծ խանի դռնեն բերին։

Սա կամավոր ամուսնություն է, դուցե և աղնվականուհու, կամ «խանի» ասված է վերացական թագավորի համար։ Բայց կա նաև բռնի ամուսնություն։ Ահա մի խաղ, վորի մեջ յերզվում է խանի դուռն «աղջիկ քաշելը», վոր նկարագրել է Թաչ. Աբովյանը։

Ջաղացի աչի կուռը,
Կըցնծար մինի դյուռը.

Վայ իմ սրբած բլուռը (=աղջիկը),
Գալչեցին խանի դուռը։

Նույնը կատարվում է նաև «գեղի տիրոջ» ձեռով.

Սիբան աղջիկ տերը,
Չի տալիս գյաֆուր մերը.

Ինչ անի գյաֆուր մերը,
Տարել ա դեղի տերը։

Նախորդ քառյակի մի վերափոխակն այսպես է՝

... Վայ, իմ մեկնիկ աղբորը
Գալած ա խանի (վ. մելիքի) դուռը։

Այսաեղ եւ վողբում են խանի դուռը մարդկանց քաշելը՝ հարստահարելու համար, ինչպես նկարագրել են Աբովյանն ու Պռոշյանը:

«Խանի դուռը» հիշվում է նաև իբրև դատարան, բողոքելու վայր.

... Ով իմ սիրածն ինձ չի առ,
Կըգաչեմ խանի (ս. գյուղի) դուռը:

Իսկ մի ուրիշ խաղի մեջ յերիտասարդն ասում է.

... Սիրել եմ, տանել պաեմ,
Թող տանեն շահի դուռը:

Այսինքն՝ անպատճառ պիտի առնի աղջկան, նույնիսկ յերեք դանդաղի գնան շահի մոտ: Նույնն ավելի ուժեղ արտահայտված է հետեվյալի մեջ.

Ցիլ ու երեքանք կռնկու սար,
Ծռչկ (ս. ըրդ) մի չինենք, մանենք հիսար.
Թող դա վըր մե շահն խոնդքար,
Ուզե հարյուր, կուտամ հազար,
Բաղե', քո թուխ աչքիդ համար:

Ինչպես կարելի յե տեսնել, «խանը» փոխանակվում է «մելիք», «գյուղավար», «գեղի տեր» բառերով: Դրանք մեծ ու փոքր իշխողներն են և կեղեքողները: Դրանք և դատավորներն են: Ահա թե ինչով և սպառնում կեսուրից ղրկված հարսը.

Կեսուր ինձի ղրկեր ի,
Անթրոցով մըկեր ի.
Կ'երթամ խանին դատ կ'անեմ,

Ճոճ տունը վերան կ'անեմ,
Փըստիկ տունը չեն կ'անեմ:

«Շենի աղեն» դեր է կատարում և ամուսնուհյան խնդրում.

Վոչխարս արի են ուղին,
Մատնանի կ'անեմ չենի աղին.

Ասլամած, աչխարք կըտեսնք,
Ինձ ավելք են նամարդ տղին:

Հատկապես հիշվում են՝ Փանահ խան, Ջանդո խան, Ախտա խան և Գյանջում նստող խանները, ամենքն էլ վատ հիշատակով: Լսենք, թե ինչպես և յերբում կինն իր յարի համար պարար պատրաստեիս:

Գուլպա կ'անեմ, խաչը ա,
Թխանա յարիս պարար ա.

Փանահ խան, քու մարը մեռնի,
Իմ յարը խե՞ մաշալ (մաշվել) ա:

Մի ուրիշ յերգի մեջ պատմվում է Ախտա խանի սպանվելը.

Մեր Թվանքը ծանոթ ա,
Լոխ ըրծաթե բանդեր ա.

Ախտա խանը սատկել ա,
Ջին ու դուշը անտեր ա:

Ցեվ վերջապես՝

Գյանջում նստած խաններըս—
Մեր մոթալին պաները (=պանիրը):

Վատ հիշատակ և պահվածք և լեկզինների արշավանքների մասին.

Ա՛յ տղա, դու խանի վորդի,
Հագինդ լինամի մորթի.
Թե ինձնից դյուման յոր բանես,
Լեզվին քեղ տանի մորթի։

... Սիրտը վոր սիրածին չի տա,
Լեզուտան կ՚ելթա դերի։
... Իրեք որ ա չեմ տեսել,
Հենց եմ լեզդու թալանած։

Այստեղ հիշվում է նաև Աջմու դերի, Դաղստանի և Խորասանի դերությունը։

... Խորասան յեսիր պիտի,
Իմ սիրածին նշանած։

Մի անդամ վոր խաղերի մեջ յերևան են գալիս իշխողները— «հարուստները», ունեվորները, («Մակար ունեվոր, դեղին չնավոր»,— այսպիսիներն էլ կային դյուղերում),—քնական է, վոր այս դյուղական բանաստեղծությունների մեջ դտնեյինք նաև հարուստ զգեստներ և ավելի ևս թանկագին զարդարանքներ։ Այսպես հաճախ, շատ հաճախ յերգվում են՝ քամար, արծաթե դոտիկ. մատանի, վոսկի մատանի. գնդեր, ականջի ողեր, վոսկի գնդեր, քթի ող, խզմա, վոսկի խզմա. ապրշան, բելտուկ, վոսկի բելտուկ, վոսկի ղուլլաղ. արծաթ վզնոց, ճակատի վոսկի, ճակատի մաղյա, քորոց, նույնիսկ ժամացույց, «ծոցումդ դեղին վոսկի», «սրսուռ վոսկի»։

... Խորսուն աչքեր ֆինջան,
Բունն է քեզ լալ—մարջան.

Ապրշան ոսկեջուկ,
Ոզմեն ակնունանք չարուկ։

Այս զարդարանքները կանայք թե քաղաքներում և թե դյուղերում են կրել, արծաթի և վոսկի զարդերն, անշուշտ, ունեվորները միայն։ Նույնպես ունեվորներինն են յեղել և այսպիսի թանկագին զգեստները՝ սամույր կապա (տղայի), սմբըշում, խաս, ղումաշ շորեր, ղանավուզ կապա, զարբաբ, բուխարա գդակ, քերման (շալի) դոտիկ և այլն։

Դյուղացիների աշխատավոր զանգվածները յերթե մատանի, ապրշան և ղեր ունեցել են, այդ յեղել է պողվատի, սակավադեպ՝ արծաթի։ Նրանց կանանց ձեռքերին յեղել են ուլունքներ, ճակատին յեղել և վոչ թե վոսկի շար, այլ «շահի», այսինքն արծաթի հինգ կոպեկանոց դրամներ, նրանք տատասել են աղքատության մեջ։ Ցավ մեր այս խաղերն ամենամեծ մասով հենց այդպիսիների վիճակի արտահայտությունն է.

Թունդերը հով ա,
Վրեն լե բով ա.

Տատներկու չան հնձ,
Մե չոր լե կով ա։

Սրա վոխհատուկն է.

Թանդերը բաց ա,
Վրեն լե թաց ա.

Տատներկու չան հնձ,
Մեկ չոր լե քած ա։

Ահա խնկական պրոլետարը, այս քաոսի սկզբնական իմաստով: Զուրկն վաստկից, չունեն ալյուր, տոված՝ աղանձով են ապրում, չունեն թացան. բայց հարուստ են յերեխաներով, ընտանիքի անդամներով, վորոնցից յուրաքանչյուրը կարող է ասել.

Տավ հալավս փըրփըռում ա,
Անկաշներս դըռդըռում ա.

Տաշտը դարտակ, մաղը կախ,
Փորս տոված ղըռղըռում ա:

Բայց կան դրանցից ավելի չքավորներ ել. կան նույնիսկ տուն չունեցողներ:

Աղջի՛, դու մորդ ուշ հլար,
Մեծացար, կոմիր քուշ հլար.

Տուն ըմ չունիմ, որ տուն երթանք,
Ֆեղի առնեմ, ո՞ւր երթանք:

Զքավորին նեղում է պարտքը: Վո՞րքան նվաստացնում է յերիտասարդին այդ պարտքը:

Տոված քուչեն ման աբի,
Ցես քեզ մարդ չեմ համարի.

Գնա հորդ պարտքը տուր,
Նոր արի՛, աղջիկ տիրի՛:

Ահա՛ թե ինչպես է վիրավորում աղջիկը պարտք ունեցողին:— Փոփոխակի մեջ ավելի ևս խիստ արտահայտությամբ է. աղջիկն այդպիսի մեկին չան տեղ ել չի ուզում դնել, և վիրավորանք է համարում, վոր պարտք ունեցող տղան իր «անունը տալիս է», այսինքն աղջկան ուզում է:

Հոբս պարտքը տվել եմ,
Աղջի՛, քեզի տիրել եմ.

Ղալաթ ա արել հերդ,
Ֆեղ մի խոսքով տարել եմ:

Ցավ ինչպես չպահանջի աղջիկը, վոր տղան նախ պարտքը տա: Լսենք տանը խեղճ ու անճար մնացած կնոջ վողբը.

... Կուլամ, ողորմած տեր, ա՛ս ընդո՞ր բան է,
Պարտկանն ալ եկեր, տնեն կըհանե:

«Հոր պարտքը» յերբեմն հայրերի անմտությունից ել է ծագում. դյուղացին պարտքով առած կովը ձմեռը ծախում է, ինչ է թե կարողանա վորդուն պսակել և բուռնուզ առնել հարսանիքին:

Պարտքով կովը ծախեցին,
Ձմեռ տվին բուռնուզին.

Բուռնուզ պատեն կախեցին,
Մուրհակն ընկավ մեր վզին:

Այսպես բողոքում է նորահարսը կամ նորաիեսան: Տեսնք, թե մի ուրիշ խաղի մեջ ինչպես է իր այս վիճակի համար դանդատվում մանկամարդ կինը:

Ձյունն եկել, դուռն առել ա,
Դեսբաբս պարտքով մեռել ա.

Ցես պտուկի, յարս պտուկի,
Դարդը մեզի տարել ա:

Սրանից էլ ավելի դժվար վիճակ չի կարող լինել մանկահասակ տոմուսիններին համար, վորոնց տոմուսանացնում են ծնողները:

Ես պուճուր, յարս պուճուր,
Ո՞վ կը տա մեզ հաց ու ջուր:

Այս է ահա այդպիսի չարաբաստիկների խաղերի կրկնակը, վոր շատ տարածված է վաղուց է ի վեր, վորովհետև այդպիսի տոմուսնությունները շատ սովորական են յեղել մեր դյուղացիների մեջ:

Ծերը տոմուսնացումը լինում է ծնողների կամքով միայն, առանց աերի աղջկա կողմից, աղջիկը դեմարտասում է հարսանի մարդու դնալ.

Աբեվ դիպավ պատին,
Վոչ ողորմի իմ տատին.
Ես լեն–սրճակ աշխարհը,
Ինձի ավավ աղքատին:

... Հարուստն ուզեց, ավավ վոչ,
Պահից ավավ աղքատին:

Փոխոխակների մեջ «աղքատ» բառի տեղ է «կռնատ», «վորբ դյաղան», վոր համապատ է «աղքատի»: Ահա թե ինչպես է դանդատվում անհայրենիք վորբը, վոր վոչ մայր ունի, վոչ մի դրյալ թիթու Թան.

Նանե՛, նանե՛, նան չունեմ,
Մին քթալ թիթու Թան չունեմ,

Կը մեռնեմ ջահել–ջիվան,
Մի թային վաթան չունեմ:

Հարստության ցանկությունը հարբնացու աղջկա կողմից՝ անդրադարձած է բազմաթիվ խաղերի մեջ.

Ես աղջիկ եմ, ալ կ'ուզեմ,
Բարակ մեջքիս շալ կ'ուզեմ.

Վոր աուն վոր յես հաթս երթամ,
Դումաչը ծալլիծալ կ'ուզեմ:

Վարիանտների մեջ աղջիկն ուզում է՝ «վոսկին ծալեծալ», «քիրմա շալ դոտիկ», «բողչան ծալեծալ», «յալդուզ վոսկի շաթ» (ճակատի կամ վզի):

Բայց կա մի ուրիշ հայացք էլ: Ուրիշ շատ խաղերի մեջ առավելությունը տրվում է վոչ թե հարստությանը, այլ վեհացու աղային:

... Ինչ կ'անեմ դունդի մալը,
Տղին տես, աղջիկը տուր,
Թող ըսկի չընկի հալը:

Հաղար դուբուշով չեմ տա,
Կըտամ աղքատ կնկանի:

Այսպես է ասում հայրը՝ հրաժարվելով աղջկա դլխապնից:

Սիրող աղջիկը, հարկավ, մի՛շտ այդ տեսակետին է: Լսենք նրան:

Հասիբ ա, հա՛ հասիբ ա,
Տուն չունի, քյասիբ ա.

Կ'ուզի ասիբ, կ'ուզի վոչ,
Են տղան ինձ նասիբ ա:

«Սիրել եմ, կառնեմ, ջայնամ աղքատ ա»—ահա խաղերի մի կրկնակ:

Բլուրը տալի վրա,
Ինձ՛որը ծառի վրա.
Սիրած սիրածի տալին,
Ջոր գնանի, քալի վրա։

... Հայս թող լինի գոլի,
Մենակ յար ինձ համար
Սրտով խոսքը կատարի։

Խաղերի մեջ հին գյուղն արդեն քայքայված է։ Աշխատավոր չինականն այլևս չի կարողանում ապրել իր տեղում բնական տնտեսությամբ։ Նա ստիպված դուրս է գալիս իր գյուղից ուրիշ աշխատանք վորոնելու։ Նա պանդխտում է մոտիկ կամ հեռու կենտրոններն աշխատանքի համար։ Քաղաղանց շատ կան խաղեր պանդխտության մասին, վոր ասկավ, բացատրությամբ հետևյանք է աղքատության, և կան այնպիսի երգեր, վորոնց մեջ պարզապես արտացոլում է աղքատությունը։

Հայ եմ ըխել գոլի յա,
Իմ յարը սաֆարի յա...
Ջորեն է վեր հանդեր ա,
Ջուրը տունս քանդեր ա.
Շուտ արա, յես դարձիր յա՛հ,
Սիրածդ տանն անուր ա։

Լալվարու ջուրը սառն ա,
Ոտարությունը դառն ա.
Տունդ դարձիր, իմ աղբիր (=յար),
Բալորքս պտուղ դառն ա։

Այսպիսի խաղերի մեջ բավմակողմանի արտահայտված է պանդխտի տանը մնացած կնոջ, յերեխեն և պանդխտի իրեն, ծանր վիճակը, նրանց կրած հոգեկան տանջանքն ու կարոտը, և վսեմացը վերադարձի համար, վերադարձն, ընդունելությունը, լուր ուղարկելը և այլն։

Ջուրն (վ. կալն) եկավ երես-երես,
Բաղդյան, ասեված սիրես,

Ինչ վոր կ՛ուզեիս ներեվան,
Իմ յարին հետդ բերես։

«Բաղդյանի» տեղ վոմիտխանների մեջ է «Խոջան», «Խոդրաթեյի»։ Կինն ուրեմն իր պանդուխտ յարի համար դիմում է թախտուղ վերնզակին կամ կապալառուին, վոր գյուղերն ընկած ման են գալիս ապրանք վաճառելու կամ ձեռք բերելու։

... Խոջա, ասեված կը սիրես,
Ինձ մի հեռու յար ունեմ,
Ինը խաբարը դու բերես։

Իբրև պանդխտության վայր հիշվում են՝ Գյանջա, Նուխի, Շերվան, Գյումրի, Երեվան, Կաղզվան, արևմտյան յերկրի մեջ՝ Ստամբոլ, Իսկյուտար, Իզմիր։

Լուսնակըն ինձի ցերեկ,
Շերվանու քարվան բերեք.
Աղլուխս մուշտա կուտամ,
Ծարիկս խաբար բերեք։

... Իմ յարը Գյանջու կուսն ա,
Գյանջա, քու սարը վուլ գա,
Բալքի իմ յարը տուն գա։

Մի յերկու խաղի մեջ պանդխտելու վայրը և արդյունքն։

Հալեմ, հալեմ, հլըցնեմ,
Ճրագն ածեմ դրըցնեմ.

Բաքվից եկողներ, ձեզ մատաղ,
Կապնեք, իմ յարից հաբցնեմ։

Կան մի շարք պանդխտի սրտառուչ յերգեր, վորոնք հորինված են 10 և 11–վանեականի տողերով: Դրանք ավելի Վանի և արևմտյան կողմերի յերգեր են և, ինչպես յերևում է, պատկանում են մի առանձին ցեկլի, մի ընդհանուր «Աբի, յար, աբի...» կրկնակով: Դրանք կրկդվել են կամ հատ հատ յերկյակներով, յեռյակներով, քառյակներով, կամ թե մի քանի այդպիսի տների հաջորդությամբ, բայց միշտ լույծ և տարբեր տարբեր կապակցություններով ու վարիանտներով: Հենց այդ պատճառով այդ յերգերն էլ առնված են այս ժողովածուի մեջ:

6· ԲՆՈՒԹՑՈՒՆԸ ՍԱՂԵՐԻ ՄԵՋ

Մի սխալ կարծիք կա, թե մեր գյուղացին բնության մեջ ապրելով հանդերձ՝ իբր չի տեսնում և չի սիրում այն: Դրա հակառակն են ապացուցում մեր այս վոտքերիկ քնարական յերգերը: Դրանց մեջ ընդարձակ տեղ ունեն բնության նկարագրերն ու բնության մեջ առնված նմանություններ:

Գյուղացուն գրավում են ամենից առաջ արեգակն ու լուսին և աստղեր: Բերենք մի քանի խաղեր:

Արևվը բակ ա քցել,
Շողքը սրտիս մեջ ցցել·
Ջու սերդ էլ մի գհիցը
Լերգ ու քոքս ա խոցել:

... Սելին նստել կու գա Ծավին,
Արևվի շողքը դիմել է՝
Դուշին կարած թաղա մովին:

Արեվ ես ու լուսյա չես տալիս,
Ամպի տակից դուրս չես գալիս:

Ես ձորն է վեր ծնեբակ,
Դու նմանիս արեգակ...

Լուսնակը շող ա քցել,
Իմ յարը քող ա քցել·
Բարակ քամին տալիս ա,
Ալ քողը դող ա քցել:

Ես որ նորը նորել է,
Նորել է, բոլորել է·
Ծա՛ր, քո լուսնակ երևից՝
Իմ սիրտը մոլորել է:

Լուսնակն ա կայնել գարնի,
Պատկերն ա քո պատկերին...
... Բոլոր լուսնակին նման
Չալել, մաշել եմ, տուն յեկ:

Բաղչի մեջի գոլ (= լճացած) ջրեր,
Լուսնակն ի մեջն ել գըներ·
Ցարուկ ջրի մեջ կ'աչքեր,
Սիրտը լուսնակն ել ընկեր:

Աստղը ցոլաց յերկինքից,
Եկավ, անցավ մեր յերդիկից...

Լուսնակ դիշերը դուրս ելա,
Կյանք անուշ կըցալա...

Ցես լիս աստղ եմ երկնքին,
Շողս աված գետնքին...

Այսպես և բազմաթիվ այլ խաղերի մեջ: Նուշնակս յերգվում է՝ արեգակի ծագումը, նրա ցոլացող գնացքը յերկնակամարի վրա, մայրը մանելը, յերկնքի մթնած մնալը, լուսնի ծագումը, լուսնակ դիշերները և այլն:

Արեվ թովում ելավ...
Արեվ առե ալ նաբնէք...
Արեվը նոր ա ծեգնէլ,
Սարերի գլխից չեքնէլ...
Լուսինը յելավ կամարից...
... Բարի արեվը յերկինքում,
Շողն ա դիպել ակոսին:

Արեվը ցոլաց, գնաց,
Ցերկինքը մինած մնաց...
Ես գիշեր մինեց, գնաց...
Լուսինը ցոլաց, գնաց,
Ամպին դեմ առավ, մնաց...

Ցեվ շատ ուրիշ խաղերի մեջ: Հավասար չափով յերգվում են նաև ամպ ու թուխպ, անձրև, ծիածան, կաթիլուտ, ցուրտ, ջրի սառել, ձյուն ու ձմեռ, ձյան ուսին (հյուս), բուք ու մեզ, աշուն ու աշնան անձրև և այլն:

Աշունն եկավ ցողալեն,
Ծառի թիվը գողալեն...

Աշունն եկավ սարիցը,
Տերեվ թափեց ծառիցը...

Սարը կոխել ա դուման...
Սարի առկը մշուշ ա...
Սարին նստել ա դուման...
Ալագյազ սարն ամպել ա... .
Եսոր ամպ ա, պարզում չի...
Սարերին թուխպը պիտի...
Սեվ ամպերը շատ սարին են...

Ամպել ա ամպի վրա,
Ամպերը սարի վրա...

Ձյուն եկավ, ելավ գոտիկ,
Ալագյազ սարին մոտիկ...

Ելան սարերը մոտիկ,
Ձունը եկել ա գոտիկ...

Ալագյազ ձուն ա բռնել...
Ձյունն եկել, դուրն առել ա...

... Ես գիշեր, լուսնակ գիշեր,
Ձյունն եկել, գետին նախշել...

Ձյուն ա գալիս վերևիցց,
Ջուր ա կաթում տերեվից...

Ձերմակեց գետին ճեց...
Բուք ու դուման ա ձորերս...
Սարերն եր ձուն ու բուք...

Սիրով յերգվում են նաև՝ առավոտ, լուսաբաց, յերեկո, մուքին ընկնել, գիշեր· ապա նաև գարուն, ձյան հալվել, ծառերի կանաչել, ցող, քամի, շոգ, հումն ընկել և և այլն, և այլն,— տարվա և որվա բոլոր և ամեն տեսակի յեղանակներն ու յերևույթները: Դրանք երեկոյ բազմազան հեղհեղումներով ու ձևերով չարունակ կրկնվում են այս գյուղական յերգիկների մեջ թե երբև բնության նկարագիրը և թե բանաստեղծական պատկերավորության համար:

Սարերը հեշտացել ա,
Ջրերը չատացել ա...

Այ տղա դու բաղի մինջին,
Վառնեղդ չաղի մինջին...

Ման կը գամ բաղի մինջին,
Վառնեղս չաղի մինջին...

Առավոտյան անուշ հովին,
Շողքը դիպավ դաշիդ մովին...

Առավոտուն կ'ելնես պաղպաղ հովերուն,
Բիւլբիւլ չադրը գարկեր վարդի քովերուն...

Սարիցը գալիս ա քամի...
Ծառի տակը հով քամի...

Բնութեան այսպիսի յերեվութիների հետ նկարագրվում է նաև գործողութեան վայրը՝ Հայաստանի սարը, հով սարը, ձյունապատ սարը, կանաչած ու ծաղկազարդ սարը, մարմանդը (յեյլաղ), սառն աղբյուրը, դարձյալ աղբյուրը, զնացիկան ջուրը, գետը, գետափը,— սար ու քար, քար ու քարափ, սար ու ձոր, այլ և քաղ ու բաղչա, մեկ մեկ նաև դաշտ ու դուբանը, ճանապարհը և այլն:

Ալագյազ սարի գլխի
Գող աղբերից դուրս եմ...
Ալագան, ա՛յ Ալագան,
Սառն աղբուր չպան չպան...
Ծառի տակի հովն անուշ,
Աղբուր կ'եղնեք, համն անուշ...
Աղբուր գացի, ջուրն անուշ,
Մաղիկներու հոտն անուշ...
Գետ ա գնում երես-երես...
Գեաերուն կամուրջ չկա...
Ճես ծարավ եմ, ջուր չկա,
Սարերին աղբուր չկա...
Սարեր, ձորեր, յես կացեք,
Իմ յարի ճամբեն բացեք...

Ճես բավականանում եմ բերած տողերով, վորոնք շատ են:

Բնութեան նկարագրի մեջ մտնում են նաև յերկրի բուսականութիւնն ու կենդանիները, վորոնք հիշվում են խաղերի մեջ: Ճես արդեն ուրիշ տեղ*) պարզել եմ, վոր մեր սիրու յերգերի մեջ բնորոշ կողմն այն է, վոր դրանց մեջ գտնում ենք մի ամբողջ կանաչազեղ ու ծաղկազարդ այգի ու պարտեզ՝ արմավենի, նարնջենի, նոճի (սեվի), նշենի, նոնենի, ուռի արթ (= խաղողի որթ), մուրտ, սերկեվիլ, շաբարեղեգն, խնձորի, շամամ, վարդ, աղբրանց արյուն և այլն: Ճեվ այսպես մեր հին սիրու յերգերի, ինչպես և դուռանական ու ժողովրդական յերգերի մեջ, հաճախ միևնույն կիրառութեամբ:

Այս միևնույն հատկութեանը մեծ չափերով ունեն նաև խաղերը, վորոնց մեջ չեն յերեվում միայն վերևում ընդգծվածները, վոր մեր հին դուռաններին, իբրև արվեստավոր յերգիչների, կարող էին ծանոթ լինել վորևե աղբյուրից: Բայց դրանց փոխանակ՝ մեր խաղերի մեջ հիշվում են ուրիշ ծառեր և այլ բուսեր, ինչպես են՝ շլորի (սալորի), պոպոք, պընդուխ, թթենի, բալի, ծիրանի, չինար, բարտի, ուռի, մոշի (մի խաղի մեջ՝ թութինի): Գյուղացին յերգելիս ոգևորում է իր շրջապատի բուսականութեունից: Ամենից շատ յերգվում է խնձորը:

Խնձոր ես ծառի վրա,
Ծաղիկ ես սարի վրա.
Անուշ տաղ ասող բլբուլ,
Կայնել ես քարի վրա:

Խնձոր ունիմ, կծած ա,
Ջոջո բալոջն արծաթած ա...

*) Տ. Աբեղյան, Հին դուռանի. ժող. յերգեր, յեր. 123 հան.

Ինձորից հետո՝ կարևոր տեղ են բռնում նուռն ու նռնենին, ինչպես և Ծիրանն ու Ծիրանին:

Տանս տակին կա նռնի,
Բարձ բերեք՝ յարս կռնի.
Ես—դու մի բաղում պիտենք,
Ես չինարի, դու նռնի:

Ծիրանի ծառ բար մի տա,
Ճղներդ էրար մի տա...

Ջափաղանց շատ են յերեվան գալիս խաղերի մեջ նաև ծաղիկները ու խոտերը և բանջարեղենները: Վերջիններիցս՝ ծննեբեկ, սիբեխ, զոխ, ղըլղան, խավարծիլ, մանդակ, մանդկու ծիլ, ղանճել, քեղ, բոխի, կանդառ, չաղդամ, այլ և սոկոն, ռեհան և այլն: Ապա նաև՝ գաղնոց, սարի խոտ, արոտ, փալախոտ, սեզ, յեղեգն, (ղամիշ), սինձ, թրթնջուկ և այլն:

Աբի երթանք մանդըկի...
Աբի քաղենք խավարծիլ,
Դու կու նմանես մանդկու ծիլ...

են սարին քեղ ա բուսել...
Սաբերի սինձն ինչ ա...
Սարի թրթնջուկ թաղա,
Մեղր ու չաքար քեղ մաղա...

Շատ սիրված են նաև վայրի ու մշակովի ծաղիկները, ինչպես են՝ անթառամ ծաղիկ, սուսան, աղբրանց աչյուն, չուշան, ձնծաղիկ, կակաչ, պուտ, լալա, հորուռ-մորուռ, տուխտ, նարգիզ, նունուֆար, հիլ ու մեխակ և այլն: Ամենից սիրված ծաղիկն է վարդը, վոր հաճախ յերգվում է առանձնապես վիճակի խաղերի մեջ իբրև կրկնակ.

Ջան վարդի՛կ, ջա՛ն, ջա՛ն,
Ջան ծաղի՛կ, ջա՛ն, ջա՛ն:

Ավելի սովորական է՝ «Ջան գյուլում, ջան, ջան»:

Վարդը բացվել ա հովին,
Բլբուլը կանչել քովին...
Իմ խերանց իդին վարդ հազար թավուր,

Մեկն են վարդերուն իմ վարդն է
քաֆուր...
Վարդն է բացվե առավոտան խավուռց...

Բավական հաճախ յերգվում է մանուշակը, պակաս չհանդիպում և մեխակը (այլ և խարանֆիլ անունով): Պակաս չի գովվում նաև «ծաղիկը», անանուն ծաղիկն ամեն տեսակի,— ծաղկի փունջ, ծաղիկ ցանել, ծաղիկ քաղել, սարի ալվան ծաղիկը, ծաղկունքը, թե իրական ծաղիկները և թե նմանութեամբ ասված:

Ծաղիկ ծաղկեվանա յես,
Աալըդ երևվանա յես,
Տարինը մի հետ կը գաս,
Մաչամ նուբարխանաի յես:

Ծաղիկ ծաղկածորեն եմ,
Մեծ բաղի խնձորեն եմ.
Քամին ավեց, վի քցեց,
Վաթանա մոլորել եմ,

Հին գուսանական յերգերի— հայրենների մեջ գտնում ենք նաև թրջուններ՝ բաղե, բլբուլ, արծիվ, ծիծեռնակ, կաքավ, աղավնի, սիրամարգ

և վայրի վարցիլնակ, որոնց առաջին յերկքը դործածվում են տղայի համար, իսկ մյուսներին... նմանեցվում է սիրական կինը»: Այս միևնույն թռչունները, բացի ընդգծածներից, հաճախ յերգվում են և խաղերի մեջ (սիրամարգը՝ «ախինամահավ» անունով): Այստեղ, սակայն, թեվավորների յերամն ավելի մեծ է. հիշվում են նաև թառլան ղուշ, կռունկ, ղաղ, բադ, ճնճղուկ, անծեղ, տուտի, արտուտիկ, բու և ուրիշները. իսկ չորքոտանիներից՝ յեղնիկ, մարալ ու ջեյրան, մի կողմ թողած ընտանի կենդանիները:

Ամենից սիրված թռչուններն են՝ բլբուլ, կաքավ և լոր, որոնք դործածվում են աղջիկ համար նմանությամբ: Բլբուլը մեկ մեկ նաև տղայի համար:

Արևը ծագեց սարեն,
Կաքավը կանչեց քարեն...
Սեվ ամպը սարի դլխին,
Կաքավը քարի դլխին...

Կաքավ եմ հաղար դունով,
Ինձ կալերն վրամով...
Կաքավ եմ քարամիջին,
Կը կարդամ ձորամիջին...

Ահա Հայաստանի քարն ու սարն իր կաքավով: Սիրված կնոջ քայլքը, չարժումները սովորաբար նմանեցվում է կաքավի,— «կաքավի քելք», «կաքըվնակ» ման դալ, կաքավի պես չորոր տալ և այլն:

Կանաչ տեղը բաղում եմ,
Ծալու մեջին խաղում եմ.
Կաքավի պես սորալով՝
Տղաներին դաղում եմ:

Բաղի մեջին ման եմ դալիս,
Կաքավի չորոր եմ տալիս...
Առտման կաքվիս նման,
Զեննիդ կու դեր սարեն՝ անուշ,
Զեննիդ կուդեր լեռնեն՝ անուշ...

Կաքավից պակաս է յերգվում լորը, լորիկը:

Գոցի արտեր՝ բանի լոր,
Աղջիկ տեսա յոլի ձոր,
Նման եր կարմիր խնձոր...

Աղջիկը հենց՝ կոչվում է «լոր», «լորիկ»:

Առավոտ լոր մտավ արտ,
Աչքս առավ, եղավ դարդ,—
Կու նմաններ քաֆուր վարդ:

Առավոտ բարի լուսուն,
Ցես մայիլ եմ քո տեսուն,
Լորի՛կ, դու իմ սրտի սուն:

7. ԽԱՂԵՐԻ ՀՈՐԻՆՎԱԾՔԸ

Իրենց ծագումով բոլոր խաղերն էլ անպատրաստից, հանկարծական բերմամբ ասված բաներ են: Դրանք չեն հորինված կարդացվելու և վոչ իսկ մեկ անգամից ավելի յերգվելու համար: Առաջին յերգողը, վոր և յերգի հորինողն է, իր խաղով արտահայտել է իր մեջ վայրկենապես ծնված, բուսական տպավորության տակ առաջացած զգացմունքը, դրանով արտահայտելով ժամանակի և միջավայրի կենցաղային բարքերը և սրամտությու-

թյուններըը: Մի անգամ յերգվելուց հետո պիտի մոռացության տրվեր խաղը, ինչպես հազարավորներ և շատ հազարավորներ հորինվելուն պես, անշուշտ, մոռացվել են, կամ թե երենց հեղինակի հետ մեռել են:

Սակայն ինչպես ամենայն ժողովրդական բանահյուսության, այսպես և խաղերի համար պետք է ասել, վոր այն յերգերը, վորոնք առանձին հաջողությամբ են հորինված յեղել և կամ թե արտահայտել են ժամանակակիցների վոչ վաղանցիկ տրամադրություններ, չեն անհետացել առաջին անգամ յերգվելուց կամ երենց հեղինակի մահից հետո:

Ուշնդիրներից այս կամ այն անձը վայրկենապես առվորում է խաղը և ինքն էլ հարկավոր դեպքում կրկնում է կամ անփոփոխ, կամ հաճախ անդիտակցորեն փոխելով այն դեպի լավը և ավելի հաճախ դեպի վատը: Ցեվ մի անձի՝ բոպեյական տրամադրություն արտահայտելու համար ստեղծված յերգն այնուհետև պահվում է ուրիշների հիշողության մեջ, թափառում է դավառե դավառ՝ հարմարվելով, վորքան կարելի յե, տեղական բարքերին, և անցնում նույնիսկ յերկրե յերկիր, թարգմանվելով լեզվե լեզու և հարմարվելով տեղի ու ժամանակի բարքերին:

Ժողովրդի հիշողությունը շատ մեծ է: Ցեվ վորովհետև խաղը նախնական ժամանակներից ցայսոր մոդայից չընկնող բանաստեղծական ձևն է վոչ միայն մեր, այլև ընդհանուր ազգերի մեջ, ուստի շատ հասկանալի յե, վոր, մինչդեռ ուրիշ հին յերգեր, որինակ՝ վիպականները, մոդայից ընկնելով մոռացության են տրվել, մեր արդի խաղերի մի մասը շատ մեծ հնություն կարող են հասած լինել մեզ: Որինակ՝ ի՞նչ է ասում հետևյալ յերկատողը.

Կ'երթամ խանին դատ կ'անեմ,
Մեծ տունը բոբրատ կ'անեմ:

Կամ վո՞ր դարու պատմական հիշողություն ունի հետևյալ քառատողը.

Կաչաղն ա կայնել քարին,
Կուշյը կարմիր արին,—

Դաղստան յեսիր պիտի,
Իմ սիրած յարին տանի:

Ժողովուրդը յերգի բնագրի նկատմամբ այն վերաբերմունքը չունի, ինչ վոր մենք ունենք դեպի վորևե հեղինակի յերկ: Շատ բնական է, ուրեմն, վոր խաղերը վոչ միայն բերնե բերան անցնելիս են փոխվում, այլև սերնդե սերունդ, դարե դար ավանդվելիս: Ցեվ այս փոփոխությունը հենց նպաստում է յերգի պահպանմանը: Խաղը կենդանի մնում է նաև նրա համար, վոր դյուր է դալիս: Իսկ դարե դար դյուր դալու համար պետք է վերանորոգվի, վերաստեղծվի հարմարվելով սերունդների կյանքին ու բարքին, նիստ ու կացին և լեզվին:

Խաղերի այս ծագումով ու պահպանման կամ ավանդման յեղանակով բացատրվում են և նրանց հատկությունները, նրանց կազմությունն ու հորինվածքը:

Ի՞նչ հորինվածք կամ արվեստ կարելի չէ ապասել մի չերգից, վոր ընդամենը չերկու, չերեք կամ չորս տող է, և վորի հեղինակը չի էլ մտածել, թե ինքը բան է հորինում, այլ իրրև մի թռչուն չերգել է չրջապատի կամ վորևե դեպքի ազդեցության տակ։ Այս պատճառով խաղիկների մեծ մասը պարզ և անպաճուճ խոսք ու խնդիր է՝ ուղղված ընդհանրապես տղաքրի աչերելին։ Որինակ.

Ճեռ աղջիկ եմ ալ կուզեմ,
Բարակ մեջքիս չալ կուզեմ.
Վոր տուն վոր չես հարս երթամ,
Վսակին ծալվե ծալ կուզեմ։

Գուճո՛ւր աղջիկ սեվավոր,
Հաղարի դեմ սավոր,
Գնա՛, մերդ կանչում ա,—
Ինձի չանի մեղավոր։

Ա՛յ աղա կանաչ կապով,
Հերիք անցնես մեր պատով,—
Հերս քեզ աղջիկ չի տա,
Մեր պատ փլավ քո ապով։

Կապել ես քիրման գոտիկ,
Մարդ չես Քաղնում քեզ մոտիկ.
Համ տեսքով ես, համ հասով,
Գան ըզծաղիկ խոբատիկ։

Բնությունն ինքն այդ հասարակ չերգիչներին ներշնչում է արվեստ, վոր ունի իր առանձնահատկությունները և չերբեմն նման չի մեր դրագետ բանաստեղծների արվեստին։

Խաղերի մեջ դտնում ենք ժողովրդական չերգերին հատուկ զուգահեռականություն (parallélisme) տալիս ձևն իր ընդարձակ նշանակությամբ, այսինքն միևնույն խմատի կրկնությունը տարբեր արտահայտությամբ, կամ ընդհանրապես խաղերի բաժանելը չերկու մասերի, վորոնք համապատասխան են մեկմեկու և վորևե առնչություն ունեն իրար հետ։

Խաղի եյական մասը, վորի մեջ է բուն խմատը, դրեթե միշտ չերկրորդ չերկատողն է, իսկ առաջին եյրկատողը սովորաբար չերկրորդի լրացումն է և վորևե կողմից, նրա սկսվածքը, նախապատրաստությունը, բաղդատությունը և այլն։

Խաղը քնարերգություն է, այսինքն մի բանաստեղծություն, վոր արտահայտում է գլխավորապես չերգչի զգացմունքն ու մտածմունքը, նրա ներքին կյանքը, առանձնապես սիրո զգացմունքն իր զանազան վիճակներով։ Այս ներքին, հոգեկան կյանքն ահա՛ կազմում է ընդհանրապես խաղի զուգահեռական մասերից չերկրորդի բովանդակությունը։ Բայց քնարերգություն չկա առանց բնության չերգի, մանավանդ չինական մարդու համար, վոր բնության մեջ է ապրում։ Գառատողի սկսվածքի մեջ է լինում սովորաբար բնության մասը, բնությունն իր ընդարձակ իմաստով առած, լինի արտաքին աշխարհի թե ժողովրդական կյանքի նկարագիր, կամ կատարվող և կատարված դեպքերի պատմվածք։

Խաղերի ընդհանուր կազմությունն այս է։ Բայց բնության մասը չերբեմն միայն առաջին տողի մեջ է լինում, չերբեմն անցնում է և չորրորդ տողին, վորով հոգեկան մասը մնում է միայն չերրորդ տողի մեջ։

Վորքան հաջողությամբ հարմարեցրած են իրար յերգիկների այս յերկու զուգահեռական մասերը, և վորքան սերտ ու ներքին է այս յերկու մասի կապակցությունը, այնքան ավելի գեղեցիկ է խաղը:

Բայց այստեղ հատկապես պետք է չեշտել, վոր խաղի այս յերկու մասերի ներքին կապը հաճախ անհասկանալի յե մնում մեզ, կամ այն պատճառով, վոր խաղն աղճատված է,— վորի մասին հետո կըխոսենք,— և կամ էլ մենք չենք կարողանում թափանցել նրանց ներքին ունչության մեջ: Խաղը հորինված չե մեզ նման մարդկանց համար, վոր անկարում կարդանք. այլ առաջին յերգչի և իր շրջապատողների համար, վորոնց աչքի առաջ է նկարագրած տեսարանը: Ծերկու խոսք, յերկու-յերեք գիծ միայն բավական են նրանց ուշադրությունը դեպի բնությունը դարձնելու համար. մնացածը լսողներն իրենք ամբողջացնում են նայելով իրենց շուրջը:

Բացի այս՝ խաղերի մեջ տեսնում ենք ժողովրդական մտածողության յեղանակի մի ուրիշ տեսակ, քան ինչ վոր պատմվածքի կամ վեպի մեջ է: Այստեղ վիպասանը սկրում է ավելորդաբանություն, յերկար ու բարակ, նուչնիկ կրկնություններով չառախոս նկարագիր մանրամասնություններ: Խաղերի յերգիչը, ընդհակառակը, գիտե յերկատողի, յեռատողի ու քառատողի նեղ շրջանակի մեջ մուցնել ընդարձակ նկարագիրներ ու պատմվածքներ ամենաստեղմ կերպով, բայց շատ անգամ այնպիսի նկարագիրներ ու պատմվածքներ, վոր միայն անպատրաստից յերգողին լսողները, կամ նրանց վիճակի մեջ յեղողները կարող են իսկույն ըմբռնել և պատկերացնել ամենայն ընդարձակությամբ: Այս յերկու պատճառով մենք, վոր հեռու յենք ժողովրդի կյանքից և նրա մտածողության յեղանակից, յերբեմն փոքր ինչ մտածելուց հետո միայն կարող ենք հասկանալ խաղերի զուգահեռականների ներքին կապակցությունը և վայելել ժողովրդական բանաստեղծության այս տեսակի գեղեցկությունը: Ցեվ այս շատ դժվար չե:

Խաղերի առաջին մասը, բնությամբ սկսվածքը, յերկրորդ մասի վերաբերմամբ գլխավորապես յերեք տեսակ է լինում:

1. Ամենապարզ և հեշտ ձևն է այն, վոր խաղի առաջին մասի մեջ մի նկարագիր է լինում: Ինչպես վոր վիպասանները գործողությունից առաջ սովորաբար նկարագրում են բնությունը, վորի մեջ գործողությունը կատարվում է, այսպես և յերգիչը նախ մի քանի բնորոշ գծերով պատկերացնում է իրեն շրջապատող բնությունը իբրև մի շրջանակ, ապա դրա մեջ անց է կացվում կամ կատարվում է հոգևոր կյանքը: Արտաքին աշխարհը, դրությունը, որվա ու տարվա յեղանակը և այլն, մի քանի թեթև գծերով նկարագրված՝ կազմում են մի վոչբրիկ վայրենկար կամ գյուղական կյանքի շրջանից և աշխատանքից առած մի պատկեր, վորին հաջորդում է յերգչի սրտում վայրկենապես ծնված զգացմունքը մի ազատիտ խոսքով կամ բառախաղով:

Մեր ջուխտ գության դաշտ կու բանի, Մին կու քելե, մին կու կոխե,—
Ջուլո խաթուն հաց կու տանի, Աչքով, ունքով մարդ կու ոպանի։

Ահա մի մանրանկար պատկեր, վորի մեջ հանված է դաշտը և դաշտի մեջ գործող զույգ գութանը։ Հեռվից յերևում է Ջուլո խաթունը, ճերքին բռնած հացը, վոր տանում է գութանավորին։ Տեսնում է նրան և նրա քայլվածքը սիրահար մաճկալը կամ հոտաղը և իր սրտում վայրկենապես ծնված զգացմունքը հայտնում է մի կարճ խոսքով։

Մի ուրիշ յերգի մեջ հանդիպում ենք ձմեռնային տեսարանի։ Դիշեր և ու լուսնակ դիշեր։ Սալխակ ձյունը նախշել է գետինը։ Տան յետևում, կամ պարտիզում տեսակցում են սիրահար տղան ու աղջիկը, կես ունքերով ու կարմիր թշերով, և տղան հայտնում է իր ցանկությունը։

Ես դիշեր, լուսնակ դիշեր, Աչքդ դեմ արա պաչեմ,
Ձյունն եկեր, գետին նախշեր· Կես ունքեր, կարմիր թշեր։

Այս տեսակի բնությամբ սկսվածքը ամենից հեշտն է հորինման տեսակետից։ Բավական է միայն, վոր յերգիչն աչքը շուրջը դարձնի և դիտի իրեն շրջապատող բնությունը և մի քանի բառով նկարագրի։ Բանաստեղծի ամենամեծ շնորհքն այն է, վոր կարողանա շրջապատի բազմազան կողմերից եյական գծերն առնել, վորպեսզի բնության պատկերը հեշտությամբ ամբողջացվի։ Եթե յերեք եյականներն են վերցրած, վոր, ցավոք, մի՛շտ չի լինում, նույնիսկ մենք հեշտությամբ կարողանում ենք լրացնել պատկերի մանրամասնությունները,— հասկանալի յե, յերեք շինական կյանքն ու բնությունը ծանոթ է մեզ։ Մի քաղաքացի մարդ, վոր վար ու դրության չի տեսել, վոչինչ կամ շատ քիչ բան կարող է պատկերացնել վերևում դրած առաջին յերգը կարդալիս։ Բայց յերբ կյանքին ծանոթ մեկն է կարդում կամ լսում այն, նրա աչքի առաջ բացվում է ընդարձակ տեսարան. աշնան կամ գարնան դաշտ, տեղ տեղ վարից չերտ չերտ սևացած արտերը, շարժուն գութաններն իրենց բազմաթիվ լծերով, մաճկալի և հոտաղների հոռովելներով, քաջալերական ու հանդիմանական խոսքերով. հեռվում լեռներ և այլն։

Պաղի յերկու մասի ներքին կապն ըմբռնելն ավելի դժվար է առանց գյուղական կյանքի ծանոթության, յերբ ժողովրդական կյանքի ու սովորության, տեղական բարքերի գծեր են առնված։ Որինակ՝ վերցնենք հետևյալ քառատողը·

Արազը հեչտացել ա, Ցաբար տարեք իմ յարին,—
Ճամբեքը կոշտացել ա· Առնող չատացել ա։

Այս խաղի յերկու մասի մեջ ըստ յերեվույթին վոչ մի կապ չկա։ Բայց Արազի վրա բնակվողներին հարցնենք, և նրանք կասեն, վոր Արազը հեչտանում է ցուրտ աշնանը կամ ձմեռը։ Այս ժամանակ է, վոր ճանապարհ-

Ներն էլ կոչտանում են. անձրևներ գալուց կամ ձյուն գալուց և հալչելուց հետո՝ ամառվա ճանապարհների վրա դիզված հողը ցեխ է դառնում և մի ցուրտ գիշեր սառչելով կոշտ կոշտ մնում է։ Ահա՛ ցուրտ աշնան կամ ձմեռվա նկարագիրը դեսի և ճանապարհի պատկերով։ Բայց խաղի բուն իմաստը հասկանալու համար այսքանը դեռ բավական չէ։ Պետք է իմանալ, որ ցուրտ աշնանը կամ ձմեռն են աղջիկ ուղում և հարսանիք անում։ Այժմ յերևակայենք մի աղջիկ, որին շատ ուղողներ կան, բայց ինքն ուրիշին է սիրում։ Նրա սիրականն ուրիշ տեղ է, և նա ահ ու դողի մեջ է, թե մի՛ գուցե իրեն ստիպեն ուրիշի և վոչ իր սիրելիին մարդու գնալ։ Նա դուրս է գալիս, նայում շուրջը հեչտացած Արագին ու կոշտացած ճանապարհներին և իր լցված սիրտը ղեղում է յերգով.

Ախաբ տարնք իմ յարին,—
Մուշտարիս չտասցել ա։

Այս տեսակ սկսվածքի մեջ մտնում է և այն, որ խաղի առաջին մասի մեջ վոչ թե նկարագիր է լինում, այլ մի պատմվածք, որին հաջորդում է զգացմունքը՝ փափաք, ապաշավանք և այլն, իբրև հետևվանք առաջին մասի մեջ պատմված գործողության։ Որինակ՝ մի աղջիկ հաց է տանում արտը, ուր իր յարն է։ Նա փափագում է տեսնել յարին. նրա սիրտը կրոտով լցված է, և կուզեր անպատճառ յարի մոտ լինել։ Բայց արի տես, վոր յերբ յարը խնձոր է տալիս, նա ամաչում է ու չի առնում։ Ցարին տեսնելուց հետո յետ է դառնում. և ահա՛ նրան չարունակ տանջում է այն միտքը, թե ինչո՛ւ մերժեց յարի առաջարկությունը։ Ապաշավանքը կրակում է նրան։ Նա իրեն բեթախտ յար է համարում. յարն իսկապես այդպես չպիտի վարվեր և այլն։ Այսպիսի մի դեպք ու հոգեկան դրություն ամփոփված ենք գտնում հետևյալ քառատողի մեջ.

Կանաչ արտը հաց տարա,
Ցարիս տեսա յետ դառա.

Խնձոր տվավ՝ յես չառա,—
Ես ի՞նչ բեթախտ յար դառա։
(Վաբշանա՝ ես ի՞նչ կրակ եր՝ վառա)։

Վերցնենք մի ուրիշ խաղ.

Գնացի ջուրը ջրի,
Վառս ընկավ ածի լեղի.

Իմ հորն ու մորն ի՞նչ ասեմ,—
Ինձ ավին ղարիբ աղի։

Այս քառատողը հասկանալու համար պետք է իմանալ, վոր գյուղերում սովորաբար աղջկերքն են աղբյուրից կամ գետից ջուր բերում։ Ջրատեղն են գալիս և ուտար տեղերից տղայքն աղջիկ տեսնելու և հավանելու։ Այս դեպքն է ահա՛ պատմվում խաղի առաջին մասում։ Հարսը, վոր դրժդոհ է ղարիբ տղայի հետ ամուսնանալու համար, իրեն տեսնելն ու հավանելը արտահայտում է պատկերավոր ձևով՝ ասելով, թե վառս ընկավ ածի լեղին, և ապա գառնում ու փափուկ կերպով անիծում է իր հորն ու մորը, վոր իրեն տվել են ղարիբ տղայի։

2) Խաղի սկսվածքի մի ուրիշ ձևը լինում է բաղդատությամբ: Բնության յերևույթների ընդարձակ շրջանից վերցրած վորևե պատկեր է նկատգրվում առաջին մասում և այդ պատկերին համեմատվում է յերկրորդ մասի մեջ արտահայտված հոգեկան կյանքի յերևույթը կամ նմանությամբ կամ հակադրությամբ: Սակայն չի տալիլ, վոր այս ձևով յերգի առաջին մասը մի նախապատրաստություն է բուն նյութին ավելի պարզ ու պայծառ հասկանալու և ղդալու համար: Սակայն պետք է դիտել, վոր ժողովրդական յերգիչն իր այս բաղդատություններին մեջ դործ չի ածում բաղդատական բառեր՝ այնպես — ինչպես: Նա սակավ անդամ միայն պես, նման, բան (ց) բառերը դնում է, այն էլ ավելի յերբ բաղդատությունը վրչ թե յերգի յերկու զուգահեռական մասերի մեջ է, այլ միևնույն մասի մեջ: Որինակ.

Լավ ձին նո՞ր ինչ կ'անե,
Սիրունը խո՞ր ինչ կ'անե.
Սիրածը սրտով լինի,
Ագխարհի մո՞ր ինչ կ'անե:

Ուրադը վեհին կըտալե,
Սերդ իմ սիրտը կըմալե,—
Բարակ սրտով ինձի տվե:

Այս որինակների մեջ նմանությունը շատ պարզ է: Ինչպես վոր լավ ձին առանց նալի էլ լավ է. ինչպես վոր սիրունն առանց խալի էլ սիրուն է, նրան պետք չէ խալը, այնպես և սիրողին պետք չէ աչխարհի մալը, բավական է, վոր սիրածը սրտով լինի: Ինչպես վոր ուրագը առչում է վյայտը, այնպես և քո սերը տաչում մաչում է ինձ: Բայց կան խաղեր, վորոնց յերկու մասի բաղդատական հարաբերությունը դժվար հասկանալի յե սեղմ ու հակիրճ և զեղչված արտահայտության պատճառով: Որինակ.

Ա՛յ հևա, հևա՛, սի՛րտս,
Ճնճղկան քե՞ս ա սիրտս:

Քան պուտը կարմիր չկա,—
Բաց անեմ՝ սև ա սիրտս:

Այստեղ յերկու բաղդատություն կա. յերկրորդ տողի մեջ յերգիչն իր բարակած սիրտը նմանեցնում է ճնճղուկի թևի. թեպետ և բարակած բառը և բաղդատական բառեր չկան, բայց այս բաղդատությունը հասկանալի յե: Ավելի դժվար հասկանալի յե յերկրորդ բաղդատությունը, վոր յերկրորդ և յերրորդ տողերի մեջ: Յերգիչն այս տողերը կազմել է մի ժողովրդական առածից. «Քանց պուտը (կարմիր լալա) կարմիր չկա, վոր բաց անես՝ սև է սիրտը», վոր ասվում է այն մարդկանց համար, վորոնք արտաքուստ ուրախ են յերևում, բայց ներքուստ ցավը կրծում է նրանց սիրտը: Արդ այս առածի առաջին մասն յերգիչն անփոփոխ է թողել յերրորդ տողի մեջ, իսկ յերկրորդ մասը չորրորդ տողի մեջ շուռ է տվել իր սրտի վրա, վորով և մի բաղդատություն է դրել իր սրտի ու պուտի մեջ: Մի դրագետ բանաստեղծ այս նմանությունն այսպիսի մի ձևով կարտահայտեր հրկնությունն անելով. «Ինչպես վոր քան պուտը կարմիր չկա

դրսից, բայց վոր բաց աներ՝ ներսը սև է, այնպես էլ ինձ պես դրսից ուրախ յերևացող չկա, բայց վոր սիրտս բաց անեմ, սև է:

Վերցնենք մի ուրիշ օրինակ:

Կաքավն ա կանչել քարին,
Գառուցը լիքըն արին,—

Մի դաստա վարդ եմ քաղել,
Տարել իմ Քաղա յարին:

Այս խաղի յերկրորդ մասից լսանում ենք, վոր մի աղջիկ նոր յար, նշանած ունի, վորին մի փունջ վարդ ուղարկել է ցանկանում: Բայց թե ինչ սրտով է ուղարկում ծաղիկը, այս բացատրվում է բնությունից վերցրած սկավածքով, վորի մեջ աղջիկն իրեն նմանեցնում է մի վիրավոր կաքավի, վորը, սակայն, արդեն վոտքի յե ելնդնած քարի վրա: Ինչպես վոր վիրավոր կաքավը բարձրանում է ու քարի վրա կանգնում, թևաթափ և կտուցը դեռ արյունով լի, այնպես էլ և այն աղջիկը, վորին հին յարը թողել է. նրա սիրտը դեռ արյունալի յե, բայց նա իր ընկած դրությունից, իր անպատվությունից յելնում է, քանի վոր նոր յար ունի արդեն, վորին և մի փունջ ծաղիկ է ուղարկում:

3) Մի յերրորդ տեսակի ավելի բարդ, բայց և ավելի զեղեցիկ կազակցություն էլ է լինում խաղի յերկու մասերի մեջ. այն է՝ յերգի առաջին մասը, բնությամբ սկավածքը վերցվում է յերկրորդ մասի համար մի ժամանակ թե իրրև շրջապատի նկարագիր և թե իրրև գաղդատություն: Յերգի առաջին մասի մեջ նկարագրված բնությունը մի լուկ անտարբեր շրջանակ չե, վորի մեջ կատարվում է հոգեկան կյանքը: Այլ բնությունն, արտաքին աշխարհը վերցվում է այնպիսի հատկություններով, վորոնք յերգչի տրամադրության կամ զգացմունքների հետ մի վորոշ հարաբերության մեջ են մտնում, վորով իրրև մի բաղդատության նախապատրաստություն է լինում խաղի յերկրորդ մասն ավելի զորեղ զգալու համար: Վերցնենք օրինակ հետևյալ յերկատողը.

Դարուն ա, ձյուն ա արել,
Իմ յարն ինձնից ա սառել:

Այստեղ շատ պարզ է բնության յերևույթի հարաբերությունը հոգեկան վիճակի հետ: Առաջին տողը տալիս է մեզ բնության մի խիստ դժնդակ պատկեր: Գարուն է. ուրեմն ծառերը տերևել ու ծաղկել են, դաշտերը կանաչել, ոդը տաք է և այլն. բայց հանկարծ այս կենսաբեր գարնան ժամանակ ձյուն է գալիս,— մի յերևույթ, վոր հազվադեպ չե Հայաստանում: Կենդանության հետևում է մեռելություն: Յերգիչը դիտում է բնության այս հանկարծական խաղը: Արտաքին յերևույթը նրա մեջ առաջացնում է վորոշ տրամադրություն, և նա դառնում է իր ներքին աշխարհին: Այստեղ էլ նա նույն և նման յերևույթն է տեսնում: Նրա սրտում ևս գարուն եր, սիրո գարունը. բայց հանկարծ յարը սառել է նրանից, և այժմ նրա սրտին ևս ձյուն է յեկել, ճիշտ ինչպես գարնան կանաչազարդ հովիտների վրա:—

Այս յերկատողի քնութեամբ սկսվածքն, ուրեմն, իր մեջ բովանդակում է շրջապատի նկարագիրը, վոր և միանգամայն ծառայում է իբրև բազդատութեան հոգեկան յերևույթի համար:

Վերցնենք մի ուրիշ որինակ: Ինչ վոր գրագետ բանաստեղծը կասեր միայն՝ քո սիրո արևն ընկավ իմ սրտին, կամ քո սերն իբրև արև ընկավ իմ սրտին և լուսավորեց կամ վառեց այն, ժողովրդական յերգիչն իր ձևով ասում է.

Արևն ընկավ ամուր բերդին,
Քո սերն ընկավ մեջ իմ լերդին.
Ցես քեզ սիրեմ, Թող դիս ջերթին:

Առաջին տողի մեջ, ուրեմն, յերգիչն աչքը չուրջն ածելով դիտում է իրեն շրջապատող տեսարանը, վորը պատկերացնելու համար վերցնում է միայն մի եյական դիծ, թե ծագող արևն ընկնում է ամուր (վարբանտ՝ խամուր) բերդին: Տեսարանի մնացած մասն արդեն աչքը լրացնում է, իսկ մենք կարող ենք յերևակայութեամբ ամբողջացնել, հիշելով ծագող արևի Թողած տպավորութեյունը բնութեյան վրա: Բայց առաջին տողը միայն լոկ շրջապատի նկարագիրը չէ. դա միաժամանակ և մի նմանութեյուն է հոգեկան կյանքի համար: Ինչպես վոր ծագող արևն ընկնում է ամուր բերդին և վառում, լուսավորում է և այլն, այնպես և քո սերն ընկել է իմ լերդի մեջ և ինձ վառում է և այլն:

Ջաղացս մանէ, մանէ, — Իմ յարը սարում, քոլում,
Քունս անուշ կըտանէ. — Իմ քունը վո՞նց կըտանէ:

Ահա՛ մի կին, վորի մարդը տանը չէ, և ինքը դիշեր ժամանակ ջրաղացում է աղունի համար: Ջրաղացի քարը միատեսակ պտտում է աղմուկով, և կնոջ քունն անուշ տանում է և պետք է տանի. նա որորվում է: Մենք ազատում ենք, վոր նա պիտի անուշ ննջի: Բայց նա հանկարծ հիշում է, վոր իր մարդը սարում, քոլում է, այսինքն տնից հեռու նեղութեյան մեջ է. սկսում է մտածել և յարի հոգն անել: Քունը փախչում է աչքերից, և նա չի քնում, չնայած ջրաղացի միատեսակ որորին: Յերկի առաջին մասն ուրեմն թե՛ չրջապատի նկարագիրը և և թե՛ միաժամանակ հակադրութեյամբ բազդատութեյուն և յերկրորդ մասի համար:

Այժմ յերևակայենք մի յերիտասարդ, վոր չոդին պապակում է ծարավից, բայց և նրա սիրտը միաժամանակ այրվում է սիրո տապից. նրա յարը յետ է դարձել իր տված խոսքից: Յերիտասարդն այսպիսի մարմնական և հոգեկան վիճակով՝ հանդիպում է լեռան գլխից իջնող պաղ ջրին, կռանում, խմում է. բայց պաղ ջուրը յերես կոտրում և նրա ծարավը, չի հովացնում նրա վառվող սիրտը: Նրա մտքով անցնում է խնդրի ֆիզիկական ծարավի և սիրո ծարավի մեջ մի սիրուն բազդատութեյուն, և ահա յերգը պատրաստ է շրջապատի նկարագրով առաջին յերկու տողի մեջ.

Պաղ ջուր պրծել կուգա ասրեն, Ձի հավցուցե օրախ յարեն,—
Կուգա, թափի մարմար քարեն, Ցարն ա զբոսնել էր իրքարեն։

Այսքանս բավական եմ համարում խաղերի հորինվածքը բացատրելու համար։ Խաղերի տողերի մեջ վոչինչ անիմաստ և անկապ չկա. այլ ընդհակառակն խաղի յերկու մասը մի շատ սերտ և ներքին կապով միացած են իրար։ Եվ յեթե մենք չենք հասկանում կապակցությունը, կրկնում եմ, կամ այն պատճառով է, վոր ծանոթ չենք ժողովրդական կյանքին, կամ շատ սեղմ ու հակիրճ և արտահայտության յեղանակը։ Բնագետների համար ասում են, թե կենդանու մեկ յերկու վոսկոր միայն ձեռ տակ ունենալով կարողանում են լրացնել կենդանու կմախքը և պատկերացնել կենդանին ամբողջապես։ Ճիշտ այդպիսի բնագետի նման է մտածում և ժողովուրդը. նա մի յերկու գծով պատկերացնում է ամբողջը։ Մանրամասնությունները նրա համար ավելորդ են։ Ավելորդ են և այնպիսի բառերն ու խոսքերը, վոր առանց ասած լինելու էլ կարելի յե իմանալ։

Մենք էլ յեթե կարողացանք ժողովրդի պես մտածել, կըհասկանանք ամենայն խաղ, յեթե միայն խաղն աղճատված չէ։ Աղճատված յերգը վոչ ինքը ժողովուրդը և վոչ մենք կարող ենք հասկանալ։

Խաղերի այս ներքին կազմությունը, հորինվածքը տեսնելուց հետո՝ այժմ անցնենք նրանց արտաքին արվեստին, վոտանավորին։

8. ՎՈՏԱՆԱՎՈՐԸ

Ժողովրդական խաղիկների հիմնական ձևն է տողերի թվի նկատմամբ՝ յերկատող, յեռատող և քառատող. իսկ նայելով վանկերի թվին և հատածին տողերի մեջ և հանգերի դասավորությանը, խաղն ունի բավական բազմազանություն։ Ներքևում կըթվենք գլխավոր տեսակները։

5-վանկանի տողեր

Հինգ վանկից պակաս վանկեր ունեցող տողեր ինչ գործածական են բուն խաղերի մեջ։ Յերեք կամ չորս վանկանի տողեր պատահում են ավելի կրկնակների մեջ. իսկ բուն յերգի սովորական ամենակարճ տողն է 5-վանկանին, վոր հատածով չի բաժանվում մասերի, ինչպես և գրական բանաստեղծության մեջ։ Ամբողջ տողը մի բարդ վոտք է։

Հինգ-վանկանի յերկյակներ, այսինքն յերկատող խաղեր՝ չկան, այլ միայն յեռյակներ և քառյակներ, այսինքն յերեք կամ չորս տողից կազմված խաղեր։

Յեռյակները սովորաբար ունին մի 4 կամ 5-վանկանի կրկնակ, վորի հետ միասին մի քառյակ են կազմում։ Բուն յերգի յերեք տողերը նույնահանգ են, իսկ վերջին կրկնակն անհատ է մնում։ Որինակ.

Ա՛յ բալա հեղնաք,
Շատ կերաք, ղեղնաք,
Ինձանից լեղվաք,—
Գյուլ հեղնաք չան։

Ա՛յ բալա Մադիա,
Երխաղ ե հազիդ,
Կարոտ եմ պազիդ,—
Գյուլ Մադիա չան։

Գանձակցիները հանդերձի նկատմամբ ավելի բազմազան են։ Սովորական ձևով 1–ին, 2–րդ և 4–րդ տողերը նույնահանգ են, իսկ 3–րդ տողն անհանգ է մնում։ Որինակ.

Թոնդիրը հալ ա,
Վրեն լե բով ա,
Տաներիրու չան հնգ,
Մի չոր լե կով ա։

Սաքերը սարսուռ,
Ջրերը մամուռ,
Սալդաթաներոջ
Սերտըն է մրմուռ։

Ծերբեմն յերկրորդ տողն առաջինի թեթև վոխոխությունն է՝ իմաստի դուզահեռական կրկնությամբ, վորով նույն բառն 1–ին և 2–րդ տողերի վերջում կրկնվում է։ Որինակ.

Ես յանը որոց,
Են յանը որոց,
Աղբոր մեռնեմ,
Բերում ա քորոց։

Ես յանը պատոք,
Են յանը պատոք,
Ղաղջուն կ'առնեմ,
Հազինն ա սատոք։

Այս չափով սովում են սովորաբար թեթև յերգիծաբանական խաղերը, վորոնց առաջին մասը հաճախ կապ չունի յերկրորդ մասի հետ, և կամ նույնիսկ բառախաղ է կազմում։ Մաղրն առաջանում է վոչ միայն յերկրորդ մասի հանկարծական, անակնկալ իմաստից, այլև առաջին մասի անկապությունից ու բառախաղից։ Որինակ.

Ես յանը ուլիկ,
Են յանը ուլիկ,

Սաղոդի հետը
Ես կ'ուզեմ չուլիկ։

Սակավ անգամ քառյակի չորս տողն էլ նույնահանգ են լինում, ինչպես հետևյալ 4–վանկանի բառյակի մեջ։

Անուշավան,
Ծաղիկ յավան,

Մանչերն եկան,
Կնիկը սպան։

Ավելի սովորական են՝ մեջ ընդ մեջ հանդերձ կազմելը, այսինքն 1–ին և 3–րդ տողերն անհանգ են մնում, իսկ 2–րդ և 4–րդ տողերը նույնահանգ են։ Որինակ.

Ածու մ'եմ ցանե,
Սաքս նըզդիղ ե,
Իմ յարոջ մեռնեմ,
Ազիզ մազիղ ե։

Ջեռները խփելը,
Կոխնել ա դուռը,
Ծերիսը կոմիկը,
Նման ա նուռը։

Այսպիսի մեջ ընդ մեջ հանդերձով քառյակները, յերեք տողերն յերկերկու միանալով առանձին խոսքեր են կազմում, բնականաբար վերածվում են

10–վանկանի յերկյակների, վորոնց մի տողը կազմված է յերկու բարդ վանքից: Որինակ.

Աղբոր բլուղը ըսան չի կարվի,
Աղբոր նմանը ըսկի չի ծարվի:

Պոպոքի ծառը յելավ ծիծեռը,
Հեղնաբը բռնե Աբսենի ձեռը:

6 և 5–վանկանի տողեր

Միայն վեց–վանկանի տողերից կազմված խաղերը մեզ հայտնի չեն, բայց կան քառյակները, վորոնց առաջին և յերրորդ տողերը վեց–վանկանի յեն, իսկ յերկրորդ և չորրորդ տողերը հինգ–վանկանի յեն: Հինգ–վանկանի տողերը նույնահանգ են, իսկ վեց–վանկանի տողերն անհանգ են մնում: Որինակ.

Ցես սաբեն կուզայէ,
Դուն դուռը բացէը,
Ջոգ ծոցդ տարար,
Ախ արէը լացէը:

Ցերկինքըն ամպեր կը,
Ի՞նչ անուշ քան կը.
Եկա դանեն անցա,
Ջանանըս հան կը:

Այսպիսի կարճ քառյակների յերկու տողը, քանի վոր հանգը մեջ ընդ մեջ է, միանալով կազմում են 11–վանկանի յեկյակներ, վորոնց մի տողը կազմված է յերկու մասից, 6–րդ վանկի վրա ունենալով հատած: Որինակ.

Կա՛նչէ, կռունկ, կանչի՛, քանի գարուն է.
Ղաբրեններու սիրտը դունդ դունդ արյուն է:

7–վանկանի տողեր

Ամբողջ յոթ վանկը կազմում է մի տող և մի ոլիմպիական միություն, առանց պարզ վոտքերի, իսկապես ասած՝ առանց կանոնավոր միակերպ պարզ վոտքերի, վորովհետև տողը բնականորեն վերածվում է յերկու–յերեք վոտքի: Ցերը հայկյան չորս տողերի մեջ նույն թվով շեշտեր կան, այն ժամանակ վոտանավորը համաշեշտ է*):

Ցերկու նույնահանգ տողը միասին կազմում են մի յեկյակ, վոր ամենափոքրն է մեր խաղերի մեջ: Այսպիսի կարճ խաղերը, սակայն, շատ տարածված չեն և ասվում են միայն պարելու ժամանակ: Որինակ՝ Ազգագրական Հանդես Լ–Ը գիրք (1901 թ.) յեր. 439 բերված են մի շարք այսպիսի յերկյակներ.

Սաբ, սաբ, սաբերու դյուլն եմ.
Լևոն–Սամսոնի քուրն եմ:

Աբև նոր ա ծաղկեր ա,
Ցարս ծաղիկ ղրկեր ա: Ցեվ այլն:

Գնա, գնա, հեռիդ եմ,
Կարմիր խնձոր դառիդ եմ:

*) Տե՛ս բանաստեղծությունները տեսնել Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տաղաչափութ.», Ցերևան, 1933, եջ 227, հետ. «Համաշեշտավոտանավորները»:

10–վանկանի յերկյակների, վորոնց մի տողը կազմված է յերկու բարդ վոտքից: Որինակ.

Աղբոր բլուզը ըսած չի կարվի,
Աղբոր նմանը ըսկի չի ճարվի:

Գոզոքի ծառը յելավ Թիֆլիզը,
Հեղնաբը բանե Աբսենի ձեռը:

6 և 5–վանկանի տողեր

Միայն վեց–վանկանի տողերից կազմված խաղեր մեզ հայտնի չեն, բայց կան քառյակներ, վորոնց առաջին և յերրորդ տողերը վեց–վանկանի յեն, իսկ յերկրորդ և չորրորդ տողերը հինգ–վանկանի յեն: Հինգ–վանկանի տողերը նուլնահանգ են, իսկ վեց–վանկանի տողերն անհանգ են մնում: Որինակ.

Ցնս սաբեն կուզայի,
Դուն զուռը բացեր,
Ջևդ ծոցդ տարար,
Ախ արիր լացեր:

Ցերկինքըն ամպեր կը,
Ի՞նչ անուշ քամ կը.
Եկա դանեն անցա,
Ջանանըս հան կը:

Այսպիսի կարճ քառյակների յերկու տողը, քանի վոր հանգը մեջ ընդ մեջ է, միանալով կազմում են 11–վանկանի յեկյակներ, վորոնց մի տողը կազմված է յերկու մասից, 6–րդ վանկի վրա ունենալով հատած: Որինակ.

Կա՛նչէ, կռունկ, կանչի՛, քանի գարուն է.
Ղարիբներու սիրտը գունդ գունդ արյուն է:

7–վանկանի տողեր

Ամբողջ յոթ վանկը կազմում է մի տող և մի ռիթմական միություն, առանց պարզ վոտքերի, իսկապես ասած՝ առանց կանոնավոր միակերպ պարզ վոտքերի, վորովհետև տողը քնարկողին վերածվում է յերկու–յերեք վոտքի: Ցերը ֆոլկլորի չորս տողերի մեջ նույն թվով շեշտեր կան, այն ժամանակ վոտանավորը համաշեշտ է*):

Ցերկու նուլնահանգ տողը միասին կազմում են մի յեկյակ, վոր ամենափոքրն է մեր խաղերի մեջ: Այսպիսի կարճ խաղերը, սակայն, շատ տարածված չեն և սովում են միայն պարելու ժամանակ: Որինակ՝ Ազգագրական Հանդես է—Ը գիրք (1901 թ.) յեր. 439 բերված են մի շարք այսպիսի յերկյակներ.

Սար, սար, սարերու դյուլն եմ.
Լևոն–Սամսոնի քուրն եմ:

Արև նոր ա ծագկեր ա,
Ցարս ծաղիկ ղրկեր ա: Ցեվ այլն:

Գնա, գնա, հեռիդ եմ,
Կարմիր խնձոր դառիդ եմ:

*) Տե՛ս ամփոփումները տեսնել Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տաղաչափութ.», Ցերևան, 1933, եջ 227, հմն. «Համաշեշտվոտանավորներ»:

Սակավ անգամ յերկյակն անհանգ է մնում. այսպիսի մեկը գտնում ենք, որինակ, Հովսեփյանի «Փչրանքներ» (ՓՇ.), յեր. 14.

Իմ մեր ինձի վո՞նց պահեց,—
Ծալուկ դյուլբանդի նման։

Այսպիսի անհանգ յերկյակները, սակայն, հավաստյալ կարելի յե ա-սել, վոր հիմնական չեն, այլ մի վորևե քառյակի վերջին յերկու տողերը, վոր սկսել են անկախ ասվել, բայց իրենց ինքնուրույն կերպարանքը չեն ստացել։ Վերևի յերկյակն, որինակ, մաս է կազմում հետևյալ քառյակի.

Ամպել ա ամպի նման, *Իմ մերն ինձ վո՞նց ա պահել,—*
Շաքար եմ դանդի նման. *Ծալած դյուլբանդի նման։*

Ծոթ-վանկանի յեռյակները թվով սակավ են։ Դրանց յերեք տողն էլ նույնահանգ են։ Որինակ.

Գացի արտերը, բանի լոր, *Քար մի՛ թալի մեր ղլին,*
Աղջիկ տեսա յայլի ձոր, *Թող դա նամի քու Թլին,*
Նման եր կարմիր խնձոր։ *Կրակ տու. ղարեբ փլին։*

Աչե դիպավ սարերուն, *Լոր փախավ, մտավ ձեր արտ,*
Կաքավ թռավ քարերուն, *Դու մի՛ եղնի ծանր ղարդ.*
Լորիկ կայնե վեր գարուն։ *Աբանը քաղե՛ ու դի՛ր բարդ։*

Ծոթ-վանկանի բառյակներն ամենից շատ սիրված և տարածված են; մանավանդ արևելյան հայերի մեջ։ Այս խաղերի առաջին, յերկրորդ և չորրորդ տողերը նույնահանգ են, իսկ յերրորդ տողն անհանգ է մնում։ Ըստ բովանդակության առաջին յերկու տողերը, շատ քիչ բացառությամբ, առանձին առանձին խոսքեր են, իսկ վերջին յերկու տողերը հաճախ մի խոսք են կազմում. 3-րդ տողի անհանգ մնալը շատ և շատ վոտանավորի բնավորությունը, ինչպես վոր բովանդակությունն էլ հենց պահանջում է։ Որինակ.

Մեխի արեք են ղլին, *Սարի Քրքինուկ Թազա,*
Վառը դրել ա փլին. *Մեղր ու շաքար քեզ մազա.*
Գլուխս մատաղ կանեմ *Ինձպես նազանի աղջիկ*
Թուխ աչք ու կարմիր Թլին։ *Գեղ պես տղին վո՞նց ազա։*

Մեր խաղերի մեծագույն մասն այսպիսի կազմություն ունեցող քառյակներ են։

Սակավաթիվ 7-վանկանի քառյակներ կան, վորոնց չորս տողն էլ նույնահանգ են կամ հաջորդաբար զուգահանգ են, այսինքն 1-ին և 2-րդ տողերն իրար հետ են հանգ կազմում, իսկ 3-րդ և 4-րդ տողերն իրար հետ. կամ թե տողերը մեջ ընդ մեջ զուգահանգ են, այսինքն առաջին և յերրորդ տողերը մի հանգ ունին, իսկ յերկրորդ և չորրորդ տողը մի ուրիշ հանգ։

Այսպիսի հանդերով քառյակները, սակայն, հիմնական չեն, այլ յերկյակներից կազմված քառյակները, վորոնց կազմությանն մասին հետո կըխոսենք։

8–վանկանի տողեր

Տողը կազմված է ութ վանկից և սովորաբար յերկու բարդ վոտք ունի։ Ցեցե քառյակի տողերի մեջ նույնաթիվ շեշտեր կան, վոտանավորը համաշեշտ է։

Յերկու նույնահանդ տողերը կազմում են մի փոքրիկ խաղ, մի յերկյակ, վոր ավելի սիրված եր արևմտյան հայերի մեջ։ Այսպիսի կարճ յերկյակներն էլ սովորաբար ասվում են պարելու ժամանակ։ Որինակ՝ Սրվանձտյանի Համով–Հոտով եր։ 305 բերված են մի շարք այսպիսի յերկյակներ, վորոնց հետ, սակայն, վերջը կցված են ուրիշ յերգեր։

Մոկաց սարեր, պետ պետ քարեր,
Դևս չեր լուացեր, արևն առեր։

Բարակ մանած, յերկեն խինած,
Մանեմ մանեմ, կտրավ մանած։

Ցես քի մեռնեմ ապտալի ծուռ.
Բաս ա կան դաս չիմար ու ծուռ։

8–վանկանի յեռյակները, վորոնց յերեք տողերն էլ նույնահանդ են, ավելի գործածական են, քան 7–վանկանի յեռյակները։ Որինակ.

Արևն ելավ կամար կամար,
Ջուլոն կապեց ոսկե քամար,
Ցես կըմեռնեմ քեզի համար։

Ջուրը կ'երթաս ջուխտ գոբակով,
Սիրաս կ'երթա բոց կրակով,
Ինչի փախցուած ալ քուռակով։

Դու դալա կուգաս հուլա հուլա,
Կունմանիս քամկի քուլա.
Աչքս սեսավ, սիրաս կուլա։

Հարավ քամին կըշնչնչա,
Սազ քամանին կըճնգճնգա,
Ցես քու սիրուդ հիվանդ ընկա։

Դու կայներ ես աղբրան ական,
Փեչքդ կըտա արեգական,
Կարմիր երեսդ արյուն–կաթան։

Տան քովէ անցա, քաղէ քեզնից,
Լանկով զարկի, գերդիկ բացի.
Ցարս տուն չեր, նստա լացի։

Ավելի սիրված են, մանավանդ արևմտյան խաղերի մեջ, 8–վանկանի ֆառյակները։ Հանդերի նկատմամբ այս քառյակների կամ բոլոր տողերն էլ նույնահանդ են, վոր սովորականն է, կամ թե հաջորդաբար զուգահանդ։ Որինակ.

Մեր տուն, ձեր տուն մոտիկ մոտիկ,
Դու կապել ես կարմիր գոտիկ.
Երթանք, քաղենք կանաչ խոտիկ,
Ցեհաննք՝ վիրը յարն է խոտոտիկ։

Երկու ամոս, իրեք ձմեռ,
Հերիք անես ձի կիսոտեռ,
Գիշեր ցերեկ քո կարոտով,
Որ չեմ տեսնի ցամաք աչքով։

Կան նաև սակավաթիվ քառյակներ, վորոնց յերրորդ տողն անհանդ է մնում, ինչպես սովորական 7–վանկանի քառյակի մեջ։

Գարուն եկավ, ամառ գնաց,
Աչքս մնաց ճամբընեբաց.
Առավածամոր խնդիր ունիմ,
Դուռ մի բանա կարիքներաց։

Կնա գիշերին և հավխոտաց,
Մերի՛կ, ո՞ւր և կորիճ իմ ծաց,
Թիքը-միքը մատաչ մանուկ
Ջինա ցրվի իմ սրտի խաց։

7 և 8-վանկանի տողեր

Սահավաթիվ խաղերի մեջ 7 և 8-վանկանի տողերի խառնուրդ է լինում, այսինքն առաջին տողը 7-վանկանի, իսկ յերկրորդը 8-վանկանի։ Այս խառն չափով կազմվում են նույնհանդ յերկյահներ և կամ 3-րդ տողն անհանդ քառյահներ։ Որինակ.

Թալիչու ճամբեն դուլ ա,
Աման կայնել Աչեն կուլա.

Վնձ պես աղեն քեզի հետ,
– Առաված վկա, լավ կըսազա։

7 և 8-վանկանի տողերի զեղեցիկ խառնուրդ լինում է «անտունի» չափի մեջ, վոր մեր ամենից ներդաշնակ ու յերաժշտական վոտանավորն է կազմում։ Այս չափը միանգամայն և մեր ամենահին ժողովրդական չափն է։ Գրիգոր Նարեկացուց իմանում ենք, վոր 10-րդ դարում արդեն այս չափը սովորական է յեղել նրանց համար, «որք ի լալեացն յեղանակեն բանաստեղծութիւն»։ Այժմ ևս այս չափով հորինված յերգերը մեծ մասամբ վողբ են և վերաբերում են պանդխտության։ Ակնա կողմերում այս չափով հորինված պանդխտության յերգերը կոչվել են «անտունի» յերգեր, այսինքն անտուն, տուն չունեցող, պանդուխտ մարդոց յերգեր։ Նույն անունով կոչում ենք և չափը։ Սիրո յերգեր ևս կան հորինված այս չափով։ Մի քննադատության յերգիչներին մանվանդ շատ սիրելի է յեղել այս չափը, վոր ճեռագիրների մեջ կոչվում է «հայրենի», ավելի ճիշտ՝ «հայերենի»։

Անտունի չափը մեր միակ հին չեչտական չափն է, վորի վոտքերը պարզ են, այսինքն մի չեչտված և մի կամ յերկու անչեչտ վանկից են կազմվում, մինչ մյուս չափերի մեջ վոտքերը բարդ են։ Անտունի չափի ամեն տող ունի յերեք չեչտ և յերեք վոտք, հետևյալ հիմնական դասավորությամբ առաջին և յերկրորդ տողերի մեջ.

ս՛ սս՛ ս՛
սս՛ ս՛ սս՛

Բերենք մի քանի որինակ ժողովրդական քառյահներից։

Մայիկը առավոտ նման,
Առոբման չարիկն է վրան,
Շաղվո՛ր, յես ու յես գնա,
Վոր ցաքն արևն է վրան։

Ջինակ մ՚որ ջրին գառես,
Ջուր մին ալ ձգես նե՝ չտրիր.
Մարիկն որ աղեն գառես,
Ճար չկա՝ պիտի մեռանի։

Հանգն ույս չոջի մեջ ազատ է։ պատահաբար հանդիպ կազմում են այս կամ այն տողերը, բայց սովորաբար անհանգ է վոտանավորը։ Հին հայրենները հանդավոր են*)։

Այս չափով հորինված քառյակները կարող են վերածվել և յերկյակների, վորոնց տողն այն ժամանակ կազմված է լինում 15 վանկից, յորինորդ վանկի վրա հատածով.

Ադ ո՞վ ադ երկիդ եկնը, / ադ ասար հողը կու կոխե.
Թե մարդ է նե՝ վար եկո՛ւ, / Թե չուշան ծաղիկ դնալու։

Անտունի չափով յերդերը չեն առնված այս ժողովածուի մեջ։ Դրանք պահված են առանձին հատորի համար, վորի մեջ պիտի առնվեն հին գուսանական հայրենները։

9–վանկանի տողեր

Ինն–վանկանի խալերը չկան։ Բայց կան 9–վանկանի տողեր, վորոնք դրված են ածվում իբրև կրկնակները, յերբեմն մեացած յոթ–վանկանի տողերի հետ։ 9–վանկանի տողը կամ յերեք հավասար վոտք ունի, կամ յերկու վոտք՝ 5 և 4–վանկյանի։

Հով արեք, սարեր ջան, հով արեք,
Այ գուճուր աղջիկ, գալդուն արի։

Իսկ յերեք քառյակի մեջ ևս պատահում է, վոր առաջին մի կամ յերկու տողն 9–վանկանի յեն, այդ առաջանում է դիվաւորապես նրանից, վոր կրկնակի յեղանակը միանում է բուն խաղի յեղանակին և տալիս է մի ավելի բարդ յեղանակ, վորով յերգվում է բուն խաղը։ Այս պատճառով քառյակի այն տողերն ևս, վոր ինն–վանկանի կրկնակի յեղանակով են յերգվում, վերածվում են ինն վանկի։ Այսպես կազմված է, որինակ, հետևյալ քառյակը.

Հով արեք, սարեր ջան, հով արեք,
Իմ գարդին գարման արեք.—
Սարերը հով չեն անում,
Իմ գարդին գարման անում։

*) Մանրամասնություններ տեսնել՝ Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տաղաչափություն», յեր. 267 հան. «Հայբենի կարդ»։ Այլև Մ. Աբեղյանի «Հին գուսանական ժողովրդական յերգեր», Եվրևան, 1931. յեր. 30 հան. «Հայբենի առանձնահատուկ ոիթմը»։ Նույնպես և Մ. Աբեղյանի «Ժողովրդա կան խաղեր ուսումնական արտատպություն «Բաբաստ» ամսագրից», Վաղարշապատ 1905. յեր. 27. հան։ Այս վերջին աշխատանքը, վոր պատրաստված էր իբրև ներածություն ժողովրդական խաղերի ժողովածուի համար, ոտագործվում և այժմ այստեղ այս ներածության մեջ։

10–վանկանի տողեր

Ինչպես տեսանք, մեջ ընդ մեջ հանդիպում 5–վանկանի քառյակները կարող են իրենց 10–վանկանի յերկյակները ևս առնվել, վորոնց մի տողն ունի յերկու վոտք, միջին ունենալով հատած: Այսպիսի 10–վանկանի տողերով կազմված խաղերը բավական տարածված են յեղել մանավանդ արևմտյան հայերի մեջ: Յերկյակները և յեռյակները, վորոնք նույնահանդ են, սակավաթիվ են.

Նլեր ես իդին, խաղող կըքաղես,
Նորա չորս բոլոր կանաֆիլ չաբես:

Մանր ես իդին, խաղող կըքաղես,
Շամամ ծծերով չաքար կըմաղես,
Ալմաստ խանչալով դիմ սիրտ կըդաղես:

Ցես նման դինի, դու անուշ քյասա,
Դու լի՛ց, դու խմի՛, քո դարդ ձիկ ասա:

Բոստան եմ դրե վնրով են դարին,
Առաված չեն պահի ես տարվան տարին,
Շամամ մի չելավ ուղարկեմ յարին:

Ավելի սիրված են այն քառյակները, վորոնց չորս տողն ևս նույնահանդ են, կամ հաջորդաբար զուգահանդ.

Ցերկինքն եր ամպե, կու գար
Մարմար ձյուն, վարդի հոտն անուշ կըցրվի իմ դարդ.

Մաղիկ եմ ցանե չորս բոլորն ե վարդ,
Դու գար, կըթափեր վեր մարդ
Մարդուն կարոտս չմնար վեր ասվորիս:

Մեկ յո՛ս եմ մալուլ, քի՛ աչխարհ
Իմ յարոջ սիրուն մնամ երեսուն:

Ցերբեմն յերբորդ տողն անհանդ է մնում.

Երեսդ է փերի նման վարդի քուլ,
Քե կուզես արծաթ, կուտամ վոսկի բուլ.

Քո սերն իմ սիրտ կապենք, կապկպենք,
Անցնենք սար ու ձոր, երթանք Ստամբուլ:

11–վանկանի տողեր

11–վանկանի յերկյակներ, տեսանք, կազմվում են 6 և 5–վանկանի քառյակներից, վորոնց հանդերը մեջ ընդ մեջ են, տողը յերկու բարդ վոտք և, 6–րդ վանկի վրա հատածով: Այսպիսի յերկու յերկյակները միասին կազմում են քառյակներ, վորոնց տողերը հաջորդաբար զուգահանդ են.

Նլեր եմ, կ'երթամ կը, վի՛մ գիտե հալս,
Մե մ'ա Ստամբուլ գիտե դառնալս ու գալըս.
Մարի՛կ, ձեռքդ պատնեշ, յա՛ր, մնատ բարով.
Աըղահիլ կամոքդ պագըմ տուր սիրով:

11–վանկանի տողերն ունին և ուրիշ չափ. ամեն տող ունի յերեք բարդ վոտք, տողը բաժանելով հատածներով չորրորդ և ութերորդ վանկերի վրա: Որինակ.

Վարդն է բացվե Վանա քաղքի եդեսաբ.
Աստված սիրես, մեկն ուզարկի ձիկը տար.
Քա՛ նազերով, քա՛ խորոտիկ, դու վի՞րն ես.
Աչխարհ դիտի, ալամ դիտի՝ դու իմն ես:

12–վանկանի տողեր

Այսպիսի տողեր դործածական չեն մեր խաղերի մեջ: Բայց պատահում է, որ 8–վանկանի տողերի մեջ մի 4–վանկանի բարդ վոտք է ավելանում, կամ 12–վանկանի չե դառնում՝ բաժանված լերեք 4–վանկանի վոտքերի: Այսպիսի տողեր կրկնակների մեջ ևս պատահում են: Որինակ՝ այդպիսի ավելի վոտք ունի հետևյալ քառյակի վերջին տողը:

Գնգի մեռնիմ, խաթուն կնսուր,
Քո ծուռ լանուն խրատ մը տուր,
Զերքա պատկի գոմշի մսուր,
Շեկ ծամերուս, չխմալ, բոյիս, ի՞նչ կա զսուր:

12–վանկանի տողերից ավելի յերկար տողեր, 13, 14, 15 և 16–վանկանի, դործածական չեն մեր խաղերի մեջ: Բերած որինակներից կարելի յե տեսնել, որ դյուղական յերդիչները իրենց խաղերի մեջ ճիշտ նույն չափն են դործածում, ինչ որ մեր դրագետները դործ են ածել և դործ են ածում: Յերկսի տարբերությունը չատ չնչին է: Խաղերի մեջ վոչ դործածական չափերը սրբված չեն և դրական բանաստեղծության մեջ, ինչպես են 9–վանկանի և անխառն 6–վանկանի և 13–վանկանի տողերը:

Ժողովրդական յերդերի չափի տեսակները վերևում դրվածով միայն չեն սպառվում, որովհետև միայն 2—4 տողերից կազմված փոքր խաղերն են վերցված այստեղ և վոչ բոլոր ժողովրդական յերդերը: Բայց այդքանն էլ միայն արդեն ցույց է տալիս, որ եյական տարբերություն չկա մեր ժողովրդական և դրական բանաստեղծության չափերի մեջ:

Հանգերի նկատմամբ մեր ժողովրդական յերդը չատ ավելի զարդացած է, քան դրականը: Խաղերի մեջ չկան այն թույլ ու անպետք հանդերը, որ հանդի տեղ անց կացնել են տալիս մեր բանաստեղծները: Ժողովրդական խաղերի հանգերը զորեղ են ու հնչուն և տողերի վերջում զուտ հանգավելով և որ գլխավորն է՝ արագ հաջորդելով իրար, փաղաքշում են հանկարծ և բանաստեղծության համար մի զարդ կազմում և վոչ թե ավելորդ բեռ, որ միայն հանդաչենների նեղություն է տալիս՝ առանց գլխավորության պատճառելու ընթերցողին, ինչպես են մեր բանաստեղծների հանգերը մեծ մասամբ:

Զեռի տակ ունենալով հազարավոր քառյակներ իրենց բազմազան վարիանտներով, տեսնում ենք, որ մեր դյուղական յերդիչների լեզուն աղքատ է հանգերով. սահմանափակ թվով են նույնահանդ բառերը: Հենց այս

պատճառով այդ յերդիչները շատ անգամ հանգի համար միայն դիմում են իրենց ծանոթ թուրքերենին, մինչ տողերի մեջ ոտար բառերը համեմատաբար պակաս են գործածվում և հաճախ այդպիսիները վարխանաների մեջ փոխանակվում են հայերեն, և յերբեմն շատ ընտիր, բառերով:

Ջորեղ հանգեր կազմելու համար բացի թուրքերենին դիմելուց՝ ժողովրդական յերդը բանեցնում է և մի միջոց, վոր հատուկ է նաև աշուղական յերգերին, այն է՝ իսկական հանգ կազմող բառի յետևից տողերի վերջում կրկնվում է նույն բառը: Այսպիսի հանգերը կարելի յե կոչել հոդավոր հանգեր», մինչ սովորական կամ պարզ հանգերը մերկ հանգեր են: Որինակ՝ հետևյալ առաջին քառյակը մերկ հանգեր ունի, իսկ յերկրորդը՝ հոդավոր հանգեր.

Ապուր եմ եփել աղի,
Ուտողի սիրտը դողի.
Ցես ու դու իրար սիրենք,
Թող դուշմանը կատաղի:

Ցես աղջիկ եմ, հեր չունիմ,
Մի սրտացավ տեր չունիմ.
Հորից-մորից զրկված՝
Աչխատող ազգեր չունիմ:

Հաճախ մերկ ու հոդավոր հանգերի միություն է առաջ գալիս տողերի մեջ. այսինքն յերկու տող միասին հոդավոր հանգ են կազմում, իսկ յերրորդ տողը մերկ հանգ է կազմում առաջին տողերի վերջում կրկնված բառին կամ հոդին: Որինակ.

Լուսնակը սարի տակին,
Մամուռը ջրի տակին,
Ցես իմ յարին կարոտ եմ
Ջան վարդ ու մանուշակին:

Հե՛յ, սարեն մարդ ա գալի,
Սարը կրակ ա տալի.
Առաջը աղյուխ բացավ,—
Իմացա վարդ ա տալի:

Ես գիշեր յես դուրս եկա,
Թաթախ ձնով քացեի ա,
Կրկաթեր մարմար քարին,—
Ցաբիս աչքն ա՝ լացել ա:

Ղաբիր եմ, կարս գնացի,
Ղաբիր տեղ հարս գնացի.
Գտակուց յես որ չտեսա,
Անկեսուր հարս մնացի:

Հանգերի հոդավորությունը հատուկ է ավելի 7-վանկանի քառյակներին:

9· ԱՂՁԱՏՈՒՄ ՑԵՎ ՎԱՐԻԱՆՏՆԵՐ

Ժողովրդական խաղը բերնե բերան և սերնդե սերունդ անցնելով՝ փոփոխության է յենթարկվում: Այս փոփոխությունը միշտ հոդուտ յերգի չի լինում, այլ հաճախ ի վնաս:

Արդարև կարող է պատահել, վոր սկզբնապես թույլ բանաստեղծությունը հետզհետե ավելի գեղեցկանա. բայց դժվար է յենթադրել, վոր սկզբնապես անխմաստ և բոլորովին անշնորհք լինի մի վոտանավոր և մնա

ժողովրդի հիշողության մեջ և հետզհետե իմաստալից ու գեղեցիկ դառնում։ Խաղը մնում է միայն այն ժամանակ, երբ դյուր է դալիս։ Իսկ անխմաստ բանը դյուր չի դալիս. և եթե դյուր էլ դա, նրա շրջանն ընդարձակ չէ, և վոչ էլ կյանքն է երկարատև։ Եթե այժմ դտնում ենք բաղմաթիվ անմիտ և անհեթեթ խաղեր, վորոնք տարածված են շատ կողմերում, դրանց մեծագույն մասն անհրաժեշտորեն հետագայում միայն աղճատված են։ Աղճատված ձևով խաղը մնում է միայն նրա համար, վոր սկզբնապես գեղեցիկ ձև է ունեցել։ Հին գեղեցկի ապրեցությունը շարունակում է դոյծել և այն ժամանակ, երբ այլևս չկա գեղեցկությունը։ Այս ինչպես աճհատի, նույնպես և ժողովրդի հոգեբանության մեջ է։

Խաղն ուրեմն ժամանակի ընթացքում հետզհետե ավելի կորցնում է իր պարզ ու բնական կազմությունը, քան գեղեցկանում։ Դա խանգարվում կամ աղճատվում է։ Եվ աղճատ յերգը շարունակում է ապրել ժողովրդի բերանին, ճիշտ ինչպես աղավաղված ապրում են դեռ մեր պատավական աղոթքները, ավելի կապկի կամ հմայական աղոթքները, վորոնք սկզբնապես իմաստալից հորինվածներ են ունեցել, յերբ կենդանի յե յեղել այն հեթանոսական հավատալիքը, վորի արդյունքն են իրենք։

Ժողովրդական խաղի աղճատումը խիստ բազմազան կերպով կարող է առաջ գալ։ Բուլական է, վոր մի կամ յերկու բառ փոխվում են, մի բայի ժամանակ՝ ներկան անցյալ է դառնում, կամ անցյալը՝ ներկա՝ և այլն, և յերբեմն կազմությունն արդեն խանգարվում է, կամ իմաստը կերպարանափոխվում է։

Խաղն առանձնապես կազմալուծվում է, յերբ յերկու զուգահեռական մասերի հարաբերությունը կամ մթնանում է, կամ վոչնչանում։ Առաջին դեպքում խաղը կորցնում է իր սկզբնական բնավորությունը. իսկ յերկրորդ դեպքում բնությամբ սկսվածքը, իր նշանակությունը կորցնելով, դառնում է մի դատարկ ձև։ Վերցնենք որինակ, հետևյալ զուգորդիկ քառյակը, վորի բովանդակությունը բացատրվեց վերևում, և տեսնենք նրա կրած փոփոխությունները։

1. Գաղ ջուր պրծել, կուպա սարեն, Չի հովցուցե սրտիս յարեն,—
Կուպա, թափի մարմար քարեն, Ցարն ա դարձել իր իշղարեն։

Այս քառյակի բազմաթիվ վարիանտներից մեկն է և հետևյալը.

2. Ջուրը պրծել, կուպա սարեն, Չի անցուցեր սրտիս յարեն,—
Կուպա, թափի մարմար քարեն, Ցարն ա դարձել իր իշղարեն։

Այս յերկու վարիանտի տարբերությունը շատ չնչին է, բայց և այնպես յերկրորդի մեջ արդեն մթնած է, իսկապես չկա առաջինի բնությամբ սկզբնածքի պարզ ու պայծառ բաղդատությունը։ Առաջինի մեջ ջուրը պաղ է և մեր մեջ ծնեցնում է մի նախապատրաստական տրամադրություն. սպասում ենք, վոր պաղ ջուրը հովացնի խմողի սիրտը. բայց սրտի վերքն այնքան

բորբոք է, որ չի հովացնում: Ջերկրորդի մեջ պաղ բառը դուրս է ընկել և մնացել սոսկ ջուր. իսկ հովացնել բառի տեղ անցել է սպացնել, առողջացնել բառը: Բնությամբ սկսվածքն այս ձևով թեպետ և դեռ կապված է խաղի յերկրորդ մասի հետ, բայց այլևս վոչ մի տրամաբանություն առաջ չի բերում, և մենք չենք էլ սպասում, որ ջուրը բժշկի, առողջացնի սրտի վերքը: Այս տրամաբանությունն առաջ կըլներ, յեթե ջուրը լիներ սրտի վերքի բնական սպեղանին, ինչպես որ պաղ ջուրը օրրա հովացնելու միջոցըն է:

Վերցնենք ուրիշ յերկու վարիանտ.

3. Ջուրը պրծել, կուդա սարեն,
Կուդա, թափի մարմար քարեն.
Իրար մի՛ սա սրտիս յարեն,—
Ցարն ա դարձել իր էղբարեն:

4. Ջուր մի վրքե, կուդա սարեն,
Կուդա, թափի մարմար քարեն,
Ձեռ մե՛ք իսա սրտիս յարեն,
Ցարն է դարձե յուր կյաբեն:

Այս յերկուսը 2-րդ վարիանտի իրար նման ձևափոխություններ են: 4-րդի մեջ «ջուր մի վրքել» փոփոխությունն առանձին նշանակություն չունի. բայց յերկու վարիանտի մեջ էլ 3-րդ տողի «իրար մի սա», «ձեռ մե՛ք իսա» ձևերը փոխանակ «չի սաղցուցեր» բառերի, բոլորովին կերպարանափոխ են անում խաղը: 3-րդ տողն արդարև իմաստալից կերպով կապված է 4-րդ տողի հետ, բայց յերդի առաջին դուստահեռական մասը, բնությամբ սկսվածքը, իր համար մի անկապ բան է մնացած, մի դատարկ ձև դարձած:

Ամենից հաճախ փոփոխության է յենթարկվում քառյակի 3-րդ տողը, մանավանդ 7-վանկանի քառյակի, վորովհետև սրա 3-րդ տողը, սովորաբար անհանդ լինելով, հատատուն կերպարանք չունի. ուստի և շուտով մոռացվելով կամ դուրս է ընկնում, վորով քառյակը դառնում է յեռյակ, կա՛մ թե տեղը մի նոր խոսք է մտնում: Սակայն քառյակի 3-րդ տողը խաղի եյական մասն է, և հատկապես այն մասը, վոր վոչ միայն ներքին կյանքն է բերում, այլև ներքինը, այսինքն խաղի յերկրորդ մասը, կապում է առաջին մասին, բնությամբ սկսվածքին: Յերբ դուրս է ընկնում 3-րդ տողը, բնությամբ սկսվածքն անկապ է մնում. իսկ յեթե յերրորդ տողին մի նոր խոսք է փոխանակում, բնությամբ սկսվածքը կամ դարձյալ անկապ է մնում, յեթե նոր խոսքը չի հարմարվում խաղի առաջին մասի իմաստին, կամ թե՝ յեթե հարմարվում է, կազմվում է խաղի մի նոր իմաստալից վարիանտ: Որինակ՝ վերոհիշյալ խաղի համար ձեռքի տակ ունենք հետևյալ յեռյակը.

5. Ջուրն ա պրծել, կուդա սարեն,
Կու դիլա մարմար քարեն.
Ցարն ա դարձել իր էղբարեն:

Այստեղ 2–րդ տողի մեջ «կու ղղլա» մի բանաստեղծական դեղեցիկ փոփոխություն է մյուս վարիանների «կու դա, թափիլ» ձևին. բայց վորովհետև 3–րդ տողը դուրս է ընկել, խաղը դարձել է մի անմտություն, բնությամբ սկսվածքը մի դատարկ ձև:

Պատահում է յերբեմն, վոր քառյակի 3–րդ տողը մոռացվում է, տեղն անցնում է 4–րդ տողը. իսկ սրա փոխանակ մտնում է մի նոր 4–րդ տող և կազմում է մի իմաստալից կամ անիմաստ վարիանտ: Որինակ՝ ունենք հետևյալը.

6. Ջուրն ա պրծել կուզա տաբեն, Ջարն ա դարձել իր խրաբեն,—
Կուզեր թափեր ծամոան քարեն. Վրեն եկնի, ա՛խ, ղեչ յարեն:

Այստեղ 3–րդ և 4–րդ տողերն իմաստով հարմարվում են իրարու, բայց խաղի առաջին մասը մի դատարկ ձև է մնացել: Ասել չի ուղիլ, վոր քառյակի մյուս տողերն էս կարող են մոռացվելով՝ դուրս ընկնել, կամ տեղը նորերն անցնել: Որինակ՝ տակի 7–րդ վարիանտի մեջ սուչ խաղի 2–րդ տողը մոռացվել է և տեղը դատարկ մնացել. մոռացվել է և 4–րդ տողը, վորի փոխանակ, սակայն, մտել է մի նոր տող, վորով կազմվել է մի կատարյալ անմիտ յեռյակ, վոր է՝

7. Գաղ ջուր պրծել, կուզա տաբեն,
Դեռ չի սաղցել սրտիդ յարեն,
Ճես ինչ անեմ գլիմ քոռ սիքաբեն:

Խաղի ամենից հատատուն մասն է մի չտ հանգն ու հանգ կազմող բառը, մեկ՝ այն պատճառով, վոր յերգի վոտանավորին բնավորություն տվողը հանգն է, վոր բաժանում է տողը տողից և կազմում տաղաչափական վոտքը. մեկ էլ՝ անշուշտ այն պատճառով, վոր հանգերը մեր լեզվի մեջ շատ բազմազան չեն, ուստի և մի անգամ արդեն կազմված հանգն իր յեռեվից հեշտությամբ բերում է իր պատրաստի ընկերը, մինչ նույն հանգով նոր բառ գտնելը դժվար է: Սակայն հանգերն էլ, ինչպես և հանգ կազմող բառերը, փոխվում են, թեպետ սակավադեպ: Հանգի և հանգ կազմող բառի փոփոխությունը հաճախ առաջ է բերում ամբողջ տողի փոփոխություն: Վերջին տողի այսպիսի փոփոխությամբ խաղի յերկրորդ մասի իմաստը հաճախ այնպես կերպարանափոխվում է, վոր խաղի առաջին մասն յերկրորդի հետ կամ անկապ է մնում, կամ թե կազմվում են նոր իմաստներով վարիանտներ, որինակ.

8. (Գաղ) ջուր կըգնը վերին տաբեն, Չխովցուցեր սրտիս յարեն,—
Կուզեր, կաթեր մարմար քարեն. Երված մնաց քո կարտաշեն:

Այս վարիանտի մեջ թեպետ և չկա «պաղ» ածականը (վոր հավանորեն պետք է լինի, վորովհետև տողի մեջ մի վանկ պակասում է), բայց և այնպես յերգի յերկու մասերը սերտ կապված են իրար: Արդարև 4–րդ տողը

վոխված է, բայց կազմված է մի նոր իմաստալից յերգ, տարբեր 1–ին վարիանտից: Մինչ սրա մեջ յարի ուխտադրժությունից և սրտի վերքն անդուվանալի մնում, 8–րդ վարիանտի մեջ՝ կարոտից: «Այրված մնաց» առությունը հաջող ընտրություն է «չի հովցուցեր»–ի դիմաց: Այս 8–րդ վարիանտի մյուս պակասությունն այն է, որ «կարոտն» բառը, որ փոխանակած է «իլղարեն» բառին, թույլ հանդ է կազմում:

Գատահում է, որ մեկնույն հանգով կազմված կան տարբեր խաղեր: Խաղի առաջին մասի համար վերցվում է մի յերգի սկզբի մասը, որին հաջորդում է մի ուրիշ յերգի նույնահանդ վերջը կամ սկիզբը և կազմվում է մի նոր վարիանտ իմաստալից կամ անիմաստ: Բայց այս ավելի խաղերի ղարդացմանն է վերաբերում, որի մասին հետո:

Գատահում է նույնպես, որ խաղի տողերի դասավորությունը շուռ է դալիս· առաջին տողից հետո յերգվում է վերջինը, իսկ յերկրորդը գնում վերջն ընկնում և այլն: Ճեվ այսպես բաղմազան կերպով մեկնուն քառյակը յերբեմն այնքան շատ փոփոխությունների յե յենթարկվում, որ իրոք մեկնուն յերգի վարիանտները հաճախ քիչ նմանություն են ունենում միմյանց հետ, և սկզբնական յերգից շատ քիչ բան, միայն մի յերկու տող է մնում: Կազմվում են խիստ աղավաղված, յերբեմն և անհեթեթություններով լի յերգեր, որոնցով, հարկավ, կարելի չէ գաղափար կազմել ժողովրդական խաղերի մասին:

Խաղերի փոփոխության պատճառներից մեկն էլ հետևյալն է: Ճերբեմն սկզբնապես մի չափով հորինված յերգը յեղանակի պատճառով շուռ է դալիս մի ուրիշ չափի: Այս դեպքում ամբողջ խաղը բնականաբար փոփոխության է յենթարկվում: Որինակ՝ մեր բերած 8–վանկանի խաղի 2–րդ վարիանտը 7–վանկանի խաղի յե վերածված հետևյալ ձևով.

9· Ջուրը կ'իջներ են սարեն, Չի սազել սրտես յարեն,
Երթար, թափեր են քարեն· Վոր դարձար քո իլղարեն:

Այս վարիանտի մեջ, ինչպես ընթերցողը կըտեսնի, բանաստեղծական դեղեցկությունը բոլորովին կորած է:

Վերևում դրված 6–րդ վարիանտի մի նույնպիսի ձևափոխություն և հետևյալը·

10· Ջուր եկավ վերին սարեն, Ով դառնա էր իլղարեն,
Թափում ա մարմար քարեն· Վերն թափէ դոթու յարեն:

6–րդ վարիանտի մեջ, ինչպես ընթերցողը կըտեսնի, իլղարեն արդեն կատարված է, և յերգիչն անիծում է ուխտադրուժ յարին: Իսկ այստեղ հավատարմության յերդում է տրվում անեծքով, ինչպես սովորական է ժողովրդի մեջ: «Թափում ա» և «թափէ» բառերը թույլ կապ են դնում խաղի յերկու զուգահեռական մասերի մեջ:

Այս վերջին 10–րդ վարիանտի մի փոփոխված ձևն է և հետևյալը·

11. Ջուր պրծեր, կուգա սրբեն, Վոր դառնա իր ղրաբեն
Գա, թափէ մարմար քարեն· Հանա դրթեցուկ յարեն։

Խաղի փոփոխություն առաջ է գալիս և մի բարբառից մյուսին անցնելիս։ Շերտակում կամ Այրարատում հորինված յերգը, որինակ, Ղարաբաղ անցնելիս, կամ ընդհակառակը, վոչ միայն հարմարվում է տեղական բարբառի հնչյունաբանությանն ու ձևաբանությանը, այլև բառերն էլ թարգմանվում են։ Այս պատճառով յերբեմն և վոտանավորն ամբողջ կերպարանափոխ է լինում։ Մյուս կողմից՝ այն բառերը, վոր վատ են լսվում, կամ մի բարբառի մեջ՝ չթարգմանվելով՝ անհասկանալի յեն մնում, յերբեմն այնպես խեղաթյուրվում են, վոր անմտություններ են միայն առաջ բերում· որինակ՝ «Այ հեվա, հեվա, սիրուս» տողը դառնում է՝ «Այ Ցեվա, Ցեվա, սիրուս» կամ «Այ ո՞վ ա, ո՞վ ա սիրուս»։ «Կեռ ունքեր» դառնում է «Կեռ ընքեր», «Կեռ ընքեր» և վերջը «կոնկեր», «կոնկներ» և այլն, վոր անհեթեթություն է։

Ասել չի ուզիլ, վոր կան խաղեր, վորոնք հենց նոր կազմված ժամանակ էլ անմիտ բաներ են յեղել։ Անչնորհք յերգիչներն աղճատված խաղերի նմանողությամբ, կամ պատրաստի յերգերից լոկ հանգը փոխ առնելով՝ սարքում են տողեր՝ միայն, ինչպես ասում են, հանգը հանգին բերելով՝ առանց մտքին ուշադրություն դարձնելու։

Սակայն անխմաստ խաղերի մեծ մասը, ինչպես վերևում դրեցի, այսպիսի անհանճար մարդկանց մտքի ծնունդ չեն։ Դրանք հետադայում միայն աղավաղված են։ Ուստի և, ինչպես վարիանտների բաղդատությամբ վերականգնում են ձեռագիրների բնագիրը, վոր աղճատված և խառնված՝ անչնորհք դրչակների ձեռքով, նույնպես կարելի յե և խաղերի վարիանտներն իրար բաղդատելով վերականգնել դրանց իմաստալից ձևը կամ «բնագիրը», յեթե կարելի յե խաղերի համար «բնագիր» բառը դործածել։

Անշուշտ, խաղերի «սկզբնական բնագիրը» հանել դժվար է, վորովհետև բաղդատությունից յերբեմն ստացվում են յերկու և ավելի իմաստալից վարիանտներ· իսկ առանց արտաքին միջոցների դժվար է ասել, թե վորն է վորից առաջացել։ Բացի այդ՝ թե ստացած իմաստալից ձևը սկզբնականն է թե չէ, այդ հնարավոր չէ ասել։ Համենայն դեպս բաղդատությունը մեզ մի հետեվանքի յե տանում· անմիտ յերգերն ընդհանրապես իմաստալից են դառնում, և ստացվում են մեծ մասամբ փոքրիկ, սիրուն յերգեր մի քանի վարիանտներով։

Խաղերի վարիանտները բաղդատելը շատ ավելի ծանր ու տաղտկալի դործ է, քան ձեռագիրներինը։ Բայց բաղդատելուց հետո յերգերի բնագիրը վերականգնելն ավելի հեշտ է, քան ձեռագիրներինը· դի յերգերի համար կան արտաքին տաղաչափական միջոցներ, վոր են վոտքը, հանգը և վոտանավորի ընդհանուր կազմությունը։ Եթե նույն խաղի մի վարիանտի

մէջ, որինակ, մի վոլևե տող պահանջած հանգը չունի, կամ մի վոտքի մէջ մի վանկ ավելի կամ պակաս է, իսկ մի ուրիշ վարիանտի մէջ հանգն ու վոտքն անթերի չեն, հասկանալի չէ, վոր առաջին վարիանտն աղավաղված է: Մյուս կողմից՝ վոտանավորի ընդհանուր կազմուածքը մեզ ցույց է տալիս, վոր, որինակ, 7-վանկանի քառյակների մէջ տողերի կրկնութիւն չի լինում: Եթէ ուրեմն նույն քառյակի մի վարիանտի մէջ գտնում ենք, վոր, որինակ, առաջին տողը նույնութեամբ կրկնված է յերրորդ կամ չորրորդ տողի մէջ, իսկ մի ուրիշ վարիանտի մէջ այսպիսի կրկնութիւն չկայ, շատ պարզ է, ուրեմն, վոր առաջին վարիանտն աղճատված է. յերկրիչը մոռացել է յերրորդ կամ չորրորդ տողը և անճարութիւնից կրկնել է առաջին տողը: Նրանից սովորողներն էլ, անշուշտ, նույն ձևով կրկնելով են առում:

Բացի այս արտաքին միջոցներից, ասել չի ուզիլ, «բնագիրը» վերականգնելու համար մեծ տեղ է բռնում և ներքինը, այսինքն յերկերի իմաստը: Բերենք մի քանի որինակներ՝ ցույց տալու համար, թե ինչպես կարելի յե մի քանի վարիանտների մէջ ընտրութիւն անել:

Իմ և Կոմիտաս վարդապետի հրատարակած «Հազար ու մի խաղ» ժողովրդական յերգարանի մէջ մեր խմբագրած մի յերգի համար իբրև առաջին տուն վերցրած ենք հետևյալ քառյակը.

1. Գուբանը հաց եմ բերում,
Բերանը բաց եմ բերում.
Տես, քեզ վոքան եմ սիրում,
Զուկը տապկած եմ բերում:

Դրա մի փոփոխակին և հետևյալը*).

2. Հոյ նաբե գուբանը հաց կառնիմ,
Հոյ նաբե, բերանը բաց կառնիմ,
Հոյ նաբե, գուբանը հաց կառնիմ,
Հոյ նաբե, տապկած ծածուկ կառնիմ:

Այս քառյակի համար մեր ժողովածուի մէջ ունենք և հետևյալ վարիանտները.

3. Գուբանը հաց եմ տալել,
Բերանը բաց եմ տալել.
Գինաս հա՞ց եմ տալել,—
Զկնով տապկած եմ տալել:

5. Գուբանը հաց եմ տալել,
Բերանը բաց եմ տալել.
Տե՛ս, քեզ կ'նչգան եմ սիրել,
Զկնով տապկած եմ տալել:

4. Գուբանը հաց եմ առնում,
Բերանը բաց եմ առնում.
Տե՛ս, քեզ վո՛րքան եմ սիրում,
Զուկը տապկած եմ առնում:

6. Գուբանը հաց եմ բերել,
Բերանը բաց եմ բերել.
Տղա, քեզ ինչքան սիրել,
Զուկը տապկած եմ բերել:

*) «Մուրճ» ամսագիր, 1903 թ. № 11 յեր. 201. տես և Մ. Աբեղյանի «Ժողովրդական խաղերը». ուսվածք, Վաղարշապատ, 1905 թ. յեր. 44. հան.:

7. Դուքանը հաց եմ բերում,
Բերանը բաց եմ բերում.
Շան տղա, չատ մի խոսա,
Մուկը տապկած եմ բերում:

8. Դուքանը հաց եմ բերում,
Բերանը բաց եմ բերում.
Շան տղի, չատ մի խոսա,
Մուկը տապկած եմ բերում:

Ահա ութ վարիանտ միևնույն երգի:

Թե 2–րդ վարիանտն աղճատված է՝ չատ պարզ է. երգիչը մոռացել է 3–րդ տողը և տեղը կրկնել է 1–ին տողը: Բացի այդ՝ աղավաղված է և 4–րդ տողը, քանի որ երգիչն այնքան անչնորհք է եղել, որ չի կարողացել հանդ կալմել. «հաց կտանիմ, բաց կտանիմ» հանդերի դիմաց դրել է «ծածուկ կտանիմ»:

Աղավաղված է և 3–րդ վարիանտի 3–րդ տողը. բայց այստեղ երգիչն այնքան անչնորհք չի դտնվել, որ առաջին տողն անփոփոխ կրկնի. նա երգի իմաստը ըմբռնել է և իր «ձկնով տապկածի» արժեքը մեծացնելու համար՝ չուռ է տվել, ընկել. «դինաս (= դիտես) հա՞ց եմ տարել»: Կազմվել է մի վարիանտ, որի մեջ տափակ սրախոսություն է լինում: Բայց թե այս տողն աղճատված է, պարզ երևում է և նրանից, որ մի վանկ պակասում է:

Մյուսներից 1–ին, 4–րդ, 5–րդ և 6–րդ վարիանտներն ըստ էության նույն երգն են: Փնտրենք սրանց տարբերությունները:

1. «Տանել» և «բերել» բայերից ո՞րն ավելի հարմար է իմաստին և դրությանը: «Տանել» ցույց է տալիս մի գործողություն, որ չի ուղղված երկրորդ դեմքին, այսինքն այն անձին, որին մի բան ասում ենք: Ճերը մեկին մի բան տանում ենք, նրան ուղղած խոսքի մեջ հայերեն կասենք թե քեզ բերում եմ այս բանը, և ոչ՝ տանում: «Տանել» բայը երկրորդ դեմքի համար միայն այն ժամանակ կարելի է ասել, երբ երկրորդ դեմքն այնտեղ չէ, ուր տանում են. որինակ՝ «քեզ համար այս բանը կտանեմ այս ինչ տեղը»: Արդ, գուքանավորին հաց տանող աղջիկը, երբ մոտենում է գուքանավորին, իր անպատրաստից երգն ուղղելով գուքանավորներից մեկին, իր յարին. «Տես, քեզ՝ վորքան եմ սիրում, որ ճուկը տապկած եմ բերում» և ոչ թե «Տես, քեզ վորքան եմ սիրում, որ ճուկը տապկած եմ տանում»: Այս վերջին ձևը անիմաստ չէ, բայց այդ ձևով միայն այն ժամանակ կարելի է ասել, երբ աղջիկը երգում է տանը, ճանապարհ ընկնելիս, և իր յարը, որին ուղղում է խոսքը. տանը՝ իր մոտն է, և ոչ դաշտում, գուքանի վրա. և այդ յարը աղջկա հետ կամ նրա յետևից պիտի գնա դաշտը՝ նրա տարած հացն այնտեղ ուտելու: Բայց իրականության մեջ այդպիսի բան չի լինում, ինչպես և այն, որ աղջիկը տղային հիշեցնի անցյալում կատարած այդպիսի գործողություն:

Հասկանալի է, ուրեմն, որ 2–րդ, 3–րդ, 4–րդ և 5–րդ վարիանտներից, որոնց մեջ «տանել» բայն է, ավելի ընտիր են 1–ին և 6–րդ վարիանտները, որոնց մեջ «բերել» բայն է:

2· «Բերում եմ» և «բերել եմ» ձևերից ո՞րն է ընտրելին։— Ասղն առեղծվում է բոլորական աղջկությանն առնչություններից։ Դուքանը հաց տանող աղջկին այս յերգն ասել է, անշուշտ, այն վայրկյանին, յերբ նա հաց տանելիս հեռվում տեսել է դուքանավորներին, վորոնց մեջ և իր սիրածին, և յերգով խմացնում է վերջինիս իր բերածը։ Այս ի նկատի ունենալով՝ ներկա պատմվածքը «բերում եմ», վոր կա 1–ին վարիանտի մեջ, ավելի կենդանի յև· ինչ վոր աղջիկն անում և ղղում է, նույնն անմիջապես նույն վայրկյանին արտահայտում և յերգով։ Մինչ 6–րդ վարիանտը «բերել եմ»՝ ձևով, թեպետ դարձյալ խմաստալից է, բայց կենդանությունից զրկված է։ Աղջիկն այստեղ անցյալով է ապրում և, կարծես, տղային հիշեցնելով իր արածը՝ նրա յերեսումն է ղաղնում։ Բացի այս, 3–րդ տողն ևս՝ «Տղա, քեզ ինչքան սիրի» (= սիրեցել), իր ձևով թույլ է հարմարվում մյուս տողերի պատմվածքին։

3· Բառական տարբերություններից առնենք «Ձուկը տապկած եմ բերում», «Ձկնով տապկած եմ բերել», և «Տապկած ծածուկ կտանիմ» ձևերը։ Սրանցից յերկրորդը՝ «Ձկնով տապկած» իրրև կերակուր մեզ հայտնի չե· կա յուղով տապկած, կա և տապկած ձուկ, բայց ձկնով տապկած... Թերևս, ձկնով հանդերձ տապկած, այսինքն թե ձուկն և թե տապկած, յերկու բան է տանում աղջիկը։ Բայց յենթադրենք, վոր «ձկնով տապկած» կերակուր կա, և կամ ձուկն ու տապկած պետք է հասկանալ· դառնանք քերականությանը։ «Ձկնով տապկած եմ բերում» ձևով լոկ պատմվում է, թե ինչ է բերվում։ Նույնպիսի լոկ պատմվածք կլիներ, յեթե առաջին վարիանտի մեջ ևս լիներ սովորական շարադասությամբ՝ «Տապկած ձուկն եմ բերում»։ Բայց «Ձուկը տապկած եմ բերում» ասվածքի մեջ շրջում կա· և այս շրջումը հատկապես շեշտում է՝ տապկած բերելը և վոչ թե խաշած։ Ժողովրդի մեջ, հայտնի յե, տապկած ձուկն ավելի հարգի և սիրելի յե, քան խաշածը։ Արդ, «Ձուկը տապկած եմ բերում» շրջումն այս իմաստով ավելի զորեղացնում է նախորդ խոսքի իմաստը, թե «Ծես, քեզ վորքան եմ սիրում, վոր ձուկը տապկած եմ բերում» և վոչ թե խաշած։ Այս նկատմամբ ևս, ուրեմն, ընտրելի յե 1–ին վարիանտը։

Գանք «Տապկած ծածուկ կտանիմ» ձևին։ Այստեղ պարզապես իմաստի անհեթեթություն կա։ Այս վարիանտի առաջին յերեք տողի մեջ հայտնված է միայն, թե «դուքանը հաց (= ընդհանուր իմաստով իրրև ուտելիք) կտանիմ» և թե «բերանը (= ամանի բերանը, վորի մեջ ուտելիքն է) բաց կտանիմ» և էլ ուրիշ վոչինչ։ Եթե հանկարծ այսքանը միայն ասելուց հետո դալիս է չորրորդ տողը, թե «տապկած ծածուկ կտանիմ»։ Ել ի՞նչպես է տապկածը ծածուկ տանում, քանի վոր բերանը բաց է տանում։ Ձլինի՞ աղջիկը հացը, ցամաք հացը, իր իսկական իմաստով, դրել է ամանի մեջ և բերանը բաց է տանում, իսկ «տապկածը ծածուկ», յերևի, ծոցին է տանում· ցամաք հացը մյուս դուքանավորնե՞րին, իսկ ծածուկ

տապկածը՝ իր սիրականին։ Բայց լոկ հացը տանի մեջ դրած չեն տա-նում դուքծանավորին, վոր տանի բերանը բաց տանեն, և վերջապես յեր-դի մեջ վոչ մի բառ չկար, վոր այդպես հասկանանք։ Շատ պարզ է, վոր այս անմտությունն առաջացած է նրանից, վոր յերգն աղճատված է։ Իսկ աղճատումը յերևում է նրանից, վոր ինչպես տեսանք, չորրորդ տողը հանգ չի կազմում։ «Հաց կտանիմ», «բաց կտանիմ» հանգերի դիմաց ընկած է «ծածուկ կտանիմ», իսկ նախանակ «տապկած կտանիմ» ձևի, վոր կա մյուս վա-րիանտների մեջ։ Մինչև անգամ կարելի յե ասել, թե վորտեղից և առաջ յեկել «ծածուկ կտանիմ» ձևը. «ձուկը տապկած կտանիմ» ձևը դարձել է նաև «տապկած ձուկ կտանիմ», և ապա պակաս վանկը լրացնելու համար թերևս «տապկածը ձուկ» ձևից անցնելով՝ դարձել է «տապկած ծածուկ»։ Այս փոփոխությունը նույն կարգին է պատկանում, վորով, ինչպես տե-սանք, «կեռ ունքեր», «կեռ ընքներ» դառնում են «կուբնկներ»։

Այս աղճատման վրա ավելացնենք և այն, վոր 3-րդ տողը մոռացվել և և տեղը կրկնվել է առաջին տողը, և մենք տեսնում ենք, վոր այդ վա-րիանտի մեջ ներքին հոդեկան կողմն ամբողջ պակասում է։ Սիրահարի սրտի քնքուշ զգացմունքն արտահայտող յերգը դարձել է մի տափակ, այն էլ անհեթեթ նկարագիր դուքծանը հաց տանելու, վորի մեջ նույնիսկ վո-տանավորի արվեստը չի պահված։

Գանք մնացած յերկու՝ 7-րդ և 8-րդ վարիանտներին։

Ուրիշորդ վարիանտը պարզապես աղճատված է. յերգն ուղղված է հաց տանողի կողմից մի դուքծանավոր աղջկա, մինչ կյանքի մեջ հակա-ռակն է լինում։ Այս աղավաղումը առաջ է յեկել 7-րդ վարիանտի 3-րդ տո-ղից՝ «Շան տղա, շատ մի՛ խոսա»։ Հաճախ խաղերի մեջ «չան աղջիկ» և «չան տղա» դարձվածները փոխանակում են իրարու։ Սկզբնապես աղջկա կողմից տղան յերգելով՝ հարկ է համարել «չան տղա, շատ մի՛ խոսա» խոսքը դարձնել «չան աղջիկ, շատ մի՛ հաչա», չհասկանալով վոր դրանով մի անմտություն է անում։

Բայց ի՞նչ է 7-րդ վարիանտը։ Արդյոք դա՞ ևս մի անմտություն է։— Ամենևին վո՛չ։ Ծերևակայեցեք հետևյալը,— աղջիկը հաց է տանում դու-քծանավորին. յերգում են հոտուվելը. և հոտաղներից մեկը, ինչպես տե-սողաբար լինում է, անմիջական տպավորության տակ սկսում է յերգել հաց բերող աղջկա մասին և նրա բերած հացի գովքն է անում, թեկուզ մի այսպիսի ձևով.

Գուքծանը հաց ես բերում, Տես, ինձ վո՛րքան ես սիրում,
Բերանը բաց ես բերում. Ձուկը տապկած ես բերում։

Բայց աղջիկը պարտական չի մնում. նա սրամտությամբ դարձնում է հոտաղին.

Գուքծանը հաց եմ բերում, Շան տղա, շատ մի՛ խոսա,—
Բերանը բաց եմ բերում. Մուկը տապկած եմ բերում։

Այստեղ այս կապակցությամբ մեջ այս վարիանտն իմաստալից է. դա ղորեղ և դեղեցիկ ծաղրական յերգ է, դեղեցիկ, ի հարկե, ժողովրդի գեղեհկական ճաշակով, վորով կերակրի ծաղրի համար մուկը սովորական բան է: Մկան դիպած, միևնոյն բանը պիղծ է. ո՞ւր մնաց տավկած մուկը: Նույն ճաշակով կազմված և, որինակ, և մի ծաղրական յերգի հետևյալ տունը.

Տա՛ դէչ կնիկ, քո հեր հօրեմ.
Մածուն կ'ուզեմ, բան կըբերես.
Թիզ մի բորոտ՝ մուկն է յերես,
Ել ի՞նչ օրով են ասեմ յես:

Ի՞նչ յեղավ այս բաղդատության հետևանքը: Միևնույն խաղի ութ վարիանտներից 2–րդ, 3–րդ, 4–րդ, 5–րդ, 6–րդ և 8–րդ վարիանտներն ավելի կամ պակաս չափով աղճատված են, մեկն անմտության աստիճանի, մյուսը՝ վոչ: Ամենից կենդանի և դեղեցիկն է 1–ին վարիանտը: Բայց դրա հետ ունինք և 7–րդ՝ ծաղրական վարիանտը: Թե մեկը մյուսի նմանությամբ է կազմված՝ պարզ է: Կարծում ենք՝ 7–րդն 1–ինի նմանողությունն է:

Վերցնենք մի ուրիշ խաղ.

1. Կաքավն ա կայնել քարին,
Կատուը լիքըն արին.
Մի դաստա վարդ եմ քաղել,
Տարեք իմ թագա յարին:

Այս յերգի համար, վոր վերևում վերլուծեցինք, ունինք ձեռի տակ 16 վարիանտ.

2. Կաքավը կայնել քարին,
Կատուը լիքն եր արին.
Ճես մի փունջ վարդ եմ քաղել,
Տարեք իմ սիրած յարին:

3. Կաքավը կայնել քարին,
Կատուն ա կարմիր արին.
Մի դաստա վարդ եմ քաղել,
Տարեք իմ անուշ յարին:

4. Կաքավ կանգնել ա քարին,
Կատուը կարմիր արին,
Մի դաստա վարդ եմ քաղել,
Ղրկեմ սիրական յարին:

Այս յերեք վարիանտներն իսկապես առաջինի ձևափոխություններն են: Յերեքի մեջ էլ առաջին յերեք տողերը նույնն են, չհաշված մանր տարբերությունները, վորոնք էական չեն իմաստի համար:

Այստեղ աննշան չէ, սակայն, վերջին տողի մեջ «յար» բառի ածականի փոփոխությունը: Արդեն վերևում բացատրեցինք, թե ինչպես նշանը յետ դարձրած աղջիկն՝ իբրև մի վիրավոր կաքավ՝ մի փունջ վարդ է ուղարկում իր նոր յարին: Արդ, մի անգամ վոր «թագա» բառը փոխանակվում է «սիրած, անուշ, սիրական» բառերով, յերգի բովանդակությունն ամբողջ կերպարանափոխ է լինում:

Ի՞նչպես պիտի հասկանալ այս վարիանտներն: Արդյոք դրանք առա-

Ջին վարիանտի աղավաղումներ են և խաղի առաջին մասը, վիրավոր կաքավի պատկերը, և յերկրորդ մասը, սիրական կամ սիրած, անուշ յարին մի փունջ վարդ ուղարկելը, անկապ են մնում, թե՞ դրանք միևնույն յերգի իմաստալից վարիանտներն են:

Կարծում ենք՝ անկապ, ուստի և անիմաստ համարել կարելի չե: Միայն յերգն այստեղ ստանում է բոլորովին տարբեր բնավորություն և բովանդակություն: Սիրած ու անուշ յարին մի փունջ վարդ ուղարկող աղջիկը իրեն վիրավոր կաքավի կընմանեցնի միայն այն ժամանակ, յերբ նա, ըստ մեր հին բարքերի, հակառակ իր ծնողների կամքին և անում այդ. յերբ ծնողները նրան ամեն որ նախատում, թքում, մրում են: Ինչ չեր պատահում մեր հին գեղերում, վոր կոպիտ ծնողներն այդպիսի սիրու հարմար իրենց աղջկանը ծեծում էին, նույն իսկ արյունլվա անում: Ի՞նչ և ասվում, որինակ, հետևյալ ժողովրդական յերգի մեջ (Գ. Հովսեփյանի «Փշրանքներ» յեր. 28) աղջիկը տղային:

Ասոր ձի քի սրով ենքան ի զարկած.
Հալաբա սրբուշում ի բերած, բերինքաբերն (վերքեր) ի կապած.
Շամա չաքար ի բերած, բերինքաբերն ի քաղած.
Աչմու բամբակն ի բերած, երինքաբերն (սրյուն) ի սրբած:

Բայց չնայելով այս դրությանն՝ ավելացնում և աղջիկը.

Ինչ իմ աչք ընկնի քու աչք,
Ածգուն (այնպես ե), ինչ վարդ ուհան վեր ձի չի չարժած.

Ծեվ նույն իսկ ժամադիր ե լինում տղային իր հերանց բաղչում համբույր տալու.

Ծես քու տղա սերտ ձեննե (ինձնից) չեմ թորկի.
Թե (թեև) զարկած դի թամամած (մեռցրած):

Մի՞թե սա նույն վիրավոր կաքավը չե, վոր իր սիրած անուշ յարին մի փունջ վարդ ե ուղարկում:

Այս միևնույն խաղի յերկրորդ իմաստով մի վարիանտ ե և հետևյալը.

5. Կաքավն ա կանչնել քարին. Մի դաստա վարդ եմ քաղել,
Կաուցը կարմիր արին. Գնաց ե ղրկեմ իմ յարին:

Այստեղ «անուշ», «սիրուն» ածականը պակասում է «յար» բառի վրա. հենց այդ պատճառով և յերդի իմաստն ավելի մթնացել ե. բայց թե 2-րդ, 3-րդ և 4-րդ վարիանտներին ե պատկանում՝ պարզ ե: Այդպես չե, սակայն, տակի 6-րդ վարիանտը, վորի մեջ մի փունջ վարդը փոխվում է «յայլուխով» վարդի, իսկ յարի վրա դրվում է «պատիկ» ածականը.

6. Կաքավ կայնել ա քարին, Ծայլուխով վարդ եմ քաղել,—
Կաուցը լիքըն արին. Ձամբեմ եմ պատիկ յարին:

Ի՞նչ է այս յերգը, վոր նախորդ հինգ վարիանտներից խակապես մի «պատիկ» բառով է տարբերվում: Դա մի դառն ծիծաղ է մեր հայ գեղջկական հին կենցաղի մի այլանդակության, վոր մինչև 20-րդ դարի սկզբները սովորական եր մի քանի կողմերում, և վոր այնպես զորեղ կերպով արտահայտված է մի ժողովրդական յերգի մեջ, վորի սկավածքն ու կրկնակն է հետեվյալը.

Ի՞մալ եմեմ, ի՞մալ եմեմ, ի՞մալ եմեմ,
Սարեր ձյուն ա, չիվարել եմ,
Ցար պատիկ ա, մոլորել եմ:

Յեվ ապա յերգն սկսում է.

Թամահ երին հարյուրնոցին,
Ինձի տվին դրկանոցին...

Ֆռան, քանհհինգ տարեկան աղջիկը նշանվում և պսակվում է տաս, տասնուհինգ տարեկան տղայի հետ: Ի՞նչ անի այդ աղջիկը: Մի՞թե վիրավոր կաքավ չէ նա, և մի՞թե կարող է նա առանց սրտից արյուն կաթելու վարդ ուղարկել իր «պատիկ» յարին, վորի մահն և ուզում նա վերոհիշյալ յերգի մեջ:

Այս վեց վարիանտն, ուրեմն, վորոնք խակապես միևնույն խաղն են, փոքրիկ փոփոխություններով պատճառով յերեք տարբեր իմաստալից յերգեր են կազմում: Բայց ունինք միևնույն խաղի ամբողջ յերկրորդ մասի փոփոխությամբ վարիանտներ ևս, վորոնք տարբեր բնավորության վիրավոր կաքավներ են պատկերացնում:

Ահա՛ մի կաքավ, վորի կուրծքն արյունլվա յե, վորովհետև իր սիրած յարին դերի յեն տարել.

7. Կաքավն ա կանչել քարին,
Կուրծքը կարմիր արին,—
Դաղտաան յեսիր պիտի,
Իմ սիրած յարին առին:

Ահա՛ և մի ուրիշ կաքավ, վորի սրտից արյուն է կաթում, և վոր վազում է, վորովհետև տանը մնացած պատանին է, սեր ու սիրական չունի.

8. Կաքավը կանչել քարին,
Կուրծքը լիքը արին.
Սեր չունի, սավդա չունի,
Կանչնել ա ղուսի դարին:

Ահա՛ և մի յերրորդ կաքավ, վորի սիրտը ծով-ծով արյուն է, չգիտենք՝ ինչո՞ւ. բայց խնդրում է, վար ձեռ չտան իրեն, թե չե՝ լաց կլինի.

9. Կաքավը կանչնեց քարին,
Կուրծքն ա կարմիր արին.
Իրար մի՛ տա, լաց կընեմ.
Սիրտս ա ծով-ծով (վարիանտ՝ գյոլ-գյոլ) արին:

Թե այս վարիանտն աղավաղված է, պարզ յերևում է նրանից, վոր

2–րդ և 4–րդ տողերը նույն իմաստն ունեին և նույն բառն իրրև հանգ ունեին: Չունենք ուրիշ ձևերը, որ վերականգնենք խնկականը:

Ահա՛ դարձյալ մի կաքավ, որ վիրավոր է իր անպատուության մեջ: Այս նոր իմաստասիրից խաղի համար ունենք հինգ վարիանտները, որոնց չորսի մեջ աղճատումներ կան. բայց վարիանտների շնորհիվ վերականգնել կարելի չե:

10· Կաքավն ա կանդնել քարին,
Կատուը լիքը դարին·
Թե ինձի հետ կամք չունիս,
Մի՛ ընկար մեղք ու արին:

12· Կաքավն ա կանել քարին,
Կատուն և քնարին·
Չունքի մանդիլը եղան ա,
Մի՛ արիր մեղքը յարին:

11· Կաքավն ա կանդնել քարին,
Կատուը լիքը բարին·
Միտքը չունես՝ ինձ առնես,
Մի՛ ընկար մեղք ու արին:

13· Կաքավն ա կանդնել դարին,
Մոխմառն եր քնարին·
Գիտեմ նամուսդ եղ և,
Մի՛ մտար մեղքիս տակին:

Ցերեկ վոչ մի ուրիշ վարիանտ էլ չունենայինք, կարող էինք այս չորդի վարիանտներն ուղղել հիմնվելով նախորդների վրա: Շատ պարզ է, որ 2–րդ տողերի մեջ պետք է լինի՝ «կատուը լիքըն արին» և վոչ «դարին», «բարին», «քնարին», և վոչ «մոխմառն եր քնարին»: «Քնարին» բառը ծագել է, անշուշտ, «լիքն արին» բառերից, «լիքն» բառի չերկրորդ վանկն առնվել է հաջորդ բառի հետ: Մի անգամ որ 2–րդ տողի հանգը կազմում է «արին» բառը, այս ժամանակ 10–րդ և 11–րդ վարիանտների վերջին տողի հանգը չի կարող «մեղք ու արին» լինել, այլ «մեղքը յարին», ինչպես որ և 12–րդի մեջ: 13–րդ վարիանտի «մեղքիս տակին» ձևն էլ, պարզ է, աղճատված հանգ է: Այսպիսով վերականգնած ձևի մոտիկ վարիանտ ունենք հետևյալը·

14· Կաքավն ա կանդնել քարին·
Կատուը լիքն արին·
Ջո էլդաբը քե խռով,
Մի՛ ընկար մեղքը յարին:

Բացի այս 14 վարիանտներից ունենք և հետևյալը·

15· Կաքավ կայներ վըր քարին·
Կատուց դրեր քնարին·
Ցեռ աղջիկ ենք, բելլե յենք·
Նչանլու յենք, դելլե յենք:

Շատ պարզ է, որ այս խաղի առաջին չերկու տողերը ծագում են վերևի վարիանտներից, այն էլ 2–րդ տողն աղճատված ձևից· իսկ վերջին չերկու տողերը իրար հետ են հանգ կազմում, որից չերևում է, որ ուրիշ չորդի մասն են կազմում: Ցեվ իրավ, ունենք մի խաղ, որի մի վարիանտն է հետևյալը·

Ցեռ աղջիկ եմ ալլու յեմ,
Նչանլու յեմ, բալլու յեմ,
Ամեն խաթրիս մի դիսկներ,
Ղաբեր եմ, գնալու յեմ:

15–րդ վարիանտի նման աղճատված է և հետևյալը·

10· Կաքավ իջեր վեր քարին· Մեռնեի կաքավ բանգին,
Դնդուկ (=կոուշ) դրեր քնարին· Ղրկեի իմ տղոր յարին։

Այս վարիանտի 3–րդ տողը բոլորովին անկապ կերպով և ներս մտած· իսկ 4-րդ տողը վերևում դրած 4–րդ, 5–րդ կամ 6–րդ վարիանտների տղ ճատուտն և։

10· ԽԱՂԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Կաղմուէյան նայելով՝ սկսաք և տարբերել հիմնական խաղն իր զարգացումից։

Հիմնական խաղերն են իսկապես մի անդամից, մի բերմամբ հարինված– ները· զարգացած խաղերը ժամանակի ընթացքում առաջացել են հիմնական– ներից՝ իրրև տարբական մասերից։

Այս զարգացումը լինում է կցումով և աճումով։

Ցերկու հիմնական յերկյակներ, վորոնք իրարուց անկախ են և անջատ էս յերգվում են, կցվելով իրար՝ կազմում են մի քառյակ և միասին առնե– վում իրրև մի բաղադրյալ ամբողջ խաղ։ Որինակ հետևյալ քառյակը կցու– մով է կազմված·

Մաղկեվանքու ձորն եմ, Գնա, ղնա, հետիդ եմ,
Մեծ բաղի խնձորն եմ· Կարմիր խնձոր դոսիդ եմ։

Կցման համար իրրև հիմք ծառայում է կամ յերկու խաղի իմաստի իրար հարմարվելը, կամ բացի այդ՝ նաև մի բառ, վոր յերկու խաղի մեջ էս կա։ Առաջին յերկյակի իմաստը, կամ նրա մեջ յեղած մի բառը՝ յերգ– չին հիշեցնում է մի ուրիշ անկախ յերկյակ, վորի իմաստը բանում և առա– ջինին, և կամ վորի մեջ նույն բառը կա, ինչ վոր առաջինի մեջ, և նա յերկրորդ յերկյակը յերգում է առաջինի հետ կցած իրրև մի խաղ։ Ցեվ այսպես կցումով զարգացած խաղը մնում է յերգիչների հիշողության մեջ և հարատևում։

Այսպես զարգացած խաղերը, սակայն, իմաստալից, սերուն յերգեր չեն, յերբեք կցումը լինում է միայն մեքենայաբար, այսինքն լոկ բառի պատ– ճառով, առանց ուշադրության դարձնելու յերկյակների ներքին իմաստին։ Ինչ չի պատահում նաև, վոր յերկու խաղի կցումը միմիայն բուսնյական քմահաճույքից և առաջացած լինում։

Աճումով զարգացման ժամանակ մի հիմնական յերկյակի կամ յեր– կյակի վրա, վոր կարող է նաև մենակ, անջատ ասվել, ավելանում է մի կամ յերկու տող էս, և կազմվում է մի նոր համեմատաբար ավելի մեծ խաղ–յերկյակ կամ քառյակ։ Ավելացած կամ աճած մի տողը բնավ, իսկ յերկու տողը սովորաբար, մենակ չեն ասվում, դրեն այն ձևով, վոր կան զարգացած խաղի մեջ։ Այսպիսի զարգացումով է կազմված, որինակ,

Հետևյալ քառյակը, վորի առաջին յերկու տողերն իրրև անկախ յերկյակ ևս բանում են.

Ծաղկավանքը ծաղկեր ա.
Ծամեր դլխիս թափկեր ա.
Ետրա տարեք իմ նռնիս,—
Սերը լինի հաղթեր ա:

Ածումով զարդացած խաղերը մեծ մասամբ ավելի իմաստալից են, քան կցումով զարդացածները:

Խաղերի այս զարդացումը զանում ենք ամեն տեսակի վոտանավորների համար: Տեսնենք չատ դործածական չափերից մի քանիսը:

Ըութն-վանկանի հիմնական յերկյակները դրեթե բոլորն ունին կցումով և ավելի ևս՝ ածումով կազմված քառյակներ. այնպես վոր չատ քիչ այդպիսի յերկյակներ կան, վոր քառյակների մեջ չմտնեն: Ըեթեե կան ել այդպիսինները, դրանց մի մասն ևս, հավատալով կարելի յե ասել, վոր կրկնակներ են, կամ սկզբնապես կրկնակներ են յեղել, կամ թե նոր հորինված յերկյակներ են ու դեռ մինչև չեն ունեցել զարդանալու, կամ թե քառյակները մեզ հայտնի չեն: Անկախ յերկյակների և նրանց քառյակների այս հարաբերությունը նկատի ունենալով՝ մեր բաղդատած հազարավոր խաղերի համար կարելի յե 7 վանկանի քառյակի զարդացումը մինչև անդամ չատ տված կերպով բացատրել և ասել, թե այս տեսակի խաղի հիմնական ձևն է քառյակը, վորի առաջին յերկու տողերը բաժանվելով իրենց ամբողջից՝ սկսել են հետագայում իրրև անկախ յերկյակներ բանել: Այս կերպով ևս, անշուշտ, առաջացած կլինին վորոշ թվով յերկյակներ. բայց խաղերի զարդացման ընդհանուր յեղանակը վերեվում բացատրվածն է, այսինքն պարզից դեպի բարդը, յերկյակներից յեռյակներ և քառյակներ կազմվելը: Այս չի խանգարում, սակայն, ընդունել, վոր չատ յեռյակներ և քառյակներ ևս հիմնական են, այսինքն մի անգամից իրրև մի ամբողջություն են հորինված:

Բերենք մի քանի որինակներ խաղերի այս զարդացումը բացահայտ անելու համար: Ազգագրական Հանդեսի Է—Ը դրքի մեջ (1901 թ.), յեր. 439, բերված են «Սար, սար, սարերու դյուշն եմ, Լևոն-Սամսոնի քուրն եմ» կրկնակի տակ ի միջի այլոց հետևյալ յերկյակները.

2. Գնա, գնա, կալը տես,
Կարմիր խնձոր դոռիդ եմ:

3. Սինամ սարեր մտիկ ա,
Ջյուն ա եկեր, դոռիկ ա:

3. Գնա, գնա, կալը տես,
Գաղ աղրյուրի ափը տես:

5. Լուսնակը ցոլաց, գնաց,
Դեմ առավ ամպին մնաց:

Արդ, այս մինչև յերկյակների ածումով զարդացած քառյակներն են հետևյալները, վոր ունինք ձեռի տակ.

1. Գնա, գնա, հետիդ եմ,
Կարմիր խնձոր՝ դառիդ եմ.
Դու ինձ նառեղ չես թողնի,
Վարսակդ ձիերս՝ մառիդ եմ։

2. Գնա, գնա, կալը տես,
Գաղ աղբյուրի սալը տես.
Իմ հետ քեզ աղջիկ չի տա,—
Գնա, ղևիդ ճաղը տես։

Գնա ղևիդ դալը տես։
Աչքի սրտիս հալը տես։

Վարխանոներ վերջին տողի.

4. Սինամ սաթեր մառիկ ա,
Ձյունը նկիր, դառիկ ա.
Մեռնեմ իմ յարիս բոյին,
Տանա տանդ մառիկ ա։

5. Լուսնակը ցոլաց, գնաց,
Դեմ առավ, ամպին մնաց.
Սրտով պայման չկավավ,—
Սրտիս դաղ եկավ մնաց։

Կցումով կազմված 7 վանկանի քառյակները համեմատաբար սակավ քիչ են։ Այսպիսիները մի արտաքին նշան ունին, այն է՝ կամ բոլոր չորս տողն ևս նույնհանգ են, կամ թե հաջորդաբար զուգհանգ են, այսինքն առաջին երկու տողը մի հանգ ունին, վերջին երկուսը մի ուրիշ հանգ, մինչդեռ աճումով զարգացած քառյակների 3-րդ տողն անհանգ է մնում։ Այսպես նույնհանգ զարգացում ունի, օրինակ, վերևում դրած 4-րդ երկյակից հետևյալ քառյակը.

Սինամ սաթերը մառիկ,
Ձյունը նկել է դառիկ.

Աղջիկ դու ինչ խորտիկ,
Աչքի մեր դառն մառիկ։

Իսկ հաջորդաբար զուգհանգ զարգացում ունի վերևում դրած 1-ին յերկյակից հետևյալ քառյակը.

Ծաղկեվանքու ձորին եմ,
Մեծ բաղի խնձորին եմ.

Գնա, գնա հետիդ եմ,
Կարմիր խնձոր՝ դառիդ եմ։

Սրա վարիանտն է հետևյալը, վորի չորրորդ տողը, սակայն, ազգությունից է կրել վերևում դրած աճումով զարգացած 1-ին յերգի վերջից։

Ծես ես գնդի ձորին եմ,
Ես բախչի խնձորին եմ.

Կարմիր խնձոր դառիդ եմ,
Ուր վոր երթաս՝ հետիդ եմ։

Այս քառյակի առաջին յերկյակը կցվում է և ուրիշ յերկյակներից հետ, վորովհետև են, որովհետև.

Ծաղկեվանքա ձորին եմ,
Մեծ բաղի խնձորին եմ.
Ուրիշ յար սիրի չեմ նեմ,
Հին յարի դարդով մեռնեմ։

Ծես կեսրիսի ձորին եմ,
Մեծ բաղի խնձորին եմ.
Ինձոր կծեմ, թող անեմ,
Մինի հարսը կոլ (կուլ) անեմ։

Ծես ես գնդի ձորին եմ,
Մեծ բաղի խնձորին եմ,
Ինձոր յերկել, հասել եմ,
Բլբյուլի հետ խոսել եմ։

Կաղղվանի ձորին եմ,
Մեծ բաղի խնձորին եմ.
Դիտար դիտր կորել եմ,
Ծաղոլմենեն ջոքել եմ։

Սահուն անդամ կըպատահի, վոր կցումով կազմված քառյակները մեկ ընդ մեկ զուգհանգ լինին, այսինքն 1-ին և 3-րդ տողերն իրար հետ հանգ կազմեն, իսկ 2-րդ և 4-րդ տողերն իրար հետ։ Հանդերձ այս դասավորությունը առավել և զարկս միայն տողերի տեղափոխության, որինակ՝

Ես սաթնըսամ ձնեբախ, *Արեգակին տեր աղբեր.*
Շաղաթաթախ արևդակ. *Շաքար մաղեմ՝ կ'ը, աղբեր։*

Այս քառյակի յերկրորդ յերկյակի առաղերը կցվելով մի ուրիշ յերկյակի հետ՝ մեջ ընդ մեջ են ընկել.

Արեգակին տեր աղբեր, *Շաքար մաղեմ՝ կ'ը, աղբեր.*
Ա՛յ շաղաթաթախ աղբեր, *Ջահս քեզ մատաղ, աղբեր։*

Ծոթն-վանկանի յեռյակները ընդհանրապես շատ քիչ կան, իսկ յերկյակից զարդացած յեռյակները ավելի ևս սակավ։ Մեր ձեռքի առակ ունեցածներիս մեծ մասը հիմնական յեռյակներ են։ Կան և յեռյակներ, վորոնք քառյակներից են առաջացած՝ անհանդ 3-րդ տողի դուրս ընկնելով։

Ծերվ. Լալայանի «Ջավախքի բուրմունք» յեր. 20. դտնում ենք հետևյալ յերկյակը՝ դրված ուրիշ խաղի սկզբում.

Առավոտան թռնդիրմուխ,
Ձերմակ լաչեկ, դվխան թուխ։

Սրա վարիանտն է Մխիթարյանի «Տաղեր ու Խաղեր» յեր. 242.

Թռնդիր վուռն, եղեր և մուխ,
Կապե փուչին, Քորիեր և պուխ.
Ունքեր համար, աչքերն և թուխ։

Սույն այս խաղը դտնում ենք զարդացած Շերենց «Վանա ասղ», բ. յեր. 29.

Առավոտան Քոնդիր մուխ,
Աչքեր բալաք, ընքվեր թուխ,

Նույն Սրվանձտյանցի «Համով, Հոտով», յեր. 320.

Ջաթիեց մախճան, Քալեց պուխ.
Երես կարմիր, աչքեր թուխ։

Նույնն և Աղդագր. Հանդ., Ի—Ը յեր. 442.

Ճոպլակ պաժ, բարակ մատներ,
Աչքեր բալաք, ընքներ թուխ։

Ունինք և հետևյալ յերկյակը.

Առավոտան Քոնդիր մուխ,
Ծաշմաղ զարկիր, Քորկիր պուխ։

Այս միևնույն խաղի մի յերկյակ դտնում ենք և Սեդրակյանի «Քնար Մշեցոց և Վանեցոց», յեր. 31.

Աղջիկ, մի՛ դար, մեր տուն ծուխ է,
Դիլյար, մի՛ դար, մեր տուն ծուխ է,
Կարմիր երես, աչքեր Քուխ է։

Այստեղ խաղն ըստ յերևույթին մի այլ յեռատող է. իրոք զա յերկ-յակ է, վորովհետև յերկրորդ տողը «Դիլբաբ, մի՛ դար, մեր տուն ծուխ է», մի ասանձին տեսակի կրկնակ է, ինչպես նույնը զանում ենք նույն տեզում և ուրիշ խաղերի համար, ինչպես են՝

Աղջիկ, մի՛ դար մեր կալերով,
Դիլբաբ, մի՛ դար մեր կալերով,
Դիլբաբի ձին եր նալերով։ Ցավ այլն։

Այսպես, տեսնում ենք յերկյակից յեռյակներ և քառյակներ են զարգացնում բազմազան ձևերով։ Բացատրությունների մեջ մտնելու վտանգակ՝ ավելի լավ ենք համարում մի սրինակ էլ բերել, թե ինչպես յեռյակից մի տող ավելանալով կազմվում են քառյակներ։

Լալայանի «Ժամանակի բուրմունք», յեր. 22 կա հետևյալ յեռյակը.

Առավոտան Թոնդրին բոց,
Աբի՛ հղինք դերկ ու ծոց,
Վոր զա, խամրի դարդ ու խոց։

Այս յեռյակին իրթև քառյակ, մի տող ավելացած, գտնում ենք Շերենցի «Վանա սազ» բ. յեր. 29.

Առավոտան Թոնիր բոց, Գազ մը յես ասի, պազ մը դու,
Աբի՛ մաննինք իրար ծոց, Ցրվի մեր դարդ ու խոց։

Նույնն ուրիշ ձևով Ազգ. Հանդ. Լ—Ը յեր. 444.

Առավոտան Թոնիր բոց, Աբի՛ ևննինք դերկ ու ծոց,
Կախիր յաշմաղ, Թորիկիր պոչ, Բալքիմ խամրի դարդ ու խոց։

Ուշ-վանկանի խաղերի դարդացման համար ևս բերենք մի յերկու ուրիշ նախ։

Լալայանի Ջավ. Բուրմ. յեր. 19. «Կայնե՛, Ֆիլդան բոյիդ դուրբանն» կա.

Ելիր ես, կ'երթաս կը մարաշ,
Թևերդ երկան, մեջդ բարակ,
Կերածդ և մեչտ մեղրով կարաշ։

Նույնը Սեդրակ. Ռն. Մշ. և Վան. յեր. 23. «Աղջիկ, յար անենք» և այլն. կրկնակի տակ.

Դու ելիր ես, կ'երթաս մարաշ,
Վիզդ երկեն, մեջդ բարակ,
Ինչ վոր հագնես՝ քեզ մանրարաշ։

Այս յերկու յեռյակի մեջ հատատուն հիմնական մասն է առաջին յերկու տողը. իսկ 3-րդ տողը յերկուսի մեջ ևս նոր ավելացած ու տարբեր են։ Մեր ժողովածուի մեջ այս յերկու ամած տողը մի հատին կան, վորով նույն խաղը քառյակ է դարձել։

Դու ելիր ես կ'երթաս մարտ, *Կերածդ մեղր ու կաթած,*
Վիդ երկին, մեջդ բարակ, *Հազիդ հալով քեզ բաժթաթակ։*

Սեդրակյանի Ֆն. Մշ. և Վան. յեր. 30. «Աբե յար, արի» և այլն. երկնակի տակ դանում ենք նույնն իբրև յեւրյակ, միայն վերջին յերկյակի հետ առաջին յերկյակից մի տող միացած.

Դու ելիր ես, կ'երթաս մարտ,
Քու ուսելուն մեղր ու կաթած,
Հաղնելուդ քե բաժթաթակ։

Նույնը Արվանճտյանցի «Մանանա» յեր. 292, իբրև վիճակի յերդ.

Ելիր ես կ'երթաս ուխա վարած,
Ֆո ուսելիք սեր ու կաթած,
Ինչ հագիր ես՝ քե մուրթաթակ։

Նույնը Շերենցի «Վանա Սազ» Ա. յեր. 97. դարձյալ վիճակի յերդ, միայն վերջի յերկու տողը չուտ տված.

Ելիր ես, կ'երթաս վարած,
Ինչ ես հագիր՝ քե մուրթարած.
Ֆո կերածն է սեր ու կարած։

Սեդրակ. Ֆն. Մշ. և Վան. յեր. 31. դանում ենք հետևյալ յերկյահն իր մեջի երկնակով.

Աբե երթանք հորթիկս խոտիկ,
Դիլբար, երթանք հորթիկս խոտիկ,
Տեսնենք վիրը յարն ա խորոտիկ։

Նույնը Միհնաթարյանցի «Ինար Հայկական», յեր. 177. դանում ենք զարդացած իբրև քառյակ.

Մեր տուն ձեր տուն մոտիկ մոտիկ, *Երթանք, քաղենք կանաչ խոտիկ,*
Դու կապել ես կարմիր դոտիկ. *Տեսնենք վիրը յարն ա խորոտիկ։*

Նույնն ուրիշ ձևով զարդացած. Ազդ. Հանդ. Է—Ը դիրք. յեր. 443.

Մեր տուն ձեր տուն մոտիկ մոտիկ, *Բերենք, դնենք մարին մոտիկ,*
Երթանք, քաղենք հորթիկան խոտիկ, *Տեսնենք վիրը յարն ա խորոտիկ։*

Նույնը դարձյալ ուրիշ ձևով զարդացած Շերենցի Վան. Սազ. Բ. յեր. 43.

Մեր տուն ձեր տուն մոտիկ-մոտիկ, *Իմ յար քանց քոն չատ խորոտիկ,*
Երթանք, քաղենք վորթիկան խոտիկ։ *Շատոլս մեռնիմ, անուն Վարդիկ։*

Պատահում է յերբեմն, վոր յերդչի քմահաճույքով մի կամ մի քանի տող էլ ավելանում են քառյակի վրա, վորով յերդը խաղի սովորական ձևից դուրս է դալիս։ Որինակ՝ Միհնաթարյանցի Ինար Հայկական, յեր. 177 կա հետևյալը.

Մեր տան յետև քառասն կաքաս, *Վռանկէ դիւղիւմ, արծաթէ թաս.*
Քառասուն կաքսի դինին եր խաս, *Ամեն թասին պադիկ մը տաս։*

Նուինը մի տող աւելացած դտնուում ենք հետևեալ դրքի մեջ յեր. 178.

Մեր դռան յետև տուն մի կաքաս, *Վռանկէ դիւղիւմ, երծաթէ թաս,*
Ձեր դռան յետև տուն մի կաքաս, *Ամեն թասին պադ մը կուտաս։*
Ամեն կաքսի դինին եր խաս,

Այս միևնոյն յերգը դտնուում ենք Ազգ. Հանդես, Է—Ը յեր. 443, սակայն ևս ընդարձակված.

Մեր դռան առաջ քառասն կաքաս, *Ամենկ կաքսին մեկ թաս է տաս.*
Ձեր դռան առաջ քառասն կաքաս. *Ամենկ թասին մեկ պադ է տաս.*
Քառասուն կաքսի դինին է խաս. *Թե դու չի տաս, դու դտնենաս։*

Ունինք մի վարիանտ ևս, որը մեջ 3—րդ տողից հետո կա «Վռանկէ դիւղիւմ, արծաթէ թաս», որը այստեղ պահպանում ե և մինչև անդամ մի 8—րդ տող վերջից. «դտնենաս ու վորքեվերնաս»։

Ճիշտ այսպիսի ավելցուկ տողեր ունի և հետևյալ խաղը, Ազգ. Հանդես Է—Ը յեր. 442.

Ծառի տակի պաղ աղբյուր, *Թաս մի կ'ուղեմ, երկուս տուր.*
Ագծաթէ թաս, վռանկէ ջուր. *Թե վոր չիտաս՝ դտնենաս,*
Ճեռ կըվառիմ քո սերուն, *Դտնենաս, վորքեվերնաս։*

Այս խաղի հիմնական յերկյակը դտնում ենք Սբվանձամ. Համ. Հատ. յեր. 327.

Ծառի տակի պաղ աղբյուր,
Մեկ դու խմե, մեկ ձի տուր։

Իսկ դարգացած ձևերից և մեր ժողովածուի մեջ.

Հալ ծառի տակ պաղ աղբյուր, *Մին յես խմեմ, մինը դու.*
Ագծաթէ թաս, վռանկէ ջուր. *Անուշ կենանք յես ու դու։*

Վերջին տողն ունի և հետևյալ ձևը. «Դատաստանին ջուհաբ տուր»։

Բերենք մի քանի որինակ և հինգ կամ տասն—վանկանի խաղերի դարգացումից։

Սբվանձամ. Համով—Հատով. յեր. 328 կամ.

Ես որ ինչ որ է, ուրբաթ ու պաս է.
Աղվիկ, քո դլուխ արծաթէ թաս է.
Հորած վարդապետ կ'ասե՝ չհաս է։

Նուինը վանա Սազ. Ա. 39.

Ես որ ինչ որ է, ուրբաթ ու պաս է, *Տղա, քո դլուխ արմալու ֆաս է.*
Աղվիկ, քո դլուխ արծաթէ թաս է. *Հորած վարդապետ կ'ասե չհասե։*

Համով–Հոտով յեր. 328 կա.

Ցերկինքն ևր ամպեր, կուզեր մարմար ձուն,
Կըհալեր, կաթեր վեր մալուլ մարդուն.
Ասոված ամեներ ղամաղ մարդու տուն:

Նուչնը Տաղեր ու Ոաղեր յեր. 121.

Ցերկինքն ի ամպեր, կուզար մարմար ձուն, Ասոված ամիրեր ղամաղ մարդու տուն.
Կուզար կիծափեր վեր մալուլ մարդուն. Զեծաղ վոր իմ յար մեկ որ դեր մեր տուն:

Նուչնը Վանա Սաղ Ս. 39.

Ցերկինքն ևր ամպեր, կուզեր մարմար ձուն, Մեկ յե՞ս եմ մալուլ, թե՞ աչխարհ րլթուն.
Կուզեր կըծափեր վեր մալուլ մարդուն. Իմ յարոջ սերուն մնամ կրկուն:

Սրվանձամ. Համով–Հոտով, յեր. 328. «Պարերդ» վերնագրի տակ դոնում ենք մի չարք իրարուց անկախ խաղեր, վորոնցից մեկն է:

Ցերեկ հեվարին Թվանքով զարկին,
Վոչխար վեր րերին, Բրինդար սրին:

Այս քառյակի վարիանտն՝ իբրև 10 վանկանի յերկյակ առնված՝ դոնում ենք Վանա Սաղ. Ս. 37. մի ուրիշ նման յերկյակի հետ միացած իրրև պանդխտի յերգ.

Ցերեկ եվարին վեր Սասմա քարին, Ծարրիկ ըմ տարեք իմ նաղլու յարին,
Թվանքով զարկին րրինդար սրին. Թե չե՝ կըղրեմ մեջ են զալիարին:

Ցեթե այսպես չարունակելու լինինք, խնամ չատ օրինակներ կարող ենք բերել, վորոնց մեջ պարզ յերևում է, թե ինչպես յերկյակները, վորոնք խաղերի տարբերական ձևն են, զարգանալով դառնում են համեմատաբար ավելի մեծ խաղեր, յեռյակներ և քառյակներ: Հաճախ ի հարկե դժվար է վորոշել, թե արդյոք վորն է հիմնական յերկյակը, և թե արդյոք հիմնական յերկյակից է յեռյակ ու քառյակ զարգացած, թե՞ ընդհակառակը: Բայց այս դժվար է միայն նյութի պակասության պատճառով: Ցեթե կարևոր նյութը ձեռքի տակ ունենա մարդ և համբերություն ունենա մանը–մանր աշխատանք անելու, կարելի յե ասել, թե առհասարակ կ'որոշվի խաղերի հիմնական ձևերն իրենց զարգացումներից:

Ինդիրն այստեղ, ի հարկե, այն չեր, վոր վորոշեինք այս կամ այն խաղի հիմնական ձևն իր զարգացումից, այլ ցույց տալ, թե ինչպես պարզ խաղերից կազմվում են բարդ խաղեր և ընդհակառակն:

Դառնանք մեր յերգերի զարգացմանը:

11· ԵՐԳԵՐԻ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ ԽԱՂԵՐԻՑ

Ամեն մի խաղ, յերկյակ լինի թե յեռյակ կամ քառյակ, կազմում է մի առանձին յերգ: Սակայն կյանքի մեջ, այսինքն յերգելիս, մի քառյակով չի բավականանում յերգիչը,— այդ կլուսեր շատ կարճ: Ցերեկոպուրթյունը սովորաբար ավելի յերկար է տևում. հանդեսների և պարերի ժամանակ նույն իսկ ժամերով յերգվում է: Բառերն արագ փոխոխվում են, իսկ յեղանակն անփոփոխ մնում:

Իրարուց անկախ խաղերը միևնույն յեղանակով և միևնույն կրկնակով յեռևի յեռև ասվում են ուզածի չափ յերկար տևողությամբ, մինչև վոր վամ ձանձրանում են ու յեղանակը փոխում, կամ նույն չափով հորինված յերգերի պաշարը սպառվում է: Ով ներկա յի յեղել մեր ժողովրդական պարերին և յերեկոպուրթյան մրցմանը, նա այս անձամբ նկատած կլինի: Ավելորդ չի լինել սակայն հիշել մի դեպք:

Մի անգամ, յերբ յես Ցերևանից ելմխածին եյի գնում, կառապանն իր կողքին նստեցրեց իր ծանոթներից մեկին: Այս յերկուսը սկսեցին մրցել թե ով ում «կրկսալե», այսինքն թե վորն ավելի խաղ դիտե: Ցեվ Ցերևանի այլևների տակից մինչև Վաղարշապատի մոտերը, Փարաքար գյուղում մեյն դադարելով, նրանք մի ժամից ավելի միևնույն յեղանակով յերգեցին փոփոխակի բազմազան քառյակներ: Ցեվ այս շատ հեշտ է, քանի վոր միանման չափով հորինված խաղերը շատ են և վոր գլխավորն է՝ խաղերը, սակավ բացառությամբ, չունեն իրենց հատուկ հատուկտուն յեղանակը: Կրկնակները, ընդհակառակն, չհաշված լե-լեներն ու նա-նայներըը, կապված են մի հատուկտուն յեղանակի հետ. դրեթե ամեն կրկնակ ունի իր հատուկ յեղանակը թե իր և թե իր հետ յերգված խաղերի համար: Այս պատճառով է, վոր յեղանակները սովորաբար կրկնակներով են կոչվում. որինակ՝ Ջան գյուղում, Ախ մորթալ Ջան և այլն:

Միևնույն կրկնակի հետ կարելի յեր լինում յերգել ամեն խաղ, յեթե չափը ներում եր, և ընդհակառակն՝ միևնույն խաղը կարելի յեր յերգել ամեն կրկնակի հետ, դարձյալ յեթե չափը ներում է: Ժողովրդական խաղի ասվելու եյական հատկությունն է այս, վոր, ինչպես հետո կըտեսնենք, մի քոց եր ասվիս խաղերից ամբողջական ընդարձակ յերգեր կազմելուն:

Ավելորդ չե մի քանի սրինակներ բերել:

Վերցնենք հենց առաջին պատահած յերգը մեր ձեռքի տակ ունեցած Աղբ. Հանդեսի I—Ը գրքից: Այստեղ յեր. 442, «Բաղումի ջան բաղումի (արևմտյան ատրպատականում՝ պաղմի ճան պաղմի) կրկնակի տակ յերգվում է իրեն առաջին տուն.

Ծըխ երթանք կըտնկու տոբ,
Ծ'ուզես հարյուր, հազար հազար.

Թուխ աչքերու խաթըր համար,
Շեկ ունքերու խաթըր համար:

Սույն քառյակը մի ուրիշ ձևով գտնում ենք Սրվանձտ. Համով–Հոտով յեր. 327, իբրև «պարբերդ» առանց կրկնակի.

Ցնէ ու կրթանք կռնկու սար,
Ռուզի մի չինենք, մանենք հիսար.
Խող դա վեր մե Շահն ու Խոնգար.

Ռուզն հաբյուր, կուսամ հազար,
Բազե, քո Թուխ ալքիդ համար:

Սույն յերդն իբրև աղճատ յեռյակ գտնում ենք Սեդրակյանի Ֆն. Մշ. և վան. յեր. 23· «Աղվիկ, յար անենք, յար անենք, Դիլբար, յար անենք, յար անենք» կրկնակի տակ.

Ռուզ ըմ չինենք, մանենք խաւար,
Կ'ուղեն խորխր, կուսամ հազար.
Բարով նղնիմ քո խոր փեսա:

Նույն «Բաղումի դյուլ բաղումի» կրկնակի տակ (դյուլ և ջան բառերն իրար փոխանակում են, ինչպես որինակ՝ «Հոյ նազան ըմ, դյուլ նազան ըմ»՝ ասվում և և «ջան նազան ըմ») Շերենցի վանա Սազ Ա. 40 բերվածք և իբրև առաջին տուն.

Տուն մ' եմ չինե զնակ բերան,
Վերեն Թալի ջուխտ ըմ զերան.
Մեկն ի խոխե, մեկն ի ծիրան.

Ներեն կատրալ, մնաց ծիրան.
Միրան փիքալ յարդ բերան:

Այս խաղը, սակայն, Սեդրակյանի Ֆն. Մշ. և վան յեր. 26 բերվածք և իբրև առաջին տուն «Ջանիման, ջանիման» կրկնակի տակ հետևյալ ձևով.

Տուն մ' եմ չինե զնակ բերան,
Թալինք ի նե ջուխտ ըմ զերան.

Մեկն եր խոխե, մեկն եր ծիրան,
Կատրալ խոխե, մնաց ծիրան:

Այս «ջանիման, ջանիման» (արևմտ. տատասդարձուքյամբ «ճանիման, ճանիման») կրկնակի հետ, սակայն, Աղդ. Հանդես Ի—Ը 443 դրվածք և իբրև առաջին տուն.

Մեր դռան առաջ ծառ մի պնդուկ,
Ձեր դռան առաջ ծառ մի պնդուկ,
Առնեմ քեզի, տանեմ տնդուկ:

Այս յեռյակն ել, սակայն, Ինար Հայկական յեր. 177 դրվածք և «Հավար Ջուր», մադաթ Ջուր» և այլն, կրկնակի հետ այսպես.

Մեր դռան յեռել ագա ըմ պնդուկ,
Ձեր դռան յեռել ագա ըմ պնդուկ,
Ջուրն առնեմ, մանեմ տնդուկ:

Նույն «Բաղումի դյուլ բաղումի» կրկնակի հետ Մխիթար. Տաղեր ու Ասղեր յեր. 244 բերվածք և իբրև առաջին տուն՝ միայն գրեհիկ արտասանությամբ.

Սարին հուշտ պազպազ ըրեր,
Կը կաթիկէ մարմար քարեն և այլն։

Այսպես յեթեր չարունակելու լինինք, ամբողջ դիրք կարող ենք դրնել. քանի վոր ամեն խաղ ել կարող է ամեն կրկնակի հետ յերգվիլ, յեթեր, դաբաձյալ կրկնում ենք, չափը ներում է, և մեր ժողովրդական յերգերի ժողովածուները լի յեն այդպիսի որինակներով։ Հատկապես առաջին տները վերցրի, վորովհետև յեթեր յեղանակի ու կրկնակի հետ քիչ ու շատ կապված մնում են, առաջին տներն են։ Բայց այս ել հաստատ չէ, ինչպես վերևում «Բաղումի Ջան բաղումի» կրկնակի համար դրածից յերևում է. որինակ՝ մի ժամանակ խիստ սիրված «Հոյ նազան լմե» և այլն կրկնակի հետ «Տաղեր ու խաղեր» յեր. 160 դրված է իրրև առաջին տուն.

Բարձր բոյդ սալ չունի, *Ջահիլ յարի մոակացի,*
Լուռ երեսդ խալ չունի, *Վոր տեղիլ ու լալ չունի։*

Իսկ Կոմիտաս վարդապետը նույն կրկնակի համար ճայնադրած ունի իրրև առաջին տուն.

Գարնան սիրուն ծաղիկ ես, *Գլխիս վրալ պտիտ տուր,*
Ինձ համար ազունիկ ես. *Նախշուն-նախշուն Քիթեանիկ ես։*

Ցեթեր առաջին տներն այսպես տարբերվում են, փոփոխության ել վրա մի սահման չկա հաջորդ տների նկատմամբ։ Ցերդչի հիշողությունից կամ միտն ընկնելուց և կախված մեծ մասամբ մի տան յեռևից այս կամ այն տունը կգալը։

Ասել չի ուզիլ, այսպես յեռևե յեռև իրրև մի յերդ յերգված խաղերը միայն մի ընդհանուր բան ունեն, այն՝ վոր նույն յեղանակով ու կրկնակով են յերգվում, և վոր մեծ մասի բովանդակությունը սերն է։ Ել ուրիշ ներքին կապակցություն չունեին։ Ճիշտ է, անկախ քառյակները յեռև յեռև յերգվելով զառնում են մի յերգի տներ, բայց խմաստով մնում են ղարձյալ իրարուց անկախ։

Թե պատահմունքը վորքան մեծ դեր և կատարում տների հաջորդության մեջ, այդ շատ լավ յերևում է մեր յերգերի ժողովածուներից և նույնիսկ ժողովրդի դործածության համար կազմված յերգարաններից։ Այստեղ դրի առնողները կամ յերգարան կազմողները, մոռանալով կամ չկամենալով, վոր քառյակները մեծ մասամբ իսկապես անկախ յերգեր են և անկապ կցումով են միայն միևնույն յեղանակի տակ յերգված, ինչպես լսել են, այնպես ել յեռևե յեռև շարում են տներն իրրև մի յերգի մասեր,

վորով մի անմիտ բան և դուրս գալիս: Ճիշ մի՛թե ընթերցողներն էլ կարող չունին առելու, թե մեր յերգերն անհեթեթ բաներ են, դրանց մեջը ներքին կապակցություն չունին, ճիշտ ինչպես անմիտ են համարում խաղերն առանձին առանձին վերցրած, վորովհետև հրաժարակվում են նույն իսկ յերգարանների մեջ աղճատված ձևով առանց «բնագիրը» վերականգնելու:

Բայց, ինչքան էլ պատահմունքով են խաղերը կցվում իրար և անկապ տեղով յերգեր կազմվում, յերգեցողության այս եյական հատկությունը մեզից և տալիս, ասացինք, անկախ խաղերից ամբողջական մեծ յերգեր կազմելուն. վորովհետև յերբեմն և տեղերի հաջող ընտրություն և լինում. յերբեմն մեկնուն յեղանակի տակ իրար հաջորդում են այնպիսի քառյակներ և նույնիսկ յերկյակներ, վորոնք իմաստով համարվում են իրար և միասին կազմում են մի ամբողջական յերգ:

Այստեղից ակա առաջանում և ժողովրդական մեծ յերգերի զարգացումը խաղերից՝ իրրև բաղադրիչ տարրերներից: Ժողովրդական մեծ յերգն, ուրեմն, այս դեպքում կազմվում և հարաղրությամբ, այսինքն անկախ փոքրիկ յերգերը ավելի կամ պակաս իմաստալից կերպով կցվելով իրար՝ կազմում են մեծ յերգեր:

Սակայն այս հարաղրությունը միշտ կրույր պատահմունքով և արտաքին չի լինում. անկախ յերգերը միշտ իրկ մեջենայորեն չեն միանում իրար հետ: Ճերդչի բանաստեղծական տրամաղրությունն ու տրամաբանությունը մեծ դեր են խաղում այս գործում: Մի խաղ մյուսին հարաղրվում և նաև դիտակցորեն, և խաղերը հարաղրվելիս կրում են ներքին փոփոխություն, իսկապես վերամշակվում են միասին մի ամբողջություն կազմելու համար. յերգի մեջ մտնում և մի ընդհանուր իշխող բան, յերեք վոչ դաղափար, դոնե զգացմունք, հոգեկան վիճակ, վոր տները կապում և իրար հետ: Խաղերը հարաղրվում են, ուրեմն յերբեմն նաև բովանդակության համեմատ: Այս նպատակի համար աղդում են և ուրիշ հանդամանքներ, ինչպես են՝ հաջող կրկնակները, կամ տարբեր խաղերի մեջ յեղած նույն և նման բառերն ու խոսքերը, վոր ընդհանուր դույն են տալիս տներին, և ապա մի վորևե դեպք, վոր առիթ և լինում իրեն հարմարվող անկախ քառյակներն իրար մի համախմբելու:

Տեսնենք որինակներով մեր յերգերի զարգացման այս յերեք տեսակը սկսելով վերջին աղդող հանդամանքից:

Դեպքի կամ անձի աղդեցության տակ իրար հետ միանում են այն խաղերը, վորոնք ասված են վորևե համանման դեպքի կամ անձի առիթով: Դրանք իսկապես վիպական բնարերգության տարերքն են: Որինակ՝ մեկը խեղդվում է, մի մարդու սպանում են, մի աղջիկ փախցնում են և այլն. և ահա կազմվում և այդ առիթով մի յեղանակ ու կրկնակ, վորի մեջ հիշվում և դիպվածի մի եյական դիծը՝ հիշելով յերբեմն և նրա անունը, վորի դեմին

յեկել և դիպվածը: Կազմվում են և մի յոբկու խաղեր, վորոնց մեջ պատմվում է դիպվածից: Ճեվ այսքանը բավական է, վոր իրրև կենտրոն իրեն քաշի հնուց անտի արդեն պատրաստի համամասն բովանդակության խաղերի մի մասը, կամ թե ուրիշ պատրաստի խաղերից այս կամ այն վերցնեն և հարմարվեն նոր պատահած դեպքի վրա:

Վորովհետև դեպքը կամ անձն յեղել է և ունեցել է վորոշ բնավորություն, ուստի և խաղերը պատահաբար չեն կցվում իրար, այլ մի ներքին առնչությամբ: Բոլորը միասին ունեն մի ընդհանուր բովանդակություն և պատմվում են պատահած դեպքի կամ անձի շուրջը: Սակայն անները չունեն ներքին սերտ կապ և վոչ էլ հատուտ դասավորություն, կամ վորոշ թիվ. ուրիշ խոսքով՝ տրվելասավոր հորինվածքը դեռ պակասում է: Տների կապակցությունը տրամաբանական չէ, ուստի և լույծ է: Տները հեշտությամբ բաժանվում են իրարուց, յետ ու առաջ ընկնում, ամբողջության մեջից դուրս դալիս և այլն: Ճերդչի քամահճությը դեռ իշխում է կատարելապես և իշխում է ամեն անդամ յերգելիս ուրիշ տեսակ:

Խաղերի այս տեսակ համախմբումները մի դեպքի կամ անձի շուրջ՝ լոկ փորձեր են անկախ փոքր յերգերից մեծ ամբողջական յերգեր առաջ բերելու, և արվեստավոր հորինվածքի տեսակետից՝ անհաջող փորձեր: Այստեղ վոչ մասերի վորոշ դասավորություն կա և վոչ տների համար սահման:

Այսպես համախմբված յերգերն ու նրանց յեղանակները սովորաբար այլևս իրենց կրկնակների անունով չեն կոչվում, այլ դեպքի հերոսի անունով:

Այսպիսի յերգերից է, որինակ, «Գուլաբեցի Աբշակի» խաղը: Սա մի 55—60 տարի առաջ Բալդդյուղում ճոպի վորսալիս խեղդվում է: Մահն յերևի առանձին տպավորություն է թողնում իր համադյուղացիների վրա, վորոնք խաղ սուել սերում են. կազմվում է վրան յեղանակ ու կրկնակ.

Շորթա՛, Սալթ (հնդ անունը), չորթա՛,
Նալն (վար. լոկին, զալեղն) Աբշակին կ'ո բորա.

և ապա մի քանի քառյակներ Աբշակի կյանքից ու յեղերական մահից: Ճերդչին, յերևի, յեղանակի պատճառով տարածվում է ուրիշ կողմեր, և անների թիվը բազմապատկվում է ուրիշ պատրաստի խաղերից: Այս յերգից քառյակներ և յեռյակներ կարելի յե դանել ի միջի այլոց և Լալալյանի «Զավախքի բուրմունք» յեր. 23, ուր անները մեր նկարագրած ձևով խառն ի խուռն և անկապ են: Նույն Աբշակի խաղից յոթը տուն միայն առանձին ընտրությամբ և վորոշ դասավորությամբ դրել ենք և մեր «Հազար ու մի խաղ» յերգարանի մեջ, Ա. 49:

Այս կարգի յերգերին պատկանում են և «Դեբեկլոն» (Բնաբ Մշ. և Վան. յեր. 17. Խաղեր ու Տաղեր. յեր. 148), վորի մեջ պատմվում է

Հակոյի սպանման դեպքը: Այսպիսով յերգերից են և Աչխենի յերգը, Տաղեր ու Ոտաղեր· յեր· 184, և ուրիշներ:

Այսպիսով յերգերի քննարկման առնակիին է պատկանում և Մասունցի Զուլոյի խաղը: Զուլոն, ինչպես ականատեսներից լսել ենք, 1850–ական թվականներին և ապրել, մի չատ զեղեցիկ, բայց և կասկածելի բարքի տեր կին, վորին սիրահարներ չատ են յեղել: Զուլոյի համար 43 քառյակ և յեռյակ բերված են Ինար Հայկական յեր· 173, ուր կրկնակին է·

Հավ՛ը Զուլո, ժաղ՛ը Զուլո,
Սանի գյորդում, յանդըմ, Զուլո:

Այս կրկնակը ժամանակի ընթացքում արդեն վոխված է· յերկրորդ տողը ժողովուրդն ինքը թարգմանած և հայերեն, ավելացնելով և մի յերրորդ տող, ինչպես ունի ձայնագրած Կոմիտաս վարդապետը, և և հետևյալը·

Հավ՛ը Զուլո, ժաղ՛ը Զուլո,
Գնգի տեսա, վառա, Զուլո,
Բացվիը, բացվիը, իմ վարդ Զուլո:

Այնուհետև Զուլոյի երեն վրա մի քանի յեռյակներ և քառյակներ կազմված կը լինեին, բայց Զուլոյի կրկնակի տակ յերգվածները վոչ բոլորը հավաստյալ Զուլոյինն են: Որինակ՝ վերցնենք Տաղեր ու Ոտաղեր, յեր·-243, Զուլոյի անվան բերված 10 յեռյակը, վորոնք բոլորը կան «Ինար Հայկականի» մեջ երբեք Զուլոյի խաղեր: Սրանցից հետևյալ յերկքը միայն կարող են Զուլոյինը լինել·

Ցնո Զուլան եմ Մասունցի, *Աբև ընկավ ետևըդ բերդին,*
Հինդ որ սրի, մեր տուն կեցի, *Ցնո տերն ընկավ մեջ իմ յերդին,*
Դեմ աղոթքան յեկեղեցի: *Ցնո գնդ սերնեմ, թող դու բերթին:*

Հելի՛–մելի՛ Մարտ դամեզ,
Իմ ձեռ թալեմ գալաչի վեզ,
Զուլան եղնի ընձի վեչքեզ:

Տասից այս յերեք յեռյակը, տեսում ենք, կազմող են Զուլոյինը լինել, մնացածները հավաստյալ անկախ խաղեր են, վորոնք միայն Զուլոյի վրա չեն յերգվում, այլև ուրիշների: Տեսնենք մեկմեկ:

1· Ձաֆար աղի նշխուն ոդեն,
Նոր եմ եկել Զուլոյի մոտեն,
Ձը կշտացա անուշ հոտեն:

Այս յեռյակը, վոր ասվում է զեղծ Զուլոյի մոտից յեկող աղայի կողմից, մի ուրիշ ձևով մոտեում է և «իմա՞լ ենեմ» յերգի մեջ: Այստեղ յերգողն իր «մատաղաշ մանուկի» ամուսնուն դավաճանող կինն է·

Իմալ ենեմ յես քու դաբդին,
Իմ երևես պատռավ վաբդին.
Նոբ եմ ակել յաբխ մոտին,
Ջիշատցա համ ու հոտին։

2. Տան քով անցա, ճրագն եբ վառ,
Դու կու մտնես զողանի դառ,
Վաբբեվերեցի՛, աբի դիս առ։

Այս խաղի վաբբիանները յերգվում են իբար լուբլիկի և Թումա վուշով աղջիկա յերգեբը։ Ջավախքի Բուբմունք, յեր. 21. «Բիխի լուբլիկ, լուբլիկ, Գարնան քաբեբ վաբդ եբեր, լուբլիկ» կրկնակի հետ.

Իրկվոբն՝ ճրագն եբ վառ,
Դու կը մտներ զողանի դառ,
Վաբբեվերեցի՛, աբի դիս առ։

Նույն տեղը յեր. 22. «Ախ լուբլիկ, լուբլիկ, լուբլիկ, կանաչ ու կարմիբ լուբլիկ» կրկնակի հետ.

Առավոտուն Թումդիբ վառ.
Լաչակ Թալի խառ ու մառ,
Կը լմանիս զողանի դառ։

Ագլաղրակ. Հանդես է—Ը 444. Նույն յերգը կրկնակ ունի.

Շառաֆով Թուխ վուշով աղջիկ,
Դու բոլոբ երես,

Ցնս ու դու Լուխա կը քելինք,
Դու մոլոբեր ես։

Իսկ խաղի վաբբիանն է.

Առավոտուն Թոնիբ վառ,
Դլուխ կապիբ խառ ու մառ,
Վաբբեվերեցի՝ դիսի առ։

Նույն խաղի վաբբիանն է և Վանա Ստեղ Բ. յեր. 29. «Բուբլիկ Մաբքառ, բուբլիկ բաբլահեմ» և այլն. կրկնակի հետ.

Առավոտուն Թոնիբ վառ,
Սիվոակ լաչակ խառ ու մառ,

Հաբմիբ ասլիգդ Թառ ու մառ,
Դու կը նմանիս զողանի դառ։

Մենք ունինք և ուբիշները, վոբ ավելցրդ է բերել։

3. Ջաղցի բոլոբ հմ՛ն ուռ եբ,
Աչխաբհ հ՛առեբ՝ Ջուլան Ծուռ եբ,
Մեկ իմ սրտին լալ ու դուբ եբ։

Այս խաղի հիմնական մի յերկյակը գտնում ենք Ագղ Հանդես է—Ը յեր. 443. «Բաղբամի ջան բաղբամ» կրկնակի տակ.

Գեղով կըտնի քո յար Ծուռ,
Մեկ իմ սրտին լալ ու դուբ։

Այս խաղի մի զարգացած վարիանտը կա և Համով Հատով յեր. 305, ուրիշ յերգերի հետ կցված իբրև «Մոկացի Հայոց հարսանյաց պարը».

Աչքերս ասեն՝ քո յար ծուռ եր,
— Խոպոր ծուռ եր.
Ալամ ասեն՝ քո յար ծուռ եր.
Մեկ իմ սրտիս լավ ու դուր եր։

Սույն խաղի վարիանտն ունենք և հետևյալ ձևով.

Վանքի բլուր մանդր նուռ և.
4. Քոնդիր վառ, յերեր և մութ,
Սավդալի յենք՝ չասեք ծուռ և.
Կապե փուչին, Քարկեր և պուխ։
Մեր ու ասվածն խիստ մրմուռ և.
Ունքեր կամար, աչքերն և Քաբխ։
Ցերկեր կասեն՝ իմ յար ծուռ և։

Այս խաղի վարիանտներն արդեն առած բերել ենք. հիշենք միայն, որ յերգվում և զանազան կրկնակներով հետ. իբրև Լուրիկի յերգ, Ջավախքի Բուրմ. յեր. 20, 21, 22. Իբրև Քուխ փուչով աղջիկ, Ազգ. Հանդես է—Ը յեր. 444. իբրև Բուրիկ Մայրամ, Վանա Սազ. Բ. 29. իբրև Ալաջա պարը «Գիլջան, Մրալեզ» կրկնակով՝ Համով Հատով յեր. 320 և այլն։

5. Տան քալ անցա, Քաչ քելեցի,
Լանգալ զարկի, ղերդես բացի,
Ճարս առան չեր, Նառա լացի։

Ջուլոյի յերգի այս տունը զարգացման զանազան ձևերով գտնում ենք և ուրիշ յերգերի մեջ. իբրև Լուրիկի յերգ, Ջավախքի Բուրմ. յեր. 22.

Ելա երդիկ, Քաչ քելեցի,
Վառա զարկի, յերդիկ բացի,
Ճարս առան չեր, Նառա լացի։

Իբրև Ջանիմանի յերգ «Ջանիմանը» կրկնակի հետ Ազգ. Հանդ. Է—Ը 443.

Ելա առնիք, Քաչ քելեցի,
Իմ յար առան չեր, Նառա լացի,
Ջարկի լանկե յերդիկ բացի.
Փառ ու փոշման Քողի գացի։

Իբրև Ամարի յերգ «Բաղնի Ջանը» կրկնակի հետ, Քնար Մշ. և Վան. յեր. 24.

Ելա առնիս, Քաչ քելեցի,
Կարմիր խնձոր գլորեցի,
Լանկով ավի, երդիս բացի,
Առաջ առան չեր, Նառա լացի։

Նույն տեղն յեր. 34. իբրև Ռումարի յերգ.

Ելանք առնիս, Քաչ քելեցինք,
Երդիս բացինք, երեխացինք,
Կարմիր խնձոր գլորեցինք,
Ռումար առան չեր, Նառանք լացինք։

Նույնը բազե անվան հետ կապված Համով Հատով. յեր. 327.

Տան քով ընցա, խափ քնեցի,
Բաղեն տաւն չեր, նսաա լացի,
Տղեն կուլար, սրտբեցի։

6· Դու կայներ ես դեմ ամբոցին,
Ջուխտակ չամամ մեջ քո ծոցին,
Դու կըխաղաս խնո վղնոցին։

Այս խաղը մեր ժողովածուի մեջ կա իբրև Յանկյի յերգ.

Յանկն կայնել դեմ ամբոցին,
Յանկն կըխաղալ հետ վղնոցին,
Ցեռ մալուլ ենք ճերմակ ծոցին։

Սրա վարիանտներն են դարձյալ մեր ժողովածուից.

կայնել ես դեմ ամբոցին,
կը խաղաս քո վղնոցին,
երկու չամամ քո ծոցին,
Ջուխտակ Թուրինչ քո ծոցին։

Դու կայնել ես դեմ ամբոցին,
Դու կը խաղաս հետ վղնոցին,
Մայիլ եղա ճերմակ ծոցին։

Սրա վարիանտն է և հետևյալը, վոր իբրև պարերգ կա Տ. Նավասարդյանի Հայ ժողովրդ. Հեքեաթներ, Զ. դիրք. յեր. 92.

Դուն կայներ եր դեմ ամբոցին,
Հա՛ կըխաղեր խնո վղնոցին.
Ծառա քու սալխակ ծոցին,
Վոր դուն դառնաս յես ի՞նչ անիմ։

7· Դու կայներ ես դարիհի դուռ,
Մեջդ մանկ խանչի բուռ,
Ձիս երեցիր առվտուր ու ծուռ։

Այս խաղն իբրև քառյակ կա Վանա Սաղ. Ա. յեր. 41. «Կանչեմ յաքրի» և այլն կրկնակի հետ.

Տնեն ելար, կայնար ի դուռ,
Մեջդ ի բարակ խանչալի բուռ,

Քամին եղար եաու չուռ մուռ,
Ցեռ քո սիրուն ալվտ ու ծուռ։

Նույնը Քնար Մշ. և Վան. յեր. 22. «Աղջիկ, յար առնենք» և այլն. կրկնակի հետ.

Դու ելել ես, կայնել ես դուռ,
Մեջդ բարակ խանչալի բուռ,

Քո հոգն ու մար աչքերն եկուր,
Տղեն տեսավ, աղջիկն եսուր։

Այսպես տեսնում ենք Զուլոյի անվան յերգված խաղերը ասվում են և Լուրիկի, Յանկյի, Ամամբի, Խումարի և այլն համար։ Դրանք, ուրեմն, այն կարգի յերգերին են պատկանում, վորոնք ընդհանուր դույն ունին միայն և, ինչպես «Հազար ու մի խաղի» Ա. հիմնական Յանոթության մեջ դրել ենք, «առնկատ տներով, խաուն ի խուռն յերգվում են այս կամ այն անձի, կամ զանազան համանման դեպքերի մասին»։

Անցնենք մյուս տեսակների հարաբերությանը։

Բառերի և խոսքերի ազդեցության տակ հարաբերությունը լինում է ճիշտ այնպես, ինչպես վոր հիմնական յերկյակների միանալուց քառյակներ են կազմվում։ Մի խաղի մեջ յեղած մի բառ կամ խոսք հիշեցնում է

մի ուրիշ խաղի մեջ յեղած նույն կամ համանման բառը կամ խոսքը, ուստի և յերկրորդ խաղը, յերբեմն և յերբորդը և այլն, ասվում է առաջին խաղի յետևից, և յերկու, յերեք ու ավելի խաղ-ը միացած մնում են հիշողության մեջ և ապա յերգվում թե միասին և թե անկախ:

Այս կերպով կազմված մեծ յերգերի տներն իմաստով իրարու ավելի յեն հարմարվում, քան դեպքի կամ անձի ազգեցության տակ միացածները: Սակայն սրանց մեծ մասն էս արվեստի տեսակետից անհաջող բաներ են, ոլորովհետև անկախ խաղերի հարադրությունն այստեղ արտաքին է և հիմնված չէ բովանդակության վրա: Ուրիշ բան է, յերեք բառերի հետ միասին և խաղերի իմաստն է իրար բռնում, կամ անկախ խաղերն իրար հարադրվում են միայն նրա համար, որ իմաստով նման են իրար կամ որևէ ներքին առնչություն ունեն իրար հետ: Այս դեպքում յերգերի կազմությունը հիմնված է բովանդակության վրա, ուստի և տները միասին կազմում են իմաստալից ամբողջություն:

Մեր ամենից հաճող ժողովրդական յերգերը կազմված են այս վերջին տեսակի հարադրությամբ: Ինդիրն այստեղ, իհարկե, անկախ խաղերից կազմված մեծ յերգերի մասին է և վոչ թե այն մեծ յերգերի մասին, որոնք մի անդամից իրրև ամբողջություն են հորինված:

Տեսնենք այս յերկու տեսակի հարադրությամբ կազմված յերգերի ոճերը: Ամենից առաջ պիտի նկատել, որ այսպիսի յերգերն էս մեծ մասամբ աղճատված են մեր ունեցած ժողովածուների մեջ, ինչպես են և առանձին առանձին վերցրած խաղերը: Այդպիսի յերգերի «բնագիրն» էլ պետք է նախ վերականգնել, որպեսզի տների ներքին իմաստի կապակցությունը պարզ հասկանալի լինի: Բայց, ցավոք, մեր ժողովածուների տգիտության պատճառով այդ անելն անհնարին է: Մենք կը բավականանանք յեղածով և մեր առձեռն ունեցածով:

Լոկ բառերի պատճառով, առանց իմաստին ուշադրություն դարձնելու, հարադրությամբ կազմված մի յերգ է, որինակ, Վանա Սազ Ա. 45 «Կաքավների յերգ» վերնագրի տակ դրածը: Այս յերգն իրրև ամբողջություն է դրված, բայց ամբողջությունը լոկ արտաքին է: «Կաքվներ» ասելով հասկացվում է «աղջիկներ», և հավանորեն վարիանտի մեջ էս «աղջիկներ» կըլինի, դավառական ձևով «աղչներ», վոր, ինչպես ուրիշ խաղերի մեջ, հանդ է կազմում «ջաղցներ» բառի հետ: Վանա Սազի մեջ հիշված յերգի առաջին յերկյակն է.

Կաքվներ, կաքվներ,
(Աղչներ, աղչներ)
Նըվաք, երթանք ջաղցներ:

Վարժվելուց հետո այս սկզբի յերկյակը, վոր խոսացրես կրկնակ է, վերջանում է «Ջաղացի» բառով, ուրիշ յեռակից դարձես են մի շարք յերկյակները նույն բառով.

1. Ջաղցի առուն լուր կըգնը,
Աղջիկ լաճուն դյուր կըգնը:

2. Ջաղցի առուն կանաչ ը,
Աղջիկ լաճուն ճանաչ ը:

3. Ջաղցի առնիքը փոս ը,
Ջոր կըթափես՝ կը սոսկը:

4. Սեռիկը իլին յեղ ը,
Իմ յար Քուռ ունչ, Քուռ քեղ ը,
(Վար. աղջիկ լաճուն լսյեղ ը):

5. Ջաղցի առուն ավազ ը,
Աղջիկ լաճուն դավազ ը:

6. Իմ ծոցի կուրինը Քուշ ը,
Իմ յարով յերես պուճ ը:

7. Սարերն իլին ասեղ ը,
Իմ յար նորախասեր ը:

8. Սարերն իլին ալաշ ը.
Իմ յարն ալաշ կալաշ ը:

9. Դարի (վար. սարի) առվի պատան,
Իմ յար քանց քան խաստան:

10. Կաքվներ, կաքվներ,
Շիլա չաղիկ ծալ արեք,
Կարմիր երես խալ արեք.
Ձեր պատ ձիկ հալալ արեք:

11. Բարձի առվին հատ կու գնը.
Տեղ ձգեցի վոնի կուգնը.
Կաքվներ, կաքվներ, (աղչներ, աղչներ).
Ելեք երթանք ջաղցներ:

Այս յերդի տների կապակցության համար պետք է նկատել, վոր 4–րդ յերկյակին ունի և հետևյալ վարիանտը.

Սեռիկը իլին յեղ ը,
Աղջիկ լաճուն լսյեղ ը:

Հասկանալի յե, վոր սկզբնական հարաբերության ժամանակ այս վարիանտն է կցվել մյուսներին և հատկապես «աղջիկ լաճուն» բառերի պատճառով, վոր կա մյուս յերկյակների մեջ ևս: Այս 4–րդ յերկյակին տյնուհետև իր բառերով հիշեցրել է 7–րդը, վոր ունի և հետևյալ վարիանտը.

Ձոկը ուլունք ասեղ ը,
Ջանս ջանիկ լսյեղ ը:

10–րդ քառյակի համար ունինք հետևյալ վարիանտները, վորն մեջ կա կտտող բառը, «աղջիկ»:

Աղջիկ, չիլեն ծալ եքա,
Շիլեն ծալ ու մալ եքա,

Եղ քո կաքվը Քշեցիր
Գաղ մի առաք, հալալ եքա:

11–րդ յերկյակին ունի հետևյալ քառյակը.

Տեղը ղեմի փոք կըգա,
Աղջիկ լաճաս մատ կըգա.

Մեռնեմ եղ խաս ըրչմիկը,
Մեկնեն անուշ հատ կըգա:

Այս վարիանտով կապակցող բառն է դարձյալ «աղջիկ լաճուն», վոր կա նախորդ յերկյակներիլ մեջ։

Անհատականալի մնում է միայն 6-րդ յերկյակի հարադրությունը, վորի համար վարիանտներ չունինք ձեռի տակ։ Եթե այս յերկյակը մի կամ յերկու յերկյակ հետո յեկած լիներ, այն ժամանակ «յար» բառով կը կապվեր։

Ավելորդ ենք համարում ասել, վոր այս յերգի յերկյակներն ունեն և քառյակներ՝ պարզացած ձևով. բերենք միայն 1-ին յերկյակինը.

Աղջիկ ջան, կանչա՝ լսեմ,
Քանի սրտիս դյուր կը դա։

Ջաղցի դռնեն ջուր կերա,
Ձեղրեր քրոջ հյուր կը դա։

Նույնասկիզբ խաղերը բնականաբար շարվում են յեռանդ յեռանդ և կազմում մի ամբողջություն։ Այդպիսի մի յերգ գտնում ենք Վանա Սազ Ա. յեր. 41. հետևյալ կրկնակով.

Քա՛ նազերով, քա՛ խոսուկի, դու վի՞րդ ես,
Աչքերդ դիպի, ալամ դիպի, դու իմն ես։

Ինչ հարադրված յերկյակներն են.

Վարդն է բացվել Վանա քաղքի եզեռաբ,
Առավոտ սիրես, մեկին սաղարկի ձիկը տաբ։
Վարդն է բացվել առավոտան խավխուտաց,
Իմ յար բախչեն կայներ երկու ձեռն է ծաց։

Վարդն է բացվել առավոտան շաղերով,
Իմ յար բախչեն վարդ կըքաղի մաղերով։

Վարդն է բացվել Վարդվերի կիրակին,
Քո սերն ինկի մեջ իմ սրտի պրակին։

Այս յերկյակներն սկզբնապես իրարուց անկախ են։ Վերջին յերկյակն, որինակ, մի վոտք ավելացած, գտնում ենք նույն դրքի մեջ, յեր. 54. մի ուրիշ յերգի վերջում, վոր կրկնված և նույնպես նույնասկիզբ բառերով։

Մեկ ըս տաբի ծառեր ծաղկին Ծառզարդաբի կիրակին,
Քո սերն ինկի մեջ իմ սրտի պրակին։

Այս միևնույն յերկյակը գտնում ենք և Ջալալաքի Բուլմունք, յեր. 34. իրրև անկախ յերկյակ «վարդ» բառով միացած մի ուրիշ յերկյակի հետ։

Վարդ կըբացվի Վարդևորի կիրակին, Հալդը վարդ կը ժողվի, յես հորտա մորտա,
Ձես չեմ դիմանա իմ յարիս կրակին. Հալդը վարդ կը ժողվի, յես հորտա մորտա,

Նույնասկիզբ բառերով հարադրված մի յերգ ես, որինակ, և հետևյալը՝ Վանա Սազ. Բ. յեր. 53. «Հեյրանդ ի՛ելնեմ, յար յար, Ջանիդ զուրբան, իմ յար» կրկնակով.

Ուտա՛ կուշտս չտրտըլեն,
Աստված պահէ քո նախտ բալեն.
Ջաջա՛ր մը տուր, եղ քո մալեն,
Ջարանդամ յես իմ հալեն։

Ուտա՛ կուշտս, եչեվանա,
Աստված քեզի դուռ մը բանա.
Պայիկ մը տուր, մարդ չիմանա,
Բուշ բան մի՛ աներ քեզ մհանա։

Ուտա՛ կուշտս ուշիկ ուշիկ.
Վտաքերդ խթիվ կակուղ փուշիկ.
Կտրմիր երես, պաղն ամուշիկ.
Տուր, որ կծնեմ կակուղ թշիկ։

Վերլուծենք հետևյալ յերդը, որ կա Վանա-Սազ. Ա. 36.

1. Մահը ես իզին, խաղող կըքաղես
Շամամ ծծվերով չաքար կըմաղես,
Ալմաստ խանչալով սրտիկս կըդաղես,
Աչքով ունքերով դուս ձի կըմաշես։

2. Ելեր ես իզին, ավուղ ջուր կուգա,
Քաֆուր վարդ բացվի, անուշ հոտ կուգա։

3. Իմ հերանց իզին վարդ հազար Թավուր,
Մեկ են վարդերաց իմ վարդն է քաֆուր.
Շահ բլբյուլն ինչավ վեր իմ վարդին հյուր։

Այս յերդը ըստ ինքյան մի սիրուն ամբողջություն է կազմում միայն աղավաղված։ Նախ՝ կրկնակը՝ «Այրի, յար, այրի, խռով մի մնա. Աստված-րես մալ ձի քեզ չի մնա» չի հարմարվում բուն յերդին։ Ապա յերդը կազմված է յերեք խաղից, վորոնց առաջինը մի ավելորդ չորրորդ տող էլ ունի, վոր սկզբնապես չի յեղել խաղի մեջ, ուստի և հանգն էլ թուլլ է։ Սկզբնական մի յեռյակ գտնում ենք Համով Հոտով յեր. 328. ուրիշ յերդերի հետ խառն։

Ելեր ես իզին, խաղող կըքաղես,
Շամամ ծծերովդ չաքար կը մաղես,
Աչքիդ խանչալով սրտիկս կըդաղես։

Այստեղ տրվին «մահը ես իզին» ձևի փոխանակ ունենք «ելեր ես իզին»։ Այս սկիզբն իրեն է քաշել 2-րդ խաղը, վորը, սակայն, նույնպես ապավաղված պիտի լինի, քանի վոր մի տող պակաս է և հանգն էլ չի բռնում։ Վարիանտ չունինք, վոր ուղղենք։ Այս յերկրորդ խաղի «վարդ» բառն էլ իր կողմից միացրել է իր հետ 3-րդ խաղը, վոր անկախ յեռյակ է, և վորի համար ունինք հետևյալ վարիանտը.

Բաղչա մ' եմ անկել, վարդ հազար Թավուր,
Մեկ ըմեն վարդին իմ վարդն եր քաֆուր.
Շահ բլբյուլն ինչավ վեր իմ վարդին հյուր։

Վանա Սազ Ա. 53. և Համով Հոտով յեր. 322. գտնում ենք սովորական յոթն-վանկանի անկախ քառյակներից կազմված մի յերդ, վոր հարդարված է բուլանդակությամբ։ Ամբողջի մեջ նկարագրվում է աղայի հուսահատ հոգեկան վիճակը, յերբ մերժում է ստանում աղջկանից։ Տղան ա-

անլով թե հեռանում է, մի վերջին փորձ է անում դարձյալ՝ համոզելու աղջկան։

Փակաղձում առած տները չկան Սրվանձտյանի ժողովածուի մեջ.

Կ'երթամ, կ'երթամ, հեռանիմ,
Ցես քու դարդն (վարկյան՝ սիրուն)
Հեռանիմ։ Ունքերդ կալամքաշ աղջիկ,
Իմ սիրածը կորուսի,
Հազա յես ինդո՞ր անիմ։

(Աղջիկ, աղջիկ, ալ աղջիկ,
Մաղերդ է սիրմա աղջիկ,
Իմ սիրուն սեր չան աղջիկ)։

(Աչյաս ֆսաան խառայով,
Մաղերդ է սիմ սիրմայով,
Բոլոր դերդանիդ վրա
Շաբնամ անդին քարերով)։

Շալը դլուխդ կ'ալարթա,
Հիալուս կ'անցնի սրտես,
Ախոր յեսի չսիրես,
Աճեր լ'ինչ մնդնա հալես։

Սիմ սրմալի ալ փուչի,
Աղջիկ սրտիս կը մալի.
Մեկ տեղ է չեմ է տա
Հարյուր հազար դուքուչի։

Շրաքեն եղեր կըհիա,
Աչուըներդը կըրլրլա.
Երթամ քովը մտանամ,
Կըվախենամ՝ եղնա դըժա։

Աղջիկ, մաղերդ հյուսանյիր,
Դունչիդ ոսկան քսկյիր,
Նըլայիր վարդի ծառին
Բըլբուլի պես խոսեյիր։

Աղջիկ, Ջնուդ է Թումա,
Ծոցիդ յերկու դումդումա.
Եկո՛, ինձի խոսք մի ասա.
Ջեզի պահե սուրբ Թումա։

Նկելորդ ենք համարում ցույց տալ, թե վերտեղ կան սրա անկախ քառյակները։

Վերևում ասացինք, վոր խաղերը հարադրվելիս հաճախ վերամշակվում են միասին մի ամբողջություն կազմելու համար։ Այսպես որինակ Վանա Սազ Ա. յեր. 41. միացած են յերկու քառյակ, վորոնց յերկրորդի վերջին տողը դարձած է. «Երլամ մնաց քո կարոտեն», այսինքն սիրուց, փոխանակ իսկական ձևին «յարն է դարձե իր կարոտեն», վոր դտնում ենք նույն դրքի մեջ յեր. 62 և ուրիշ տեղեր.

Տնեն ելար, կայնար է դուռ,
Մեկդ է բարակ՝ խանչալի բուռ.
Ջամին եղար, եռու չուռ մուռ,
Ցես քո սրտուն ավդալ ու ծուռ։

(Գաղ) ջուր կուդեր վերին սարեն,
Կուդեր կաթեր մարմար քարեն,
Ջեռվացուցեր սրտես յարեն,
Երլամ մնաց քո կարոտեն։

Մեր ժողովածուների մեջ, ինչպես անկախ քառյակներն իրար յեռևից չարվում են անխտիր, նույնպես կից տպագրված են հաճախ յերկու և ավելի ամբողջական յերգեր, վորոնք յերբեմն չափով էլ իրարուց տարբերվում են։ Այդպիսիները, վորոնք ժողովրդի բերանին հենց հարադրվում են, բնականաբար պիտի անջատել իրարուց։ Վերցնենք յերկու այդպիսի յերգ։

Վանա Սազ. Բ. 43. կա հետևյալն իբրև մի ամբողջ յերգ դրված.

1· Տնեն ելաք, կայնաք տանիս,
Քեզ տեսնելուս մաշավ իմ ՝մես·
Բոյդ նման է զարնան կամիչ,
Աչ՝ կարեմ, չէլա կիմիչ։

Տնեն ելաք, հաց կըտանես,
Ադաբ լանուն աչքով կ՝անես·
Վար մտանես՝ աղքեր կ՝ասես,
Վար դառանա՝ սիրով մաշես։

2· Մեր տուն մտիկ, ձեր տուն մտիկ,
Երթանք քաղենք վարդիկան խտիկ.
Իմ յար քանց քան չատ խորատիկ,
Ճարտըս մեռնիմ, անուն Վարդիկ։

Վարդիկ սերուն է վարդի նման,
Բլբյուլները վերեն հայդան ելան.
Վարդ վար պակեր ծաղիկ կըտաք,
Վարդիկիս հոտը մեջեն կուտաք (կուդաք)։

3· Դարի տկեն մտա կուգեր,
Աղջիկ լանուն հյուր կուգեր·
Սիրած սիրածին դյուր կուգեր·
Ճարտը աչքից ջուր կուգեր։

Բարձ վերուցիմ հոտ կուգա,
Կարմիր խնձոր դյուր կուգա։

Խնձոր կիսես կծած ես,
Ջոխս բոլորն արծիած ես։

Խնձոր յարտը ալած ես,
Ճարտը ծառից պրծած ես։

Ախ տասկիմ, կես անիմ,
Չկիմիչա, վար ուտեմ։

Այս՝ իբրև մի ամբողջություն դրված յերգը խնկասես յերեքն է։ Առաջին յերգը յերկու տնից է, վորոնք իրար հարադրվել են «տնեն ելաք» սկսվածքով։

Ճերկրորդ յերգը, վոր մի առանձին ամբողջություն ունի ըստ բովանդակության, դարձյալ յերկու խաղից է կազմված, և առաջին յերգի հետ կցվել է միայն «տուն» բառով։ Ճերկրորդ յերգի առաջին խաղն իբրև անհավ քառյակ ունի և հետևյալ ձևը· Քնար Հայկ· 177·

Մեր տուն, ձեր տուն մտիկ մտիկ,
Դու կաղել ես կարմիր դռտիկ·
Երթանք քաղենք կանաչ (վար· հոբիկան)
խտիկ,
Տեսնենք վի՞ր յարն է խորատիկ։

Ճերկրորդ յերգը նույնիսկ 7–վանկանի չափով էլ տարբերվում է 8–վանկանի նախորդներից։ Ըստ յերևույթին չի հասկացվում, թե ինչն է այս բոլորովին անկապ յերգերի մեջ իբրև կապ մտածվել։ Բայց յեթե վերհանենք նախորդ յերգի վերջին տողի բնագիրը, այդ մեզ հասկանալի կլինի։ Այդ վերջին տողն է· «Վարդիկիս հոտը մեջեն կուտաք», վոր աղճատված է։ «Հոտը» բառը պիտի լինի «հոտ», այսինքն մի վանկ պակաս, ինչպես պահանջում է վոտանավորի չափը։ Ապա այս տողի վերջին բառը «կուտաք» նույնպես աղճատված է, վորովհետև հանդ չի՝ կազմում նախորդ

տողի հետ, որ նուիրնակս «Հրաշաբ» բառով է վերջանում: Շատ սիրել է, որ վերջին տողի «Հուսաբ» բառի տեղ ասէի ես «Հուսալաբ»: Ուրիշն ամբողջ տողը. «Վարդիկիս հոտ մեջին հուսաբ»: Ցերգն այս ճանալ արդեն կարող էր իր հետ միացնել հաջորդ յերգը, որ նուիրնակս «Հուսալաբ» բառով է վերջանում:

Ցերկրորդ յերգն ըստ յերեւոյթին իմաստասիրից կազակցութիւն չէ. բայց, կարծում ենք, միայն այն պատճառով, որ աղճատված է: Այդ յերգի 12 տողը ժողովողը դրել է իրրև յերեք քառյակ. բայց այդ ճիշտ չէ: Ցերգն իսկապես կազմված է չորս քառյակից, միայն 2-րդ և 4-րդ քառյակները թերի յեն մնացել: Դիտենք այդ քառյակների տեղ մեզ ծանոթ վարիանտները, որոնք դուրս և շատ հաջող չեն, և կը տեսնենք, որ յերգն ամենևին իմաստասիրից է դառնում.

Բարձր սարեն ջուր կերա,
Աղբեր քրօջ հյուր կերա.
Ինչ անեն հերն ու մերը,—
Աղջիկ տղեն դյուր կերա:

Տեղ եմ քցել փոք կերա,
Ցար յարի մոտ կերա,
Կարմիր խնձոր բարձի տակ,
Մեջեն անուշ հոտ կերա:

Կարմիր խնձոր կիտած ա,
Ջորս բոլորն արծաթած ա,
Աղբեր ուշց չունի.
Ասի՝ յարի դրկած է:

Ասի՝ ասպետ կես անեմ,
Չի կիմիշա, որ ուտեմ...

Մեր ժողովածուի մեջ վերջին յերկյակի համապատասխան քառյակ չենինք. հավանորեն դա նախորդ քառյակի աճուն է: Մեր ժողովածուի մեջ կան վերևում դրած քառյակների համար մանր տարբերութիւններ ևս, որոնցից այս կամ այն, դուրս, ավելի իմաստասիրից դարձնելին յերգը. բայց բերածից եղ արդեն յերևում է այս խաղերի իմաստասիրից կապակցութիւնը: Ցերգի բովանդակութիւնը վերլուծել չենք ուզում, միայն այսքանը նկատենք, որ յերգի ամբողջութիւնը հասկանալու համար՝ առաջ պետք է քառյակների իմաստը լավ ըմբռնել:

Վերցնենք մի յերգ ևս Ջնար Մշեց. և Վան. յեր. 31.

1· Եսոր ուրբաթ է, պատ է,
Ուրախ արծաթի թաս է.
Սրտիկ մաղում մի մնա,
Աչխարք մարդի չի մնա:

Սրտիկ սենի անդուկ եր.
Կատալ են սենի անդուկ.
Թռավ են կարիր ճնճղուկ,
Թռավ բանձրիկ սար եկավ:

2· Տ'ելնեմ բանձրիկ սարեքաց,
Հովիվ ուշաթափ անեմ.
Կոպալ իր ձեռքեն առնեմ
Թալեմ քերեն երթեմ:

Մոխիրդ է տաք վառկերչուն,
Մոխիչ չինե իմ հոգուն.
Մտանիք չինե իմ մատուն.
Կատալ չինե իմ ձեռքուն.
Ջամար չինե իմ մեջքուն.
Գուլպաղ չինե իմ վոտուն:

3· Աղջի՛ր, դու արի, գնա,
Շապկիկ քո հան ու գնա,
Յոխտաջրով լվանամ,
Թափ տամ, վեր կենի փռեմ:

Ցաքի՛կ, դու աքլ, դնա,
Շատլիկ քո հան ու դնա.
Սաղանջրով լվանամ,
Թախ տամ, վեր ծառին փռեմ ։

Այս բոլորը՝ ժողովողը դրել է իբրև մի ամբողջություն «Դեհհ ղընդ ղընդ, դեհհ ղանդ» կրկնակի հետ։ Բայց դա խնկատես յերեք յերդ է։

Առաջին յերդի առաջին յերկու տողը հետևյալ քառյակի հիմնական յերկյակն է.

Ես որ ուրբաթ է, պատ է, *Հոդիս դատի, վարդապետ,*
Սրտիկ արծաթի բաս է. *Ինչի՞ ասիք չհաս է։*

Իսկ յերկրորդ յերկու տողն խնկատես մի կրկնակ է, վոր «սրտիկի» բառի պատճառով միացել է առաջին յերկյակին։ Առաջին յերդի յերկրորդ տունն առանձին անկախ քառյակ է, վորի մի վարիանտը գտնում ենք Վանա Սաղ. Ա. 64 կցված ուրիշ քառյակների հետ.

Քո ծոց ձիկ տալվի տնդուկ, *Վոր կոտրեր են տալվի տնդուկ,*
Ցես էլնի կոբեր ճնճղուկ. *Թռներ են կոբեր ճնճղուկ։*

Այս քառյակը «սրտիկի» չատով միացած է նախորդին և յերկուսը միասին կազմում են մի ամբողջական սիրուն յերդ։ Նախ նկարագրվում է մի վշտահար անարատ սիրտ, վոր ինքն իրեն մխիթարել է ուզում աշխարհի ունայնությամբ։ Բայց խնկուն յերկրորդ տան մեջ նա ընկնում է անմխիթար հոռետեսության մեջ. յերդիչը հիշում է ժողովրդական հավատալիքը, թե մարդուս սիրտը մի տնդուկ է, վորի մեջ մնում է հոգին իբրև պտղունիտ ճնճղուկ. մեռնելիս տնդուկը կոտրվում է և այդ ճնճղուկ հոգին դուրս է թռչում ծառերն ու սարերը։ Արդ յերդչի սրտի տնդուկը կոտրվել է ու հոգին թռել է բանձրիկ սարը յելել։ Ուրեմն նա մեռած մարդ է, այլևս մխիթարության հույս չունի։

Յերկրորդ յերդը մանկական է։

Իսկ յերրորդ յերդը սիրուն կերպով հարաբերված յերկու անկախ քառյակ է։ Դրանցից եյականն է յերկրորդ քառյակը, առաջինը նրա զարգացումն է։ Յերկրորդի վարիանտը գտնում ենք իբրև անկախ խաղ Աղչպեր. Հանդես. Դ. դիրք 1898. յեր. 168.

Ա՛յ տղա, աքլ, դնա. *Լվամ, լվամ չխոսկվի,*
Շատլիկդ տուք ու գնա. *Վարդաջրե՛մ— խոսկվի։*

Նույնը գտնում ենք Վանա Սաղ Ա. յեր. 43. անկապ կերպով միացած ուրիշ խաղերի հետ.

Ճալե չալիկդ հան դնա, *Ծալ տամ, ծոցս փռեմ,*
Ինչ ջրով լվամ չխոսկվի, *Փուչին ճալեմ, նոր փռեմ։*
Վարդի ջրով կ՚սոսկվի.

Նույնը և կա և Համով Հուսով յեր· 310, միացած ուրիշ խաղերի հետ·

Եկար ու անցար, դիշերը չմնացիր,
Շալդ ու չալիկդ Թաղիր դնացիր·
Լվամ, լվամ, չխաբկիր·
Բնդնես վուշտով վոչին հանեմ·
Շուտ տամ ու ծալ ծալ անեմ:

Նույնը դտնում ենք դարձյալ Ջալախքի Բուքմունք յեր· 20· ուրիշ յերդերի հետ միացած·

Ով՛ մանչ, տուր չուխադ լվամ,
Լվամ, լվամ, չխաբկիր,
Վարդի ջրով խաբկիր,
Լվամ ու քարին ձգեմ,
Թափ տամ ու ծառին ձգեմ,
Ծալեմ ու ծոցս դնեմ:

Այս ժողովածուի մեջ առնված են հարյուրից ավելի յերդեր, վորոնք շալմված են հինդ, վեց և ավելի տողերից և խաղիկների զարդացումն են:

Մ· ԱԲԵՂՅԱՆ

ԵՐԵՔՈՒՏՆ

Այս աշխատութեան սկիզբը դրվել է իմ և Կոմիտասի «Հազար ու մի ձայն» ժողովրդական յերգարանը խմբագրելու առթիվ 1900 թվին: Այդ ժամանակներում ժողովրդական յերգերը շատ սրբված էին իրենց յեղանակների պատճառով: Կոմիտասն զբաղված էր յեղանակների մշակումով, իսկ յես՝ ժողովրդական յերգերի ուսումնասիրութեամբ: Ցերկուսս էլ ունեինք բավական թվով քառյակներ ժողոված. ձեռք բերինք բազմաթիվ խաղեր նաև մեր ընկերներից ու Գ. Ջեմարանի աշակերտներից, վորոնց անունները, ցավոք, չեմ կարող հիշատակել այստեղ, վորովհետև չեն պահված: Բայց այդ ամենը բավական չհամարելով, ինչպես դրել եմ մի ուրիշ տեղ), ամառն իրենց ծնողների մոտ և առհասարակ գյուղերը գնացող աշակերտներին պատվիրեցինք ժողովել ժողովրդական յերգեր: Այս միևնույնը կատարել տվինք և հաջորդ տարիները, այնպես վոր մեզ մոտ հավաքվեցին տասնյակ հազարավոր թերթիկներ, վորոնց վրա դրված էին ժողովրդական յերգեր:*

«1900 թ. աշնանն արդեն սկսեցինք աշխատել ժողովրդական յերգարանի վրա. բայց մի յերկու ամիս չանցած՝ տեսանք, վոր նախ պետք եր այդ հավաքած նյութերը մշակել, այնպիսի դրության բերել, վոր դրանցից ոգտվել կարելի լիներ: Թողնինք յերգարան կազմելը և սկսեցինք բաղդատել մեր ունեցած ժողովրդական յերգերը, վորպեսզի կարողանայինք վերոչել անհիմաստ և աղճատված յերգերը և ոգտվել միայն խմաստավից վարիանտներից: Ցերկու տարի միասին պարապեցինք այդ աշխատանքով: Ցերկար տեվեց այդ, վորովհետև հեշտ չեր քառյակների փոփոխակներն իրար մոտ բերել: Դործը հնարավոր յեղավ արագ առաջ տանել միայն այն ժամանակ, յերբ յես նկատեցի, վոր քառատողերի ամենահաստատուն մասը հանդերն են, և առաջարկեցի Թողնել բառարանի կազդով դասավորությունը և հանդերի կարգով դասավորել ձեռքի տակ ունեցած խաղերը: Հետևանքն այն յեղավ, վոր նույն քառյակները իրենց վարիանտներով իրար մոտ յեկան, և մենք տեսանք, վոր միևնույն քառատողը զանազան մարդկանց ձեռքով և զանազան ժամանակներում դրված լինելով՝ հաճախ

---

*) Կոմիտաս, Ժողովածու նվիրված Կոմիտասի ծննդյան 60-ամյակին, հրատ. Ռուբեն Թերլեմեզյան, յեր. 53—69, Մ. Աբեղյան, «Հինդողությունները Կոմիտասի մասին»:

բառացի կրկնված է տասը, քան և ավելի անդամ»: Այսպիսով մեր թեր-թիկների ամենամեծ մասը վոչնչացավ, և մենք ունեցանք 1263 քառյակ իրենց վարիանտներով:

Հետագայում միասին չշարունակեցինք մեր սկսած գործը: Կոմիտասին չեր հետաքրքրում բանասիրական աշխատանքը: Նա թողեց այդ: 1902 թվից հետո յես մենակ աշխատեցի: Շարունակելով մենակ ժողովել և բաղդատել քառյակները՝ յես բաղմաթիվ ուրիշ այդպիսի փոքր յերգեր էլ ձեռք բերեցի իմ ընկերներից ու ծանոթներից: Ժողովածուն հետզհետե մեծացավ:

Նույն ժամանակներում մտադիր եյի լույս ընծայելու այդ ժողովածուն և դրա համար իրերիվ ներածություն պատրաստեցի մի ուսումնասիրություն: Բայց չուտով թողի այդ միտքը, կիսատ գործ համարելով իմ ունեցած խաղերի հրատարակությունը, առանց նկատի ունենալու և տպագրվածները: Ուստի 1905 թ. առանձին հրատարակեցի հիշված ուսումնասիրությունը («Ժողովրդական խաղեր» վերնագրով), վոր և մասամբ ոգտագործվում է այս գրքի «Ներածության» մեջ:

Այնուհետև սկսեցի արդեն տպագրված յերգերը համեմատության առնել, և դուռս, վոր դրանց մեջ բաղմաթիվ քառյակներ և վարիանտներ կան, վոր յես չունեմ, և վոր ժողովրդական խաղերի ժողովածու կարելի չե կազմել՝ առանց տպագիչ կերպով ի մի հավաքելու նաև տպագրվածները: Այդ աշխատանքը կատարել եյի մինչև 1914 թ. և տալ տարիներ ընդհատելուց հետո՝ Աբգանաղ Մոսկվայում հոդդորով վերսկսեցի և ավարտեցի 1927 և 1928 թվերին:

Շատ ժամանակ և մեծ ջանք խլեց ինձնից այդ գործը: Պետք եր ամեն անդամ վորոնել դտնել տված խաղի համապատասխան փոփոխակին իմ ժողովածուի մեջ: Իսկ այդ հեշտ չեր: Աբդարեվ քառյակները հանդերձ կարդալ եյին դասավորված, բայց դասավորությունը կատարյալ չեր և տրված եր վոչ թե այբբենական կարգով, վերջի տառերից յետ դնալով, ինչպես այս ժողովածուի մեջ, այլ դա հիմնված եր ա, ե, ի, ո, ու, ը ձայնավորների վրա: Մի տեղ եյին խմբված նախ՝ Ա. ձայնավորով կազմված հանդերը, ապա՝ Ե ձայնավորով կազմվածները և այլն: Այսպես որպեսզի՝ «Աչուղի պես խաղ ասա» խաղը ժողովածուիս մեջ դտնելու համար՝ վոչ թե պետք եր յելնել, ինչպես այս ժողովածուի մեջ և, տողավերջից և տողը կարդալ վերջից «ասապաղես», այլ պետք եր Ա. ձայնավորի կարգի մեջ դտնել «աղ» հանդը և դրա մեջ վորոնել տվյալ յերգը: Նույնպես, որպեսզի, «Ծաղ առեմ խաղի դլխին» քառյակը դտնելու համար՝ վոչ թե պետք եր կարդալ, ինչպես այս ժողովածուի մեջ, տողավերջից՝ «նիխլդիղպես», այլ պետք եր Ի ձայնավորի կարգում դտնել «աղի» հանդերի մեջ:

Սկզբում յես այսպիսի դասավորությունն ըստ հանդերի՝ հարմար եյի համարել, վորովհետև այդ յեղանակով նույն հանդերը մի տեղ են

դալիս և հնարավոր է լինում հեշտությամբ ուսումնասիրել մեր քաւյակաների մեջ դրծածված հանդերն իրենց տեսակներով: Բայց յերևվաց, վոր դրծնապես դա հարմար եր միայն փոքր ժողովածուի համար. իսկ յերբ ժողովածուն ընդարձակվեց, դա դրծնական չեր, վորովհետև բավական վորոնելուց հետո միայն հնարավոր եր լինում իմանալ, թե ովյալ քառյակը կա՞ ժողովածուիս մեջ, թե վոչ:

Ա.յս նկատի ունենալով՝ 1929 թվից սկսեցի խաղերը վերաղասավորել մաքուր այբբենական կարգով, միայն վոչ թե տողասկզբի բառի սկզբից դեպի վերջը դնալով, ինչպես բառարանում է, այլ տողավերջի բառի վերջից դեպի առաջ, ինչպես հանդարանի մեջ է:

Ա.պա՝ այսպիսի դասավորության համար նկատի ունեցա միայն խաղերի առաջին տողերը:

Ա.յս դրծն էս մեծ ջանք և հոգնածություն պատճառեց ինձ, մանավանդ վոր խաղերը վոչ թե առանձին թերթիկների վրա եյին դրված, այլ տետրակների մեջ: Բացի այդ՝ այս աշխատանքը մեքենայական լինելով՝ հետաքրքրություն չեր ընծայում: Բայց վերջը պսակում է դրծը:

Վերջը ստացվեց մի մեծ ժողովածու, վորի մեջ հեշտությամբ կարելի յե դանել ուզած խաղն իր վոխոխակներով, միաժամանակ և իմանալ, թե ովյալ խաղը վո՛ր դրքի մեջ և սրա վո՛ր եջում տպված կա:

Ա.յստեղ դնում եմ իրենց կրճատ անուններն այբբենական կարգով՝ այն դրքերի ցուցակը, վորտնցից հավաքել եմ փոխոխակներ և ամբողջական խաղեր: Մեջ են բերված նաև դրանց դրի առնվելու տեղերի անունները, յերեե հիշված են յեղել այդ դրքերի մեջ:

1. Ա.Բ = Ազգագրական Հանդես, յերկրորդ տարի, Բ. դիրք, 1897. Թիֆլիս: Ցեր. 332—347. «Սուրմալուի ժողովրդական յերգեր»: Սկզբում ունի մի առաջաբան ժողովրդական յերգերի մասին ընդհանրապես: Թվով ընդամենը 126 քառյակ և 16 յերկյակ: Դրանցից 341 և 342 յերեսների յերգերը (թվով 28) «կողբացու յերգած են»:

2. Ա.Գ = Ազգագր. Հանդես, յերրորդ տարի, Գ. դիրք, 1898— № 1, Թիֆլիս: Ցեր. 91—104. «Ջավախք, Ցերվանդ Լալայանի. բանավոր գրականությունը, վիճակի յերգեր»: Ցերգերի վերջում կա՝ «Ց. Ազնաուրյան», վորի ժողովածն են, ւսրեմն, այդ քառյակները, թվով 186 խաղ:

«Սիսիան» (յեր. 105—260) հոդվածի վերջում (յեր. 261—270) «Սիսիան, ժողովրդական յերգեր» վերնագրի տակ ընդամենը 110 քառյակ:

3. Ա.Դ = Ազգագր. Հանդես, յերրորդ տարի, Դ. դիրք, 1898 № 2, Թիֆլիս: Ցերվ. Լալայանի «Ջանդեղուր» ուսումնասիրության վերջում, յեր. 113—116 «Ժողովրդական յերգեր» և «Վիճակի յերգեր» վերնագրերի տակ, ընդամենը 36 խաղ:

Ցեր. 161—176 «Շիրակի ժողովրդ. յերգեր, հավաքեց Մ. Խահակյան. Պարերգեր (յայլի)»: Ընդամենը 208 քառյակ: Կան նաև կրկնակները:

4· Ա.Ե = Ազդագր· Հանդես, չորրորդ տարի, Ե· գիրք, 1899 № 1, Թիֆլիս: Եր· 185—199 «Ալաշկերտի բանավոր դրականություն, Գրիգոր ք· Նժդեհյանց· յեր· 189 հտ· «Սիրո յերգեր», յեր· 190 հտն· «Պարերգեր», մեջը կան նաև կրկնակներ· յեր· 195 հտն· «Վիճակի յերգեր», յեր· 197 հտ· «Հարսանեկան յերգեր», յեր· 199, «Ցերկրագործական յերգ»:

Եր· 200—212 «Շիրակի ժողովրդ· յերգեր, հավաքեց Մ· Խահակյան», մեջը կան նաև կրկնակներ: կան նաև «Աշուղական յերգեր» (յեր· 208 հտն·):

5· Ա.Զ = Ազդագր· Հանդես, հինգերորդ տարի, Զ· գիրք, Թիֆլիս 1900: Եր· 69—73 բաղմազան բովանդակությամբ «ժողովրդական յերգեր», «Բուլանըխ կամ Հոգք· գավառ, Բենսեյի» հոդվածի մեջ:

Եր· 372—382, Երև: Լալայանի «Գանճակի գավառ» ուսումնասիրության մեջ՝ «Բանավոր դրականություն, Ա· յերգեր, վիճակի յերգեր», հավաքել են Լալայանն և ուրիշները· ընդամենը 170 քառյակ:

Եր· 383—390, «Բասեն, ժողովրդական յերգեր», «Հավաքեց Արամ Զաբրդ», 87 քառյակ, Եր· 386 նաև կրկնակներ:

6· Ա.Ը = Ազդագր· Հանդես, վեցերորդ տարի, Ը· և Ը· գրքեր, 1901 Թիֆլիս: Եր· 113—204 «Հայկական սովորություններ, Գաղթերուսուց», մեջը նաև բազմաթիվ ժողովրդ· յերգեր, այլազան բովանդակությամբ և դանազան գավառներից:

Եր· 437—455 «Ալաշկերտ, Գ· ք·· Նժդեհյանի բանավոր դրականություն, Ա· յերգեր» դանազան բովանդակությամբ:

7· Ա.Թ = Ազդագր· Հանդես, յոթներորդ տարի, Թ· գիրք, 1902, Թիֆլիս: Եր· 28 հտ· վիճակի յերգեր Նոր Նախիջևանի գյուղերի: Սրանից չեմ ոգտված:

Եր· 83—116 «Հայկական սովորություններ», Գաղթերուսուց· մեջը մանկական և այլ յերգեր: Սրանից էլ չեմ ոգտված:

Եր· 197—202· «Հորչալուի գավառ, Եերվ· Լալայանի»· սակավաթիվ ծխական յերգեր: Սրանից էլ չեմ ոգտված:

8· Ա· Ա.Ժ.Ա = Ազդագր· Հանդես, իններորդ տարի Ժ.Ա· գիրք, 1904, Թիֆլիս: Եր· 33—128 «Հորչալուի գավառ, Եերվ· Լալայանի, բանավոր դրականություն»· բազմաթիվ յերգեր:

8· Բ· Ա.Ժ.Բ = Ազդագր· Հանդես, իններորդ տարի, Ժ.Բ· գիրք, 1904, Թիֆլիս: Եր· 104—108 «Փշրանքներ ժողովրդ· բանահյուսությունից, հավաքեց Ա· Խահակյան»· սակավաթիվ յերգեր զանազան բովանդակությամբ, հայրեն և անուշնի (մասամբ): Սրանից չեմ ոգտված:

9· Ա.Ժե = Ազդագր· Հանդես, տասնմեկերորդ տարի, Ժ.Ի գիրք, 1908 № 1· Թիֆլիս: Եր· 36—48 «Վարանդայի բանավոր դրականու-

թյուն», Ա. Դադյանի, «Ջանդյուլումներ», ընդամենը 86 քառյակ, դիտական ուղղագրությամբ:

10. ԱԺՀ = Աղբագր. Հանդես, տասնևմեկերորդ տարի, ԺՀ. դիրք, 1908 № 2. Թիֆլիս: Ցեր. 25—32 «Վարանդայի բանավոր դրականության նից», Ա. Դադյանի, «Ջանդյուլումներ», ընդամենը 85 քառյակ: Դիտական ուղղագրությամբ:

11. ԱԺԹ = Աղբագր. Հանդես, տասներկուերորդ տարի, ԺԹ. դիրք, 1910 № 1. Թիֆլիս: Ցեր. 85—89 «Վարանդայի բանավոր դրականության նից» Ա. Դադյանի, ընդամենը 58 քառյակ: Դիտական ուղղագրությամբ:

Ցեր. 99—114 «Վանա բանահյուսության նից, Ա. Սոլաքյանի». բազմաղան բովանդակության մեջ երգեր. մեջը նաև ամբողջական երգեր: Ոգևորել եմ սակավաթիվ երգերից:

12. ԱԻ = Աղբագր. Հանդես, տասներկուերորդ տարի, Ի. դիրք, 1910. № 2. Թիֆլիս: Ցեր. 112—113 «Վասիանի բանավոր դրականության նից», Աբգարյեվի, «Ջանդյուլումներ», ընդամենը 25 քառյակ:

13. ԲՆԱ. = Բիւրակն լրագիր (չարաթաթերթ), 1898, Կ. Պոլիս, խմբագիր Գ. Անդրեասյան: Ցեր. 313 հտ. «Պարերգ մշեցոց գավառաբարառով», Մ. Դանիելյանի: Ցեր. 473. «Պանդուխտին երգը Խարբերդի բարբառով», Լ. Սրապյանի: Ցեր. 557 «Հարս տանելու երգ Ալինա բարբառով», Տ. Վ. Պալյանի: Ցեր. 558. ա) «Ժողովրդական պարերգ չատաղցոց բարբառով», բ) «Մրմունջ մը ռամկական, Երեվանա բարբառով», գ) «Վանեցոց պարերգ», Կայծոռիկի: Ցեր. 565. Ալինա բարբառով երգեր: Ցեր. 566. «Սիրերգ Վանա և Երեվանի բարբառներով», Վանիկի. («Աչխենի երգը»): Ցեր. 568—569. Ալաշկերտի, Շատաղցոց և Դիարբեքիրի բարբառներով երգեր: Ցեր. 583 «Պարերգ Վանա բարբառով», Կայծոռիկի: Ցեր. 584. «Սիրերգ, Խարբերդի գավառաբարբառով», Գ. Մուշեղյանի: Ցեր. 623 հտ. «Սիրերգ», Խարբերդ, Գ. Մուշեղյանի: Ցեր. 671 «Սիրերգ», «Պարերգ», Խարբերդ, Գ. Մուշեղյանի: Ցեր. 739 «Ոտքերցոց մեջ երգված հարսանեկան պարերգ, սիրերգ. Մշեցի Աստվածատուր Թահտապրունյանի ժամանակությամբ հավաքեց Զ. Կենճյան, Հալեպ»: Ցեր. 776 «Սիրերգ, Խարբերդ, Գեղամ Մուշեղյան»: Ցեր. 804. «Պարտիզակ, Գ. Տ. Մեսրոպյան» ստորագրությամբ տպված են հինգ քառյակ երբև բնիկ պարտիզակցի «Պետիկ» աշուղի, բայց ժողովրդական են:

14. ԲՆԲ = Բիւրակն լրագիր (չարաթաթերթ), 1899, Կ. Պոլիս: Ցեր. 42 «Գավառի երգեր»: Ցեր. 237. «Լուսնի սեր», 6 քառյակ «Մ. Նուպարյան» ստորագրությամբ. բայց ժողովրդական են: 349—350 «Ժողովրդական երգ, Մարաշի լեզվով», «տեղին վրա հավաքեց Ս. Դավթյան». ընդամենը 14 քառյակ. դժվար հասկանալի լեզվով: Սրանից չեմ տպավել: Ցեր. 364 «Սիրերգ», «Պայազիտ. հավաքեց Ց. Մարության». 5 քառյակ: Ցեր. 524

հտ. «Ժողովրդական բանահյուսություն»։ Սկզբի մասն աշուղական է։ Ցեր. 572 «Ժողովրդ. բանահյուսություն», «Գինվի խաղերը», «Տարանտեյի դավառաբարբառով», 3 քառյակ և մի «նաքարաթ», աշուղական է. միայն մեկ քառյակ ժողովրդական է։ Ցեր. 641 հտ. «Ժողովրդ. բանահյուսություն», «սիրերգ. Նիկոլերտ. հավաքեց Գ. Մուրադյան». 4 քառյակ։ Շատ յերգեր կան նաև Մուշեղ Վարդ–ի «Ցերդը իրրև հոգևկան պետք» մեծ հոդվածի մեջ։

15. ԲՆԳ = Բիւրակն լրագիր (չաբաթաթերթ) 1900. կ. Պոլիս։ Ցեր. 388 հտ. «Ժողովրդ. բանահյուսություն, Սիրերգ. Ակնա անուններ»։ Հին հայերեններ են։ Ցեր. 471 «Պարերգ Սասնցոց. հավաքեց Մ. Մուրատյան»։ Ցեր. 491 «Սիրերգ Խարբերդի բարբառով», «Ս. Շ.» ստորագրությամբ։ Ցեր. 519 «Պարերգ Խարբերդի լեզվով, հավաքեց Ս. Շ.»։ Ցեր. 634 «Կիւրինի կյանքեն», «Ակիւլինե» ստորագրությամբ։ Ցեր. 650. «Պարերգ. հավաքեց Մ. Մուրատյան»։ Ցեր. 677 «Սիրերգ Տիգրանակերտի բարբառով», «Գ. Մ.» ստորագրությամբ։

16. ԲԱ = Բանասեր ամսաթերթ դրական և գիտական, հատոր ե. Պարիզ 1903, յեր. 123—159 «Ջան դյուլում» վերնագրի տակ 600 քառյակ, Հայկ Տեր Ասատուրյանի ժողոված։ Առաջաբանի մեջ ասված է, վոր ոգտված է նախորդ հրատարակություններից, ինչպես են՝ Բրուտյանի «Ժամկական Մրմունջներ», Մխանսարյանցի «Քնար Հայկական». Սրվանձտյանի «Գրոց Բրոց», «Ազգագրական Հանդեսի» բոլոր համարները և այլն։ Առանձին քառյակների համար աղբյուրները չեն հիշված. իսկ Սրվանձտյանցի «Գրոց Բրոց»–ի մեջ քառյակներ չկան։ Մյուս աղբյուրներն էլ լրիվ չեն ոգտագործված։ Կան բավական թվով քառյակներ էլ, վորոնք առաջին անգամ այս դրքում են տպագրված։ Դրանց ձեռագիրը Տ. Ասատուրյան 1902 թ. անձամբ տվել եր ինձ մեր ժողովածուի մեջ մտցնելու համար։ Բայց դրանց ժողովրդական ծագումը շատ կասկածելի յե. ուստի շատ քչերն են առնված իմ այս ժողովածուի մեջ։

17. ԲՍԴ = Բանասեր ամսաթերթ, հատոր Դ. Պարիզ, մի քանի քառյակ։

18. ԹՄԿ = Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, Գեորգ Տեր Աղեքսանդրյանի, Թիֆլիս 1885 յեր. 57—64 ժող. յերգեր։

19. ԺԽ = Ժողովրդական խաղեր, ուսվածք Մ. Աբեղյանի, Վաղարշապատ, 1904. (Արտատպություն «Արարատ» ամսագրից)։

20. ԽՈՏ = Ցերգեր, առակներ, հանելուկներ Խոտրջուր, հավաքեց Հ.Մ.Հ. Գալուստյան, Տփղիս, 1904. յեր. 50 հտ. «Մանի կանանցմե լըսված»։

21. ԾՎ = Ծաղկաքաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահյուսության, Առաջին պրակ, հավաքեց Հայկ Ամեմյան, Եջմիածին, 1917։

22. ԿԺԵ = Կոմիտաս, ժողովրդական յերգեր, ազգագրական ժողո–

վածու, հայերեն նոտագրութ յունից փոխադրեց յեվրոպականի, առաջաբանով և դիտողութ յուններով, Սպիրիդոն Մելիքյան։ ՀՍԽՀ Պետհրատ, 1931։ Բառերը մեծ մասամբ մեկ կամ յերկու տող են, յերբեմն խիստ աղճատված։ Բառերի համար Մելիքյանն ոչուված և նաև մեր «Հազար ու մի խաղեր» յերգարանից։

23· ՀՄ = Հնութ յունք Ակնայ, Ց· Կ· Ճանիկյան, Թիֆլիս 1895։

24· ՀԺԵ = Ժողովրդական յերգ, առած, հանելուկ, յերգում, որհնանք, անծեք և այլն, հավաքեց Ս· Հայկունի, Մոսկվա–Վաղարշապատ 1906· Ամինյան Աղգագրական Ժողովածու, հատոր Զ·։

25· ՀՀ = Համով Հատով, յերկասիրեց Գ· Վ· Սրվանձտյանց, Կ· Պոլիս 1884։

26· ՀՄԽՄ = Հազար ու մի խաղ, Առաջին հիսնյակ, խմբագրեցին Կոմիտաս վ· և Մանուկ Աբեղյան· Վաղարշապատ 1903, յերկրորդ տպ· 1904· Ժողովածուիս մեջ ցույց են տրված վոչ թե սրա եջերը, այլ յերգերի համարները։ Խաղերը մշակված են։

27· ՀՄԽԲ = Հազար ու մի խաղ, յերկրորդ հիսնյակ· խմբագրեցին Կոմիտաս վ· և Մանուկ Աբեղյան, Վաղարշապատ 1905· ցույց են տրված վոչ թե սրա եջերը, այլ յերգերի համարները։ Խաղերը մշակված են։

28· ՆՀԳ = Հայ ժողովրդ· հեքիաթներ, ժողովածու Տիգրանա Նավասարդյանց, Գ· գիրք, Թիֆլիս 1884, յեր· 44—50 յերգեր։

29· ՆՀՋ = Հայ ժողովրդական հեքիաթներ, ժողովածու Տիգրանա Նալբանդյանց, Ջ· գիրք, Թիֆլիս, 1890· յեր· 65— 109 «Ժողովրդական յերգեր»։

30· ՋՀ = Ջահարմահալի հայ ժողովրդական բանահյուսութ յունը, գրեց Արամ Ցերեմյան, Վիեննա 1923։

31· ՊՍՎ = Պռոշյանց Պերճ, Սոս և Վարդիթեր, յերկրորդ տպ· 1887· Ցերեվան։ Բառյակներ կան «Ջանդյուլումի» նկարագրի մեջ։

32· ՊՎ = Պանդուխտ Վանցին, Նամակներ, յերգեր, առածներ, առեղծվածներ, գրեց Աբիստակես վ· Տեր Սարգսյանց, Կ· Պոլիս 1876·

33· ՋԲ = Ջավախքի բուրմունք, հավաքեց Ցերվ· Լալայանց, Թիֆլիս 1892·

34· ՌՄ = Ռամկական մրմունջներ, ժողովրդական յերգեր ու պարերգեր, խմբագրեց Աբշալ Բրուտյան, Աղեքսանդրապոլ 1895·

35· ՍՄ = Մանանայ, ժողովեաց և ի լոյս ետծ Գ· Վ· Սրվանձտյանց, Կ· Պոլիս 1876·

36· ՎԺԵՍ = Վանա ժողովրդական յերգեր, Ազգագրական ժողովածու, ձայնագրեցին Սպ· Մելիքյան և Գար· Գարդաշյան, Ցերեվան 1926·: Նույնը նաև ՀՍԽՀ Գիտութ յան և Արվեստի Ինստիտուտի № 1 Տեղեկագրի մեջ։

37· ՎԺԵԲ = Վանա ժողովրդական յերգեր, ձայնագրեցին Սպ· Մելիքյան և Գար· Գարդաշյան, յերկրորդ պրակ 1928։ Այս վերջին յերկու

Ժողովածուների մեջ կան նաև ամբողջական յերգեր: Խաղերի բառերը հաճախ աղճատ են. ոտված են նաև մեր «Հազար-ու մի խաղից»:

38. ՎՍԱ = Վանա Սազ, հավաքածոյք Վասպուրականի ժողովրդական յերգերի, հեքիաթների, առածների և հանելուկների, ժողովեց Գեորգ Գ. Շերենց. Ա. մաս, Թիֆլիս 1885.

39. ՎՍԲ = Վանա Սազ, հավաքածոյք Վասպուրականի ժողովրդական յերգերի և այլն. ժողովեց Գեորգ Գ. Շերենց, Բ. մաս. Թիֆլիս 1889.

40. ՏԳԱ = Տեղեկագիր ՀՍՌՀ Գիտությյան և Արվեստի Ինստիտուտի, № 2. Յերեվան 1927.

41. ՏԽ = Տաղեր ու խաղեր, խմբագրեց և կազմեց Աղեքսանդր Մխիթարյանց, Աղեքսանդրոպոլ 1900, յեր. 73—260.

42. ՓԾ = Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից, ժողովեց Գաբրիելին Ս. Հոսեփյանց, Թիֆլիս 1892.

43. ՖՀ = Ֆնար Հայկական, խմբագրեց Մ. Մ. Մխանսարյանց, Ս. Պետերբուրգ 1868.

44. ՖՄՎ = Ֆնար Մշեցոց և Վանեցոց, մինչև այժմ չհրատարակված յերգեր, ժողովեց Աբրիստակես վ. Սեդրակյան, Վաղարշապատ 1874.

Սրանք են այն գրքերը, վորոնց մեջ տպված ժողովրդական խաղիկները յես նկատի յեմ ունեցել այս ժողովածուն կազմելիս: Դրանցով, անշուշտ, չեն սպառվում տպագրված ժողովրդական խաղիկները, լինեն առանձին գրքերի, թե մանավանդ պարբերական հրատարակությունների մեջ լույս ընծայված: Կան և շատերը, վորոնք դեռ չեն գրի առնված: Բայց, կարծում եմ, այս ամենով արդեն լիակատար ծանոթություն և ստացվում մեր հին դյուցացու ստեղծագործության մասին այս տիպի խաղերի նկատմամբ: Իմպերիալիստական պատերազմի, արեվմտյան Հայաստանի գաղթի, տալա և Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության և Հայաստանի խորհրդայնացման պատճառով՝ արագ փոխվել է և փոխվում է մեր գյուղացու տնտեսությունն ու կենցաղը և նրա մտայնությունը: Դրա հետևանքով արդեն փոխվել են և փոխվում են նրա ստեղծագործության նյութն ու յեղանակները: Այս փոքրիկ խաղերն այժմ հնացել են ու մեռնում են, տեղի տալով նորերին, վորոնք ավելի հարուստ բովանդակություն ունեն:

Այս ժողովածուի գործածության ժամանակ պետք է նկատի ունենալ հետևյալները.

1. Ինչպես վերևում (յերես 110) բացատրվեց, խաղերը դասավորված են այբբենական կարգով, միայն ըստ հանգարանի: Նկատի յեն առնված խաղերի առաջին տողերը: Վորևե խաղ գտնելու համար՝ պետք է առնել դրա առաջին տողը: Դիցուք ուզում եք գտնել մի քառյակ, վորի առաջին տողն է՝ «Բեվանու հողեն եմ»: Ժողովածուի մեջ պետք է գտնել նախ այդ տողի վերջի Մ տառն ըստ այբբենական կարգի: Ապա՝ Մ տառից առաջ ընկած ե տա-

ուր պետք է դնենք դարձյալ ըստ այբբենական կարգի, ուրեմն ԵՄ վերջը: Այսպես և ԵՄ վանկից առաջ ընկած տառերն առնելով՝ ունենում ենք ԵՆ ԵՄ վերջը: Բայց այս վերջն ունեն հետևյալ առաջին տողերը՝ «Մաղիկ, յես քու աղեն եմ», «Որդակ եմ ու դյուղեն եմ», «Երեվանու հողեն եմ», «Մաղիկ, յես քո ծառեն եմ», և հետո ուրիշները: Ինչպես կարելի յե նկատել, ԵՆ ԵՄ վերջից առաջ դարձյալ այբբենական կարգով ընկնում են Լ, Ղ, Ր տառերը— լեն եմ,—ղեն եմ,—ռեն եմ: Առաջին—լեն եմ վերջով յերկու քառյակ կա. դրանցից ըստ այբբենական կարգի,—ալեն եմ վերջն ավելի առաջ է ընկնում, քան գյուղեն եմ. իսկ—ղեն եմ վերջով միայն մեկ քառյակ կա, և դա մեր վորոնածն է:

Գործը կատարված լինելով յերկար ընդհատումներով՝ ը տառի գրությունը բառամիջում յերբեմն պահված է, յերբեմն՝ վոչ: Ուստի, յեթե մի քառյակ ը-ով գրության տեղում չգտնվի, պետք է վորոնել առանց ը գրության շարքում:

2. Բարբառային քերականական ձևերը դրված են գրական հնչյունական ձևերի շարքում: Ուստի բարբառային վերջավորությամբ խաղերը պետք է վորոնել համապատասխան գրական վերջավորության տեղում:

ա) Որինակ՝ «Ճես կյորխի ձորան եմ» խաղը, վոր նշանակում է «Ճես կորխի ձորեն եմ», պետք է վորոնել վոչ թե— ան եմ, այլ— են եմ վերջի մեջ: Այսպես է դրված, վորովհետև այդ կերպով իրար մոտ են դալիս նման յերգերը. «Կաղղվանա ձորեն եմ», «Ճես ես գեղի ձորեն եմ», «Կաղրզմանա ձորեն եմ» և ուրիշները:

բ) Որինակ՝ «Տախտ եմ կիւտալ, հավան ըմ», վոր է՝ «Տախտ եմ կիւտել, հավան եմ», պետք է վորոնել «հավան եմ» վերջավորության շարքում:

գ) Որինակ՝ «կանիմ», «ընիմ, ունիմ», «կոնես» և նման բարբառային ձևերը պետք է վորոնել գրական «կանեմ», «անեմ», «կանի», «ունեմ» կամ «ունիմ» ձևերի շարքում. «Տանս տակին հոնձ կ'անիմ», վոր է՝ «Տանս տակին հունձ կ'անեմ». «Միպտաս ձին նալն ի՞նչ կոնես», վոր է՝ «Միպտակ ձին նալն ի՞նչ կանի». «Նանես, նանես, նան չոնիմ», վոր է՝ «...Նան չունիմ,— չունեմ»:

դ) Անորոշ դերբայով կազմված բարբառային ձևերը՝ «հեծեր եմ», «բացվեր եմ», «չարալ ըմ», «չվարալ ըմ» և այլն, պետք է վորոնել գրական ձևերի շարքում՝ «հեծել եմ», «բացվել եմ», «չարել եմ», «չվարել եմ»:

Նույնպես 2-րդ դեմքով ձևերը՝ «հազեր ես», «ելեր ես» և այլն վորոնել՝ «հազել ես», «ելել ես» և այլն ձևերի շարքում:

Նույնպես 3-րդ դեմքով ձևերը՝ «յըղըկալալ ա», «սառալ ա», «բլեր ա», «քներ ա» և այլն վորոնել «յեղակալել ա», «սառել ա», «բլել ա», «քնել ա» և «քնել է» ձևերի շարքում:

Ցեթե մի խաղ չկա «առել» և նման ձեվերի շարքում, պետք է վորոնել, «առել ա», կամ «առել է» շարքերի մեջ, կամ ընդհակառակն: Այս վերջին յերկու ձևերն էլ՝ «սառել ա», «սառել է», ինչպես և «սառել է» հաճախ փոխանակում են իրար և դրված են մեկմյանց մոտ:

3· Խաղերի ու նրանց փոփոխակների տակին յերկաթագիր տառերով նշանակված են այն դրքերը, իսկ թվանշաններով այն էջերը, ուր կա տվյալ քառյակը: Որինակ՝ «ԱԺՍ. 61» նշանակում է՝ «Աղղագրական Հանդես, 11–րդ դիրք, յեր· 61»:

Ցեթե խաղի կամ փոփոխակի տակին վոչ մի այդպիսի ցուցում չկա, այդպիսի խաղն ու փոփոխակը մեր, այսինքն իմ կամ Կոմիտասի, կամ յերկուսիս ժողովածուներից է: Տպագրված խաղերից չառիրը ձեռագիր եմ ունեցել: Ցեթե ձեռագիր խաղերից մեկը նույնությամբ տպագրված է յեղել, հիշատակել եմ միայն տպագրվածը, ավելորդ համարելով հիշել, վոր ձեռիս յեղել է նաև նույնի ձեռագիրը կամ նորից դրի առնվածը:

4· Վարիանտները ցույց տալու համար խաղերի տողերը նշանակված են 1· 2· 3 և այլն թվանշաններով, 1—առաջին տող, 2— յերկրորդ տող և այլն: Վոր տողի մեջ վոր կա տարբերություն, այդ տողն ամբողջապես մեջ է բերված՝ սկզբից դրված իր թվանշանով, որինակ՝ ժողովածուիս առաջին խաղի տակին կա՝ «1· Սևլին կասեն արարատ», այդ նշանակում է, վոր փոփոխակի մեջ միայն 1–ին տողն է զանազանվում· մնացած յերեք տողերը տպվածի պես են: Ժողովածուիս չորրորդ խաղի տակին «123» թվանշաններից հետո դրված են յերեք տողեր· այդ նշանակում է, վոր փոփոխակի մեջ առաջին յերեք տողերն այդպես զանազանվում են, իսկ 4–րդ տողը նույնն է տպվածի հետ: Ցերբ վարիանտի բոլոր տողերն էլ տարբեր են, այդ դեպքում վարիանտն ամբողջապես մեջ է բերված ընդհանրապես յուռութով (***) նշանի տակ կամ առանց սրան:

Այս յուռութով (***) նշանի տակ տպված վարիանտից հետո դրված տարբերություններն հենց այդ վարիանտի նկատմամբ են: Որինակ՝ վեցերորդ խաղից հետո յուռութով (***) նշանի տակին տպված է այս քառատող վարիանտը՝ «Տեղ եմ քցել, փոթ կը դա» և այլն· ապա՝ սրա տակին «14» թվանշաններից հետո գալիս են յերկու տող: Այդ նշանակում է, վոր 1–ին և 4–րդ տողերի այդ տարբերությունները յուռութովի տակի վարիանտի նկատմամբ են՝ այսինքն այս նոր փոփոխակը յուռութովի տակին տպված վարիանտից զանազանվում է 1–ին և 4–րդ տողերով, իսկ 2–րդ և 3–րդ տողերում նույնն է յուռութովի տակ տպված վարիանտի հետ:

Ցերբ յուռութով նշանը չկա, բոլոր վարիանտներն ամենից առաջ տպված խաղի նկատմամբ են:

5· Ցերբ յուռութովի տակին իրրև փոփոխակ դրված են յերկու կամ յերեք և այլն տող, առանց սկզբում տողերը ցույց տվող թվանշանի, այդ նշանակում է, վոր փոփոխակը միայն բերված տողերն են: Այսպիսի դեպ-

քերում, սակայն, հաճախ սկզբում նշանակվածը՝ «1—4», «1—3», «1—8» և այլն. (մեկից մինչև չորս, մեկից յերեք, մեկից ութ), այսինքն խաղի չորս, յերեք կամ ութ տողերի փոխանակ իբրև փոփոխակ կան միայն սրբագրած յերկու կամ յերեք կամ ութ տողը:

Կան և այսպիսի ցուցումները. «4—6» և նմանները: Այդ նշանակում է, որ վարիանտի առաջին յերեք տողերը նույնն են վեցատող խաղի առաջին յերեք տողերի հետ, իսկ նույն խաղի 4—6 տողերի փոխանակ՝ վարիանտի մեջ է ըստ տպվածի. իսկ սա կարող է և յերեք տող լինել և ավելի կամ պակաս:

6. Նույն խաղի փոփոխակները յերբեմն իբրև անկախ յերգեր են առնված, յերբեմն՝ վոչ: Այդ առաջացել է յերկար տարիների ընթացքում ընդհատումներով պարապելուց: Փոփոխակներն իբրև անկախ յերգեր են առնված, յերբ դրանց հիմնական մասի բովանդակությունը տարբեր է:

Մ. ԱԲԵՂՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԻԿՆԵՐ

1

Մեղի չըլնի արաբա,
Մեր բաները խարաբ ա.
Անուշ յարըս դուրս չի գա,
Ֆանի ձեռը պարապ ա:
1. Սելին կ'ասեն արաբա:

2

Ձիուս անունն Արաբ ա,
Ասուրչինինըս զարբաբ ա.
Կորցրել եմ չեկլիկ յարըս,
Նազուկ սիրտըս խարաբ ա:

3

Հասիբ ա հա՛, հասիբ ա,
Տոն չոնե*, քյասիբ ա.
Կ'ողե՝ ասիքյ, կ'ողե՝ վուչ**,
Են տըղան ինձ նասիբ ա:
ԱԺԸ 28
* Տուն չունի: ** Կ'ուզի՝ ասեք, կ'ուզի՝ վոչ:

4

Ծամբըս համբա–համբա,
Շեկ յարըս քցի ճամբա.
Ճամբին չունի ոգնական:

123. Շեկ յարիս ղըրի ճամբան,
Ախո՛ս, հասի իրան բան.
Ճամբին ոգնական չունի:
ՀՄԽԱ 20

123. Մազերըս անպահապան,
Շեկ յարըս ղըրկի ճանապան.
Ճանպեն ոգնական չեղավ:
Աե 200

5

Մազերըս համբա–համբա,
Աղջերըս ղրկի ճամբա.
Ճամբեն ոգնութին չերավ,
ՀԺԵ 119

***

Կայներ եմ, չեմ կըրնա դա:
Տես՝ Կայներ եմ, գալ չեմ կըրնա:

6

Տեղը քըցեմ, վոնթ կը դա,
Բարձի տակից հոտ կը գա.
Իմ յարը հեռու տեղ ա,
Առանց նըրան քուն չի գա:
ԱԲ 345
Տես՝ Բարձի տըկեն խոտ կու դեր:

***

Տեղ եմ քըցել, վոնթ կը դա,
Մի կնից անուշ հոտ կը դա.
Մինչև են յարի գալը
Ա՛յ քիս վո՞նց քուն մոտ կը գա:

14. Տեղ կըքըցեմ, վոնթ կըգա...
Ա՛յ քերիս հո՞նց քուն կը գա:
ԱԴ 114

7

Տեղ եմ քըցել, փոթ կըզա,
Բարձ եմ դըրել, սոթ կըտա.
Մեռնիմ միջի քընողին,—
Անուշ խընկահոտ կըզա:
ՌՄ 115. Տհ 178

1. Տեղ եմ քըցել, փոթ կըտա:
ՔՀ 161. ԲՄ 154

23. Բարձ եմ դըրել, սոթ կուգա.
Միջի քընողին մեռնիմ:
ԱԴ 167

4. Անուշ խընկան հոտ կըզա:
ԱԺՍ. 61

8

Տեղ եմ քըցել, փոթ կը գա,
Բարձիս տակից հոտ կըզա,
Մեռնեմ բոլոր քաքուլին,—
Մէջեն վարդահոտ կըզա:
4. Խընկի նման հոտ կըզա:

***

Տեղ եմ քըցե, փոնթ կիգա,
Բարձի տըկից հոտ կիգա
Մեռնեմ քո քանգուլներուն
Մէջեն խընկան հոտ կիդա:
ՓՇ 74

***

Դյոշակ ձըդի, փոթ կուգար
Բարձիդ տըկեն ֆոտ կու գար.
Մեռնիմ դաստա քյանքյուլիդ,
Մէջեն խնկա ֆոտ կու գար:
ԱԳ 93

***

Տեղ եմ քըցել, փոնթ կըտա,
Բարձի տակեն հոտ կըզա.
Մեռնեմ դաստա քոնքուլիդ,
Մեջեն խընկի հոտ կըզա:
ԱՐ 132

***

Տեղ եձգեցի, փոնթ եկավ,
Բարձի տըկեն հոտ եկավ.
Նոր գալած բեխիդ մեռնիմ,—
Մէջին խընկան հոտ կիդիր:
ՆՀՋ 88

9

Տեղ եմ քըցել, փոթ կըզա,
Ծարը յարի մոտ կըզա.
Կարմիր խընձոր բարձի տակ,
Մէջեն անուշ հոտ կըզա:
ԺԽ 88

12. Տեղը քըցեմ, փոթ կըզա,
Բարձը դընեմ սոթ կըտա:

Հմմտ. Թազա հացի հոտ կըզա:

10

Դյոշակ ձըդեմ, փոթ կուգա,
Տեսնեմ՝ յարըս յէ՞րը կուգա.
Սեվ քենքուլին մեռնիմ,
Բերնեն անուշ հոտ կուգա:
ԲՆԳ 677

11

Դյոշակ ձըդի, փոթ եկավ,
Բարձիդ մէջեն ֆոտ եկավ.
Մեռնիմ դաստա քյանքուլիդ,
Ռու խաբարըդ յէ՞ր եկավ:
ԱԳ 93

12

Տեղը քըցեմ, փոթ կըզա,
Աղջիկ լաճառ մոտ կըզա.
Մեռնիմ եդ խաս բըրչամիդ,—
Մէջեն անուշ հոտ կըզա:
ԺԽ 88

Տես՝ «Բարձ վերուցեմ հոտ կուգա»,
և «Բարձի տակին հոտ կուգեր»:

13

Ծաղկաձորեն ձեն կիգա,
Ծաղկամերը քըներ ա.
Թող քընի, ուր (իր) քունն անուշ,
Վիճակ խաղալ չատ անուշ:
(Վիճակի յերգ)
ԱՐ 446

***

Լուծն ու սամին սարեն կիգա,
Տես՝ հաբտավ քամին
չընգչընգեր:

14

Ախ ըսիմ, արին կուգա,
Սիրտըս սեվ քարին կուգա։
Վախիմ թե խարիբ մեռնիմ,
Ինչ քոր, ինչ ախբեր կուգա։*
ԲՆԱ. 628

* Վոչ քուլր, վոչ յեղբայր։

15

Աչունք մոտ ա, ձուն կըգա,
Ֆիդան յարըս տուն կը գա.
Գըլուխըդ դիր կըռներիս,
Աչքըդ անուշ քուն կըգա։
ՏԽ 191

16

Ծաղկածորը ձուն կըգա,
Ծաղկավորը տուն կըգա.
Ոձը տա իմ դուշմանին,
Սեվ խաբարը ընձի գա։
ՌՄ 107. ՏԽ 145

34. *Սեվ ոձը տա դուշմանին,*
Սեվ խաբարը տուն կըգա։
4. *Սեվ խաբարը ինձ կըգա։*
4. *Ղարա խաբարը ինձ գա։*
12. *Ծաղկեվանքում ձուն կըգա,*
Ծաղիկները տուն կըգա։
124. *Սարեն ձորեն ձուն կըգար,*
Ծաղկավորը տուն կըգար...
Սեվ խաբարը ինձ կըգար։

***

Ծաղկեվանք ձուն ե եկել,
Ծաղկի մեր տուն ե եկել.
Ոձը տըվեց դուշմանին,
Սեվ խաբար տուն ե եկել։

17

Սարի գըլխին չատ ձուն կը գա,
Իմ անուշ յարըս տուն կըգա.
Ճերմոր ինձ լավ մուժտա տըվին,
Աչքերիս անուշ քուն կըգա։
ՏԽ 223

18

Սարեր բըռներ ճյուն կուգա,
Աղբեր գըրոջ հյուր կուգա։
ՀՀ 312

19

Սարերում գարուն կըգա,
Սեվ սըրտիս արուն կըգա.
Ի՞նչ անեմ ենպես յարը,
Գըտըրավի, տարուն կըգա։
12. *Ախ ենեմ, արուն կուգա,*
Սեվ սըրտիս գարուն կուգա։
ԲՍ 139

20

Ախ կ'անեմ, արուն կուգա,
Սեվ սըրտիս գազո՞ւն կուգա
Կորուցել եմ (վ. կորուսել եմ) իմ յարը,
Ո՞վ գիտե՝ յերբ տուն կուգա։
ՀՄԽԱ. 19
12. *Սարերին գարուն կուգա,*
Սեվ սրտիս արուն կուգա։
ԿԺԵ 12

21

Լուսաղեմին քուն կուգա,
Կես գիշերին տուն կուգա.
Երված ու վառված յարիս՝
Սըրտիցը արուն կուգա։
ՏԽ 194. ԲՍ 156

22

Ասոր Թոխպ ա, Թոռ կըկյա,
Պյուլուր քարերը փոլ կըկյա.
Հոռ վոր մին յարը չունե,
Մալուր մուշկուն շոռ կըկյա։
ԱԺԼ
«Այսոր Թոխպ ե, Թոռ (անճրև) կը գա,
Բոլոր (կլոր) քարերը փուլ կըգա.
Ով վոր մի յար չունի,
Մալուլ մուշկուն շուռ (ման) կը գա։

23

Տեններն եղյալըս կուգա,
Դարվար նայիլըս կուգա.
Ելին աղջիկն ի՞նչ տ՚ընիմ,—
Գըրկիլ պառկիլըս կուգա:
ԲՆԳ 677

3· *Ելին աչխին ի՞նչ տ՚ընիմ:*
ԲՆԱ 623

24

Ըրիքնակը տիւս կյըկյա,
Մնակեն յըրա լիւս կյըկյա.
Հու խեր պենուա՛մ չառ խոսե,
Բըլեն աչկերը թող տիւս կյա:
ԱԺԼ 47

«*Արեգակը դուս կըգա,*
Մենակի վրա լուս կըգա.
Ով խեր բանուա՛մ չառ խոսի,
Բալի աչքերը դուս դա»:

25

Թազա հացի հոտ կըգա,
Ցարը յարի մոտ կըգա.
Իմ սիրած ջահիլ տըղից
Անուշ խընկահոտ կըգա:
ՏԽ 153

Հմմտ. Տեղ եմ քցել, փոթ կըգա,
Ցարը յարի մոտ կըգա:

26

Բարձ վերուցեմ, հոտ կուգա,
Կարմիր խընձոր տիւր(ս) կուգա.
Խընձոր կիսից կըծած եր,
Զորս բոլորն արծրըծած եր:
ՎՍՌ 44· ԺԽ 93·

234· *Կարմիր խընձոր դիւրս կուգա.*
Կըծած եր, արծրըծած եր,
Են իմ յարոջ տըվածն եր:
ՊՎ 97

Հմմտ. Վ· Գիչերվորե դուս եկա:
Հմմտ. «Խընձոր ունեմ կըծած ա»·
Հմմտ. 7 Տեղ եմ քցել փոթ կըգա:

27

Ելեր ես իգին, ավուզ ջուր կուգա,
Գյաֆուր վարդ բացվե, անուշ խոտ (հոտ) կուգա:
ՎՍԱ 36

12· *Ելանք ավզընոց, ավկեն ջուր կուգեր,*
Գյաֆուր վարդ բացվե, անուշ խոտ (հոտ) կուգեր:
ՊՎ 88

28

Պիճիմ չային ջուր կուգա,
Քու մարդ ինձի դուր կուգա:
ՏԽ 107

29

Ջաղցի դըռնեն ջուր կիգա,
Աղբեր քուրոջ հուր կիգա:
Աղջի ջան, կանչա՛ լըսեմ,
Քանի սըրտիս դուր կիգա:
ԱԵ 196· ԺԽ 89

30

Բարձըր սարեն ջուր կուգա,
Մի տեսնեք, թե ուր կուգա.
Ինչ անի հերն ու մերը,
Աղջիկ տըղին դուր կուգա:
2· Ծարավ մարդուն դուր կըգա:
23· Աղբեր քրոջ հյուր կըգա.
Ի՞նչ անեն հերն ու մերը:
ԺԽ 95

31

Ջաղցի դըռներ ջուր կուգա,
Աղջիկ տըղին դուր կուգա:
ՀԺԵ 128·

***

Ջաղցի առուն ջուր կիգեր,
Աղջիկ տըղին դուր կիգեր:
ՀԺԵ 80

2· *Աղջիկ լաճուն դուր կուգեր:*
ՀԺԵ 44· ՎՍԱ 45
ԾՎ 46· ԱԺԹ 105

Ջաղցի առուն ջուր կուգա,
Աղջիկ լաճուն դուր կուգա:
ՊՎ 97

32

Ալուր մաղեմ, թեփ կուգա,
Ես իմ յարըս յե՞ր կուգա.
Ֆյոսաղաղ դըլխու փոսը,
Իմ յարիս սըրտի խուսը:
ԱՋ 388

33

Ալուր մաղեմ, թեփ կուգա,
Իմ յարըս հըջըխ յե՞ր կուգա.
Ամեն ծառին մի փըչատ,
Յարիս ոմըր ըսի չատ:
ԱԳ 103

***

Ալյուր մաղեմ, ձին կըգա,
Յեգոր աղեն յե՞րբ կըգա.
Ամեն ծառին մի փըչատ,
Սիրած յարիս ոմբրը չատ:
ԱԺԱ 49

Տես՝ իմ աղջիկը կըռնել ա:
Տես՝ են սարին սար չեմ ասի:

34

Ալուր մաղեմ, թեփ կիգա,
Շեկլիկ աղբեր յե՞ր կիգա:
ԱՐ 440

35

Ջուր եմ դըրել, յեփ կըգա,
Ալիր մաղել, թեփ կըտա.
Աչքըս ճամփիդ մընում եմ,
Յարաբ յարըս յե՞ր կըգա:
ԱԺԱ 59

***

Սարևը ամպեր, ձուն չի գա.
Տես՝ Ամպել ա, ձուն չի գալի:

36

Գոլիկ մ'եմ հորդե, թերմաշ ջուր
չիգա,
Առու մ'եմ բացե, անտեր ջուր չի
կա,
Ընկնիմ ու ժուռ գամ՝ քե պես յար
չըկա.
ԱՐ 438
Տես՝ Գյոլիկ մի՛ խորտեք,
Թերմաշ ջուր չի դար:

37

Կավկավու սարերը փուլ գա,
Շիրին յարըս բալքի տուն գա.
Երնեկ են դիչերվան կըտամ,
Յերբ աչքերըս անուշ քուն գա:
Տե 159

38

Հեյ ըրեք, հեյ ըրեք, դանան կյա,
Ծըհանը մրեկնե, կուտանան կյա.
Հու լավ տըղա յա, ծեն անե,
Երված յարը հըետան կյա:
ԱՐ 29
«Հեյ արեք, հեյ արեք, դանան գա,
Հացահանը մեկնիր, կուտանան
(կուտը) գա:
Ով լավ տղա յե, ձայն անի, գա.
Երված յարը հետան (յետևից) գա»:

39

Դիլբա՛ր, քո չուչեն կըզընգա,
Ամար, քո չուչեն կըզընգա,
Յես քո սիրուդ հիվանդ ընկա:
3· Յես քո դարդեն հիվանդ
ընկա:
ՀԺԵ 98

40

Լամպի չիչան կըճընգա,
Գըլորա ծոցըդ ընկա:
— Սիրևդը զոխ ե դառել,
Իմ յարը զոխ ե դառել:
ԱԳ 98

41

Հարավ քամին կըշընգընգա,
Սազ-քամանին կըճընգճընգա,

Ցես քու սիրուդ հիվանդ ընկա։
ԺՒ 25

2· Սաղ ու քամանին կըճընգա։
ՋԲ 19

123· Սաղ ու քամանին կըճընկա,
Ցես քու սիրուտ հիվանդ ընկա·
Հարաւ քամին կըշընկըշընկա։
ՌՄ 120· Տհ 108

42

Աղջիկ, քեմբերդ կըշընգա,
Ջըշեբաղին չընկա չընկա
Քու դէրդեն հիվանդ ընկա։
ԲՆԲ 642

43

Նսոր թող ձուն գա,
Իմ յարը տուն գա,
Ինձ անուշ քուն գա։
(Կրկնակ) ԱԺԱ 68

44

Աղիզիս կանչէք՝ չուտ գա,
Սըրտիս յարին դարման տա·
Գնացէք ասէք հորն ու մորը,
Թէ ձեղ յեղել եմ վէտա։
ԲՍ 137

45

Թառ խորոտիկ ասլի զադա,
Քո դարդ մէջ իմ սըրտին չատ ա,
Քո ծոցն ընձի նախշուն ոդա։
ՔՆ 174

46

Սարեն իջար վիխադա,
Թրլանդն ուսիդ, ա՛յ գյադա·
Ցես դու իրար սիրեցինք,
Վէրէն աստված չըհաղ ա։
12· Սարից կըդաս վիխադա,
Սաղմոսը ծոցիդ ադա։

47

Հասըմ, հոպովլի գյադա,
Կորի, քյոփողլի գյադա։
(Կրկնակ) ԱԴ 164

48

Ալին ալմալու գյադա,
Ջուխեդ չաքմալու գյադա։
(Կրկնակ) ԱԴ 176

49

Ջուրն ունի կանաչ ադա,
Իմ ջանը ջանիդ բադա·
Դուշմանի վատ խոսքովը
Ինձ մի՛ ասիլ թէ յադ ա։
1· Գետն ունի կանաչ ադա։
Տհ 221

50

Ինձ հետ կըտրի վախտ ու վադա,
Ջիվան ջանըս ըմբրիդ բադա·
Երմած սըրտիս մի հարցըրո՛ւ,
Լուա երեսըդ ինձ դարձըրու։
Տհ 159

51

Բաղես չորք կիւսը* լոխ վարդ ա,
Իմ յարը մին մազար մարդ ա·
Կ՛ասիմ՝ ա՛ յար, տանան տիւս մի՛
կյա**,
Չորք կիւսըդ*** դիւշման մարդ ա։
ԱԺԼ 44
* Բաղիս չորս կուսը (կողմը)։
** Տանեն դուրս մի՛ գա։
*** Կուսդ, կողմդ։

52

Մի յար ունիմ՝ վարդ ա,
Վարդ չի, գըլխես զարդ ա։
Փահլըվանի կըշտին եկ,
Ամենից ուժով մարդ ա։
ԲՍ 127

53

Հաց առա թաղա թաղա,
Բոյը թամամ մի դաղ ա.
Մեկն եմ դըրել ձըվածեղ,
Վ.այր տանեմ յարխա մաղա:
Ա.Դ 164· Տի 163

54

Նոր ձուկն եմ բըռնել թաղա,
Խորովեմ, տամ քեզ մաղա.
Ինձ պես տղեն քեզի հետ,
Հախ առնու, լավ կըսաղա:
Տի 198
Հմմտ. Թալիշու ճամբեն դուզ ա:

55

Ջուխտ ըմ յար ունեմ, մեյ խին, մեյ (մեկ) թաղա.
Մեյ կուտա արաղ, մեյ կուտա մաղա.
Են արաղ տըվող չիվար չափարզա,
Են մաղա տըվող իմ ջանին ջաղա:
ՎՍԱ. 61

56

Միրանն ի խասե, խաղողն ալաջա,
Երկու յար ունիմ, մեկ խին, մեկ թաժա.
Մեկն կուտա արաղ, մեկն կուտա մաղա.
Են արաղ տվողն չիվար չափարզա,
Են մաղա տըվողն ձի կուտա ջաղա:
ՊՎ. 125· Տի 121

57

Միրանն ի հասե, խաղողն ալաջա,
Երկու յար ունեմ, մեկ հին, մեկ թաղա.
Հընին չատ բարև, նորին չատ արև,
Երկըսի կարոտն եվ սըրտիս վերև:
ՎՍՐ 40

58

Սարի թըրթընջուկ թաղա,
Մեղր ու շաքար քեզ մաղա.
Ինձ պես նազանի աղջիկ
Քեզ պես տըղին վո՞նց սաղա:
ՀՄԽԱ. 41· ՌՄ 101
1· *Սարի թարթանջուկ թաղա:*
2· *Ջուխտ ու մեխակ քեզ մաղա:*
ՔՀ 130· Ա.Դ 666· Տի 240
2· *Ջավուղ շաքար քեզ մաղա:*
12· *Սարերի թարթանջուկ թաղա,*
Ջավուղ մեխակ քեզ մաղա:
Ա.Դ 266
134· *Սարի թըրթուր մի թռղ ա,*
Ինձ պես նազանի յարը
Քեզ պես ին վո՞նց սաղա:
Ա.Ե 252

59

Սանրածըս ոսկե մազ ա,
Հադինըս կապուտ խաս ա.
Բուղման քըցած արխալուղ
Քեզի կըտամ թավաղա:
ԲՄ 133

60

Ցես աղջիկ եմ նոր մաղա.
Աչխարքն ինձ փիանդազ ա.
Անմահական խընձ.որը
Կ'անեմ յարիս թավաղա:
Ա.Զ 379

61

Են ծառին ի՞նչ կըսաղա,
Ճըղներին գինձ կըսաղա.
Ըլին ըլել ա պըրծել,
Ասիլն եվ ի՞նչ կըսաղա:
Ա.Զ 379

62–63–64

Ցարըս գեղի խարազ ա,
Աղլուխս տըվի թավաղա.
Մին եվ վոր իմ կուշտը գա,
Գաթա կ'ուտեցնեմ թաղա:
ԲՄ 153

65

Սարերը բարակ սեղ ա,
Ջաղել ես կակուղ բեզա.
Հազըրվի, արի գընանք,
Գանի չի մըթնել, թեզ ա:

ՏԽ 211

66

Ձորի ճամբեն մեկ իզ ա,
Շան տըղի բոյը մի թիզ ա.
Արիք գընանք, Աստուր,
Վոսկե գյամին քըցենք ջուր:

67

Հաց եմ թըխել, բոզ ա,
Ընկավ թընդիրը, թոզ ա.
Ելնեմ, կայնեմ հարցընեմ՝
Ծարաբ իմ յարը հո՞ս ա:

ԱԴ 162

68

Ճամբա յեմ գընում, թոզ ա,
Իմ ու քու սիրտը դուզ ա.
Ամեն մի ներս մըտնելիս՝
Լեզուս տամ քեզի մազա:
234. *Իմ յարը շատ դուզուզ ա.*
Ամեն մեկլիս մըտնելիս՝
Լեզուս տամ յարիս մազա:
4. *Լեզուդ տուր ինձի մազա:*

***

Երիվանա ճամբեն թոզ ա,
Տես՝ թալիչու ճամբեն դուզ ա:

69

Բամբակ եմ ցանե(լ) դողա,
Մի յար եմ սիրե(լ) թաղա.
Հին յար, աչքերըդ քոռնա,
Մեկն էլ եմ բըռնե(լ) փեսա:
124. *Բամբակ եմ ցանե խոզան,*
Մի յար եմ բըռնե թաղան...
Մինն էլ բըռնի թաղան:

ՀԺԵ 110

123. *Բամբակ եմ ցանե խոզա...*
Մեկ յար եմ բըռնե թաղա.
Հին յար, աչքերիդ ղուրբան:

70

Մըտանք մաղաղեն, բոլորը բուզ ա,
Հայի սալդաթը թաղավոր կ'ուզա:

ՀԺԵ 114

71

Մեր կալատեղը դուզ ա,
Ձեր կալատեղը դուզ ա.
Վո՞րը կանա ինձի ուզա,
Իմ դին հազար մանեթ դուզ ա:

72

Մեր կալի տեղը փոս ա,
Քար կըթալեմ, կըսոսա.
Իմ դինը հազար մանեթ,—
Վո՞ր կանա ինձի ուզա:

ՀԺԵ 115

73

Մարգարի դուռը դուզ ա,
Աչխեն կայներ Անտոն կ'ուզա.
«Երկու հարուրն ի՞նչ անե,
Իմ հերը շատ բաշլըղ կ'ուզա»:

Խորոտ և Աչխենը,
Կորոտ և Աչխենը:

ՀՄԽԲ 26

74

Հերանցըս դուռը դուզ ա,
Հերըս բաշլուղ շատ կ'ուզա.
Երկու հարուրն ի՞նչ անի,
Գընա հինդ հարուր խոսա:
1. *Հերանցըս դուռը փոս ա:*

***

Տես՝ Հերանցըս դուռը
դուզ և:

75

Թալիչու ճամբեն դուղ ա,
Անտոն կայներ Աշխեն կ'ուզա.
«Ինձ պես տըղեն քեզի հետ,
Ասսված վըկա, լավ կըսաղա»:
Խորոտ ե Աշխենը,
Կոլոտ ե Աշխենը:
ՀՄԽԲ 26

***

Երեվանա ճամբեն թող ա,
Անդրեն կայնե Աշխեն կ'ուզա:
Խորոտ եր մեր Աշխեն,
Կոլոտ եր մեր Աշխեն,
Սիրուն եր մեդ Աշխեն:
ԲՆԱ 566

76

Թըխել ես կարմիր գաթա,
Մի տարի կըտրել վաղա.
Ա՛խ, յես ձեղի ինչ ասեմ,
Սերը մի յաման զատ ա:
Տե 191

34. Իմ սըրտով սիրած յարըս
Աշխարհումը մի հատ ա:

77

Դու ո՞սատ կուզաս, դու Խըլաթա,
Բոլոր երես լըմանի գաթա.
Պադիկ մի տուր, տամ ղոլաթա,—
Կանչիմ՝ յար արի՛, չուտ արի:
ՌՄ 98. Տե 233

78

Դալալ, ո՞սատ կուզաս.— Այար
Խըլաթա:
Պադիկ մի տամ քե, տուր ընձի
ղոլաթա:
ՀԺԵ 56

79

Քեզի կ'ասեն ըռեսի հարս,
Կարմիր երես, արուն կաթաս.
Պադիկ մի տուր, տամ ղոլաթա:
ՔՄՎ 28

80

Մատիս մատնիկ արծաթ ա,
Կերածըս հալալ կաթ ա.
Ցարս, ինձի բան մ'ասա,
Դոստ ու դուշմանըս չատ ա:
ՀԺԵ 114

81

Քարեն պաղ ջուր կըկաթկըթա,
Քեզ տըվել են ինձի բուբա.
Արի ինձ հետ խոսք մին արա,
Աչխարքը թող ասի ատա*) ա:
Տե 227

82

Մինձանես սալիտակ չիթ ա,
Ցես կ'առնեմ, նանըս չի տա.
Աղա, քո հոդուն մեռնեմ,
Ուրիշին իրղար մի' տա:
2. Ցես կ'ուզեմ, աղես չի տա:
12. Կերածըս կարմիր թուբ ա,
Իմ հեր քե աղջիկ չի տա:

83

Աղջի', հագածըդ չիթ ա,
Ցես կ'ուզեմ, հերըդ չի տա.
Աղջի', քու ղադեն առնեմ,
Ուրիշին իրղար մի' տա:
3. Աղջի, քու հոդին կըծեմ:
Տես՝ կերածըս կարմիր
թուբ ա:

84

Կըն-ստիմ, տեղս հարթ ա,
Ջորք կիւսըս դյուլու վարդ ա.
Քյըեցեք ըսեցեք են տղեն,
Վըեր դյուշմանըդ տանա մարդ ա:
ԱԺԸ 26

«Կըն-ստեմ, տեղս հարթ ա,
Ջորք կուսս (կողմս) դյուլ ու վարդ
ա.
Գնացեք ասացեք են տղին,
Վոր դուշմանդ տանու մարդ ա»:

*) Արտասանվում և «սուբ»:

85

Աղջի՛, անունըդ Մարթա,
Ցես դիր գըրեմ, դու կարդա.
Քու խոսքերըդ ինձ համար՝
Ամեն մինը մի զարդ ա:
ԱԺԼ 41

86

Ջաղացիս դուռը տարթ ա,
կըտուրըն լիքը մարդ ա.
Հըրես եկավ իմ յարը,
Գոտիկը լիքը վարդ ա:
ՌՄ 126. Ան 201. ԲՍ 145

13. Ջաղացի դուռը տարթ ա.
Հորես եկավ իմ յարը:
ՔՀ 163

3. Հըրեն եկավ իմ յարը:
ՏԽ 144

34. Ցարըս բաղեն է գալի,
Ցայլուխը լիքը վարդ ա:
ԱԳ 261

12. Ջաղացիս մեջը մարդ ա,
կըտուրը լիքը տարթ ա:
ԱԳ 262

2. Հըրես եկավ իմ աղբեր:
ԱԺԱ 59

Ճըղացեն տոռնը տարթ ա,
կըտերը լիքյը մարթ ա.
Ցարըս կյամա հըռնացե,
Ծեռքենը փոնջ վարթ ա:
ԱԺԸ 31

Ելա տանիք, լիք մարդ եր,
Մարաք ըլմեն հարդ եր.
Են ղեհեն յարըս եկավ,
Տեսա՝ գոտին լիք վարդ եր:
Ան 195

Ցար ջան, ջաղցի կտուրը տարթ եր,
Գոտիկըս լիքը վարդ եր.
Թելիկ-մելիկ աղբերըս,
Գոտիկըս շարած վարդ եր:
ՀԺՆ 117

87

Ջաղացիս դուռը տարթ ե,
կըտուրը լիքը մարդ ե.
Աստված սիրող բան չասե,
Ուզածըս տըղամարդ ե:
ԱԳ 98

88

Ջուրն իր ճամբով կերթա,
Ցողածը վարդի թերթ ա.
Ինձ սիրող կըտրիճ տըղեն
Հաղարի մեջ մի թերդ ա:
ՀՄԻՍ 41

234. Ցարըս ինձ համար քերդ ա,
Ինձ սիրող չիվան տըղեն
Թոքունի մեջ մի մարդ ա:
ՏԽ 171

Գուճուր տավով ջուր կ'երթա,
Տես՝ ես առուն ջուր ա գընում:

89

Ամպել ա բուքա-բուքա,
Ըռանդ-ըռուշըդ մուք ա.
Երդում-կըրակն էլ ընկնես,
Խոսքերըդ քո՛մմա սուտ ա:
3. Վորտեղ կայնես դյալջում:

90

Ամպել ա բուքա-բուքա,
Աչխարքի վերջը փուտ ա.
Թող իմ սիրածն ինձի տան,
Բիրադի ասեն՝ սուտ ա:
ՏԽ 252

Տես՝ Ամպել ե, երկինք մուք ե:

91

Ամպել ա բուքա-բուքա,
Իմ կերած կարմիր թուք ա.
Ցես ու դու իրար սիրենք,
Թող գեղով ասեն՝ սուտ ա:
Ան 195

***

1—4. Ամպել ա բուքա-բուքա,
Բո կերած կարմիր թուք ա:
ԾՎ 52

92

Ամպել ա բուքա–բուքա,
Կերածըդ կարմիր թուք ա.
Են խաղ ասող աղջիկը
Բըռնել եմ ինձի բուքա:

ԱԴ 174.

***

Ամպել ա հուդա–հուդա,
Ձեռացըդ կարմիր թուք ա:
Են ալ ֆասով աղջիկը
Ինձի տըվել են բուդա:

ԱԴ 169

93

Ամպել ա բուքա–բուքա,
Ջո կերած կարմիր թուք ա.
Ցես սիրեցի, քե ասի,
Թող աշխարհն ասի՝ սուտ ա:

ՎԺԵԱ 5

94

Մինթանեդ բուքա–բուքա,
Մեջքիդ ա բալաք ֆուքա.
Սիրել ենք, իրար կ'առնենք,
Թող գեղով ասեն սուտ ա:
34. Ցես քեզի վոր սիրել եմ,
Գեղով թող ասեն՝ սուտ ա:
34. Ցես դու իրար սիրեցինք,
Թող աշխարհ ասի՝ սուտ ա:
1—4... Բալաք ֆուքա,
Ցես սիրեցի, աշխարհ կասի՝
սուտ ա:

ՀԺԵ 62

95

Ամպերն եղեր բուքա–բուքա,
Ջուրն կապեր բալաք փուքա.
Ցես քեզ սիրեմ, թող ըսեն՝ սուտ ա:

ՔՀ 175

Կայներ ես բուքա–բուքա,
Մեջքըդ կապեր բալաք ֆուքա,
Քեզի սիրենք, չըսեն՝ սուտ ա:

ԱՀ 442

96

Ամպը քըցել ա բուքա,
Կերածըդ կարմիր թուք ա.
Ղալամքաշ աչք ու ունքըդ
Կոտրած սըրտի ուռուդ ա:

ՏԽ 205

97

Կերածըս կարմիր թուք ա,
Ինձ տըվել են քեզ բուքա.
Ցար չան, քո հոգուդ մատաղ,
Ուրիշին իրդար մի՛ տա:

ՏԽ 214

3. Ադա, քո հոգուն մատաղ:

ՌՄ 131. ԱԴ 174

Տես՝ Մինթանես սիպտակ
չիք ա:

4. Բոլոր ատածըդ սուտ ա:

98

Կերածըս կարմիր թուք ա,
Ցարիս աչքը կապուտ ա.
Աղջի՛, արի փախցընեմ,
Թող դեղով ասեն՝ սուտ ա:

99

Ամպել ա, յերկինք մուք ա,
Կերածըդ կանաչ թուք ա.
Ա՛յ, դու ինձի խաբում ես,
Խոսքըդ ինձ ի՞նչ ոգուտ ա:

100

Ամպերն ելան ֆուքա–ֆուքա,
Մեջքս եմ զարկեր կանաչ ֆուքա.
Գլուխս եմ դրեր ֆինո ֆասեր,
Մատաղ եմ արեր,—կ'երևա՝ սուտ
ա:

ՀԺԵ 100

101

Գիշեր մուք ա, սարեր մըժ ա,
Երկիր ունիմ, մատղաշ ճիժ ա.
Գիշեր չուր լուս կըվըժվըժա,
Մարդու ականջ կըդըժդըժա:

ՀՄԽԲ 31

1—4· Ելա գեղում, սարեր մըժ ա,
Երիկ մ'ունիմ, քորիս ճիժ ա,
Գիշեր չուր լուս կըվըժվըժա:

102

Շըրաքն ելեր կըհիա,
Աչվընները կըպըրպըրա·
Երթամ քունը մոռննամ,
Կըվախնամ ելնա գըժա:
ՀՀ 323

103

Մինթանեղ ալ ա,
Ախները շալ ա·
Մատներըդ բարակ,
Մաչինու կար ա:
1· Գոդնոցդ ղուշնի յա:
ԱՒ 336

104

Աչքեր ունիս փիլա,
Թըշերըդ վարմիր լալա·
Մեր տունը յերբոր հարս դաս,
Գըլխիդ կըքըցենք վալա:
Տի 199

105

Վարագա սար բացվիե լալա,
Եղունիկ բերի չուխտըմ բալա·
Մեկն ի ասլան, մեկն ի կաճկան,
Քանց մեկըդմեկ են անմըման:
ՎՄ 38

***

1—4· Վարագա բացվիե լալա,
Եղունիկ բերե չուխտ մը բալա:
Պվ 127

106

Բոյդ ի յատամի, երեսդ ի լալա,
Ունչըդ ի, խելքդ ի շատ լավ ուալա,
Խըղճուկ եմ, մի' բերիր գըլխուս ի բալա:
ՀՀ 325

107

Գարնան բացվեց նոր լալա,
Ունամար բերեց չուխտ բալա·
Ալչքըդ լուս, հաչի աղա,
Թոռներուդ հալավ արա:
(Ամբողջ յերդ) ՀՄԽԲ 28

***

Թազա յափուն բացվե լալա,
Ունամար բերեր չուխտըմ բալա·
Ատուլած սիրես, Սահակ աղա,
Բալաքաեբացդ հալավ արա:
ՔՄվ 33

108

Դոշիդ վըրեն չուխտակ խալ ա,
Գըլխիդ քըցել ես ալ վալա,
Ճամբեդ մըտիկ տալով հալա:
Տի 166

109

Թոն կուդա կայլկալա,
Բոյիդ մեռնիմ, Մարգարա·
Սալմա կոճակ եմ չարել,
Քեղնից լալն եմ ճարել:
Ան 203

110

Քոչեր եկավ, անցավ ճալա,
Ճերմակ ճակատ, կարմիր վալա,
Քու սեր քաչելով հալա:
3· Քու սեր քաչեմ, հալա մալա:
ՋՔ 20

111

Մաչքըդ պերակ* չըմալ ա,
Կոժըդ** ծանդըր՝ ճըմալ ա·
Քու ալադյոզ աչքերըդ
Իմ արուներս խըմալ ա***:
ԱՒ 112

* Մեչքդ բարակ.** կուժդ.
*** խմել է:

112

Քու հազած գեյրեն ալ ա,
Ճակտիդ ի չուխտ մի խալ ա·
Աղչի', սեղան մի' կապա,
Քու յարըն չատ բեհալ ա:
Ան 196

113

Աչքերըդ չատ չալ չալ ա,
Ամեն թըշիդ մի խալ ա.
Ախ, են որը յո՛րը կըդա,
Գըլխիդ քըցեմ ալ վալա:
ՏՄ 156

4. Գըլխիդ դըցես ալ վալա:
ԲՍ 130

114

Տեղ եմ քըցել ալ վալա,
Երկու թըշերիս խալ ա.
Ցես են տըղին չեմ ուզում,
Ել ես ի՞նչ ղալմաղալ ա:

115

Ընընեցես յըղրկալալ ա,
Վըհչխաբըս կըղրկալալ ա.
Եսա կյամ ա իմ յարը,
Բեղերը չըղրկալալ ա:
ԱԺԼ 48

«Ինոցիս յեղակալել ա,
Վոչխաբս կեղտակալել ա.
Ես ա գալիս ա իմ յարը,
Բեղերը չաղակալել ա»:

116

Սարը ձյունը կալել ա,
Անձրև արել, հալել ա.
Ախաբար տարեք իմ նանին,
Սիրտըս վարամ կալել ա:
ԱԸ 143

117

Սարերը ձյուն կալել ա
Աբև արել, հալել ա.
Զալում դյանչեցի աղչիկ,
Դարդերն ինձ կալել ա:
ԱԳ 268. ԲՍ 138

34. Վոր դու ըտեննց բեքեվի ես,
Դարդերըդ ինձ կալել ա:
ԱԺԹ 87

118

Զյուն ա եկել, հալել ա,
Լըցվել դյոլը, սառել ա.
Եդ ելողլոս դեշ խոսքը
Ինձ մոմի պես վառել ա:
ԲՍ 126

123. Ձինը եկել, հալել ա,
Լըցվել փոսեր, սառել ա.
Եդ դուշմանի ոտա խոսքը:
284. Փոսն ա դառել, սառել ա,
Եդ քոռ բըռնած բաները
Ինձ մոմի պես հալել ա:
ԱԺԱ 56

119

Արփաչայը ելել ա,
Ցարըս դուռը կայնել ա.
Ինձի աչքով անում ա,
Սիրտ ու հոգիս հանում ա:
4. Սիրտըս հոգիս մաշում ա:
ԱԴ 163

120

Լուսաս աստղըն ելել է,
Նանի, յարըս քընել է,
Ջընել է, քըրտընել է:
ՀԺԵ 119

121

Կողբա բերդը բըլեր ա,
Ցարըս տակին քըներ ա.
Ձեն տըվի, ձենըս չառավ,
Մեգեր թարկըս տըվե՛ր ա:
ՀԺԵ 122

124. Կողբա քարեր ճըղվել ա,
Ցարըս մինչին քընել ա...
Ինձանից խըռովել ա:

***

Սարի ուսին բըլեր եր,
Ցարըս տակին քըներ եր.
Ջըներ եր, քըրտըներ եր,
Վախենամ, թարկըս տըվեր եր:
ՀԺԵ 97

***

Ղարսա բերդը պըլել է,
Իմ յարս մեջը քընել է.
Ձեն տըվի, ձենս չառավ,
Մեգար ինձմե ջորե՛ր է:
ԱԸ 132

124· Կանա յայլեն փըլեր եր,
Ճարըս տակը քըներ եր·
Մեզեր ինձեն ջորի՞ր եր։
ՆՀՋ 87

Կանա յայլան փըլեր ե,
Ճարըս մեջը քըներ ե·
Ձայն կուտամ, ձայն չհանե,
Մեղար ինձեն ջորի՞ր ե։
ՀԺԵ 83

124· Կողբա պատեր դըրած եր,
Ճերըս տակին քընած եր·
Ճարաք ինձնեն չորված եր։

122

Աղվես դարը պըլել ա,
Ճերըս տակը քընել ա·
Ձեն տըվի, ձենըս չառավ,
Եղ ի՞նչ անուշ քընել ա։
ԱԲ 342

***

Աղվես դարը փլեր ա,
Ա՛յ սար ու սեյրան,
Ճարս տակը քներ ա·
Ճարալո ջեյրան։
ԿԺԵ 50

***

Ջեռնակա բերդն եր փըլեր,
Ճարիկս ի տակն եր քըներ·
Ջըներ եր ու քըրտըներ,
Հիալով եր, ախ կ՛եներ։
ՀՀ 321

124· Ղարսա բերդը փըլած ա,
Ճարըս տակը քընած ա·
Ես ի՞նչ անուշ քընած ա։
4· Եղ ի՞նչ քաղցըր քընած ա։

123

Ղարսա բերդը փըլել ա,
Ճարըս տակին քընել ա·
Աղբեր, ոզնուքյուն հասիր,
Իմ որը խավարել ա։
ԲՄ 142

124

Քաղքի ուսին փըլեր եր,
Իմ յարիկ տակ քներ եր,
Ջըներ եր, քըրտըներ եր,
Քանց քաֆուր վարդ փըթըթեր եր։
ՎՍԲ 57

124· Ղարսա բերդը բըլեր եր,
Ճարըս տակը քըներ եր·
Վարդն երեսին թըխռեր եր։
ՀԺԵ 139

125

Բախտն ինձանից փախել ա,
Դուռն իմ դեմըս ախել ա·
Սկըզդ քաշել ինձ տարել,
Բարձըր ծառից կախել ա։
ՏԽ 207

126

Իմ նան ինձի թակել եր,
Դուռն երեսիս փակել եր·
Երնեկ ավղանին մեռնեյի,
Մարիկիս մըտեն ելնեյի։
ՀԺԵ 116
Տես՝ Մերս ինձի բերել ա։

127

Նանեն ինձի թակել ե,
Դուռն երեսիս փակել ե·
Ճես նանիցս ջորել եմ,
Դիար ղուրպատ կորել եմ։
ԱԴ 175
34· Դիար դիար կորել եմ,
Ճարոջմենեն ջորել եմ։
Նանես ինձի տըփել ե,
Դուռը վըրես խըփել ե·
Ճես նանեես ջորեր եմ,
Դիար դիար կորեր եմ։
ԱԳ 98

128

Մաղկեվանքը ծաղկել ա,
Մամեր գըլխիս թաղքել ա·
Ախաբար տարեք իմ նանիս,
Սկըրն ինձի հաղթել ա։
ԺԽ 58

12· Փըշատի ծառ ծաղկել ա,
Մաղերս դըլխիս թաղքել ա:

***

1—4· Ծաղկավանքը ծաղկեր ա,
Ծամեր դըլխիդ թաղքեր ա:
ՓՇ 74

129

Ծառիս ծերը ծաղկել ա,
Մազիս ծերը թաղքել ա.
Վախում եմ դարիը եթամ,
Ղարիբություն հաղթել ա:

130

Մէրանի ծառ ծաղկել ա,
Թուխ մազերըս թաղքել ա.
Թուղթ ուղարկեք աղբորըս,
Ժամանակը վրախվել ա:

131

Ալուչի ծառ ծաղկեր եր,
Մայրամը տակ պառկեր եր.
Ալուչի ծառ կոճկեր եր,
Մայրամու փոր տըճկեր եր:
ՎԺԵՒ 16
Մայրամի յերդից (դյոնդ). Տես նաև ԿՄՎ 127 հտ.

132

Հաղկալ ա, հաղկալ*) ա,
Բաքվա չհարը ծաղկալ**) ա.
Ին տղին***) ըսեցեք՝ կյա,
Դիւքյան բաղար սարքալ**) ա:
ԱԺԸ 28
*) Հաղկել ա**) Ծաղկել ա. Սարքել ա. ***) Տղին դա:

133

Արև նոր ա ծեղկեր ա,
Ցարըս ծաղիկ ղըրկեր ա:
Կայներ ես մահլի վերեվ,
Վի՞ր հետ ղըրկեմ իմ բարեվ:
ԱՀ 439· ԺՒ 23
Տես՝ Հենց վոր ծագի արևը:

***

Ղարսա ջուրը պաղել ա,
Տես՝ Կողբա ջուրը սառել ա:

134

Գեղի բոլոր կըծղել ե,
Մեջը վարդով լըցվել ե:
Խաբար տարեք իմ նանին,
Բաղեն դարդով լըցվել ե:

135

Հոռոմ, հոռոմ, հոռոմել ա յարըս,
Վարդը ճեռին Թոռոմել ա յարըս:
(Կրկնակ)

136

Իմ յարը դուռ քըներ եր,
Փակվաղը ծուռ դըրեր եր.
Հաղչին յարը տուն դարճավ,
Իմ յարը ճորեն անցավ:
ԱԳ 94

137

Ցար, յար, յարըս քըներ ա,
Հով ծառի տակ քընտըներ ա.
Հով, հով, հովը քըներ ա,
Հունճ ա անում, բեզդեր ա:

***

Ժամի դուռը թխկնել ա,
Տես՝ Այ յար, այ յար, կռնել ես:

138

Իմ աղջիկը կըռնել ա,
Վարդը ճեռին բըռնել ա.
Ամեն ծառին մի փըչատ,
Իմ աղջկա ումբրը չատ:
ԱԺԱ 41

Տես՝ Ալուր մաղեմ, թեսի կուզա:

***

Աղիզ յարըս կըռնալ ա,
Գյուլն ըրեսեն փռնալ ա.
Ամեն ծառա մին փըշաղ,
Խելունք սրղեն ումբրը չատ:
ԱԺԼ 41

139

Ցես մի ղարիբ ղուշ ելա,
Ջալում մարդի թուշ ելա.
Ջունքի ինճի սիրեցիր,
Ղումսուքյունը թարկ արա։

140

Ցոնջեքը կանանչել ա,
Ցարըս ինճ հանանչել ա.
Աթ, թե մի պաչ առնեմ,
Աղջիկըն ամանչել ա։
1. Ծառերը կանանչել ա։

***

Ցոնջեն նոր ա կանաչել,
Աղջիկ տըղեն ճանաչել.
Աղջըկան բան մի՛ ասեք,
Աղջիկըն ա ամաչել։

141

Ալադյազ սարն ամպել ա,
Աղբեր իր ձին թամբել ա.
Ցարոջ դըռնեն անցել ա,
Ելե դաշտը խաղցել ա։
Անճրեվ զարկե, թըրջել ա.
Արեվ զարկե, չորցել ա,
Քան քաֆուր վարդ բացվել ա։
ՀՄԻՄ. 11

***

1—8. Դալու բաբեն ամպեր ա,
Աղբեր իր ձին թամքեր ա,
Ելի մեյդան խաղցեր ա,
Անճրեվն եկի, թըրջեր ա,
Արեվն զարկե, չորցել ա,
Ջյաֆուր վարդից բացվեր ա։
ՓՇ 72

***

1—8. Դալու բաբեն ամպել ե,
Շեկ յարը ձին թամքել ե,
Հեծի, ջիրիդ խաղցել ե,
Անճրեվ եկի, թացվել ե։
ԱՀ 133

***

1—8. Դալու բաբեն ամպեր ա,
Ջրչեր, մեյդան անցեր ա,
Անճրեվ եկեր, թըրջեր ա,
Արեվ զարկեր, չորցեր ա,
Ջանց քաֆուր վարդ բացվեր ա։
ԱՀ 447

***

1—8. Արտասրա սար ամպեր ա,
Սեվ լաճ ուր (իր) ձին թամքեր ա,
Մեջ հեծելին կայներ ա,
Հեծել կուտոր արեր ա։
ՀԺԵ 86

***

1—8. Ալադյազը ամպել ա,
Գրիդոր ձինը թամքեր ա։
ՀԺԵ 116

***

1—8. Ադռա վերա ամպեր ա,
Իմ աղբեր իր ձին թամքեր ա,
Գացեր մեյդան կըռվեր ա,
Անճրեվ եկեր, թըրջեր ա,
Արեվ առեր, չորցեր ա,
Ջանց քաֆուր վարդ բացվեր ա։
ՀԺԵ 122

***

1—8. Թամյանց սարեր ամպեր ա,
Աղբերըս ձին թամքեր ա,
Գնացեր մեյդան, խաղցեր ա,
Անճրեվ եկեր, թըրջեր ա,
Քրներ ա, քըրտըներ ա,
Վարդն երեսին փըռվեր ա։
ՀԺԵ 129

Հմմտ. Ջաղքի ուսին փըլեր եր։
Հմմտ. Կես դիշերին դուրս ելա։

142

Ցարոջ դըռնով անցա յես,
Անճրեվ եկավ, թացվա յես,
Արեվ զարկավ, թըփռա յես,
Ջանց կարմիր վարդ բացվա յես։
ՀՀ 321

Հմմտ. Գիշեր խաղցա, պուռա ելա։

143

Կողբա յեռեվն ամպել ա,
Թուխով ոսկին բանդել ա.
Մեռնիմ աղավ ղըլըղիդ,
Ղըլըղըդ կեղտոտել ա:
ԱԴ 161

124. Պատին եռևն ամպեր եր,
Թուխով ոսկին բընդեր եր...
Ղըլըղըդ կեղտոտեր եր:
ԱԴ 97

144

Կողբա յեռեվ ամպել ե,
Թուխով ոսկին բանդել ե,
Քուրը մեռնի են աղբոր,
Ալ ձին տակը թամքած ա:
Ա.Ե 202

145

Որ գետը ծով գառել ա
Ինճ-ել հետը տարել ա.
Ախեղճ աղջիկն եննպես գիտի,
Սիրտս իրենից սառել ա:
ՀՄԽԱ 35

13. Որ գետը վարարել ա,
Ախեղճ տըղեն եննպես գիտի:
ՏԽ 138

Տես՝ Մեր գետը վարարել ա:

146

Ջուրը ջըրին առել ա,
Մատրա գլամ տարել ա.
Են Թուխ բեղավոր տըղեն
Ուշն ու միտքըս տարել ա:
Ա.Ջ 375

Տես՝ «Սառել ա» շարքը:

147

Ջյունն եկել, դուռն առել ա,
Կեսրայս պարտքով մեռել ա.
Ճես պըստիկ, յարըս պըստիկ,
Դարդը մեղի տարել ա:
ԺԽ 6

234. Կեսուրս պարտքով մեռել ա.
Ճես պուճուր, յարըս պուճուր,
Միտքը մեզի տարել ա:
124. Ջյունն եկավ, գետինն առավ,
Կեսրարըս պարտքով մեռավ...
Հոգսը միտքը մեզ տարավ:
ՀՄԽԲ 10

***

Ջյունն եկել, դուռըն առել,
Աբեվն ա տեսել, հալել.
Ճես ջահել, յարըս ջահել,
Դարդն ա մեզի տարել:

148

Դըբըրղեն տակը սառալ ա,
Մանուշըս սառնը տարալ ա.
Ընդըղավ մին տըղա քյընեց,
Ոչ ու մրեսքս տարալ ա:
Ա.ԺԼ 45

«Դարբաղին տակը սառել ա,
Մանուշըս սառնը տարել ա.
Են տեղով մի տղա գնաց,
Ուշ ու միտքս տարել ա»:

13. Ըխպրեն հըղեն սառալ ա.
Սըեվ տըղա, կարմիր յեխան:
Ա.ԺԼ 45

3. Թոխ չոխա, կարմիր, յեխա:
Ա.ԺԼ 45

«Աղբըր ուղին սառել ա.
Սեվ տըղա, կարմիր յախան:
Թուխ չուխա, կարմիր յախա»:

***

Դարվազին տակը սառալ ա,
Մանուշըս ղալամ տարալ ա.
Թուխ յախալոր, բոզ չուխալոր,
Ոչըս խելքըս տարալ ա:
Ա.Դ 115

149

Աբիա-չայը սառել ա,
Նազոս ծառին թառել ա.
Ճարիս չեկիվիկ մալերը
Ախլքըս գըլխես առել ա:
ՏԽ 206

150

Զըկնու ծովը սառել ա,
Զուկը տակը կալել ա.
Թուխ փափախ, սպիտակ ճակատ
Ցարի խելքը տարել ա:
Ա.Զ 38

151

Կողբա ջուրը սառել ա,
Քու աֆքյարդ ինձ առել ա.
Են չեկ–բեղավոր տըղեն
Խելքըս գըլխես տարել ա:
Տ/ծ 253

***

Ղարսա ջուրը պաղել ա,
Ղամեն ձեռըս տարել ա.
Են չեկ բեղավոր տըղեն
Խելք ու միտքըս տարել ա:
Ա.Բ 341

***

Կանանչ ջուրը սառեր եր,
Ձեռքըս ղաման տարեր եր.
Պարին միջի չեկ տըղան
Խելքըս գըլխես տարեր եր:
Ջ.Բ 20

123· Ձայի ջուրը սառել ա,
Խանչալ ձեռքըս տարել ա.
Եղ թուխ ու խումար տըղեն:
13· Ղոչա ջուրը սառել ա.
Թուխ բեղավոր չան տըղեն:
3· Շեկ մազավոր լավ տղեն:

***

Լոռվա ջուրը սառել ա,
Ղամչին կուռըս տարել ա.
Քաֆքլիկ ու թանթլիկ տըղեն
Ուշք ու միտքըս տարել ա:
Ա.Ժ.Ա. 54

152

Սարի ջուրը սառել ա,
Ղամեն ձեռըս տարել ա.
Բաղի միջի չեկ աղջիկ
Ուշքըս միտքըս տարել ա:
Հ.Ծ.Ե 114

134· Կողբա ջուրը սառել ե...
Եղ չեկ մազավոր աղջիկ
Խելքըս գըլխես առել ե:
Ռ.Մ 129

***

Ղարսա ջուրը սառեր եր,
Ղամեն բուռըս տարեր եր.
Շեկիկ ծամերով աղջիկ
Խելք ու միտքըս առեր եր:
Ն.Հ.Զ 88

153

Գետան ջուրը սառել ա,
Խանչալ բուռըս տարել ա.
Գընացեք ասեք են յարին՝
Սիրտըս քեզնով վառել ա:

154

Ջամին մեջքըս առել ա,
Ղումաշի պես տարել ա.
Ջո մոր Թահնա խոսքերը
Ջո՛մմա սըրտիս առել ա:

155

Ջրտինք մեջքիս սառել ա,
Մաճը բուռս տարել ա.
Են չեկ ծամերով աղջիկ,
Ուշ ու միտք առել ա:

***

Ջըրի ճամբեն սառել ա,
Մաճը բուռըս տարել ա.
Կաքավպոչիկ Թուխ տըղա
Ուշ ու խելքըս տարել ա:
Ա.Ը 142

***

Ղըլեն հըղեն սառալ ա,
Մանները չուչա տարալ ա.
Կյարմուր յախա, Թոխ չոխա
Ոչըս խելքըս տարալ ա:
Ա.Ի 113

123· Ըխպըրին հըղեն սառալ ա,
Մաննըս ղալամ տարալ ա,
Են Թոխ չուխա, կարմիր
յեխան:
Ա.Ժ.Լ 45 հտ.

***

Ճըրին հըղեն սառալ ա,
Աչքի կոռնըս տարալ ա,
Են քյաքյլիդյ պոչիդյ տըղան
Ոչըս մըտաքըս տարալ ա:
ԱԺԼ 31

23· Մաչի մաննըս ասեղ
տարալ ա.
Ամեն մին յարըս տըրանալավ:
«Ջրի ուղին սառել է,
Ալու կուռըս տարել է.
Են քանքլիկ պոչիկ տղան
Ուչըս միտքըս տարել է»:
23· «Միչի մատս ասեղ տարել է
Ամեն յարըս տեսնելով»:

156

Բուխարիկը վառել ա,
Աֆքյարըդ ինճի առել ա.
Ջանի վոր քեզ սիրել եմ,
Ուչ ու միտքըս դառել ա:
ՏԽ 148· ԲՍ 141

157

Վարդավառը հասել ա,
Բան ու գործըս թարսել ա.
Թե սիրել ես, ջուր չաղ տուր,—
Կըրակըս թեժացել ա:
ԲՍ 136

158

Ասա եմ արել, հասել ա,
Ղարղուս միչին բուսել ա.
Ինաբար արեք իմ յարին,
Իմ ու քո վախտ հասել ա:

159

Գիչերը ղալդա, դուս ելա,
Թուխ ամպ անուշ կըցոլա.
Ցոլա, ցոլաբուդ հայրան.
Կըցոլեր Հալվա սարին,
Շատ բարև հեռու յարին,
Ջիչ բարև մոտիկ յարին:
Ա՛Ե 192
Հմմտ. Մազեր ունիմ իլվանի:

***

Գիչերս է յես դուրս ելա,
Թուխ ամպն անուշ կըցոլեր.
Դե՛ ցոլա՛, ցոլա, ցոլա.
Դե՛ ցոլա՛ Հալվա սարին.
Ցոլա՛, ցոլալուդ ղուրբան,
Փելա՛, փելալուդ հայրան:
ՀԺԵ 138

***

Գիչերվորե դուս ելա,
Թուխ ամպ անուշ կըցոլեր.
Ցոլա՛, ցոլալուդ ղուլ եմ,
Սարերու դաստաքյուլ եմ:
Ա՛Ե 189

***

Լուսնյակ գիչեր դուրս ելա,
Կըչեռք անուշ կըցոլա.
Թող ցոլա Ալվան սարին,
Բարեվ տուր բեքախտ յարին:
Ա՛Ե 203

Աստըղն անուշ կըցոլա,
Կըցոլա Հալվա սարին,
Շատ բարեվ ղարիբ յարին:
Ա՛Ե 194

Գիչերը դուս ելա,
Լուսնյակն անուշ կըցոլա.
Կըցոլա Ալմա սարին,
Լավ բարեվ անուշ յարին:
ՀԺԵ 125

Այս գիչեր յես դուրս ելա,
Լուսինն անուշ կըցոլա.
Կըցոլա Հալվա սարին.
Կըկաթե մառմառ քարին:
Ա՛Ը 136

***

Ես գիչեր յես դուրս ելա,
Լուսինն անուշ կըցոլա.
Թող ցոլա Ալվան սարին,
Բարեվ տա Նազլու (Լեյլու)
յարին:

34· Ցոլա դու Հալվա սարին,
Բարեվ տուր անուշ յարին:
4· Շատ բարեվ տար իմ յարին:

160

Գիշեր խալըա, դուս ելա,
Լուսնակ անուշ կըցոլար:
— Լուսնակ, ղուրբան ո՞ւր
կ'երթաս:
— Կ'երթամ վըր Հըլպը սարուն:
— Կ'երթաս վըր Հըլպը սարուն,
Մեր խաբրիկ տանես յարուն:

Ձեռագիր ժող· Ճեղիազար Կարապետյանի, Թալինի Իրինդ գյուղ 5/II 1928·

Գիշեր խալըա, դուս ելա,
Թուխ ամպ անուշ կըցոլա·
Աչնան գիշեր, հով գիշեր,
Շաղն իջե, գետին նըխշեր:
Ման չիմ· «Լուսնա՛կ, ո՞ւր
կ'երթաս:

— Կ'երթամ գիշրիկն ու ցերեկ,
Կ'երթամ վըր Ալու սարին:
— Շատ բարև խորոտ յարին:

ՀԺԵ 93

161

— Լուսնա՛կ, լուսնա՛կ, ո՞ւր
կ'երթաս:
— Կ'երթամ հետ Հալվա սարուն:
Ծարուկ բախչեն խորունկ քուն·
Ջրներ եր, քըրտրներ եր·
Պաղուկ եր, կարմըրուկ եր·
Սիրուկ եր, զարդըրուկ եր,
Վարդն երեսին փըռուկ եր,
Վախենամ՝ խըռովուկ եր:

ԲՆԱ 313

Հմմտ· Ջատու յեմ եկէ, եկեք
եմ քեզ տես:

162

— Լուսին, իմ հովան լուսին,
Ո՞ւր կ'երթաս:— Հալվա սարին:
Լուսնակ՝ գիշեր անահուն,
Ջաւխ աշուն ու գարուն:
Լուսնակն ի բակն եր իջեր,
Բակն արեվով եր լըցվեր·
Լուսնակն եր սարու ոլոր,
Հըմ խորոտիկ, հեմ բոլոր:
Ծարուկ բաղչեն խորունկ քուն
Պուրսայու բարձ տակ դըլխուն,
Ծիծ ու ծոց դեմ ասաղնուն,
Լուսնակ բերի անուշ քուն:

ԲՆԲ 237

1–12· Գիշերըս յես դուրս ելա,
Ջո սիրուն հիվանդ ընկա·
Լուսնակն ի բակ իջեր եր,
Բակ չողերով լըցեր եր:

ՀՀ 312

***

1–12· Ելավ ուըր Հըլպու
սարուն,
Կուլեր գաշուն ու զգարուն:

ԲՆԳ 121

Տես՝ Հընչիւ երբ ըսինք գետ
բան...

163

Գիշրիկս ի յես դուրս ելա,
Թուխ ամպ անուշ կըցոլեր·
Կըցոլեր Հալվա սարուն,
Շատ բարև հետուն յարուն:
Ծարուկն եր բաղչեն ի քուն,
Բուրսայու բարձեր դըլխուն·
Ջրնուկ եր, քըրտնուկ եր,
Կըզա ֆեխ պաղիկ մ'առնենք,
Դըլորա ու զրնդան ընկա:
Են զրնդան, ի՛նչ մեծ զրնդան,
Մեջ վարդ եր, բոլոր ռեհան·
Հուսկ սուրբ Սարգիսն երի,
Եկավ ու զրնգի հանեց:

ԱՋ 72

Տես՝ «Ցարըս բաղչեն քընուկ ա։
Տես՝ «Ցարուկ բաղչեն խորունկ քուն»։

164

Գիշեր խալըա, դուս ելա,
Բոբիկ հետիկ մի դըտա.
Առա հետիկն ու դացի,
Դացի բաղչեն դուս ելա.
Խորոտիկ մեջ քըներ եր,
Ջրներ եր, քըտրներ եր.
Իմա թե պտղիկ մ'առնենք,
Լսեց. «Տըղա՛, բեւխախտ ես»։

ՀԺԵ 93

165

Ցես գիշերս ի դուս ելա,
Թաթախ ձընիկ թալեր եր.
Բոբիկ հետիկ դացեր եր.
Բըռնի հետիկն ու դացի
Իմ յար մեջն եր, չըտեսի։
Դացի, դացի, ղընդիկ բաց.
Մըտա՝ առնենք թաժա հաց,
Անտեր թուլեն ղիս իխած։

ՀԺԵ 138

Տես՝ Պրծա, տարեն եկա ցած։

166

Գիշերը հաղյան դիւս եըտմ,
Մորմորիկ ձյուն մ'ել եկավ.
Մե բոբիկ խետ մ'ել գնաց.
Ընկատմ խաթաճ.
Ինետ են խետին.գնացիմ,
Գնացիմ, խառամ յարոց դիւս.
Դիւս բացիմ, երիչկացիմ,
Ցար տուն չեր, ներստամ լացիմ։

ՔՄՎ 36

***

1–8. Շաղ թաւիեր գետին հալեր,
Բոբիկ հետիկն եր կորեր.
Առա ղհետիկն ու դացի,
Ցարոջ դուռ հանդրտուցի։

ՀՀ 320

167

Իրիկվորե դուս ելա,
Թաթախ ըմ ճուն եր թալե,
Բոբիկ խետիկ մ'եր գացե։
Ինետ են խետքին դացի,
Գացի բաղչեն իկա։
Բաղչեն եր ազպալվացք,
Սիվտակ լըվացք են երած,
Փողպատ ղալմով են բացած։

ՀԺԵ 97

Հմմտ. Ցար կան, արի ու գնա։

***

Առա չըրկա գետուկ մի,
Ակպա լըվացք են երած,
Պաղչի փըշին են փըռած։
Ոսկին ճակտին են դըրած։

ՀԺԵ 93

***

Լուսնակ գիշեր մ' դուս ելա,
Սեր–սըրիկ լըվացք ըմ տեսա,
Շարե շապկիկ պարղած տեսա,
Ակիկն եը մատնախըրած,
Փողպատը կալամով բացած։
Հարս, հա'ն վիճակն ի բարին։

ՎՍՍ 88

(Վիճակի յերդ)

168

Գիշերվորե դուս ելա,
Թաթախ ձընիկ մ'եր եկե,
Բոբիկ հետիկ մ'եր գացե։
Առա ղեն հետն ու դացի,
Գացի ու բաղչե մ'իկա.
Աղպալըվաց են երե,
Պաղչի փըշին են փըռե.
Ղալմով փողպատ են քաչե,
Աստղուն կռճակ են դըրե։

Ցարիկս ի բաղչան քուն եր,
Ուրֆալի բարճ դըլխուն եր.
Ոչ քուն եր, ոչ արթուն եր։
Բարճի տրկեն հոտ եկավ,
Վերցի տեսա խընճոր մ'եր։

Աղընձորի կես կծուկ եր,
Ձորս կողեն արծթուկ եր:

Բլներ ես, քըրտըններ ես,
Բեր պագեմ, կարմիր երես.
Վախենամ՝ խըռռովեր ես:

Ա.Ե 189

Հմմտ. Բարճ վերուցեմ, հոտ կուգա:

169

Կես գիշերուն դուս ելա,
Մատղաշ ամպիկ մ'եր ելեր,
Թանթաղ ձընիկ մ'եր թալեր,
Բուկիկ հետիկ մ'եր գացե:
Առա զհետիկն ու գացի,
Գացի կայնա գըլխընուն.
Վարդեր փըռուկ եր երեսնուն,
Երկու ծընծի մեջ նըշան կեր:
Ձոքա թե զնըշան պագեք,
Գըլորա, գընդան ինկա:
Կանչի սուրբ ու սըրտեքը.
Մեկիկ չեկավ երեվան:

ԲՆԱ 740

***

Մեր դռսան ի քընե,
Շաղ թալե կարմիր երես.
Կ'ուզեմ դամ պագնեմ,
Կըվախնամ՝ խըռռվես:
Ցաբ հալալ ա,
Ջոջ դաշտերն եր կանաչ մեյդան,
Մեջն եր վարդ, բոլորն թուխ ռեհան:
Ձեռ տարա, տակն կըտրեցի,
Ջարկին վիմ ձեռը կոտրեցին.
Կոտրեցին, գընդան թալեցին,
Մարդ չեկավ ձի տեսություն:

ԲՄՎ 38

***

Ձիկ տարան, են գընդան թալեցին,
Ձընդընի դըռներ վըրես փակեցին.
Բանըս են ձրկան բերան թալցեցին,
Անատակ ծովեր խասուցին:

Թորդեր ես երկու ջուխտ ծամ,
Ջուխտ ծամներ մեջն եր նըշան.
Կըդա թե պագնեմ նըշան,
Գըլորա, ընկա գընդան:
Հըմլա գընդան ո՞վ ե տեսե.
Մեջ վարդ ե, բոլոր ռեհան:
Վոր մեկ սուրբեր կանչի,
Ձեկան խորտան:

Ր.Հ 184

170

Գիշեր խալտա, դուս ելա,
Ջաղջի դըռներով անցա.
Աչձրեվ եկավ, յես սըրկա.
Արեվ առավ, յես չորցա:

Հ.Ժ.Ե 94

Հմմտ. Ալադյազ սարն ամպել ա:

171

Գիշեր մութ ա, դուս ելա,
Ամպել ա լուլա լուլա.
Կըկաթի մարմար քարին,—
Ցարըս ինձ համար կուլա:

***

Գիշեր չատ ա, դուս ելա,
Թուխ ամպն անուշ կըցոլա.
Ցոլա՛, ցոլալուդ մատաղ,—
Ցարիս աչքն ա՝ լացել ա:

234. Թուխ ամպն անուշ կըցողա.
Ցողա՛, ցողալուդ մատաղ,
Ցարիս աչքերն ա՝ կուլա:

***

1–4. Գիշեր դյուրս ելա,
Թուխ ամպն անուշ կըցողեր:

ՎՍՍ 50

***

Ես գիշեր յես դուրս ելա,
Թաթախ ձընիկ թացել ա.
Կըկաթեր մարմար սըրտիս, —
Ցարիս աչքն ա՝ լացել ա:

3. Կըկաթեր մարմար դոշիս:
3. Կըկաթեր մարմար քարին:

ՀՄԽԱ 23. ԺԹ 35

172

Դիշերվան դուս ելա,
Աստղըն անուշ կըցոլա.
Ցոլա՛, ցոլալուդ ղուրբան,
Բարիս աչքն ա՝ կըպըլա։

***

Դիշեր չատ ա, դուրս ելա,
Թուխ ամպ անուշ կու ցոլա.
Ցոլա՛, ցոլալուդ ղուրբան,
Բարիս աչքեր կը պըսա։

Ած 204

173–174

Կես դիշերին դուս ելա,
Բարուլ մեկ քընաւն տեսա.
Քըներ եր, քըրտըներ եր,
Վարդն երեսին փըռվեր եր։

ՀԾԵ 102

Հմմտ. Ալադյալ սարն ամպել ա։

175

Ես դիշեր յես դուրս ելա,
Երկու բալաք բուրլ տեսա,
Ու մեկ սոնա նոր փեսա,
Վոր տուն մեկ վեցկի կուզեր։

ՊՎ 112

176

Եսա դիշեր յես դուրս ելա,
Երկու բալաք բուրլ տեսա.
Մեկ սոնա նոր հարս ու փեսա,
Նոր արև, նոր լուսին մեր գեղի վերա։
Հարս ու փեսին փունջ մանուշակ,
Առլաս լըհեֆ վերեն, տակ դոշակ.
Թող խորովեր սըրտիս կըրակ,
Վոր չերբեցեր ընոնց պըրակ։

ՎՍԲ 45

Այս և նախորդ յերգերը՝ սկսած համար 159–ից («Դիշեր ղալդա, դուս ելա»), հին հայրեննեըի մնացորդներ են)։*

177

Ծիրանի ծառ ծըռվել ա,
Բարըս սալդաթ գըըվել ա.
Բար ջան, սալդաթ մի՛ գնա,
Ջո եղնիկը կը մընա։

178

Արեգակը փըռվել ա,
Ջոլոզ գըլխին ծըռվել ա.
Ուղի քեզ աղբեր կանչի,
Ժամանակը լըրվել ա։

***

Արեվն ելավ, փըռվեցավ,
Ջոլոզ գըլխիս ծըռվեցավ.
Ասի՝ քեզ աղբեր ասեմ,
Ուռուղքյարը ծըռվեցավ։

179

Արևն առի փըռվել ե,
Ալ ֆաս գըլխին ծըռվել ե.
Ովոր առնի իմ սիրած,
Թագը գըլխին չըվելայ։

ԱՀ 138
4. Թագը գլխին չվելե։

***

Մազերըդ ոլորվել ա,
Տ. Մազերըդ ոլորել ա։

180

Աղջի, բախտըդ բացվել ա,
Վախտ ու վազեդ լըցվել ա.
Դու ինձ անտեր մի՛ թողա,
Աղբուխ լացով թացվել ա։

*) Տես. Մ. Աբեղյանի «Հին դուսանական ժողովրդական յերգեր», (Արտատպ. ՀՍԽՀ Պետ. Համալսարանի «Տեղեկագրից» № 2–3. 4 և 6) Ցերեվան 1931, յեր. 248 հտ.։

34· Դու ինձ յեթիմ մի՛ թողա,
Իմ սիրտ դարդով լըցվել ա։

181

Աղջի, բախտըդ բացվել ա,
Սիրտըս արնով լըցվել ա,
Ջանք իմացա, մոտացա,
Դավլան ձեռքես դասցել ա։

182

Բաղչան վարդը բացվել է,
Սիրտըս դարդով լըցվել է.
Գիտամ՝ դաղտուկ սիրեցինք,
Աչխարհքն իմացվել է։

183

Ֆո վարդերը բացվել ա,
Սիրտըս արնով լըցվել ա.
Ուրիշների գեչ խոսքից
Լերդ ու Թոքըս խոցվել ա։

123· Սիրտըս արնով լըցվել ա,
Ֆո դյուլբերդ բացվել ա.
Ելողլու գեչ խոսքերից։
ՏՒ 246

184

Սարի խոտր հատել ա,
Ցեղնինքը նըստոտել ա.
Հրես նկալ իմ յարը,
Ֆյաքյուլը Թողոտել ա։

***

Սարին խոտր հատալ ա,
Գիմչինին նըստոտալ ա.
Զալում դենջեցի աղջիկ,
Ֆաքուլդ Թողոտալ ա։
ԱԴ 114

2· Գոմեչինին նըստոտել ա։

185

Նսոր արեվ պատել է,
Իմ յարն ինձի ատել է.
Ցար, կանչե՛, ձենիդ մեռնեմ,
Մերըս ինձ ազատել է։
ԱՀ 139

186

Ֆաղքես ճամփեն խոտել ա,
Ցեղնեբըդ նոստոտել ա.
Խաբար տարեք իմ նանին,
Մարդերըս մոլլատել ա։
ԱԺՄ 61

187

Ես սարը ծաղկոտել ա,
Ոխարը բրդոտել ա.
Մեռնիմ եղ Թուխ քյաքյուլիդ,
Մեկեր խի՛ խաղքոտել ա։

***

Տումարը ոչոտել եր,
Սարերը ծաղկոտել եր.
Մեռնիմ դաստա քյանքյուլիդ,
Ուդ ինչի՞ ալտոտել եր։
ԱՋ 389

1—4· Սարերը ծաղկոտել եր,
Ոչխարը արկոտել եր։

188

Սարերը ձրնոտեր է,
Ֆյալերը քընոտեր է.
Աղբերըս բաղի մեջը,
Վոտներըդ չաղի մեջը։
ԱՀ 144

***

1—4· Սարերը ձրնոտեր է,
Ֆյալերը քընոտեր է։

Տես՝ Ալ տղա, դու բաղի մեջին։

189

Ծորղանըդ երկարել ա,
Երեսդ, դլուխդ ծածկել ա.
Մի բաց արա, վըր տեսնեմ,
Կըրակը սիրտըս վառել ա։
ԲՍ 131

190

Մեր դեռը վարարել ա,
Սիրտըս հետը տարել ա.
Ինձ պես չոմարդ աղջիկը
Ծաղկի պես սպարել ա:

Տի 175. ԲՄ 153

Ում դեռը վարարել ա,
Տես՝ Ում դեռը ծով դառել ա:

191

Մերըս ինձի բերել ա,
Բալուլ արել, ղըրել ա.
Երնեկ բալուլ մեռնեյի,
Ցար չան, մըտքեդ չեյնեյի:

***

Նանես ինձի բերել ե,
Բալուլ երել, տիրել ե.
Գյաչքա բալուլ մեռնեյի,
Ցար, քու մըտքեդ չեյնեյի:

ԱԳ 98

***

Մերըս ինձի բերեր ա,
Ձերմակ փաճուճ երեր ա.
Փաճուճի մեջ յես մեռնենք,
Վոր մորս ի մըտքից ընկնենք:

Ան 193

***

Մերըս ինձի բերեր ե,
Ներխուն բալուլ երեր ե.
Ներխուն բալուլ մեռնեյի,
Մորըս մըտքեն ելնեյի:

ԱՋ 387

Իմ մոր մըտքեն ելնեյի:
Տես՝ իմ նանն ինձի թակել եր:

192

Իմ նան ինձի բերել ե,
Ներխուն բալուլ երել ե.
Ընձի մոռանալու իր,
Ով մոռանա, կըքոռանա:

Հժե 116

193

Հերըս դեր ըմ դըրեր ե,
Բաղըմ ոսնիմ՝ վըլեր ե.
Մեր բաղի մենծ ալ ղուշը
Իմ դըրկումը քներ ե:

ՎՄ 154

194

Լուսնակը բոլորել ա,
Իմ յարը մոլորել ա.
Մոլորած ճամբին մեռնիմ,
Բեխերը ոլորել ա:

Տի 249

195

Լուսնյակը բոլորել ե,
Ամպի մեջ մոլորել ե.
Աղջի, քու ծոցիդ մեջը,
Մըծերըդ կրլորել ե:

ԱԳ 94. ԲՄ 145

196

Արեվը բոլորել ա,
Լուսնիակը նորել ա.
Սիրուհի խաթեր համար
Գունն աչքերըս կորել ա:

Տի 220

197

Մաղերըդ ոլորել ա,
Աչքերըդ բոլորել ա.
Ցերկ՛ որ ա չեյի տեսել,
Իմ սիրտը մոլորել ա:

ՀՄԽԲ 17

3. *Իրեք որ ե չեմ տեսել:*

ԲՄ 154

***

Մաղերըդ ոլորվել ա,
Աչքերըդ բոլորվել ա.
Իրեք որ ա չեմ տեսել,
Իմ սիրտըս մոլորվել ա:

ՊՄՎ 108. Տի 180

Իրեք որ ա տեհվել չեմ:

ԱԺԱ 57

***

Թուխս մազերդ ոլորել ես,
Աչքերըդ բոլորել ես.
Իրեք որ ա տեսել չեմ,
Իմ սիրտը մոլորել ես:

ԱԺԱ. 53

198

Եսոր նորը նորել ե,
Նորել ե, բոլորել ե.
Ցա՛ր, քո լուսնակ երեսից
Իմ սիրտը մոլորել ե:

ՀՄԽԱ. 34

199

Եսոր նորը նորել ե,
Ցարիս յեղը կորել ե.
Ով որ գըտել ե՝ Թող տա,
Ջամարըս կուտամ մուժտա:

ԱԴ 175

***

Ասոր նորը նորեր ե,
Իմ յարի յեղ կորեր ե.
Վովոր գտնի՝ Թող յետ տա,
Ձակտիս ոսկին միւժդան ե:

ԱԴ 92· ԲՄ 150

***

Լուսնիակը նորեր ե,
Ցարիս յեղը կորեր ե.
Վովոր գըտեր ե՝ Թող յետ տա,
Հիսուն մանեթ միւժտա կա:

ԱԴ 98

***

Եսոր նոր ըմ նորեր ե,
Ցարոջ վռշին կորեր ե.
Վովոր գընտե՝ Թող յետ տա,
Աստված ուր (իր) մուրազին տա:

ՇՎ 50

***

Նորը Թաժա նորել ա,
Ցարիս յայլուխ կորել ա,
Ով որ գըտե՝ Թող յետ տա,
Մեջքիս քամարը մուժտա:

***

Լուսնակ եսոր նորել ա,
Ցարիս դոտին կորել ա.
Ով գըտել ա՝ յետ Թող տա,
Հինգ Թուման իրեն մուժտա:
Տես՝ ձամբեքը ոլոր-մոլոր:

200

Եսոր նորը նորել ե,
Ջեռնես բան ըմ կորել ե.
Առավոտ դըրավ դըռավ,
Սիրել ե, ձեռնես Թըռավ:

ՀԺԵ 117

201

Արեվը ծագըյալ ա կըծացալ ա,
Ֆու յարըդ մըծացալ ա.
Ջախտ ըրա, տուն ընդեր,
Դիւշմաննեդ չըտացալ ա:

ԱԺԼ 43

«Արեվը ծագել ե, կեծացել ե,
Ֆու յարըդ մեծացել ե.
Ջանք արա, տուն ընկիր,
Թըշնամիքդ չատացել ա»:

202

Արեվը կըծացալ ա,
Ղումերը քուչատացալ ա.
Խաբար տարեք իմ յարին,
Մուշտարիս չատացալ ա:

ԱԴ 268

***

Արաղը հեչատցել ա,
Ձամբեքը կոչատցել ա.
Խաբար տարեք իմ յարին,
Առնողըս չատացել ա:

ՀՄԽԱ. 7

4· Առողըս չատացել ա:
34· Խաբար տարեք իմ նանին,
Մուշտարի(ս) չատացել ա:
ՌՄ 88· ՏԽ 155· ՀԺԵ 143
ԲՄ 157

Իմ նանին խաբար տարեք,
Մուշտարիս չատացել ա։
ԿՀ 162

***

Սրտաղը հեչտացեր ե,
Կանանչը կըշտացեր ե.
Խաբար տարեք իմ յարին,
Դարդերըս չատացեր ե։
ՆՀԶ 87

***

Սարևըը հեչտացել են,
Ջրերը չատացել են.
Խաբար արեք իմ յարին,
Մուշտարիքը չատացել են.

***

Սարևրը հեչտըցել են,
Ջրերը չատըցեր են.
Խաբար երեք իմ յարիս,
Մուշտարիքս չատըցեր են։
ԱԳ 97

203

Մեր առուն չատացել ա,
Ցարըս անհետացել ա.
Քանի վախտ ա չեմ տեսել,
Դարդերըս թաղացել ա։
ՏԽ 257. ԲՍ 129

204

Գետիս ես ղոլը ցել ա,
Ցեղը ջրով լըցվել ա.
Խաբար արեք են յարին,
Սիրածդ դարդով լըցվել ա։
ԱՋ 378

205

Ըրևքչնակը ցըցալ ա,
Իմ փայ կուլաս լըցալ ա.
Փխ նանուն աչկը տիւս կյա,
Վրեր ինձ հընդըրմաչա քըցալ ա։
ԱԺԷ 47

3. *Փխ յարին աչկը տիւս կյա։*
ԱԺԷ 47

«Արեգակը ցըցվել ե,
Իմ փայ կուլաս լցվել ե.
Փխ նանի աչքը դուրս գա,
Վոր ինձ ընկերքիչից քցել ե»։

206

Բերդի բոլորը ցել ա,
Բերդը վարդով լըցվել ա.
Աղբերն ասավ՝ քուլր չունեմ,
Քուլրը դարդով լըցվել ա։
ԱԲ 346

***

Վանքի բոլորը ցել ա,
Վանքը մարդով լըցվել ա.
Աղբերս ասեց՝ քուլր չունեմ,
Քուլրը դարդով լըցվել ա։

207

Առավոտուն կ'ելլես, երեսըդ վըլա՛,
Եպիշում մաղերըդ դըրեր ես հինա,
Ադ ադվոր երեսեդ սլաք մի տուր
հըլա.
Ծածկե Թոռ գիլիֆըդ, մարդը կ'երես
դուն,
Ձերմակ չևմահիր ես, անգին քար ես
դուն։
ՀՄ 414

208

Առավոտուն կ'ելես, երեսըդ վըլա,
Երեսըդ կումանի ըսպունդի քուլա։
ԲՆՄ 557

209

Աչքերդ հաղողի գիլա,
Ուրախացիր, չատ մի՛ լա.
Թե իմ սիրտըս կոտրեցիր,
Աստանից կ'առնես բալա։
ՏԽ 205

210

Կես գիշերին աստղեր վիլա,
Գոլի քանար բաթլաղ տիլ ա,
Արշակ նըստեր դայըդ՝ կուլա։
ՋՐ 28

211

Տեններն ելեմ, ի՞նչ կըլա,
Վարդին ծառը փուշ կըլա.
Իմ յարիս վարդ մի՛ ասիք,
Վարդին եռմբը քիչ կըլա։
ԲՆԳ 635

212

Թութ պիքմեզը քարս կ'ըլա,
Երկրի տըղա յար կ'ըլա.
Երկրի տըղա առնողը
Շատ դերդերու տեր կ'ըլա։
ԲՆԳ 635

213

Համբարձում յայլա, յայլա Ջան յայլա,
Համբարձումն եկել ա, մեր բաչին կանչնել,
Լաչակ ա գըցել մեկմեկի վերա,
Մինը տակնվանց, մինը վերնվանց,
Քա՛ Աթթուն Գյուլազ, հունարդ երեվաց։
Համբարձում յայլա, յայլա Ջան յայլա։
ՊՍՎ 107

214

Գութանդրդ հոյա՛, հոյա՛,
Գութանիդ տակը քոլ ա.
Քանի գըժուխյուն անես,
Քեզի առնողը տոլ ա։
ՀՄԽՍ 41

34. Հերիք դեշուխյուն անես,
Քեզ աղջիկ տըվողն ո՞վ ա։

***

Գութանը հոլա հոլա,
Գութան քըշողը տոլ ա.
Տոլ ես, տոլուխյուն(դ) արա,
Քեզի առնողն ո՞ւ ա։
24. Գութան քաշողը տոլ ա,
Քո խասքին նայող չըկա։
ՌՄ 132. ԲՄ 153

215

Գութանըմ, գութանըմ ոլա,
Գութնի բուխեն կըպըլըպըլա.
Գութնի մաճկալը դոլ ե.
Իմ յարըս առնը կուլա։
ՍԶ 389.

216

Բլինալիս հըղեն քոլ ա,
Ջեռքինըս ցուրտ ցուրտ կոլա.
Թուրը քինաս՝ կանուխ չեկ,
Ցես վըհատան տակին կորա։
ՍԶ 376

«Գինալուս ուղին քոլ ա,
Ջեռքինս ցուրտ ցուրտ կուլա.
Դորը գնաս՝ կանուխ չեկ,
Ցես վոտի տակի կորա»։

217

Սամսել ա լուլա–լուլա,
Ցարըս ինձ համար կուլա։
— Շա՛ն տըղա, հերիք հաչաս,
Մեր դըռան բալաք թուլա։
ՍԴ 174

218

Ջուրն ա ելեր լուլա–լուլա,
Ջուլոյ վոտքեր բամբակի քուլա.
Ջուլոն տարան, Մուքոն կուլա։
ՀԺԵ 55

219

Սեր ու սավդից մալուլա,
Նիգյար տեսա, չիվարա։
ՀԺԵ 138

220

Եթում եմ բաղը, ձեռ(ք)ինըս լուլա,
Ալեքսան աղի լեղուն բըլըռուլ ա։
ԿԺԵ 55

221

Դու դաշտ կուգաս հուլա–հուլա,
Կու նըմանիս բամբկի քուլա.
Աչքըս տեսավ, սիրտըս կուլա։
ՀՄԽՄ. 38

12. Տնեն ելա, դյուլա–դյուլա,
Ըրծվերդ ի ծոց բամբկի քուլա։
ՆՀԳ 46

***

Տնեն ելար հալա–հուլա,
Ըրծերդ նմանի բամբկի քուլա.
Աչկունքս տեսան, սիրտըս կուլա։
ՔՀ 176 հտ.

Դու կըքեկես գյուլա–գյուլա,
Ըրծերդ մըներ բամբկի քուլա,
Աչքս ը տեսավ, սիրտս ի կուլա։
Ան 193

222

Կանդնել ես բախա–բախա,
Սեվ չուխա, կարմիր յախա.
Քանի դու հեռու մընաս,
Իմ կյանքըս ախ ու վախ ա։
ԱՀ 135

223

Կաղնել ես բախա–բախա,
Վոններիդ չմոչկը լախ ա.
Սեվ տըղա, կարմիր աղջիկ,
Բռնել են ուրուր յախա։
ԱԳ 269

Կայնել ըս ախա–բախա,
Լեչակիդ տոտը կախ ա.
Սեվ տըղա, գյուլգազ աղջիկ,
Բըռնալ իրուր յախա։
ԱԳ 269

***

Կանել ես ախա–բախա,
Լաչակիդ տուտը կախ ա.
Շեկ տըղա, սիպտակ աղջիկ,
Բըռնել եք իրար յախա։
ՌՄ 109. ՏՒ 141

3. Սեվ տղա, սալխտակ աղջիկ։
ՔՀ 160

***

Կայնել ես բախա–բախա,
Շալվաղուս տուտը կախ ա.
Շեկ տըղա, սիպտակ աղջիկ,
Թող բըռնենք իրար յախա։
ՊՄՀ 105

***

Կանդնել ես ախա–բախա,
Ծամերիդ տուտը կախ ա.
Արի, աղջիկ Գյուլիղար,
Պինդ բըռնենք իրար յախա։

***

Կայնել ես բախա–բախա,
Ջաքմանիդ թեվը կախ ա.
Շեկ տըղա, սիրուն աղջիկ,
Կըպել են իրար յախա։
ՀԺԵ 125

224

Քելուս եմ բախա–բախա,
Լաչակիս ճոթը կախ ա.
Ցարըս մեր տուն ա գալի,
Ես գիշեր ինձ ղոնախ ա։
2. Եսոր սիրտըս ուրախ ա։

225

Քելուս ես բախա–բախա,
Շալվաղուդ տուտը կախ ա.
Ջուխտ մի չամամ մեջ ծոցիդ,
Մեկը բեր ինձի ծախա։
12. կայներ ես բախա–բախա,
Լաչակի ճոթեր կախ ա։
Ան 192

226

Կայնել եմ ախա–բախա,
Ցարըս ինձի լայալ ա.
Շեկ տըղա, գյուղալ աղջիկ,
Համա մոր սիրտը կախ ա։

227

Քելում ես ախա–բախա,
Մահրամիդ ճոթը կախ ա.
Ինձ պես տըղին մի ծախի,
Իմանաս՝ ինձիկ մախ ա:
34. Ինձ պես տըղեն մի՛ ծախա,
Իմանաս՝ քեզիկ մահ ա:

228

Իրիկունը բերի գալ ա,
Բերի դաղան թևվես կախ ա.
Եկան ասին՝ երկան մախ ա,
Տես՝ Բաժն ի (ն)ման եր
դյուրու կամիշ։

468

Բաղի յերդը դամիշ ի (ա),
Մեջը լի(ն)քը յեմիշ ի (ա)·
Աղջիկ, խաթրըդ չի մընա,
Նազուն ք(յ)անց քե անուշ ի (ա)։
Ա.Ը 144

469

Մե յար ունեմ, անուշ ա,
Անուշ ա, ալման չուշա·
Ֆարաիումը կայնած եր,
Ցես ասի՝ Թառլան ղուշ ա։
Ա.Բ 146

123· *Մի յար ունեմ, անուշ ա,*
Հալած երծաթի ղուշ ա·
Ժամի դըռնուցը դուս եկավ։

Ա.Ժ.Ա. 58

***

Մի յար ունեմ, անուշ ե,
Հալած արծաթե ղուշ ե·
Բաղեքի մեջին տեսա,
Ցես ասի՝ Թառլան ղուշ ե։
ՌՄ 129· Ա.Դ 171

3· Աղջըկներէ մեջ տեսա։
Ա.Դ 173

2· Ոսքերը քաղցըր նուշ ե։
Տ.Ի 144

***

Աղբեր ունիմ անուշ ա,
Ծալած արծաթե ղուշ ա·
Ծառի դըվխին կայնած ա,
Ցես ասի՝ Թառլան ղուշ ա։
Հ.Ժ.Ե 122

***

Բաղի բաղանը չուշա,
Բաղի մեջինն անուշ ա·
Կայնել ես բաղա դըվխին,
Ցես ասի՝ Թառլան ղուշ ա։

23· *Բաղի բոլորքը փուշ ա,*
Բաղի բանջարը չուշ ա,
Կայնել բաղամեջին։

123· Բաղի մեջին յեմիշ ա,
Նըստել ես բաղի դըվխին։
Տես՝ Ամպել ա չուշա–չուշա։

470

Ծառիս մինը լավ նուշ ա,
Ցարըս մին Թառլան ղուշ ա·
Աղբեր, հո՞ւնց անիմ, նեղանալ մի.
Ցարըս գյըզանա անուշ ա։
Ա.Ժ.Ը 25

Մեր տանը տակը նուշ եր,
Իմ յարը Թառլան ղուշ եր·
Ապեր, խաթրըդ չըմընա,
Ցարըս քանց քեզ անուշ եր։
Ա.Գ 262

***

Աղբեր, բաղըդ անուշ ա,
Բաղիդ մեջը յեմիշ ա·
Ախպեր, խաթրըդ չըմընա,
Ցարոն քեզնեն անուշ ա։
Հ.Ժ.Ե 109

124· Աղբեր, բաղդդ անուշ է,
Բաղիդ մէջինը նուշ է·
Ծարըս քեզնեն անուշ է:
ՌՄ 90· ՏԽ 145· ԲՍ 156

2· Բաղիդ մէջին յեմիշ է:
ԱԳ 92

Աղբեր, իմ բաղն անուշ ա,
Մեջը քաղցըր յեմիշ ա·
Աղբեր, բեղամաղ չըլես,
Ծարըս քեզանեն անուշ ա:
ԱԺԱ 49

***

Բաղի վանջարեն չուշա,
Բաղի բարըն անուշ ա·
Աղբեր, խաթրըդ չըմընա,
Ծարը քեզնից անուշ ա:
ԱԲ 346

12· Քո բաղը նուռ ու նուշ ա,
Բաղիդ վանջարեն չուշա:

471

Իմ քարի տակ կա չուշա,
Իմ յարըն բանդլի ղուշ ա·
Ո՞ն (ո՞վ) ա կ'ըսա՝ յար դեշա,—
Ինձնե ղանդ—չաքար անուշ ա:
ԱԵ 195

Սարի տակը մըշուշ ա,
Իմ յարը բանկլի ղուշ ա·
Ետ ով ա ասում դեշ ա,—
Մեղրից, չաքրից անուշ ա:
ԲՍ 149

134· Ծառի տակը մըշուշ ա,
Են ո՞վ եր ասում՝ դեշ ա,—
Մեղր ու չաքրից անուշ ա:

***

Գետիս ես ղոլը չուշա,
Իմ յարըս բեկլար ղուշ ա·
Են հո՞վ ա ասում՝ դեշ ա,
Ջանց չաքարն էլ անուշ ա:
ԱՋ 378

Սարերը ուշ է, մուշ է,
Իմ յարը բանդլի ղուշ է·
Ջոկեցի, լավը առա,—
Մեղրից, չաքրից անուշ է:
ԱԳ 101

Ծառին տակը մշմիշ է(ր),
Ծարըս սեվլի խուշ է(ր)·
Սիրով սեվդայով առի,
Ջանց չաքարն անուշ է(ր):
ԲՆԱ 624· ԲՆԳ 677

472

Ամպել ա չուշա—չուշա,
Իմ յարը բանդլու ղուշ ա·
Սարի կըռնեն դուս ելավ,
Ճես ասի՝ Քառլան ղուշ ա:
Տես՝ Մե յար ունեմ, անուշ ա:

473

Բոբիկ մի՛ քելե, փուշ ա,
Սիրունի պազն անուշ ա:
— Ա՛յ տըղա, հըրեշտակ ես,
Լուսնյակ ու արեգակ ես:
ՌՄ 93

23· Ծարիս պազն անուշ ա:
Տես՝ Այ աղջիկ, հըրեշտակ ես:

***

Բոբիկ մի՛ քելե, փուշ է,
Սիրունիկ, պազդ անուշ է:
(Կրկնակ) ՀՄԽԱ 51

***

Բոբիկ մի՛ քելե, փուշ ա·
Սիրունիս պազն անուշ ա:

2· Իմ յարիս պազն անուշ ա:
Հմմտ· Բոբիկ մի՛ քելե,
Լալուխան:

474

Ֆախանի մարգը փուշ ա,
Սըրտով սիրածն անուշ ա.
Ալամ աշխարհն էլ դինա,
Սաղջիկն անվաճան ղուշ ա:
ՀԺԵ 109

475

Սարի արտերը փուշ է,
Իմ յարը բանկլի ղուշ է.
Ոչով Թող չընեղանա,
Ճարս իրանցից անուշ է:
ՏՒ 257

124· *Բոբիկ մի՛ քելա, փուշ ա,*
Սեր ու սովդին անուշ ա...
Ճարն իրանից անուշ ա:

476

Գետինը լիքը փուշ ա,
Ջիրերըս լիքը նուշ ա,
Ճեմ են աղջրկան կ՚առնեմ,
Վոր անուշը Աֆուշ ա:

477

Իմ յարոլ ճամբեն փուշ ա,
Խորոտի պատն անուշ ա.
Խորոտի աչքեր ֆինջան,
Բուկն է քըցի լալ ու մարջան.
Ալըրջան ոսկըրըուվ,
Խըզմեն ակնունանք չարուվ:
ՏՒ 174

478

Ելի՛ կանի, աղաչա,
Պապու ծառներ կանաչ ա.
Մեկն ա սալ, մեկը Թըզի,
Մեկ աստված պահա՛ քըզի:
ԱԵ 185· ԲՍ 142

3· *Մեկն ա ընձի, մեկ քըզի:*
ԱԵ 185

479

Ծառը կեցած ա, Թուփը կանանչ ա,
Սիրել եմ կառնեմ,— ինձի ճանանչ ա:

480

Կուրտիկ ունիմ, կանանչ ա,
Ճարիս տեսա, ճանանչ ա.
Ուզի՝ հալը հարցընեմ,
Հորըս տեսա, ամանչա:

1· *Ճայլի բոլոր կանանչ ա:*
12· *Իմ կուրտիկը կանանչ ա.*
Իմ յարը ինձ ճանանչ ա:
34· *Աչի՝ մի բարեվ անեմ,*
Ֆուրըս հետս եր, ամանչա:

481

Սարերի սինձըն ի՞նչ ա (է),
Կաթն ու բըրինձըն ի՞նչ ա (է).
Ճես սիրել եմ, յես կ՚առնեմ,
Խոսք ու ղըրխըցն ի՛նչ ա:
ՌՄ 131

3· *Սիրել ենք, իրար կ՚առնենք:*
3· *Ճարըն որ յարին սիրե:*
ՔՀ 165· ԱԴ 175

3· *Ճարը վոր յարին սիրի:*
ՏՒ 140

2· *Կաթնուսը բըրինձը ինչ է:*
ԹՄԿ 64

34· *Ճես եմ սիրել, յես կ՚առնեմ,*
Ձեր կռիվ տալն ինչ է:
ԱԳ 98

34· *Սիրել ենք, իրար կառնենք,*
Քու մոր պատռելիքն ինչ է:
ՀԺԵ 118

34· *Իմ սիրածն ինձ տըվիք,*
Ձեր կըռիվ–դավին ինչ ա:
124· *Ես սարի սինձըն ինչ ա,*
Կաթնով բըրինձըն ինչ ա...
Եթե խըղճի խոսքըն ինչ ա:
ՀԺԵ 124

482

Սարերի խինձն ի՞նչ անի,
Կաթնով բըրինձն ի՞նչ անի.
Իրար սիրել ենք, կ՚առնենք,
Ուրիշի խոսք ու զրիցն ի՛նչ անի։
ԱՋ 375

4. Բոշ զալմազալն ի՞նչ կանի։

***

Աչխարքի խոսքն ինչ ա,
Գեչ մարդու ասածն ինչ ա.
Ցես սիրեցի, յես կ՚առնեմ,
Ել ձեր խոսալըն ինչ ա։
ԲՍ 137

***

Սարերի սինձըն ինչ ա
Իմ Թաղա յարին.
Կաթն ու բրինձըն ինչ ա
Սըրտով սիրածին։
Տես՝ Սարերի սինձն ի՞նչ կանեմ։
Չմմա. Են սարին սար չեմ ասի։

483

Ա՛ տըղա, անունդ ի՞նչ ա,
Շան տըղա, դավիդ ի՞նչ ա.
Կ՚երթամ, կ՚առնեմ ղըզըլբաշ,
Բոյովըդ կըտրեմ ղումաշ։
ԱԲ 347

484

Աղջիկ, անունըդ ի՞նչ ա,
Ոսկի խըղմեն քո պինչ ա.
Հերըդ քեզ ինձ տալիս ա,
Մորըդ պատռելըն ի՞նչ ա։

Աղջի, անունըդ ի՞նչ եր,
Ոսկի խըղմեն քու պինչդ եր.
Հերըդ ինձի տալում եր,
Մորըդ պատռելն ի՞նչ եր։
ԱՋ 388

485

Աղջի, անունըդ ի՞նչ ա,
Գըլխիդ յայլուխը քըրչ ա.
Սիրում ես, լավը սիրի,
Եդ պըտկոշ տըղեն ի՞նչ ա։
ԱԲ 345

2. Գըլխիդ (վ. բկիդ)
բաղդադին քըրչ ա։
34. Սիրել ես, լավը սիրիր,
Են քաչալ տըղեն ի՞նչ ա։

***

Տես՝ Ախչիկ, քյո անուն ի՞նչ է։

***

Սերն ի՛նչ ա, սավդեն ի՞նչ ա,
Տես... ի՞նչ է։

486

Ցար սիրողի վերջը փուչ ա,
Գըլուխըդ ա՛ռ, մի յան քոչա՛։

12. Ցար սիրողը սոնը փուճ ա,
Գըլուխըդ ա՛ռ, մեկ յան գընա՛։
ՎՍԲ 39

487

Դու կըքելես քուչա–քուչա,
Շատ խորտ ես, խելքըդ քիչ ա,
Քու չիբուխու կըզիր փուչ ա։

123. Ման ես գալիս
քուչա–քուչա,
Ջեբիդ պոպոկները փուչ ա,
Շատ սիրուն ես, խելքըդ քիչ ա։
ՏԽ 166

488

Հագել ես կարմիր կապա,
Մինքանեդ խաս զարբաթ ա.
Թե չըսիրես ինձ սըրտով,
Ձեր տունն ըլնի խարաբա։

34. Մինթանի կըտոբիցը
Ինձ համար կալնք աբա։
Տի 228

489

Վերեվ նայեմ, կապուտ ամպ ա,
Ներքեվ նայեմ, ջուր ու չամբ ա.
Վերևվ աստված աղաչեցի,
Ներքեվ չեղավ ինձի ճամբա։
(Վիպական) ՀՄԻՍ. 49

***

Մերանն ի հասի, խաղողն ալաջա,
Տես՝ Զուխտըմ յար ունիմ, մեյ
խին, մեյ թազա։

490

Թուխսը քալեց ալաջա,
Մի՛կ ծի՛կ, վեհուր տալաջա։

491

Ջըրի են կուռը յանջա,
Ֆարուքանդ կանեմ Գյանջա.
Գյանջա չըհարը փուլ գա,
Իմ ալիզ յարը տուն գա։
ԱԺՍ. 60

492

Մեր տան յետեվ արտ մի յոնջա,
Թրխեմ գաթա, ճամբեմ խոնչա.
Առնեմ Զուլոն, չըրջեմ Գյանջա։
ԿՀ 174

Վերեվ մեր տան արտ կար յոնջա,
Ներքեվ ձեր տան արտ կար յոնջա,
Զուլոն առնեմ, երթամ Գյանջա,
Գաթա թրխեմ, անեմ բոխչա։
ՀԺԵ 55

Մեր տան յետեվ մի արտ յոնջա,
Ձեր տան յետեվ մի արտ յոնջա.
Առնենք Զուլոն, երթանք Գյանջա,
Ծամերըն յետեվ փունջա-փունջա։

493

Ղուշը ձեր կըտրին Թառ ա,
Քեզ համար երվա վառա.
Այ իմ սըրտով սիրած յար,
Սիրտըդ ինձնից ի՞նչ սառ ա։
Տի 250

494

Բոյըդ չինարի ծառ ա,
Աղբերըս աստռ գառ ա.
Քըրքըրված մորըդ ձեռից
Ա՛խ, յես սարսարի դառա։
Տի 137

495

Բոյըդ չինարի ծառ ա,
Տեսա՝ ճամբիցը դառա.
Մազերըդ սըղալելով
Ցես իմ մուրաղըս առա։
Տի 205

496

Աչըդի սաղըն առա,
Գյուլերին վասըն առա.
Հինդ աղջոր մի՛կիցը
Ջոկեցի խասըն առա։
ԱԴ 115

497

Ըռաչիդ կյըվողը լաչառ ա,
Կեռոկենըդ ճոխատ աչառ ա.
Ա՛ տըղա խըրեզ ջյընի յեզ,
Ավլադը լոխ քաչալ ա։
Ա.Ժ.Խ 46

«Առաչիդ ...ը լաչառ ա,
Գոտկինդ ջուխտ աչառ ա.
Ա՛ տղա, հերիք (քիչ) դնա յեկ,
Ավլադը լոխ քաչալ ա»։

498

Ա՛յ բալա Սառա,
Քեզ դէրի դառա,
Ինչդաղ որ առա,
Գյուլ Սառա չան։

ՋՔ 40

499

Աղջի, անուշդը Սառա,
Ունքերդ խառ ու մառ ա.
Ամեն քեզի տեսնելուն՝
Կըրակըդ ինձ կը վառա։

***

Աղջիկ, քու անուն Սառե,
Աչքերըդ խառ ու մառ ե,
Քու սավդեն զմարդ կը վառե։

ԲՆԳ 122

500

Աչի՛ն, անունդ ե Սառա,
Ներեղ ե բաղչի Թառա.
Նկո՛ ինձի պազ մի տուր,
Որ ըլլիս ասուս ծառա։

ԲՆԱ 332

501

Քո մոր անուն կ՚ըսեն Սառա,
Ցես քո սիրուդ կըրակ վառա,
Ղըսմաթ չելավ՝ քեզիկ առա։

ՔՀ 175

502

Ճըրագդը վառա, վառա,
Հոր հետ վատամարդ դառա,
Մեր ու աղբեր Թող տըվի,
Ցես իմ սիրածին առա։

ՀՄԽԱ 15

246 Հոր հետ դուշման դառա,—
Ցես իմ սիրածըն առա։

503

Աղունակից խաբար առա,
Կես ճամբիցը յետ դառա.
Ցարխս ճամբեն մըտիկ տալով՝
Ցես պատերի տակին սառա։
2. Գընացած ճամբից յետ դառա։

ՏԽ 227

504

Զորանից խաբար առա,
Ցես ճամբիցը յետ դառա.
Են ել իմ քոռ բախտիցը
Սըրտիս սիրածին չառա։

ՏԽ 154

505

Ակիլի ծերը կեռ ա,
Քու սերըդ ինձի բեռ ա.
Գիշեր ցերեկ, անասուլածդ,
Ճամբեդ աչելեն մեռա։

ՏԽ 149

506

Այբ-ժե-ճե-ռա,
Կըճուճը Թոնրում կ՚եռա.
Շուտ արա, նանի՛,
Ցես քաղցած մեռա։

***

Այբ-ժե-ճե-ռա,
Ճաշի պուտուկ կ՚եռա.
Ցամա՛ն, մարե, չուտ արե,
Ցես անոթնե մեռա։

ԱԶ 69

507

Բոստան եմ ցանե, հըմեն եր խըռա
Ելի, քըրքըշնի հըտ յարդ ղըռան,
Վորն որ խոմսի եր, սըրտեր
մըռմըռան։

ՀԺԵ 91

508

Թաղա բաղեր Թափեր խըռա,
Ցես քո սիրուն ընկա, ծըռա։

ՀԺԵ 57

509

Դաչա ու դուբան քար ու քըռա,
Ոսկանի սիրտ կըմըռմըռա,
Ջմայ թամալին կըֆըրֆըռա։

ՀԺԵ 79

510

Ես յանը ուռ ա,
Ին յանը ուռ ա.
Գողբեցի հարսի
Չիբինը նուռ ա։

ԱՒ 337

511

Աղջի, անունըդ ասա,
Բըկիդ աղյուսը խաս ա.
Թուչըդ դեմ արա՝ պաչեմ,
Գընա քո մորդ ասա։

12· Ա՛յ աղջի, ասա, ասա,
Բըկիդ բաղդադին խաս ա։
4· Գընա, մայըկիդ ասա։

Ա՛յ աղջի, ասա մասա,
Ծամերիդ ծերը խաս ա.
Թուչըդ դեսն արա՝ պաչեմ,
Վաղն ըընա, մորդ ասա։

ԱԺԱ 49

Աղջի, անունդ Ելիսա,
Դըլխիդ կարդինկեն խաս ա.
Թուչըդ դես արա՝ պաչեմ,
Գընա, քո նանին ասա։

ԱՒ 341· ԲՍ 148

512

Ա՛յ տըղա, արի ասա,
Գըդակիդ ծերը խաս ա.
Իմ մերըն ինձ քեզ չի տա,
Իմ հորը քրմամ ասա։

12· Ա՛յ տըղա, ասա մ՛ասա,
Գըդակիդ թափեն խաս ա։

ԱԴ 171

234· Ծասիդ քյաքյուլը խաս ա.
Իմ հերը ինձ քեզ չի տա,
Ջյոխվին ըռըշվաթ ասա։
123· Ա՛ տըղա, դուն ասա,
մ՛ասա՛,
Գըդակիդ թափեն խաս ա,
Իմ մերն ինձ քեզ չի տալի։

ՔՀ 165

Ա՛յ տըղա, արի խոսա,
Բըկիդ բաղդադին խաս ա.
Ախըրս քե աղջիկ չի տա,
Աղբարըս արաղ ասա։

ՀԺԵ 122

Ա՛յ տըղա, դու ասա՛, ասա՛,
Գըդակիդ ծալը խաս ա.
Իմ նանը քե աղջիկ չի տա,
Իմ նանին կաշառք ասա։

ԱԺԱ 50

513

Լեհին եմ կարել, խաս ա,
Դոշ եմ դըրել, դըլաս ա.
Զանին մեռնեմ իմ յարի,
Մ'ինն ա, հազարի բաս ա։

ԱԺԱ 54

514

Գըտակիդ ափրեն խաս ա,
Գընա, քու դեղին ասա.
Իս քու դեղին հարսնացու,
Դուն իմ դեղին վնասցու։

ԹՄԿ 60

515

Մ'ինթանկդ այ ու խաս ա,
Ինձ մի քանի խոսք ասա.
Մի թողնի իմ դուշմանին,
Հար յերդան վրես խոսա։

ՏԻ 200

516

Հաս ա, ես հաս ա,
Դիլբանդն ա, խաս ա.
Ախճի նանե, սուս ըրա,
Են տըղեն պեները պըտրհաս ա*):
ԱԺԸ 28
*) Են տղի բաներըը պատուհաս ա:

517

Ա՛յ տըղա, անունդ ինճ ասա,
Ցես քու բոյիդ հավաս ա.
Իմ հեր քեզ աղջիկ չի տա,
Հազար թումանի խոսա:
234. Աղջիկ բոյիդ հավաս ա.
Հերըս քեզ աղջիկ չի տա,
Հազար թումանի կ'ասա:

518

Աղջի, անունդ ինճ ասա,
Փանջարի մեջ քեզ տեսա,
Ազդ ու տակըս թուի կ'անեմ,
Քեզի մորըս հարս կ'անեմ:
Ան 192

***

Աղջի, քու մխաքն ինճ ասա,
Փանջարիցը քեզ տեսա.
Տունըս տեղըս կըծախեմ,
Կ'ըլնեմ քու նանի փեսա:

***

Ա՛յ աղջիկ, դեսն աչե,
Փանջարին քեզի տեսա
Վար ու յոխըս կըծախեմ,
Կ'ելնեմ քո ադի փեսա:

519

Աչուղի պես խաղ ասա,
Բլլբուլի պես տաղ ասա.
Ինչքան վըր դուվես, աժեմ,
Իմ մոր դուվականն փեսա:
ՀՄԽՍ. 41

4. Իմ նանի աղիզ փեսա:
ՏԽ 138
34. Քանի դուվես, աժեմ,
Իմ նանի աղիզ փեսա:
34. Վորքան վոր դուվես, աժեմ,
Իմ նանի աղիզ փեսա:
ԺԽ 4

520

Վոտներիդ դեղին մաս ա,
Շապկիդ կըտորը խաս ա.
Հերիք, ինչ վոր խաբեցիր,
Ինճ մի սաղ ըուղաբ ասա:
ՏԽ 206

521

Աղջի, կըսեմ քեզ ցասա,
Շապկիդը չիթ ու խաս ա.
Քընը քու մորըդ ըսա,
Ինճ բըռնի իրեն փեսա:
ԱԳ 92
Աղջի, անունըդ ցասա,
Հագիդ զարբաթ ու խաս ա,
Գընա քո նանիդ ասա,
Ինճ անի իրեն փեսա:

522

Ցես նըռան դինի, դու անուշ քյասա,
Դու լից, դու խըմե՛, քու դարդ
ձի(կ) ասա:
ՊՎ 88. ՎՍԱ 38

523

Ընխչուն ողա, չինի քյասա,
Նանեյին դընա թաքուն ասա,
Ետոր յես Զուլոյին թաղնա տեսա:
ՔՀ 175

524

Ետոր ուրբաթ ա, պատ ա,
Մոցինդ երծաթե քաս ա.
Հոգիդ դատի, վարդապետ,
Ի՞նչ ստ իր ատամ՝ չըհաս ա:
ՊՄՎ 113

4· Ինչի՞ ասիր՝ չըհաս ա։
ՏԽ 189

4· Ինչո՞ւ ասիր՝ չըհաս ա։
234· Գըլխինըդ մատաղ խաս ա·
Ա՛յ դևը, քու կարգին մատաղ,
Ախ՞ ասըմըս՝ չըհաս ա։
ԱԶ 373

234· Դիմացը կալ ու կաս ա·
Վորդիդ մեռնի, վարդապետ,
Դու ախ՞ ասիր՝ չըհաս ա։
ԱԺԱ 53

124· Եսոր ուրբաթ է, պաս է,
Սըրտիկ արծաթի թաս է...
Ինչի՞ ասիր՝ չըհաս է։
ԺԽ 97

Եսոր ուրբաթ է, պաս է,
Դըլխինըս ֆինո ֆաս է·
Կարապետ, վորդիդ մեռնի,
Ինչի՞ ըսիր՝ չըհաս է։
ԱԵ 200

Եսոր ուրբաթ ու պաս եր,
Հազածդ աթլաս ու խաս եր·
Մեռնի տեր-տերի տըղեն,
Ինչի՞ ըսավ չըհաս եր։
ԱԶ 389

***

Եգուց ուրբաթ է, պաս է,
Դիմացը կալ ու կալս է·
Իրիցի վորդին մեռնի,
Նա ինձ ասավ՝ չըհաս է
ԹՄԿ 61

***

Եսոր չաբաթ պա՞ս կըլի,
Ծոցին արծաթ թա՞ս կըլի·
Վարդապետ, բալեդ մեռնի,
Սիրածն էլ չըհա՞ս կըլի։

Կիրակի էլ պա՞ս կըլնի,
Երծաթից լավ թա՞ս կըլնի·
Վորդիդ մեռնի, վարդապետ,
Սիրածը չըհա՞ս կըլնի։
ՊՍՎ 104

Կիրակի էլ պա՞ս կըլի,
Արծըթե էլ թա՞ս կըլի·
Վարդապետ, որդիդ մեռնի,
Սիրածն էլ չըհա՞ս կըլի։
ԱԲ 342· ԲՍ 147

***

Եսոր ի՞նչ որ է,— ուրբաթ ու
պաս է,
Աղչիկ, քո գլուխ արծըթե թաս է·
Խորած վարդապետ կ'ասե՝
չըհաս է։
ՀՀ 328· ԺԽ 69

Եսոր ի՞նչ որ է,— ուրբաթ (ու)
պաս է,
Աղչիկ, քյո գըլուխ արծըթե
(արծաթու) թաս է·
Տըղա, քյո գըլուխ սըրմալու
(սրմայու) ֆաս է,
Խորած վարդապետ կ'ասե՝
չըխաս է։
ՎՍԱ 39· ՀԺԵ 60· ԺԽ 69

Ախչիկ, քյո գըլուխ արծըթե թաս եր,
Լաճիկ, քյո գըլուխ սըրմալու
ֆաս եր։
ՎՍԱ 39

***

Եսոր ի՞նչ որ է,— ուրբաթ ու
պախս է,
Ջուխտ ըմ յար ունիմ, տեղ
նորախաս է,
Խորած վարդապետ կ'ասե՝ չըխաս է։
ՌՄ 66· ՊՎ 89

***

Աղջիկ, քո դէմո՛ւթ արծրքթէ թաս է,
Ծո աղջա, քո դէմոթ սըրմալի
ֆաս է.
Խորած վարդատփեա կ՚ասի՝ չըհաս է.
Թէ հաս, թը չըհաս— մո ձի
կաբուլ է:
ՆՀՋ 102

525

Եսոր ուրբաթ ու պաս ա,
Սիբտըս արծրքթէ թաս ա.
Սըրտիկ, մալուլ մի՛ կենա,
Դուչնեն մարդու չի մընա:
ԱԵ 204

124. Եսոր ուրբաթ է, պաս է,
Սըրտիկ արծրքթի թաս է...
Աչխարքը մարդի չի մընա:
ՔՄՎ 31

Եսոր ուրբաթ է, պաս է,
Սըրտիկ արծաթէ թաս է.
Սըրտիկ մալուլ մի՛ մընա,
Աչխարհ մարդու չի մընա:
ՀՄԽԱ 3

526

Ասոր եորփաթ ա, պաս ա,
Ոտկիքըդ կյառան մընա ա*).
Ալամ աչխարք քե ղուրբան,
Ա՛յ իմ նանու նոր փընաս:
ԱԺԼ 42

*) Կերածդ զառան մխա ա:

527

Ծառ մի՝ ունիմ, կեռաս ա,
Գիչեր քընա, երազ ա,
Լուսուն ելա, մուրազ ա.
Քուրվրտիք, աստղած խանչէք,
Աղբերս հասնի, մուրազ ա:
ՀԺԵ 130

528

Ա՛յ սըղա, մի՛ խոսք ասա,
Սրի դա՛ռ դու մեզ վեռաս.
Լուսաստղը դուրս ա եկել,
Թամամ վոր խորովխոս ա:
ՏԽ 213

529

Մըրատա հըղեն դես ա,
Գևրածըդ կյառան մըես ա.
Մարատը քյե քյոմագ ընի,
Ա՛յ իմ նանու աղիզ վեռաս:
ԱԺԹ 85

«Ամարատա ուղին դես ա.
Բևրածդ դառան մխա ա.
Ամարատը քեզ քոմակ ընի,
Ա՛յ իմ նանի աղիզ վեռաս»:

530

Ծաղիկ եմ քաղե, ես ա,
Գյուլզաղ երեսդ ի տեսա:
ԱԸ 446

531

Ծաղիկ եմ քաղե, ես ա,
Ջանիդ մեռնիմ, ջան վեռաս:
ԱԸ 446. ՀԺԵ 131

532

Ծաղիկ եմ քաղել, ես ա,
Ջանիդ մեռնիմ, ջան վեռաս.
Իմ ուրախութիյունն ես ա,
Վոր քեզ մեր տանը տեսա:
4. Վոր քեզ— աղջկանս տեսա:

533

Ծաղիկ եմ քաղել ես ա,
Ջանիդ մատաղ, ջան վեռաս.
Տղին չատ բան կըհաջան,
Աղջկերանց ծեռն ես ա:
ԱԺՍ. 55

***

Ծաղիկ եմ քաղել, հես ա,
Ջանիդ մեռնեմ, չան փեսա.
Ղալաթի արևն թուխքը,
Աղջկա վարքըն ես ա:
4· Աղջկա զայդն ես ա:

534

Խալխի աղաչն ես ա,
Ես դեռ խոսածի կես ա.
Ամեն տանը են կ՛ասեն,
Թե չես եմ ձեր տան փեսա:

ԲՍ 138

535

Կ՛երթամ, իմ ճամբես ես ա,
Դարդ ու կըրակըս ես ա.
Կըխոսայի, չեը խոսա,
Անխանչալ մահն ես ա:
4· Անա չան, մեռնելն ես ա:

536

Ես դիշեր երազ տեսա,
Հերկերըս վարած տեսա.
Ամոթ քեզի, ա՛յ տըղա,
Քո յարը տարած տեսա:

ՀՄԽԱ 8

2· Պատերը չարած տեսա:
2· Արտերըս վարած տեսա:
ՌՄ 11· ՏԹ 177· ԱԴ 167

2· Հանդերը վարած տեսա:
123· Քնեցա, երած տեսա,
Սեվ հերկը վարած տեսա.
Տըղա, թասիրըդ մեռնի:

ԱԳ 99

234· Ես դըզերը վարած տեսա.
Նամուսդ կըտրի, այ տղա,
Սիրածըդ տարած տեսա:

ԱԺԱ 53

Գուքանը լարած տեսա,
Հերկերը վարած տեսա.
Աբուռդ դետինը մըտնի,
Սիրածըդ տարած տեսա:

ԱԳ 93· ԲՍ 148

***

1–4· Արտերը վարած տեսա,
Հերկերը տափած տեսա.
Զոլե չոլ ապրես, խալխի չխերչիս:

ՀԺԵ 13

***

Քընա, երազ տեսա,
Զայլերը ջոկած տեսա:

ՀԺԵ 117

***

Քընա մե երազ տեսա,
Սեվ հերկը ցանած տեսա:

ՀԺԵ 126

***

Գընացի հանդը տեսա,
Տես՝ իմ յարը հանդին տեսա:

537

Գընացի ջուրը տեսա,
Շարաքա դուռը տեսա.
Ծըլած բեխերուդ մեռնեմ,
Իմ մորըս ազիզ փեսա:

ՔՀ 165

234· Շուշաբանդ դուռը տեսա,
Իմ նանի(ս) ազիզ փեսա,
Գուլդազ երեսըդ տեսա:

ՔՀ 179· ԱԴ 173

234· Ջաղրից երեսըդ տեսա.
Ծըլած բեխերուդ մեռնեմ,
Իմ մոր դու ազիզ փեսա:

ԱԴ 171

23· Շարաքար դուռը տեսա.
Մեռնեմ ծըլած բեխերիդ:
134· Գընացի Ջուռը տեսա.
Մեռնեմ ծըլած բեխերուդ.
Իմ դեղի ավիլ փեսա:
ԹՄԿ 60

538

Գընացի Ջուրը տեսա,
Շարաքա դուռը տեսա.
Շարաքա դըռան եղնեն
Մե սիրուն տըղա տեսա:
ԹՄԿ 59
234· Շարաքու դուռը տեսա.

Շարաքու դըռան միջին
Մեկ սիրուն տըղա տեսա:
ԱԺԱ 51

34· Շարաքա դըռան յեղնեն
Ջո սիրուն քուրը տեսա:

539

Լուսընկի լուսը տեսա,
Իմ յարը դուսը տեսա.
Ցեղնարած տեղը տեսա,
Թըլմանքը ուսը տեսա:
ՀԺԵ 109

Ես դիշեր լուսը տեսա,
Իմ յարը դուսը տեսա.
Ելել եր, ուխտ եր գալի,
Հրացանն ուսը տեսա:
ՀՄԽԱ 21

540

Ես դիշեր լուսը տեսա,
Իմ յարը դուսը տեսա.
Ելել եր մերին կ'երթար,
Կացինն ուսուդը տեսա:
ԱԳ 94· ԲՄ 144

4· Կացինն ուսը տեսա:
4· Գերանդին ուսը տեսա:

541

Ես դիշեր լուսը տեսա,
Իմ յարը դուսը տեսա.
Ըսի Քե հետը խոսիմ,
Աղբերը քովը տեսա:
ԱԳ 100

34· Ասի՝ հալը հարցընեմ,
Աղբերը մոտը տեսա:

542

Առավոտուն լուսուն աղվոր մի տեսա.
Գոհություն աստուծու, յար եղավ ինձի,
Ծախուի, ըմբուի, անգին քար եղավ ինձի:

(Հարտաներկան)
ՀՄ 415

543

Հենքերը հինած տեսա,
Իմ յարը քընած տեսա.
Ձեռի սիպտակ քուլեքը,
Բոլորը մանած տեսա:
ՏԽ 216

544

Ձին դուռը կապած տեսա,
Կըրակը վառած տեսա.
Ծարըս դըռնիցըն անցավ,
Ջաքմանը պատռած տեսա:
ԱԳ 100· ԲՄ 142

4· Ջաքմեքը պատռած տեսա:

545

Շատ ջահիլ-ջիվան տեսա,
Մեկին չարի ինձ փեսա.
Մենակ մի բան կ'ուզեմ,
Շեկ տըղեն ինձ հետ խոսա:

Շատ ջահել–ջիվաններ տեսա,
Մեկին չարի ինձի վեսա.
Մենակ կ'ուզեմ՝ ալագյոզլի
Տըղեն միշտ իմ հետըս խոսա:
ՏԽ 223

546

Իմ յարը հանդին տեսա,
Ջրերի բանդին տեսա.
Աբի, թե հալը հարցնեմ,
Ջեֆի վես վախտին տեսա:

Աղրերըս հանդին տեսա,
Ջրերի բանդին տեսա.
Աբի՝ խալը խարցընեմ,
Ջյաքուլը դանդան տեսա:
ՀԺԵ 124

3· Ուզի թե հալը հարցնեմ,
34· Առեց ջյաքուլը սանդրի,
Ջյաքուլը թել–թել տեսա:

547

Իմ յարը հանդին տեսա,
Ջրերի բանդին տեսա,
Իմ յարի կայնած տեղը
Թոփ չինարի ծառ տեսա:
ՀԺԵ 114

***

34· Որդակ պիտեր, բաղ պիտեր,
Ջրերի ղլխին բանդ պիտեր:
ԱՀ 138

***

Գընացի հանդը տեսա,
Ջրերի բանդը տեսա:

548

Եսոր յես մեկ դիլբեր տեսա,
Նըստել է ծամըրվըլա.
Ճըրադը դըրել է ծոցը,
Լուսն երեսին կըցոլա.
Ո՞վ ինչ ասաց այս դիլբերին,
Նըստել է՝ դերդը կուլա:
ԲՆԲ 524

549

Երաղիս խընճոր տեսա,
Խընճորը դո՞ւ իր, ասա,
Ծակծըկված մերըդ ինչի՞
Չի ասում ազիզ վեսա:
ՏԽ 158

550

Ծաղիկ ունեմ, հենց ես ա,
Բեղն մեր գեղի ռես ա.
Ըռեսին խալաթ պիտեր,
Խալաթը մանեթ–կես ա:

551

Ա՛յ տըղա, սիրուն վեսա,
Գեղ հաղար բարով տեսա.
Շեն կենա ես վըթիվորը,
Սըրտիս մուրազին հասա:
ԱԶ 377

552

Մեր տունն եկել ես վեսա,
Սըրտով սիրածիս տեսա.
Ել չեմ ուզե ուրիշին,
Իմ սիրած յարըն ես ա:
ԲՄ 125
4· Սըրտով սիրածըս ես ա:
ԲՄԴ 143

553

Դու ո՞ստա կըգաս են Խընըսա.
Խերով եկար, բարով տեսա.
Աբի նըստենք մանդըր ղըսա.
(Գուշքըմ մըտնեն խասար,
Կուզեն խարիր, վուտամ խաղար)
Բարով եղնիմ քո խոր վեսա:
ԳՄՎ 23

Տես՝ Ցելու երթանք կըռընկու
սար:

554

Համբարձմամբ դալիս ա,
Ծաղիկը ցընծալիս ա.
Համբարձման կանչող աղջիկ,
Ձենըդ ծըլվըլալիս ա։

ԱԺՄ. 56

13. Վարդավառը դալիս ա.
Ա՛յ գյուղում կանչող աղջիկ։

ՀՄԽՄ. 40

***

Վարթավորը դալիս ա,
Ծաղիկըս հընձելիս ա.
Վարթեվոր ասող աղջիկ,
Սաբըդ ծըլվըլալիս ա։

ԱԳ 265

555

Անձրեվը դալիս ա,
կարմիր վարդը լալիս ա,
Ճամբախ ասիք՝ անց կենա,
կարոտ յարըս դալիս ա։

ՀԺԵ 133

556

Աբխ ըմ կապալ, կյալիս ա,
Ցաբը ղըրաղեն լալի ա.
Աղջի ա՛յ յար, խե՞ յըս լալիս,
Են ա յարըդ կյալիս ա։

ԱԺԼ 43

«Աբխ եմ կապել, դալիս ա,
Ցաբը ղըրաղին լալիս ա...»։

***

Աբխ ըմ կապած, կյալիս ա,
Նըբաբ մաչին լեզիս ա.
Ախչի Նբաբ, խե՞ լեզիս ըս,
Շամիր յարըդ կյալիս ա։

ԱՒ 113

557

Աբրեն հանդեն դալիս ա,
Աղլուխ բըռնած լալիս ա.
Հավա՛ր յանղըմ սալերը,
Նաղլուն ընկավ դյուղերը։

***

Աղբեր դըռնեն դալիս ա,
Ձեռով դըլեխին տալիս ա.
Հոռմի քաշած սրը,
Մեծ քերն ընկավ ջըրհորը։

558

Կեսուր դըռնեն դալիս ա,
Հարսը տանը լալիս ա.
Շալ մ'ինթանես ծախեցնեք,
Մամիկոնիս պահեցնեք։

559

Կարոն Կարբու դալիս ա,
Աղլուխ ձեռին լալիս ա.
Թոռչի՛, դու Թոռըդ քըցա,
Նաղլուին մ'իտըդ քըցա։
(Վիլական)

560

Վերնաքամին դալիս ա (է),
Թիկնամեջըս տալիս ա (է).
Մեյդան արևք՝ անց կենամ,
Կարոտ յարըս դալիս ա (է)։

ՌՄ 134. ՏԽ 226. ԲՍ 128

2. Թինդլա մեջքըս տալիս է։

ՔՀ 164

2. Դուռը դըխդըխկեցնում է։

ԹՄԿ 64

Գյանջա քամին կյալիս ա (է),
Դուռը չողչող տալիս ա (է).
Աղջի, վեր կաց, դուռը բաց,
Դըլեխիդ տերը դալիս ա (է)։

ՍՀ 140

561

12· Վերնաքամին դալիս ա,
Դուռը չղդղդ տալիս ա։
23· Թևինամնջքըս տալիս ա·
Աղջիկ, վե կաց, դուռը քաց։
ՀԺԵ 133

123· Գանջու քամին գալիս է,
Շախ–շախ գուռը տալիս է·
Մեյդան արևք, առավ դընամ·
ԹՄԿ 60

Բաքվա քամին ա կլամ,
Տրանեըն ա շրխշրխկամ·
Տյուս յեկե, տեսե նըշանացե,
Վըրը իմ կարտա յարն ա կլամ։
ԱԺԷ 44

«Բաքվա քամին ա դալե,
Դռանեըն են շրխշրխկում·
Դուրս եկա, տեսա հեռվանց,
Վար իմ կարտա յարն ա գալե»։

***

Տանը նըստալ բա լալիս,
Հրեփռովը չաղ ա կյալիս,
Մըեյդան արևքյ, մին ոյուս կյամ,
Տարտա յարըս ա կյալիս։
ԱԺԹ 87

562

Գյանջու քամին կալիս է,
Դրոնըրը Թըրրխկալիս է·
Հարյուր Թուման մըշարըղ,
Սիմոն յարը կալիս է։
ԱԳ 116·

563

Ես գիշեր աստղալիս ա,
Աստղերը խաղալիս ա·
Մեյդան բացեք, անց կենամ,
Նազլու յարըս գալիս ա։
1· Ես գիշեր աստղալուս ա։
ԱՔ 341
234· Աստղերը վըռխալիս ա·
Ճամփա տըվեք, ախչկերք,
Կարտա յարըս գալիս ա։
ԱԺԱ 53

***

Ես գիշեր աստղալուս ա,
Աստղներ խաղալ–լուս ա·
Մեյդան արևք, տեղ քըցեմ,
Հըրես յարըս գալիս ա։
3· Մեյդան արևք, տեղ քըցեք։
3· Մեյդան արևք, դուրս գընամ։

564

Աղջի, անուշդ ելիսա,
Ձեր հանդի մեջ քեզ տեսա·
Գընանք, քու նանին ասա,
Ինձ անի իրեն վեսա։
34· Հորն ու մորըդ դու ասա,
Ինձ չինեն իրենց վեսա։

565

Աչի'ն, անուշդ նըզսա,
Դրոան եսին քեզ տեսա·
Եկո' ինձի պադ մի տուր,
Որ ըլիմ պադուշդ վեսա։
ԲՆԱ 332

566

Կապուտա քուռակ տակիս ա,
Ալ բաղդադին բըկիս ա·
Կըզա ծուլը՝ ջուր խըմի,
Շեկ ջյանջյուլ Թիկընքիս ա։
ՀԺԵ 114
34· Ախ՝ Արաքն անց կենամ,
Թուխ յարը քամակիս ա։
134· Կապուտա դայը տակիս ա,
Եկա առուն՝ ջուր խըմի·
Թուխ մաղեր Թիկունքիս ա։
134· Կապուտա Թայը տակիս ա·
Իրևա չայը՝ ջուր խըմի·
Շեկ ջյանջյուլ Թեվերիս ա։
ՌՄ 113

567

Կապուտա Թայը տակիս ա,
Ալ բաղդատին բըկիս ա·
Ինձ հետ խոսած խոսքերըդ,
Ախչի, դիպ իմ մըտիս ա։
ՏՆ 143

568

Ցայլուխը մոտիս ա,
Հասրաթը ջանիս ա.
Ուզում եմ երեսդ տեսնեմ,
Վըրեն սարերը տալդա յա։

ՆՀԶ 109

569

Կանաչ ու կարմիր քիսա,
Գիշերն երազիս տեսա.
Բա՛, նանի, քեզ եմ ասում,
Շեկ տըղին արա փեսա։

234· Առավոտ զարբաթ տեսա,
Ա՛յ նանի, քեզ եմ ասում,
Թուխ դյադին բընտա փեսա։
34· Այ նանի, քեզ կ՚ըսեմ,
Շեկ տըղին երա փեսա։

ԱԴ 162

570

Ոտա՛, խորոզըս, խոտա՛,
Սըրտիկս ե առեր թռատա.
Աս ի՞նչ բարով գիշեր ե,
Ցարըս երազըս տեսա։

ԲՆԲ 680

571

Ցարըմ եմ գըտել սոս ա,
Ցարիս տունը փոս ա.
Աստված սիրող բան չըսա,
Մեկուճար ե, ախսոս ա։

ԱԴ 161

Հմմտ. Իմ յարը հոս ե, հոս ե։

572

Մեր տանի տեղը փոս ա,
Բար կը քալեմ կը հոսա.
Բար քալողին բան մ՚ասեք,
Մեկուճար ա, ախսոս ա։

34· Բար կը քըցեմ, կը հոսա,
Բար քըցողին ի՞նչ ասեմ։

573

Ջաղացի դուռը փոս ա,
Բար կը քըցեմ, կը խոսա.
Կանչի՛, կանչելուդ մեռնեմ,
Իմ նանի ազիզ փեսա։

ՔՀ 163· ՏՒ 226

134· Ջաղացին դուռնը փոս ա.
Ջանըս քեզ մատաղ լինի,
Իմ նանուս ազիզ փեսա։

ԱԴ 114

13· Ջաղացիս դուռը փոս ա.
Ոտա՛, խոսալուդ մեռնիմ։

ԱԺԱ 59

Ջաղացիս դուռը փոս ա,
Բարը քըցեմ, կը խոսա.
Կանչի՛, կանչելուդ մեռնիմ,
Իմ նանուն ազիզ փեսա։

ԱԴ 169

574

Ջաղացիս դուռը փոս ա,
Բար կը քալեմ, կը խոսա.
Կեռ կեռ ունքերիդ մեռնիմ,
Ոսկե դալամով քաշած ա։

ՀԺԵ 134

***

Ճաղցի տանիսը փոս եր,
Բյար կը քալեմ, կը սոսեր.

ՎՍԱ 46· ԺՒ 87

575

Հերանցըս դուռը փոս ա,
Բար քըցեցի, չի տոսա.
Չաղըս ախմախի գըլխին,
Անզետ անզետ կը խոսա։

34· Կըպատըռվեմ են մարդից,
Վոր անտեր–անտեր կըխոսա։

576

Ջըղացիս դուռը փոս ա,
Բար կը քըցեմ կը հոսա.
Աստված սիրող, բան չասի,
Դան աղջիկ ա, ախսոս ա։

ԱՀ 140

234· Բար քըցեցի, կը հոսա.
Իմ աղբոր բան մի՛ ասեք,
Տըղամարդ ա, ափսոս ա:
34· Իմ յարին բան մի՛ ասեք,
Թաղա յարըս ափսոս ա:

***

Մատնիքը մատովս ա,
Տես՝ մատնիքը մատովս չեր:

577

Երեսըդ բոլոր լուս ա,
Անհատ սաղդին ես ա.
Բաղը սեհրան ըլլեխս՝
Բլբուլից քաղցըր խոսա:

578

Աղջի, քելա՛, կուժդ թեվա՛,
Շուտ–շուտ քելա՛, մի՛ հեվա,
Եղ չան դյադին ախմախ չի,
Ջրըվ խըմնաոր կ'երեվա:

579

Ա՛յ բալա Ցեվա,
Աչքերըդ սեվ ա,
Դոշըդ կ'երեվա,
Ջան Ցեվա ջան:

ՋՔ 39

580

Ամպել ա, որը սեվ ա,
Ղուշն ա անցնում, անթեվ ա.
Ցես մի զոռ յար ճարեցի,
Են էլ, ասում են, խեվ ա:

ԲՍ 138

581

Քընա, քընա երեվա,
Կակոխ պըրչնիքդ երեվա.
Սեվ քեթակդ դալամ*) դիր,
Սիպտակ ճակատդ երեվա:

ԱՋ 376

*) Դեպի յես:

582

Ուն կ'երեվա, ճուն կ'երեվա,
Շողեր ջան:
Բերդի տակին տուն կ'երեվա,
Շողեր ջան:
(կրկնակ) ՀՄԽԱ. 39

583

Ջլիթ եմ հագել, սաղով ա,
Գըլխես մաղը գաղով ա.
Հալբաթ յես էլ նազ կ'անեմ,
Ցերբոր յարըս նազով ա:

ԱԺԱ 58

584

Քարափի տակը հով ա,
Սիրտըս արընի ծով ա.
Սարից եկած ձիավորն
Հարցըրեք յարաբ ո՞վ ա:

585

Դարվազի դուռը հով ա,
Ջան յարըս, ինձի գովա՛.
Կիրակի բան մի՛ արա,
Իմ սիրտըս արընծով ա:

***

Դարդյահի տակը հով ա,
Աղջիկ, դու ինձի գովա՛,
Կիրակնոր բան մի՛ արա,
Սիրտըս արենածով ա:

***

Դարբազի դուռը հով է,
Սիրուն աղջիկ, ինձ գովի՛,
Կիրակի բան մի՛ անի,
Իմ սիրտը արընծով է:

ԱԴ 167

134· Ջաղրի տակը շատ հով է.
Կիրակի բան մի՛ անի,
Իմ սիրտն արենածով է:

586

Թունդիրը հով ա,
Վըրեն լե բոլ ա.
Տասներկու ջան ենք,
Մե չոր լե կով ա:

ԺԽ 20

587

Ծառի տակը չատ հով ա,
Նանիխ ինձի կը դուխա·
Ա՛խ, նանի՛ ջան, մի՛ դուխա,
Իմ սիրտըն արընծով ա·
Վաղա կըտրող յարին տես,
Իմ բեմուրաղ յարին տես:

588

Կարմիր վարդը ճամով ա (է),
Սիրած յարը համով ա (է)·
Եստեղ զոռի բան չըկա,
Սերըն իրան կամով ա (է):

134· Կարմիր վարդը ջամով ա·
Ըստի զոռի բան չըկա,
Սովդեն իրան կամով ա:
ԱԺՍ 55

13· Կարմիր թուխը ճամով ա...
Իսկի եվել բան չանիս:
3· Ֆաչքըշելով ի՞նչ կըլնի:
34· Աստեղ զոռի բան չըկա,
Սերն ու սավդան կամով է:
ԱԳ 95· ԲՄ 151

234· Պըղտի աղբիւրն համով է·
Եղտեղ զոռի բան չըկա,
Սավդեն իրեն կամով է:
ԱՋ 388

589

Կարմիր վարդը ջամով ա,
Սիրած յարը համով ա·
Ես դարն անցա են դարը,
Ինչ կ'անեմ դունյի մալը:
ՌՄ 113

34· Աղբեր, խաթրըդ չը մնա
Ճարըս քեզնեն համով է:
ԱԳ 97

590

Ա՛յ տղա, յախինդ մով ա,
Սուրբ կարապետ քեզ զուխա·
Ես քեզ խիստ չատ եմ սիրում,
Քու սիրտն ինձանից հով ա:
ՊՄՎ 106

591

Մինթանա ունիմ, մով ա,
Ղըրաղները սուրմով ա·
Քիքիր ջան, նոր հասկացա,
Փեսեն ինչո՞ւ համով ա:

592

Մեր հանդերը ջըրով ա,
Մեր ըռեսը թըրով ա,
Դատաւորի մատ եքա,
Խոսքը ոսկեջըրով ա:
ԱՔ 345

1· Մեր արտերը ջըրով ա:
234· Մաշին թըրով ա,
Ամեն մեջլիս մըտնելու՝
Խոսքերն ոսկի ջըրով ա:
ՀԺԵ 132

23· Ջաֆար աղեն թըրով ա·
Ամեն մեծի կուչտ կայնի:

593

Ես աղեքը ջըրով ա,
Մեր ըռեսը թըրով ա·
Վո՛ր մեկ խանի մատ եքա,
Խոսքեր ոսկի ջըրով ա:
ԱՀ 446

594

Քամար եմ կապել, լենքը մեկ մատ ա,
Սիրել եմ, կ'առնեմ· չայնամ՝ աղքատ ա:

595

Աղջիկ ես, ելմըդ չատ ա,
Ձես կըտրում վախտ ու վադա·
Վերջը քեզ տեր կը դառնա
Մի խեղճ մոլորած գյադա:
ՏԽ 201

596

Բոյը բարակ լիմչատ ա,
Վիզը մի թել մի մատ ա·
Անուշ լեզվի խոսքերը
Գիտես, թե սուր մըկըրատ ա:
ՏԽ 221

597

Բաղի բոլորը պատ ա,
Հերն ու մերը ի՞նչ պատ ա.
Ցես սիրել եմ, չես կ'առնեմ,
Վ.երևիվ ասուլած չըհադ ա:
ՌՄ 109· Տի 178· Ա.Դ 167

598

Բաղի բոլորը պատ ա,
Մի խոսքըդ ինձի չատ ա.
Աստծու առաջին կըտրինք,
Մինչի Համբարձում վազա:
Տի 192· ԲՍ 140

599

Ա՛յ ալատա, ալատա,
Թոխկին ոսկի սալատ ա.
Ինձ մի սարդար չար ունիմ,
Կ'ասես քաղքի Թալադ ա:
Ա.Զ 372

600

Արտախը վարար կ'ելա (գետ) ա,
Ջուրք կ'իւլաք) հավքու հըլետ ա**).*
Ցես մըշտուղուղ կըտամ ընդրա,
*Հու իմ չարեն սըրեղեն սըլետ ա***):*
Ա.Ժ.Խ 43

*) Կուլա, կողմ:
**) Հետ, հետք.
***) Ով իմ չարի տեղին տեղյակ է:

123 Ըսաըղնըչեր*) կ'ելա ա,
կ'ելա ա,
Ջուրս ղալը հըլետ ա, հըլետ ա.
Հարյուր մանեթ մըշտըլըղ
կըտամ:
Ա.Ժ.Խ 46

*) Ադամեղով իվեր:

601

Արտախը դ'յուլ կըտա,
Իմ չըրևնես տեն կըտա.
Են հո՞ւնց քյահուր նան կընե,
Վրեր ըրախան հըլեվ տըղե կըտա:
Ա.Ժ.Խ 43

602

Կաքավը տուրուլ կըտա,
Կընճիթը տուրուր կը տա.
Հուր վոր մին չար չի ունի,
Ունքերը իրուր կը տա:
Ա.Գ 269

Կաքավը տուրուր կը տա,
Ղումբրերը տուրչյուր կը տա,
Հյուրչյու մին չար չունե,
Ունքերը իւրիւր կը տա:
Ա.Ժ.Ա. 25

603

Բարտու ծառը բար կուտա՞,
Ասուլած ինձի չար կուտա՞:
ԿԺԵ 30

604

Գընացի, բաղը մըտա,
Ման եկա, չարըս չը ղըտա.
Բենչյուման տեղ կորցըրի,
Ողբալով երկու (?) մըտա:
ՀԺԵ 110

605

Դուռը բաղին մըտա,
Ման եկա, չանանս ղըտա.
Բեղրու չարիս կորցըրի,
Արտասուներով տան մըտա:

606

Ալամ աչխարհը դիտա,
Վոր նա իմ սիրած չարն ա.
Ել ինչ տաղտա, ասմալտրք,
Նա տեններից խաբար ա:
ԲՍ 135

607

Միրանի ծառ, բար մի՛ տա,
Ճրղնեըրդ իրար մի՛ տա,
Ամեն մեջդ ման դալիս՝
Ճավերըս իրար մի՛ տա:
ՀՄԽՐ 1
3· Ցես քանի բաղին ման դամ:
ԿԺԵ 3

34· Ամեն մեկըդ մըտնելուս՝
Դարդերըս իրար մի՛ տուր։
ԱՒ 340

234· Ճըղքըներդ իրար մի՛ տար·
Ամեն մեկըդ մըտնելով՝
Դարդերըս իրար մի՛ տար։
ԱԺԱ 55

3· Ամեն մեկ ինձ տեսնելիս...
34· Ցես մի ղարիբ ղոնաղ եմ,
Դարդերըս իրար մի՛ տա։
124· Մենծ բաղչա յես, բար մի՛ տար,
Ճըղքերըդ իրուր մի՛ տար·
Դարդերըս իրար մի տար։
Ան 203

Ծառներ, դուք ծիրան մի՛ք տա,
Ճըղքերըդ իրար մի՛ք տա·
Ջանի ձեր մեկը մեն գամ,
Դարդերըս իրար կուտա։
Ան 201

***

Ծառներ, դուք ծիրան մի՛ք տա,
Ճըղներ, դուք էլ բար մի՛ք տա·
Ցես ղարիբ եմ, ղոնախ եմ,
Դարդերըս իրար մի՛ք տա։
ՌՄ 102· ԲՍ 152

608

Կանչեմ՝ յա՛ր, արի·—յարիկ ձեն չի տա,
Ընկեր քաղցըր քուն, անուշս էլ չի տա։
(կրկնակ) ՀՄԽԲ 21

***

Կանչեմ՝ յա՛ր արի,— յարիկս ձեն չի տա։
Ինկեր և քաղցըր քուն, անուշս էլ չըկա։
Աըթուն թե քընած՝ ընկեր եմ քու վեր,
Կըմեռնեմ սիրովդ, կըտեսնես իմ լեր։
ՎՍԲ 42

609

Նըստած կըտուրըս թախտ ա,
Ձիուս գըլուխը սախտ ա·
Մի թաղտ յար եմ բըռնել,
Պոչերը ահհանի վարդ ա։
ԱՋ 375
4· Ինձի համար լավ բախտ ա։

610

Պարտեզ ունեմ, դըրախտ ա,
Ծաղիկ–ծաղիկունքի վախտ ա·
Գեչ աղջիկ սիրուն տըղա,
Ես էլ մի ուրիշ բախտ ա։
ՀՄԽՍ. 14
12· Բաղչա ունեմ, դրախտ ա,
Մեջը ման գալու վախտ ա։

611

Աբռի մեջակը խոռտ ա,
Ծաղիկը խընկահոտ ա·
Երթանք ծաղիկ քաղելու,
Ջանի Համբարձումը մոտ ա։
ՏԽ 249

612

Բարեկենդանը մոտ ա,
Իմ սիրտը շատ դարդոտ ա·
Աստված մեր բան աչողա,
Ցարըս ինձի կարոտ ա։
ԲՍ 143

613

Վարդավառը մոտ ա,
Մեր ճամբեքը քարոտ ա·
Գընում եմ՝ յարիս տեսնեմ,
Կասեն՝ ինձի կարոտ ա։
ԲՍ 138

614

Ալագյազլըն արոտ ա,
Իմ յար քեզնեն խորոտ ա·
Թամամ ոխտը տարի յա,
Ցարը յարին կարոտ ա։

615

Պարնի ձիանքն արոտ ա,
իմ յար քեղնեն խորոտ ա.
Խորոտ–մորոտ պըղտիկ յար,
Դալ կիբակի արի տար:

Տ֊ 201

616

Երկու քարի մէջ արոտ ա,
Տէրտէր փարին կարոտ ա:

Ա.Ը 440

617

Քարիս տակը քարոտ ա,
Պարնի ձիանն արոտ ա.
Ուղիղ յոթը տարի յա,
Ջուրն աղբորը կարոտ ա:
3. Թամամ ոխտը տարի յա:
Ք.Հ 159. Ռ֊ 138. Տ֊ 237. ԲՍ 131

Քարիս տակը քարոտ է,
Բանձրը ձիանցն արոտ է.
Ուղիղ ոխտը տարի յէ,
Ջիրն աղբորն կարոտ է:

Ա.Գ 97

Քարի տակը քարոտ ա,
կարմիրը ձիուն արոտ ա.
Բոլոլիկ ոխտը տարի,
Ջիրն աղբորը կարոտ ա:

Հ֊Ե 142

***

1—4. Ծառի տակ արոտ ա,
Ջուր աղբոր կարոտ ա:

Հ֊Ե 130

***

1—4. Աբսենի ձին արոտն էր,
Ջուրն ուր (էր) աղբոր կարոտ էր:

Ա.Ը 447

618

Ղարիբ տեղը քարոտ ա,
Ղարիբը անճարոտ ա.
Ցարիս ասի՝ դուս արի,
Ասավ՝ սիրտըս յարոտ ա:

619

Աբրանը քարոտ ա,
Ջարի տակըն արոտ ա.
Տարին տասնեկուս ամիս
Մէրը բալին կարոտ ա:
2. կարմիրը ձիանցն արոտ ա:

***

Հոբերանը քարոտ է,
Ջարի տակը արոտ է.
Տարին տասնեկուս ամիս
Աղջիկ տըղի կարոտ է:

Ա.Զ 387

620

Ես իրիկուն կիբակմուտ ա,
Երիկ ունիմ, հավի ճուտ ա.
Կը ճըվճըվա, կը կըտկըտա,
Տարեք գոմը, Թող կուտ ուտա:
Իմա՞լ եննեմ, իմա՞լ եննեմ, իմա՞լ եննեմ,
Սարեր ձյուն ա, չիվարել եմ,
Ցար պըղտիկ ա, մոլորել եմ:

ՀՄԽԲ 31

***

Ցարըմ ունիմ, հավի ճուտ եր,
Թալեք գոմը, Թող կուտ ուտեր,
Խերբանի մեծ Թիքեն ուտեր:
Որ պիճիկ է, իմալ եննեմ,
Գյադուկ ձյուն է, չիվար եննեմ:

Ա.Ե 205

***

Իրիկուն ա, կիբակմուտ ա,
Ցարըմ ունիմ, հավի ճուտ ա,
Տարեք, Թող հավերուն կուտ տա:
Իմա՞լ եննեմ, իմալ չեննեմ,
Ցարըս պըստիկ ա, չիվարեր եմ:

Հ֊Ե 61

***

Իրիկուն եր, կիբակմուտ եր,
երիկ մ'ունիմ,, նըման կըտեր,
խավու ճուտ եր.
Կանչեք Թավլեն, խիտ խավերաց
Թըղ կուտ ուտեր:
Խանե, խանե, խանե, խանե,
Խիհո՛, խիհո՛, խիհո խիհո:

Ծ֊ 40

***

Երիկ մ՚ունիմ, հավուս ճուտ ա,
Քըչենք փապչախ, թող խոտ ուտա։
Իմաղ ենեմ, իմաղ ենեմ, իմաղ ենեմ,
Սարեր ճյուն ա, չըվարեր եմ,
Ցար պըզտիկ ա, մալուղեր եմ,
Հետըս չի գա, առնեմ պախնեմ։
ՎՍԲ 31

***

Ետոր իրկուն կիրակմուտ ա,
Մարդ ըմ ունիմ, հավի ճուտ ա.
Տարեք ողեն, թող կուտ ուտա.
Իրիկունը կը կըտկըտա։
Իմաղ ենեմ և այլն։

***

1—7. Ցար մ՚ունիմ, չատ պուճուր ա,
Հետ մեր հավերուն կուտ կ՚ուտա.
Տես. ՀՄԽԲ 31. կրկնակը նաև Իմաղ ենեմ (անեմ)։

621

Լելե լելե Թամդարա,
Երկու կուռոշ տատս փարա.
Լելե լելե Թամդարա,
Կյադուրկին ելավ ասքյարա։
ՎԺԵԲ 8

622

Երկեն արտը բիար ա,
Ջեռքըդ կանանչ խիար ա.
Աղջի, կուզեմ՝ հաց տանեմ,
Սինճ քաղեմ, դառատ արա։
ԱԴ 170

623

Անճրեվ, արի դյուղ արա,
Ղըամաթներըս բոլ արա.
Ցարըս վոր կըտնկից կ՚ուզես՝
Դիպա մեր տուն Թոլ արա։
Տե՛ս 137. ԲՍ 141
Չմմա. Անճրեվ եկավ, դյուղ արեց։

624

Իմ մինջքինըս քամար ա,
Ֆու ունքերըդ կամար ա.
Ա՛յ տղա, ի՞նչ ես միտք անում,
Իմ ջանըս քեղ համար ա։
ՊՍՎ 106

Իմ մինջքինը քամար ա,
Իմ ընքիերը կամար ա.
Ա՛յ տղա, խի՞ չես դարդ անում,
Ջանըս քեղի համար ա։
3. Գյաղա, դու ի՞նչ մըտքի յես։

***

Աղջի, քո բոյ երկար ա,
Ֆո ունքերըդ կամար ա.
Ուրիշ միտք դու մի՛ անի,
Իմ ջանը քեղ համար ա։

625

Մե յար ունիմ՝ յար ա,
Ցարըս հենց մին ու ճար ա.
Հողեմ աչխարքի դըլուխը
Ծընվել ա, ինճ համար ա։
ԲՍ 153

626

Մե յար ունիմ յարտա ա,
Ցարա չի, զահրումար ա.
Ներա ճեռքին տանջվելով,
Թամամ դամիչ յես դառա։
ԲՍ 124

627

Հեր ես, հերություն արա,
Մեր ես, մերություն արա,
Թե աղջիկդ ինճի չես տա,
Սըրտիս մի հավաբ արա։
ԲՍ 137

628

Ա՛ տղա, դու ախըն արա,
Ոչխարը չախըն արա.
Ինճ ու քիղ վուր ճաշում ին,
Ուղիլըտ Թախն արա։
ԹՄԿ 59
Տե՛ս ... հայիր արա։

629

Գյուլբա կ'անեմ, խաշար ա,
Թըխանծա յարխա պաշար ա.
Փանահ խան, քո մարը մեռնի,
Իմ յարը խո՞ մաշալ) ա:*
ԱԴ 114

*) Մաշալ, մաշել— մաշվել (բանաւոմ):

630

Գյուլբա կ'անիմ, խաշար՛ ա,
Երզնզնցուն զանշար ա.
Ադի, քու կարգիդ մեռնիմ,
Ինո՞ մունթերը մաշալ ա:
ԱՒ 113

631

Ցար ջան, ուդուլմիշ արա,
Դևլրեդ դուդուլմիշ արա:
ԿԺԵ 57

632

Ա՛յ հեվ արա, հես արա,
Դաթա կըտամ՝ կես արա.
Աղջի՛, քու աղբերն ապրի,
Կարմիր Թուշըդ դես արա:

633

Են սարը բարճըր սար ա,
Տակը ղընջլած քար ա.
Ցես քեզ Թաքուն սիրեցի,
Բաս ո՞վ արավ աչկարա:
ՊՍՎ 105

12· *Ես սարը բանճըր սար ա,*
Տակը դանջըռլի քար ա:
ՏԻ 188

134· *Ես սարը բանճըր սար ա·*
Ցես քե Թաքուն սիրեցի,
Ես ո՞վ խանեց աչքարա:
ՀԺԵ 123

14· *Քախազա սարը սար ա·*
Են ո՞վ արավ աչկարա:
ԱՋ 376

***

Են սարը բանճըր սար ա,
Տակը ղընջլուվ քար ա.
Ցես քե վո՞րդե սիրեցի,—
Ելը հանեց աչկարա:
ԱԲ 341

634

Ես սարըն բանճր սար ա,
Տակը ղընջլած քար ա.
Իմ առած մեկուճար ա,
Գըլխուն ատլաս ու զար ա:
ԱՀ 440

134· *Են սարը բանճըր սար ա:*
Աստված սիրեք, յարս չառնեք,
Իմ յարըս մեկուճար ա:
ՀԺԵ 81

234· *Տակը դանջըռլու քար ե·*
Ա՛յ հարեվաններ, տեսեք,
Առածըս մեկուճար ե:
ՏԻ 177

234· *Տակը դանջըռլու քար ե·*
Առածըս մեկուճար ե,
Հագածը ըռուքյար ե:

ՌՄ 90· ԱԴ 163
ԲՍ 150

***

Արծաթիա բանճըր սարը,
Տակի ղընջլած քարը:

***

Լալվարա սարը սար ա,
Տակը ջընջիլ ու քար ա.
Նարար արեք իմ նանին,
Սիրածըս մինուճար ա:
ԱԺԱ 54

Գեղդարա սարը սար ա,
Տակը չընդիլ ու քար ա.
Մեռնեմ յարիս արեվին,
Իմ յարը մինուճար ա։
ԱԺԱ 51

635

Ես սարը բարձրը սար ա,
Տակը զընջլած քար ա.
Ասված սիրող բան չասե,
Սիրած յար սըրտով առա.

636

Տիղափադ պեցիր սար ա,
Սիւն ու կյերանը քար ա.
Ճես մըեռնիմ են Տըղըփայա,
Զըրքուպի-Սիրը տըլակու դար ա։
ԱԺԲ 89

Դիղափայա բարձր սար ա,
Սյուն ու գերանը քար ա.
Ճես մեռնեմ են Դիղափայային,
Զորս բոլորը դիլակի տեր ա»։

637

Ես սարը բարձրը սար ա,
Միջին դարպասի քար ա.
Մուղնըվա ջուրը սառն ա,
Մուղնի երթողն իմ յարն ա։
ՌՄ 133· ԱԴ 176

638

Դալդիցը աչքով արա,
Ինձ մի՛ թողնի բեչարա.
Դուշմանի դեմ կայնելը,
Ջոռ տըղամարդի քյար ա։
ՏԻ 102

639

Կանաչ արտը հաց տարա,
Ճարիս տեսա յետ դառա.
Ալընձոր տըվավ յես չառա,—
Ես ի՞նչ բեբախա յար դառա։
ԺԽ 13

4· Ես ի՞նչ կըրակ եր, վառա։
ԺԽ 13
23· Ճարըս տեսա, յետ դառա.
Ալընձոր տըվեց, յես չառա։
ԺԽ 111

34· Ալընձոր թալեց, յես չառա,
Քաֆիլը եղա, յես չառա։
ԱՋ 389

234· Իմ յար տեսա, յեր դառա.
Ալընձոր տըվեց, յես չառա,—
Ճես ի՞նչ անասուլած դառա։
Ա՛Ե 194

1· Քաղցած արտը հաց տարա։
3· Ալընձոր դըցեց, յես չառա։
134· Քաղած արտը հաց տարա.
Ես ինչ բեբախա յար եմ յես.
Ալընձոր տըվավ, յես չառա։
ԲՍ 124

640

Աղջի, նըստի՛ կար արա,
Ինձի քեղի յար արա.
Մեր բաղի քուչով գալիս՝
Դալդա տեղում սարը արա։

34· Բաղի քուչովը գալիս՝
Ծառները տալդա արա։
34· Բաղի են քուչովն արի,
Ձեռքերըդ չարդախ արա։
ԲՍ 129

3· Բաղի քուչով գալիս ես
(գալում ես)։
3· Բաղի քուչովը գընա։

***

Ֆասով աղջիկ, կար երա,
Ընձի քըղի յար երա.
Բաղի տալդով յես կիգամ,
Ձեռներըդ չարդախ երա։
Ա՛Ե 193

4· Կրունկերըդ (թևերդ) չարդախ
երա։

641

Մ՛յ հար արա, հար արա,
Ոսկե քյանքիւղ յիր արա.
Իմ հեր քեղ աղջիկ չի տալ,
Գըլխիդ վախին ճար արա:
ՍԴ 262· ԲՄ 135

642

Այ տըղա, հայիր երա,
Ոչխըրներ չայերն երա,
Ձիս որ քըզի չը տըվին,
Դու մերըս գայիլ երա:
ՍՆ 193
Տես՝ Այ տղա, դուն այերն արա:

643

Ամպել ա փարա–փարա,
Ճեռ իմ սըրտով յար չառա.
Աստված, դարդյահիդ մեռնեմ,
Կամ մահ աւուր, կամ ճար արա:

1· Ամպերն են փարա–փարա:
4· Ուրտմ դու յես, ճար արա:

***

Ձաղըրը փարա–փարա,
Ճեռ իմ սիրածը չառա.
Աստված, դիվանիդ մեռնեմ,
Ճա ուրտմ աուր, յա չարա:

644

Սիրտս ելավ փարա–փարա,
Դարդիս դրտի մի չարա.
Ոսկեկող ավետրանին
Մի դառը մատաղ արա:
ՏՒ 210

645

Սիրտս եղավ փարա–փարա,
Տեր իմ աստված, ազատ արա,
Սըրտիս չըմշնա խոր յարա:
ՏՒ 116

646

Կըճառեն են ղոլը քար ա,
Ես ղոլըս պեցիր սար ա.
Յանին չըմ տալ իմ աչճիգյը,
Ֆյալբաալյի Սոլթան աղա:
ԱԺԸ 27

Գիւտին են ղոլը քար ա,
Ես ղոլըս բարձր սար ա.
Յանին չեմ տալ իմ աղջիկը···

647

Ղարիբ եմ, տեղըս քար ա,
Ղարիբություն գըժ-վար ա.
Աստված սիրեք, բան չասեք,
Ղարիբն ես ի՞նչ անճար ա:
ՀՄԽԲ 4

648

Ղարիբ եմ, տեղըս քար ա,
Ղարիբն եղ ի՞նչ անճար ա.
Վախտմ եմ՝ ղարիբ մեռնեմ,
Անաղմ հողը մըտնեմ:
ՆՀՋ 108

649

Դար է սիրտըս, քար ա,
Սիրտըս ջըրից վարար ա.
Գեղի աուչի խորոտը
Իմ սիրած սիրուն յար ա:
ԲՄ 124

650

Ջորերս ի վեր հանդիր ա,
Ջուրը տուներս քանդիր ա.
Շուտ արա, յետ դարձիր յեկ,
Սիրածըդ տանն անուեր ա:
ՀՄԽԲ 9

123· Ջորերս ընի դանդիր ա,
Ֆիմ ըրծաթի բանդիր ա.
Ճար Չան, քու Չանին մատաղ···
ԱՋ 374

Զորըն ու դուս անդեր ա,
Չիմ երկաթե բանդեր ա.
Ցարխս վոր առնամ՝ ասա,
Քու խեղճ յարը անտեր ա:
ԱԺԱ 56

Քոլերսը վեր հանդեր ա,
Թվանքըդ լիքը բանդեր ա.
Ա տղա, դընա, չուտ արի,
Քիքը կալածն անտեր ա:
ԱՀ 140

651

Հանդեր ա, հա՛ հանդեր ա,
Ըիմ արծաթի բանդեր ա.
Դանակ բերնեք, սերտ ճըղնեք,
Ես ի՞նչ բըղտամ դարդեր ա:
ԱԳ 267

Ըսաբղավ բսակ հանդեր ա,
Լոխ ըրծաթե բանդեր ա:
Տենակ պերնեք, սերտըս ճըղեմ,
Բուղտում-բուղտում դարդեր ա:
ԱԺԼ 46

***

Սրհենց նրեր հանդերը,
Թազա արծաթի բանդերը.
Դանակ պիտի, սերտըս ճըղնեք,
Բուղտում-բուղտում դարդերը:
ԱԳ 263· ԲՍ 134

Տես՝ Արփաչայի հանդերը:

652

Աղջիկ, չիլեն ծալ երա,
Շիլեն ծալ ու մալ երա.
Եղ քու կարմիր ըբշներուց
Պագ մի տուր, հալալ երա:
ԱՀ 444

***

Ծալ երա, հա՛յ ծալ երա,
Դիլբար, չիլեն ծալ երա.
Ամպեր երաց, հով երաց
Քու պագ ձի հալալ երա:
ՎԺԵԱ 4

Ծալ երա, հա՛յ ծալ երա,
Ըընձոր թալեմ, խամ երա,
Քո պագ ձի հալալ երա:
ՎԺԵԱ 3

***

Ծալ երա, հա՛յ ծալ երա,
Ծալ երա, ծալ-մալ երա.
Դիլբար, չիլեն ծալ երա,
Ըընձոր թալեմ խամ երա:

Ծալ երա, հա՛յ ծալ երա,
Դիլբար, չիլեն ծալ երա.
Թաղիս թալեմ, ներսեն խով երա:

Ծալ երա, հա՛յ ծալ երա,
Դիլբար, չիլեն ծալ երա,
Պադիկ ըս տուր դիկ, նոսի ժամ երա:

Ծալ երա, հա՛յ ծալ երա,
Դիլբար, չիլեն ծալ երա,
Ծալ երա, ծալ-մալ երա:
ՄՎ 61

***

Շիլեն ծալ, չիլեն ծալ,
Շիլեն ծալ ու մալ երինք,
Շիլեն ծալ ու մալ երինք,
Պադիկ ո՛ինձի հալալ երինք:
ՀԺԵ 138

653

Ծալ երա, հա՛յ ծալ երա,
Ցես էլ եղնիմ քեզ վիճա.
Երթամ քաղաք, չիր բերեմ,
Մեկ ինձի աչքով երա:
ԱԸ 204

654

Արեվը մերեմեր ա,
Ոչխարն ու դառն անտեր ա.
Մերավորը մերն ընկավ,
Ախերը ինչի՞ տեր ա:
ՏԻ 154

2· Ոչխարը, դառն անառը ա։
ՌՄ 107· ԲՍ 157

3· Մերավորը մերն եղավ։
234· Վոչխարը դառնամեր ա.
Ով մեր ունի՝ մերաուեր ա,
Ով մեր չունի՝ ինչի՞ տեր ա։
ԱԺԱ 51

***

Աբեվը մերնմեր է,
Դառը ոչխարին տեր է.
Կընդա հորով–մորովը,
Ցեքումը ինչո՞ւ տեր է։
ԱՋ 387

Աբեղաիը մերեմեր ա,
Տես՝ Աբեղաիը մերամեր։

655

Մըեր Թըվանքը ծանդըր ա,
Լոխ ըրծաթե բանդըր ա,
Ախաւս խանը ատուկալ ա,
Մին ու խուչը անդամ ա*)։
ԱԸ 32
*) Ձին ու դուչը անտեր ա։

656

Բարդու ծառը բարձր ա,
Սիրած յարը քաղցր ա.
Վոր քու մխաքըն ինձիկ ա,
Ես՞ չէ ասիր՝ փախցրա։
34· Աղվիկ, ուամուդըդ մեռնի.
Ինչո՞ւ չասիր՝ փախցըրա։

657

Մեր բարդիքը բանձըր ա,
Իրաք մոտիկ թանձըր ա.
Թե վոր ինձի քե չեն տա,
Գիչերն առի փախցըրա։
34· Աղբեր, խաթըրդ չըմընա,
Մեր յար քեղնից քաղցր ա։

658

Մեր խարդիքը բարձըր ա,
Սիրած յարը քաղցր ա.
Գընա մորըս հարցըրա,
Ասի ինձի փախցըրա։
ՌՄ 131

12· Մեր բարդուքը բարձըր ա,
Սիրած յարըս քաղցր ա։
ԱԴ 176

4· Թե չի ուզի՝ փախցըրա։
134· Մեր ծառները բարձըր ա.
Առաջ մորըս հարցըրու.
Ցետա ասի ինձ փախցըրու։
ՏԽ 214

34· Գընա նանին հարցըրու,
Թե վոր չըտա փախցըրու։
ԱԺԱ 51

134· Բարդի բոյին բանձըր ա.
Դե գնա մամին հարցըրա,
Թե վոր չի տա՝ փախցըրա։
ԾՎ 51

***

Ուսի ծառը բանձըր ա,
Սիրուն յարը քաղցր ա.
Գընա հորը հարցըրա,
Վոր չըտըվեց՝ փախցըրա։
ԱՔ 339

3· Գընա մորը հարցըրա։

***

Մեր չարդաղը բանձըր է,
Սիրած յարը քաղցր է.
Գնելիք հորը հարցընանք,
Թե չըտըվեց՝ փախցընանք։
ԱԴ 98· ԲՍ 147

***

Մեր բաղը չատ բարձըր ա,
Սըրտով սիրած քաղցր ա.
Կ'ելթամ հորըդ հարցընեմ,
Թե չի տըվավ՝ փախցընեմ։

659

Մեր սարը չատ բարձըր ա,
Աղբեր, լեզուդ քաղցր ա.
Կըրակին ընկել ինձ կ'ելի,
Շուտ ասի ինձ փախցըրա։

660

Բարդի ծառեր բանձըր ա,
Սիրած յարը քաղցըր ա.
Ճարիս անուն Արաքի,
Ծոցն ելնեմ կարմիր թասի:
ՎԺԵՐ–5

661

Աղջի, երթանք դընա վերա,
Ցես վարդ քաղեմ, դու փունջ էրա,
Պատիկըմ տամ, դու հոտ էրա:
ՎԺԵՐ 14

662

Նուռը նըռանը վըրա,
Ցես ձեր դըռանը վըրա.
Ցես մի թուքի ղուշ պիտի,
Իմ յարի կըռանը վըրա:

2. Միաը ճըղնանը վըրա:
ԱՋ 381

663

Ոչխարը դուղի վըրա,
Ղըղխը խուղի վըրա.
Ցես մի թուքի ղուշ պիտի,
Իմ յարի ուսի վըրա:
ԱՋ 375

23. Գեղմը խուղի վըրա.
Ցես մի ասւսի ղուշ պիտի:

664

Երկանքըն աղի վըրա,
Շամամը թաղի վըրա.
Ցես մի պըստիկ ղուշ եմ,
Իմ հերանց բաղի վըրա:

3. Ցես մի սինամ ղուշ պիտի:
4. Հերանցըս բաղի վըրա:

Երկանքըս աղի վըրեն,
Շամամը թաղի վըրեն.
Ցես մի թեվավոր ղուշ եմ,
Իմ հերանց բաղի վըրեն:
ՌՄ 128. ԲՍ 151

Արկանքը աղին յերա,
Շամամը թաղին յերա.
Ցես մի թիքուա ղուշ պիտի,
Իմ յարին բաղին յերա:
ԱՋ 378

Արկանքն ա աղի վըրա,
Շամամն ա թաղի վըրա.
Երննկ յես մեկ ղուշ եղնինք
Իմ յարոլ բաղի վըրա:
ԱԸ 441

Արկանքն ա աղի վըրեն,
Խիարն ա թաղի վըրեն.
Ցես մի քաուլան ղուշ պիտի
Իմ հորանց բաղի վըրեն:
ԱԸ 143

665

Երկանքըն աղի վըրեն,
Շամամը թաղի վըրեն.
Մի վոսկի հեքյալ պիտի,
Իմ սիրուն յարի վըրեն:
ՆՀՋ 57

666

Երկանքըս աղի վերա,
Շամամըս թաղի վերա.
Կարմիր վարդ, ալ ծաղիկ,
Մանիշակ մաղի վըրա,
ԱԸ 139

667

Կայնել ես բաշի վըրա,
Նայում սըրդաշի վըրա.
Մեր դուշմանին յերբ կըլնէ
Տեսնեմ սև նաշի վըրա:
ՏԽ 218

668

Ամպերը ամպի վըրա,
Ամպերը սարի վըրա.
Ամպեր, աստըվածծ սիրնէք,
Զանճրեվնէք յարի վըրա:
4. Դուք չըզաք յարի վըրա:

***

Ամպել ա ամպոց վըրա,
Ամպել ա յայլոց վըրա.
Ամպեր, ասումած կըսիրեք,
Դուք չըդաք յարես վըրա:
ԱԴ 169

Ամպել է ամպի վըրեն,
Ամպ է յայլեցոց վըրեն.
Թո՛ւն, ասումածըդ սիրես,
Թո՛ւն, մի՛ դա յարես վըրեն:
Հժե 119

Ամպել ա ամպոց վըրեն,
Ամպը յայլեցոց վըրեն.
Ամպ, ասումածըդ կըսիրես,
Մի՛ դըննա յարես վըրեն:

669

Կարմիր վարդ ծառի վըրա,
Սիրած յար յառի վըրա.
Իրըրուվի պես կայնել ես,
Դուս վարդի մառի վըրա:
Տե 105

670

Ծընճոր ես ծառի վըրա,
Մաղիկ ես սարի վըրա.
Անուշ տաղ ասող բըլբուլ,
Կայնել ես քարի վըրա:
Տե 16

671

Բըլբուլը դարի վըրա,
Ծընճորը ծառի վըրա.
Սիրած սիրածի տակին,
Ջոր գնանին, քարի վըրա:
ՀՄՀՄ 9
1· Բիւլբիւլը տալին վըրա:
ԱԴ 96· ԲՄ 150

672

Արեվը դարի վըրեն,
Մախմուռը քարի վըրեն.
Սիրելուս եմ կորցըրել,
Ալաղյաղ սարի վըրեն:

12· Արեվը սարի վըրեն,
Մամուռը քարի վըրեն:

673

Արեվը դարի վըրեն,
Մամուռը քարի վըրեն.
Ճես իմ արունս կը թափեմ
Սիրելի յարի վըրեն:

674

Արեվը դարի վերեն,
Մախմուռը քարի վերեն.
Մե դաստա վարդ եմ քաղե
Աղբորըս յար(ոյ)ի վերեն:
Հժե 109

675

Կայնել ես դարի վերա,
Ձինարի ծառի վերա.
Ջըմուռ ֆասը դըրել ես
Համփուռ մաղերի վերա:

134· Նըստել ես նըստան վըրա.
Ֆինո ֆասըդ դըրել ես
Շեկլիկ քյանքյուլիդ վըրա:
ԱՔ 339

134· Կայնել ես առվի վըրեն.
Ֆինո ֆասը դըրել ես
Համփուռ քյաքուլիդ վըրեն:
123· Կայներ ես բաղի վըրա.
Կարմիր ֆասըդ դրեր ես
Համփուռ մաղերըդ վորա:
Ան 195

134· Կայնել ես նավի վըրեն.
Կարմիր ֆասըդ թեքել ես
Շեկլիկ քյանքուլիդ վըրեն:
ԲՄ 142

134· Կայնել ես յառի վըրա.
Փուաքյուլի ֆաս ես դըրել
Սաղաֆ մաղերիդ վըրա:
ՌՄ 111· ԱԴ 167

134. Կայնել ես յառի վըրա.
Նախշուն աղլուխ ես կապել
Ըրբսուռ մաղերիդ վըրա:
ՏԽ 209

Կայնել ա նավի վերան,
Բոյը չինարի ծըման.
Ջմուռ ֆասը դըրել ա
Շեկլիկ քաքուլի վերան:

676

Արեվը սարի վըրա,
Մամուռը քարի վըրա.
Ցես վոսկի սարք պիտեյի,
Իմ սիրած յարի վըրա:
ՀՄԽՄ 21

13. Արեգակը սարի վըրա.
Ցես մի արծաթի սարք պիտեյ ն:
ԱՋ 379

3. Ցես մի վոսկի սարք պիտի:
* 3. Մին թեվավոր դնուշ պիտի:
ԱԳ 269. ԲՄ 141
3. Ոխթը դյուկում քյարթաբար:
ԱԳ 92

677

Կաքավը քարի վըրեն,
Մախմաըը յերի վըրեն.
Մե վոսկե հեքալ պըտեր
Իմ դարդաչին յերի վըրեն:
ԱԲ 342

2. Մախմուռը քարի վըրա:

***

Կաքավը դարի վըրա,
Մամուռը քարի վըրա.
Մի թեվավոր հավք պիտի
Իմ աղըոր յարի վըրա:

678

Սերալ ըմ սերին յըրա,
Եղ սերիւն ըխպըրին յըրա.
Սերալ ըմ, պեց չըմ թողում,
Ըսուռնեն սերն ա յըրա:
ԱԺԹ 87

«Սիրել եմ սերի վըրա,
Են սառն աղբըրի վըրա.
Սիրել եմ, բայց չեմ թողում,
Ասըծու սերն ա վըրա»:

679

Թամքը թամքի վըրա,
Աղունիկը վանքի վըրա.
Իմ աղըոր ի՞նչ տեղ տեսար,
Թաղ(ա)վորի թախտի վըրա:
ԱԳ 264. ԲՄ 151

680

Ի՞նչ ես նըստեր հողին վըրա,
Ալ ես հագեր մոռին վըրա.
Երնեկ քեզ դըրկողին վըրա:
ԲՆԱ 67

***

Սուրբ Ակոբ ճամբու վըրա,
Տես՝ Արեվ եր ամպի տակին:

681

Կիր ըմ դըրա, հարցըրա,
Մինն ել դըրա դարձըրա.
Թե վոր քեզ աղջիկ չեն տա,
Ղայրաթ արա, վախցըրա:
ԲՄ 155

682

Արան տեղը չայիը ա,
Չայիը չե՝ տմայիլ ա.
Ղարիբ դյադին սիրել եմ,
Ցարաբ նանըս դայի՞լ ա:
ՀԺԵ 111

234. Ցարփաղը համայիլ ա.
Տըղա, քեզի առնում եմ,
Ցարաբ նանըդ դայի՞լ ա:

Ձակիլ քարը ղրուղ ա,
Ցաղրաղն համայիլ ա.
Ցես են դյադին աչք ունեմ,
Տեսեք՝ նանըս դայի՞լ ա:

***

Դաւախ աւջին պայիր ե,
Զորս եթքաֆիր չայիր ե:
ԱՓ 167

683

Լաւնահ անուշ բոլոր ա,
Մէկ քուխ ամպին մոլոր ա.
Ելանք սարեր քաղցըր նուշ,
Բոբիկ վոտներ կ'ելներ փուշ:
ՎԺԵՄ 11

684

Լաւնահին անուշ բոլոր ա,
Սըլը'մ ինք նըսաեր ա.
Ծամերն խոնվ կաժ կ'անի,
Խոսք կըթալիմ, նադ կ'անի:

Աղջի, Սըլը'մ, դու հի՞ւր (ո՞ւր) ես,
Ճես աղբյուր եմ, դու ջուր ես.
Ճես ղըղղըղամ, դու խմես,
Ճես վախենամ՝ դու ծըռես:
ՀԺԵ 86

Տես՝ Աբեք երթանք մանդըկի:

685

Ես ֆամբեքը ոլոր ա,
Ճես քեզ տեսա, մոլորա.
Մոլորիս մեկ ճար արա,
Ինձ էլ քեզ ընկեր արա:
ՌՄ 100· ԱԴ 165

686

Աբխալուղ կարեմ, յախեն ոլոր ա,
Հեղնաբես տեսա, մըտես մոլորա:

687

Գետը նի մըտա, խոր ա,
Ֆաթան չապիկըս նոր ա.
Իմ նանին խաբար արեք,
Ճես ոլքա–ոլքա կորա:
ՓՀ 159

3· *Խաբար արեք իմ նանին:*
ՏՒ 238

134· *Ջուրը մըտել եմ խոր ա.*
Խաբար տարեք իմ նանին,
Դիար–դիար յես կորա:
ՌՄ 117

***

Չեմ մըտնի գետը, խոր ա,
Վոսկէ հալալխես նոր ա.
Խաբար տարեք իմ մորը,
Ոչխար–գյուլա յես կորա:

*· *Ճես ոլքա–ոլքա կորա:*

688

Մըտել եմ գետը, խոր ա,
Վոսկա հալալխին նոր ա.
Ա՛յ նանի, մինն ալ կաբի՛,
Վոսկի կոճակնի չաբի:
ԱԴ 261· ԲՄ 132

689

Մըտալ ըմ կյետը, խոր ա,
Ֆաթան չաբեքըս նոր ա.
Ա՛յ յար, մինն էլ կաբե՛,
Թե՞ սարին ա, թե՞ հով ա:
ԱԺԹ 85

690

Ջանըս տակը խոր ա,
Ջըրու տենակը հո՞ր ա.
Այ ոխտը տարվան կորած նըշանած,
Պերած սաղվաթըս հո՞ր ա:
ԱԺԹ 88

691

Սըրտես դարդերը խոր ա,
Տունը մերը չի, նոր ա.
Բեֆտասըղ մարդի ձեռին
Հուրն–հավիտյան յես կորա:
ՏՒ 257· ԲՄ 147

692

Շըվանա ճիւրը չոր ա,
կռանըս մըեկնիմ, խոր ա.
Եսա իմ յարես գըընկլին
Թամամ տըօներիկու որ ա:
ԱԺԹ 87

«Շըվանա ջուրը չոր ա,
կուռըս մեկնեմ, խոր ա.
Ես ա իմ յարիս գնալուն
Թամամ տասներիկու որ ա»:

693

Մըե տըոնները չըրդըխավուր ա,
Սարերը լոխ ծիլավուր ա.
Ասոր են որին մատաղ,
Վըեր իմ ախպեր Քըջավուր ա:
ԱԺԼ 32

«Մեր դռները չարդախավոր ա,
Սարերը լոխ ձիավոր ա.
Ասոր են որին մատաղ,
Վոր իմ աղբեր Քաջավոր ա»:

694

Մինթանեզ գառ կըտոր ա,
Հագինըդ ալվան շոր ա.
Գու մեր տանը հարս գալիս՝
Մե՛ ասի թե յես կորա:
ՏԻ 191

695

Շորորա՛, Սալաթ, չորորա՛,
Լոդկեն Արշակին կ՚որորա:
ՆՀԳ 49

2. Նավակն Արշակին կ՚որորա:
(Վիպական յերգի կտոնակ)
ՀՄԽԱ 49. ԿԺԵ 2

Շորորա, դյամին, չորորա,
Լոդկեն ի մեջ կ՚որորա:
ՀԺԵ 54

***

Որորա դյամին, որորա,
Լոդկեն ինե կ՚որորա:
ՀԺԵ 54

Շորորա՛, Սալլատ, չորորա,
Ղայեղն Արշակիդ կ՚որորա:
ՋՐ 23

Շորորեր ջեյրան, չորորեր,
Դյամին Արշակուն կ՚որորեր:
ՎԺԵՐ 17

***

Շորորա՛, խանում, չորորա՛,
Շորորա՛, փեչերդ երեվա:
(Գրկնակ) ՏԻ 198

696

Գյամին գյաշեր դեմ Շոխուրա,
Ովան բարձեր բեռ իմ խինա.
Ովան գյացեր խարսնիս, կու ձենա,—
— Ջուսպ տարիք խելկան, մերկան,
Իմ նըշանըւն առնին, Քրիս տուն
է գան:

Որորա դյամին, որորա,
Լոդկեն ինե կ՚որորա:

Արեվն առեր դյամու մատան,
Ղարիբ խալքեր սիրու Քաշան,
Արշակու լեչ առան տարան:

Շորորա դյամին, չորորա,
Լոդկեն ի մեջ կ՚որորա:

Արշակ տարան մեջ խաչերաց,
Սալաթ կայներ վըր քարերաց,
Գուս—գուս արուն Թուխ աչքերաց.

Որորա դյամին, որորա,
Լոդկեն ինե կ՚որորա:
ՀԺԵ 54

ՀՄՄ. Մըանում եմ բաղը:

697

Ձեր բաղէ դուռը բաց ա,
Վոսանները չաղով թաց ա.
Ինձանից հեռացել ես,
Աչքերըս լիքը լաց ա:

ՀՄԽԱ. 8

4. Աչքերըս լիքը թաց ա:
ԱԴ 170

13. Մենձ բաղէ դուռը բաց ա,
Ցաբիցըս հեռացել եմ:
ԱԺԱ. 57

13. Բաղէս դուռը բաց ա.
Ցաբիցըս հեռացել եմ:
ԱԺԱ. 51

***

Ձեր բաղէ դուռը բաց ա,
Վոսանները չաղով թաց ա.
Ցաբիցըդ հեռացել ես,
Աչքերըդ լիքը լաց ա:

ԲՀ 164. ՌՄ 134. ԱԴ 173.
ՏԽ 208. ԲՍ 136

13. Մեր բաղէ դուռը բաց ա.
Ամեն ինձէ անսնկուս:

***

Ձեր խղու դուռը բաց է,
Վոսանները չաղով թաց է.
Ցաբիցըդ զատվեր ես,
Աչքերըդ թաց-մաց է:

ՎՄԱ. 96

698

Տանըս դուռը բաց ա,
Պուռիկ պուռիկ ավյած ա.
Ցորդան-դռչակ քցած ա,
Ցարըս վըրեն կըռնած ա:

ԱԺԱ. 61

699

Թոնդիրը բաց ա,
Վըրեն լի թաց ա.
Տասներկու չան ենք,
Մեկ չոր լի քած ա:

700

Ծաղիկ ունեմ, շատ բաց ա,
Սիրտըս քեզ հետ կըպած ա.
Ցերբոր քեզի մոտացա,
Հիվանդ եյի, սաղացա:

3. Ցերբոր դուն ինձ մոտ եկար,
Հիվանդ եյի, լավացա:

701

Ցերկինքն ամպել ա, գետինը թաց ա,
Սիրուհիս կայնել ա, երեսը բաց ա:
ԱԲ 336

Երկինքն ամպել է, գետինը թաց է,
Ցարըս քընել է, երեսը բաց է:
ՀՄԽԱ. 10

2. Ցարըս քընել է, դյարդանը
բաց է:

***

Ցերկինքն ամպեր, գետին թաց եր.
Իմ Թոսունի չանդակ բաց եր:

702

Առուն Թըռա անցկացա,
Շատ դարդերի դիմացա.
Ընկ տըղա, քեզի համար
Գիտե՞ս ինչեր իմացա:

ՏԽ 212

703

Դըռան առկին թաք կացա,
Ցերբոր գալրդ իմացա.
Վոսնները սեվ ջուր իջավ,
Ա՛խ, մեկ ձայնդ չիմացա:

ՏԽ 138. ԲՍ 157

704

Մուղնու առուն լողացա.
Գյուլի յայլուղ գողացա.
Ոխտը տարի հիվանդցա,
Ցարըս եկավ՝ լավացա:
ՄՔ 344

123· Մուղնըվա գյուլը լողցա,
Մուղնըվա չուշքեն գողցա.
Ցոթ տարի հիվընդցա:
ԱԴ 174

12· Մուղնի ջուրը լողացա,
Մուղնու չուշմեն գողացա.
(Մուղնա չուշեն գողացա);
(Մուղնի չուշկեն գողացա);

124· Մուղնըվա զեղը լողցա,
Մուղնըվա չուշեն գողցա.
Ցարըս եկավ, յես լավցա:
ԱՋ 390

***

Գացի վանքը, լողացա,
Վանա չէշկեն գողացա.
Իրեք տարի հիվանդ է,
Ցարիս տեսա, լավացա:

34· Ով եկավ, չը լավացա,
Նանիս տեսա, լավացա:
4· Աղբերս եկավ, լավացա:

705

Ելա, ելա, հեռացա,
Ղարիբ ելին մոռեցա:
Անուշ յարըս միտս ընկավ,
Մեջքըս առավ, կոռացա:

34· Ել ու դյուն կըշտիս չըկա,
Ձեռըս ծոցիս երեցա:
34· Կըշտիս ել ու դյուն չունեմ,
Ձեռըս ծոցիս երեցա:

***

Գացի, գացի, հեռացա,
Հեռու սարին մոռեցա.
Ենաեղ իմ յարին կարոտցա,
Կես ճամբուն քողի դարձա:
ՀԺՆ 81

***

Գացի, գացի, հեռացա,
Հեռու սարին մոռեցա,
Գարդ ու զարմով երեցա:
Ան 193

706

Գացի, գացի, հեռացա,
Բարձըր զեղին մոռեցա:
Գացի Թ'առնեննք Թագա հայց,
Անտեր Թուլան զիս եխած.
Փախա, եկա վեր դարին,
Հավար արի իմ յարին:
ՀՀ 321
Տես՝ Բարձըր սարեն եկա ցած:

707

Հոբս ու մորըս մոռացա,
Ել ու դյունից հեռացա.
Մի յարի խաթեր համար՝
Վախտիցը շուտ ծերացա:
Տի 173

***

Քու կրակովդ արեցա,
Տես՝ Ա'խ Մարո, դուն վախ Մարո:

708

Յա'ր, մի' գնա, երեցա,
Քեզի հավանիս կացա.
Գալըդ լավ եր ինձ համար,
Գընալըդ շատ ցավեցա:

709

Ձեր բաղի կըշտովն անցա,
Քեզ բաղումը չըտեսա.
Ծընձորներեն ախտվա ընկան,
Ներքա դունին հավաստա:
Տի 218

710

Ջաղջի դլունով յես անցա,
Անուշ հոտեն յես լըցվա:
ՀԺԵ 59

711

Ջուն եկի, եղի լափա,
Քու դաբդից հալա թափա.
Ջուն եկի, սարեր լըրխի,
Շուն յարուկ դամալ փոխի:
ԲՆԳ 123

712

Եսոր պաս ա, մկլունք ա,
Ամպել ա, պիսի ձուն գա.
Աղջի՛, բուկըդ սաղաթ ա,
Աբցունքներըդ ուլունք ա:

34. Աղջի՛, բուկըդ սաղաւէ ա,
Աբանքինը ուլունք ա:
ԱԺՄ 59

713

Ցա՛ր, արի եփենք քաբաբ,
Ամենքին կըտամ ջուղաբ.
Քանդի, ավերվի տունը,
Ով մնջանդ կ'ընկնի սաբաբ:

1. Ցարս եկավ, եփենք քյաբաբ:
ԲՍ 132

714

Դու ելել ես, կ'երթաս մարագ,
Վիղըդ երկեն, մնջըդ բարակ,
Կերածըդ մեղըր ու կարագ,
Հադիդ հալավ քե բումբարակ:
ԺՆ 66

Տըղեն ելար, կ'երթաս մարագ,
Քու ուտելուն մեղր ու կարագ,
Ինչոր կըխադնես՝ քե մըմբարաք
Հաժդը չինաբ, մնջըդ բարակ:
ԾՎ 36

Դու ելիր ես, կ'երթաս մարագ,
Թևվերդ երկեն, մեջդ ա բարակ.
Քու ուտելիք սեր ու կարագ,
Քու հադնելիք քե բումբարաք:
ԱԵ 193

Դուն ելիր եր, կ'երթեր մարագ,
Վիղդ ե երկեն, մեջդ ե բարակ.
Քու հագնելիք քե բունբարագ,
Քու ուտելիք մեղր ու կարագ:
ՆՀՋ 93

Եսմար ելե, կ'երթա ի մարագ,
Դիլբար ելե, կ'երթա ի մարագ,
Քո ուտելիս մեղր ու կարագ,
Քո հագնելիս լե քե մումբարագ:
ՀԺԵ 98

234. Բոյըդ երկար, մեջդը բարակ,
Կերածդը եր մեղր ու կարագ,
Հագիդ դեյրեն քե բինբարաք:

***

Դու ելել ես, կ'երթաս մարագ,
Վիղըդ երկեն, մեջդըդ բարակ,
Ինչ որ հագնիս՝ քե մունբարակ:
ՔՄՎ 23

3. Քու կերածդ ե մեղր ու կարագ:
ՏՒ 87

23. Քու ուտելուն մեղր ու կարագ,
Հագնելուն քե բունբարաք:
ՔՄՎ 30

23. Քյո կերելիս մեղր ու կյարագ,
Քյո խագնելիս քե բիմբարաք:
ՏՒ 244

Դու ելար, դընացիր մարագ,
Թևվերդ երկեն, վիղըդ բարակ,
Հագիդ հալավ քե բինբարակ:
ԱԵ 206

Ելեր ես կ'երթաս կը մարագ,
Թևվերդ երկան, մեջդըդ բարակ,
Կերածդ ե միչա մեղրով կարագ:
ՋԲ 19

***

Ելեր ես, կ'երթաս Վարագ,
Ինչ ես խագէ՝ քե մուխբարագ,
Ջյո կ'երածն ի սեր ու կարագ։
ՎՍԱ 97

13· Տընեն ելար, կ'երթաս Վարագ,
Քո ուտած՝ մեղրը կարագ։
ՆՀԳ 47

Ելեր ես, կ'երթաս ուխտ Վարագ,
Քո ուտելիք սեր ու կարագ,
Ինչ հագեր ես՝ քե մուրաբեք։
ՍՄ 299

***

1—3· Դերվիշն ելև, կ'երթա մարագ,
Ուր (իր) ուտածն ի սեր, մեղր, կարագ։
ՍՎ 44

***

Տես՝ Իմ յարիս մեջքը բարակ։

715

Աղջի՛կ, ի՞նչ եր դիլակըդ,
Ողով կոճկուն բիլակըդ·
Մի՛ բանա բայազ դյոհըդ,
Ինձի վառեց կըրակըդ։
ԱԴ 162

Աղջի՛, ի՞նչ եր դիլակըդ,
Ողւվ–կոճկով բիլակըդ·
Մի՛ բանա ճերմակ դյոկըդ,
Ինձի կ'եվես կըրակըդ։
ԱԳ 92

124· Աղջիկ, ի՞նչ ե դիլակըդ,
Ողուն կոճակ բիլակըդ...
Սիրտը քցեր կըրակը։
ՀԺԵ 125

***

Աղջի՛, ի՞նչ ա դիլակըդ,
Ողն ու կոճակ բիլակըդ·
Մի՛ բանա ճերմակ կուրծքըդ,
Ինձ դոլեց քո կըրակըդ։
3· Բաց արա ճերմակ դռչըդ։

***

Տըղա՛, ինչ ե դիլակըդ,
Ճախեն կոճկուն ելակըդ·
Մի՛ բանա ճերմակ դռչըդ,
Վառեց ինձի կըրակըդ։
ԱՋ 389

124· Տըղա, ի՞նչ ա իլաղըդ,
Ողւվ–կոճկով բիլաղըդ·
Ճարիդ քըցեր կըրակը։
ԱՒ 341

716·

Ներսեն կըլեպ պըռաշըդ,
Խընճօրի կըլեպ թուշըդ·
Շեկո՛, քու խաղին ուտեմ,
Սիխտակ ու մարմառ դռչըդ։
ՀԺԵ 110

Խընճօրի կեղեվ թուշըդ,
Ներսեն կեղեվ պըռաշըդ·
Ինձ հալ ու մաշ են արել
Մարմարից սիխտակ դռչըդ։
ՏԽ 151

717

Տըղա, տես քու ճարըդ,
Թող դա ինձի քու չարըդ·
Հերիք ինձի լացընես,
Ձի՞ յես եմ քու ճըրագըդ։
ԱՋ 385

718

Նազ արի՛, նազ արի՛, քաշեմ նազերըդ,
Եպրիշիմ թելերով հիւսեմ մազերըդ·
Հազցնենք, կապցնենք, մարոնցդ ղրկենք,
Բեչեդ վրադ ձգենք, եաեվեդ հայինք։
(Հարսանեկան)
ԲՆԱ 557

719

Քանի՞ մեկ, քանի՞ մեկ աղ քու
նաղերըդ,
Անմահության ջրով վըլա մաղերըդ.
Ես ուր (որ) երթամ, որո՞ւ
տ'աննես նաղերըդ,
Եկուր, աղվոր աղջիկ, հարս եղար
մեզի,
Ճախուք, ղըմրուք, անդին քար
եղար մեզի:
(Հարսանեկան)
ՀՄ. 416

***

Քանի՞ մեկ, քանի աս քու նաղերըդ,
Վարդին ջրով լըվացեր եմ
մաղերըդ,
Ես ալ չըլամ, վորո՞ւ տ'րնես
նաղերըդ.
Զարկիր, կըրակ տըվիր, կ'երիմ
կըվառիմ,
Ջըրի պես ծարավ եմ, ճամրուդ
կընայիմ:
(Սիրերդ)
ԲՆՄ. 324

720

Աղջի՛, չամամ ծըծերըդ,
Թողնե՛ս բանամ ծըծերըդ,
Ինքն իրեն խը-խըշում է
Սխալտակ քալամ ծըծերըդ:
ՄՀ 134

721

Անգին քար աւամներըդ,
Թանդ մեղրամոմ մատներըդ.
Թող մի երեսիս դիպչի
Փախուկ չարմատ ձեռներըդ:
Տի 151

722

Ադջի, ինձի վառեց սերըդ,
Ծաներկվի թյամիուր մերըդ.
Դուշերդ կախ ես արել
Շահմարի պես մաղերըդ:
Տի

723

Երկնից կամար ունքերըդ,
Ինձի վառեց քու սերըդ.
Մատաղ լինիմ սեվ աչին,
Ես կարոտ եմ քու պաչին:
ՀՄԹՀ. 42

724

Մատաղ լինիմ քեզ ու մորըդ,
Գըլուխըս ղուրբան քու հորըդ.
Ասաված պահե ջուխտ ազգերըդ.
Երվա վառվա յես, չիրին:
Տի 224

725

Ախչոն գընաց Բայազիդ,
Թուբը կըպավ բողազիդ:

726.

Դու կաղնել ես դու թանիդ,
Շըրմըշըղը բերանիդ.
Դու բարակ, մեջըդ բարակ,
Ղալ գընամ ջնյրան չանիդ:
Ա.Զ 376

124. Ընտրել ես ջուխտ գերանին,
Շըրմըըրուղը բերանին...
Ղալ գընամ ջնյրան ձեռիդ:
Ա.Զ 381
Տես՝ Շողըը կըկաթի գերանին:

727

Կարմիր ադյուխը ձեռիդ,
Ա, բինիչը կըռներիդ.
Չինավոր Սուրբ Սարգիսը
Բալքի հասնի հավարիդ:
Տի 175· ԲՄ 153

728

Ջրրից ես գալիս, կուժն ուսիդ,
Մատաղ գինամ յես քու լըսիդ.
Ասըծու կենծակը գարկի
Են քու սեղահոգի վիճիդ:
Տի 228

729

Գերի յեղա աչքերիդ,
Համարակալ ընչքերիդ.
Եսենց անդուռ սիրտ ունիս,
Վոր չես ճանչնա ընկերիդ։
ԱՀ 137

730

Առավոտուն հետ խաղերուդ,
Մայիլ եմ սըրմա մազերուդ,
Ձեմ դիմանար քու նազերուդ։
ՀԱ 420

***

Առավոտուն երկու մարդ,
Տես՝ Առավոտ լոր մասալ արա։

731

Ծաղիկ եմ ցանե, չոլս բոլորն ի վարդ,
Վարդի հոտն անուշ կըցրվի իմ դարդ.
Փընջիկ մի քաղեմ ուղարկեմ յարիս,
Կարուտըս չըմնար վեր ասըլմորիս։
ՎՍԲ 40. ԺԹ 31

732

Բաղչե մ՝ սընկի, բիթուն քյաֆուր վարդ,
Ելա քաղելու, չելավ ձի կըսմաթ.
Բաղչե մ՝սընկեցի, բիթուն ղըռընդաթ,
Ասաված մենակ դիտիր քեքախոխ դարդ։
ՀԺԸ 45

733

Կ՝երթամ վանա բերդ,
Վոտքերս չի դա հետ.
Կ՝ուզեմ դառնամ յետ,
Իմ յարն առնեմ հետ։
ՀՀ 328

4. Իմ յար բերեմ խետ։
ՎՍԱ 37

14. Ես հանք վանա բերդ.
Իմ յար չի դա խետ։
ՊՎ 122

***

Ժամի բոլորն ավազ ե,
Տես՝ վանքի բոլորն ավազ ա։

734

Ջերըս լիքը խվազ ե,
Ցարիս թուշը դյուվազ ե.
Ջերըս լըցի ծակած եր,
Ցարիս թուշը խածած եր։
ԱԵ 204

735

Ղարսա ջուրը պաղ բուղ ե,
Իմ յարըս թուխլի կ՝ուզե.
Կըտրել ե թուխլու թելը,
Ջարկել եմ չաթմի ծերը։
ԱԳ 172

736

Հերանցըս դուռը դուղ ե,
Հերըս չա՞տ բայըղ կուզե.
Հարուր մանեթին աշե,
Պալտոնը թեվըդ քաշե։
ԱԳ 100

134. Հերանցըս կալը դուղ ե.
Ջաքմանի թեվեն քաշեք,
Իրեք հարուրին աշեք։
ԱՋ 388

Տես՝ Հերանցըս դուռը դուղ ա։

737

Աղջիկն եկեր պար կ՝ուզե,
Մարդաբիտներ չար կ՝ուզե.
Հըլը պագ ըմ չըտըված՝
Ինձեն անգին քար կ՝ուզե։
ԱԳ 92

738

Ջըրև մէջին հավուղ ե,
Հադինըդ դանավուղ ե.
Դանավուղը քաշում ա,
Աղջիկ տըղին խաբում ա:

34. Դանավուղը քաշել ա,
Աղջիկ տըղին խաբել ա:
Տես՝ Ջըրի մէջի ճիլ խոսը:

739

Առավոտուն կ'ելլես, արևվ կուգաթե,
Ինձանդ որ կուբանաս, մեղըր
կուկաթե.
Եկու նըստինք, անուշ անուշ
խոսքաթե:
ՀՄ. 415. ԲՆՄ. 101

***

Ջաղացիս դուռը տաքի ե,
Տես՝ Տաքի ա:

740

Երկինքն ամպել ե, դետինը մուխ ե,
Ճիս քեզ սիրել եմ, ինչ ասեն՝
սուտ ե:
ՀՄԽՄ. 10

741

Իմա զարդամին, մուխ ե,
Ճիվս ի ընկավ քուխե.
Ասործու խաչմին նըստա,
Ես իրիկուն կիրակիմուտք ե:
ՀՀ 323

742

Ամպել ե, երկինք մուխ ե,
Աչխարքի վերջը սուտ ե.
Ինչ իմ սիրածն ինձի ասեն,
Բիրադի ասեն՝ սուտ ե:
ՌՄ 135. ԱԴ 174

Տես՝ Ամպել ա բուխա-բուխա:

***

Աչքերդ խաժամուժ ե,
Տես՝ ... խաժամուժ են:

743

Քաղցըր լեզուդ քալի քալ ե,
Թուխ աչքերըդ գաշ ու լալ ե.
Տեսնողն կըլնի բոյիդ հեյրան,
Մեկ չինաբի սալվի տալ ե:
ԲՄ 153

744

Աղվոր, քու հագածըդ ալ ե,
Ելի, խալուն վըրա քալե.
Քալե ու մանըրտիկ քալե,
Ալուկ վեչերըդ վեր ծալե:
ԲՆՄ. 100

Աղջիկ, քու հագածըդ ալ ե,
Ալուկ վեչերըդ վեր ծալե:
Քալե ու մանըրտիկ քալե,
Քու աղքուկ բոյկըդ երեվա:
ՀՄ. 414

Ելե, խալուն վըրա քալե,
Քալե ու մանըրտիկ քալե.
Չարսնուկ, քու հագածըդ ալ ե:
(Չարսանեկան)
ԲՆՄ. 557

745

Ինկ մանչուն ֆասը ալ ե,
Դառնա, դառնա ինձի կ'ասե.
Ինձեն քեզի ֆայդա չըկա,
Գընա, դընա, ճամփադ աշե:
ԱԳ 94

4. Գընա, դընա, ճամբադ քալե:

746

Հադինըդ գարմիր չալ ե,
Կերած կաքըդ հալալ ե.
Զըլինի, դ'որ ինձ թողնես,—
Ցարըդ քեզ պես մարալ ե:
ԲՄ 126

747

Հագիը չուխիկըդ, քալե՛.
Տեսնամ՝ բոյիդ կըվայլե՞.
Ելնեմ, ըսեմ աղայիդ,
Բոյիդ հատ մ՚ալ Թող կարե՝:
ԲՆՄ 624

***

... ելել է. պըլել է. քակել է. տըփփել է. ամպել է. սառել է. փըռվել է. բացվել է. պատել է. ձըննոտեր է. բերել է, գըրեր է. բռլորել է. ընդել է. հեշտացեր է և նմաններըը տես՝ եղել ա. պըլել ա. քակել ա. ամպել ա. սառել ա. փռվել ա և նմաններբի կարդի մեջ:

748

Հովիկն հովւ տուր ու քելե,
Դոշըդ Քաւի տուր ու քելե:
(Կրկնակ)
ԱՋ 386

749

Անձրեվն եկե, ջուր է չըխե,
Իմ յար դիւր ամալն է փոխե,
Երդըմցեր է՝ չեմ չի կոխե:
ՋԲ 22

750

Շահարի անյէը փոխե՛,
Շահիդ դալը է, տար փոխե՛.
Ի՞տով ինձ դ՚ուզիս խափե՛,
Տար հալե՛, աճկըս կոխե՛:
(Աղջիկը չի հավանում իր նշանածի բերած ընծաները)
ԹՄԿ 63

751

Աղջի՛. մազերըդ Քուխ է,
Ես ի՞նչ բաբուխի մուխ է,
Մուխ անողը քոռանա,
Ինձի, քեզի մոռանա:

***

Աղջի՛, մի՛ դա, մեր տուն ծուխ է,
Տես՝ ... Մուխ ա:

752

Հորըս դուռը սալած է,
Ձին այրած կայնած է.
Ձափուկ երա, ինձի տար,
Դուշմաններըըս կայնած է:
ՀԺԵ 126

753

Կարմիր քարը տաշած է,
Բոյըս դալամքաշած է.
Ինչ ենեմ վոր քաշած է,
Սիրտըս հալած մաշած է:
ՀԺԵ 126

123. *Ջաղցի դուռը տաշած է,*
Ցարըս դալամքաշած է.
Ղալամ քաշիլն ի՞նչ կ՚ոնե:
ԹՄԿ 63

23. *Բոյըս դալմով քաշած է.*
Ցես ի՞նչ կ՚ենեմ եղ բոյը:
3. *Ի՞նչ անեմ դալամ բոյը:*
3. *Ի՞նչ անեմ դալամքաշը:*

***

1–4. *Կարմիր քարը տաշած ա,*
Բոյը մինչին քաշած ա:
ԿԺԵ 12

***

Կարմիր քարը տաշած ա,
Բոյըս մեջը քաշած ա.
Ինչ անեմ վոր քաշած ա.
Սիրտըս հալումաշած ա:
ԱՒ 345

234. *Բոյըս դալմով քաշած ա.*
Ի՞նչ անեմ դալմով քաշած ա,
Սիրտըս հալած մաշած ա:
ՀԺԵ 111

***

1–4· Կարմիր քարը տաշած է,
Սիրտս հալած մաշած է:
ԿԺԵ 65

754

Ջաղաքս դուռը տաշած է,
Մահրամաս դյուլքաշած է.
Իրենք որ է չեմ ասեմ,
Սիրտըս վորիս քաշած է:
ԱՑ· 96

24· Բոյըս դալամքաշած է.
Սիրտըս վորիս մաշած է:
ՀԺԵ 120

Ջաղցի դըռներ տաշած եր,
Գյուլմահրամին քաշած եր.
Եսոր, երեկ չեմ տեսեր,
Ինչքըս դըլխես կորած է:
ՆՀՋ 88

755

Ժամի պատը տաշած է,
Ֆեզի վըրեն քաշած է.
Ճամփեդ պաշարի համար՝
Ջաղ հավերը խաշած է:
ՏԻ 254· ԲՄ 124

***

Տես՝ Ջաղցի դըռներ տաշած են:
Տես՝ Ջաղցի դըռներ տաշած եր:
Տես՝ Ջաղցի քարը տաշուկ եր:
Տես՝ Ջաղացիս դուռը տաշած:

756

Մե բարձ ունիմ, դըրած է,
Ցարըս վըրեն քընած է.
Աչք ու ունքին հավան եմ,
Մե քիչ ոսկըը քըրած է:
ԹՄԿ 63

124· Բարձըը յաղմա դըրած ա,
Ցարըս վըրեն քընած ա.
Մի քիչ ոսկըը տարած ա:

Տես՝ Թըվանքն ուսիդ դըրած:

757

Ա դիշեր մարկոսակ է,
Աղվոր, չափըդ խասակ է.
Եկուր, ինձի քեհ մի տուր,
Վաղը յետի պըռակ է:
ՀԱ 460

758

Կանչե՛, կըռունկ, կանչե՛, ճանըդ բարակ է,
Ըր որ խաբեր մը դա, սիրտը կըրակ է.
ԲՆԲ 42

759

Կանչե՛, կըռունկ, կանչե՛, ճենըդ բարակ է,
Ցարըս կորուցեր, հալըս յաման է.
Կըռունկ, եղած տեղըդ չայիր— չիմանե է,
Ախարհքըն արեգակ, ինձի դուման է:
ՋԲ 21

Տես՝ Կանչե՛, կռունկ, կանչե՛ քանի դարուն է:

760

Պարզ դիշերը լուսնյակ է,
Իմ յարը արեգակ է.
Արեգակի պես յար ջան,
Ծոսքըդ մեզը ու կարագ է:
ՏԻ 190

761

Կեսերըս հագածը փուլլու չապիկ է,
Գիտես քի քու սըղադ ինձի երիկ է.
Ալ չեմ դիմանար, մա՛րըս, հերիք է:
(Պանդխտի)
ԲՆԲ 680

762

Ճերմակ սարը մոտիկ է (ա),
Ձյունը եկել, դոտիկ է (ա).
Մեռնիմ իմ յարիս բոյին,
Տունս տանըդ մոտիկ է (ա):
ԱԴ 173

123. Սինամ սարեր մոտիկ ա,
Ձունը եկեր, դոտիկ ա.
Մեռնեմ իմ յարիս բոյին...
ԺԻ 60

***

Սինամ սարեր մոտիկ ա,
Ձուն ա եկեր, դոտիկ ա:
ԱՀ 440

Տես՝ Ելանք սարերը մոտիկ:

763

Ցայլի ձորեր խոռնակ ե,
Ձիլ խոտը չուրի ծունկ ե.
Ցարըս մեջը նըստած ե,
Գիտես ըն անուշ խունկ ե:
ՏԻ 197

764

Հելվարն իրև, քերի գահ ե,
Ջուտը սարեք յարոլա, վա՛հ ե.
Աչքունք կուլեր, սիրտն ուրախ եր.
Սըրտին մեռնիմ, սեր կեր ի նե,
Աչից մեռնիմ, դեղ կեր ի նե:
ՀՀ 305

765

Սարին տակը մեծ դեղ ե,
Ջըրեր խառնած մեկ տեղ ե.
Իմ յարըս ինձ չի ճանչնա,
Ես ըլըր միառ ո՞ւր տեղ ե:
ԱԳ 101

1. Ջաղցկ տակը մեծ դեղ ե:

766

Գամբախ Բուլանըխ, ի՞նչ անուշ դեղ ե,
Երկուսս մե չալիկ, փողպատն ի նեղ ե.
Ցարիս մեկ պագն ի սըրտիս ի դեղ ե:
ՌՄ 59

***

Մըչու դաշտ, կըտեն, խորտակիք տեղ եր,
Երկուս մեկ չալիկ, փողպատներ նեղ եր.
Գու չունէ որ կըշընէեր, իմ խոցին դեղ եր:
ՀԺԵ 91

***

1—3. Գացինք Բուլանուղ, ի՞նչ անուշ դեղ եր,
Երկուս մեկ չալիկ, փողպատս նեղ եր:
ՀԺԵ 127

767

Ա ի՞նչ տեղ ե(ր), աս ի՞նչ դեղ ե(ր),—
Բաղեղ քյաղաք անուշ տեղ ե(ր).
Կարմիր սոլեր ոտաց նեղ ե(ր),
Բալաք աչքեր խոցուն դեղ ե(ր):
ՀԺԵ 58

***

Ասին՝ ի՞նչ դեղ է, ո՞ւր է.
Բաղեղ քյաղաք անուշ տեղ է.
Կարմիր սոլեր ոտքերուն նեղ է,
Ասլի լաչին դըլլուն եղի,
Կանաչ կապեն վերեն եղի:
ՀԺԵ 60

768

Ճախս հըլունը հաղեղ ե,
Ջանըս ջանիդ լայեղ ե.
Ելար դուռը աչեցիր,
Ջիվանի ումըդդ մաչեցիր:
ԱԳ 96

4. Ջիվան ջանս մաչեցիր:
Տես՝ Սեռիկը էլեն յեղ եր:

769

Ես աչխարհը հարամ ե,
Սըրտիս վըրա յարա մ'ե.
Մեռնիմ, հող տապանն իջնեմ,
Սերըս անոր վըրան ե:
ԲՆԳ 665

770

Ա՛ղ դիշեր համբարձում է,
Աղվոր նեռըն հարցում է.
Դուն ու ինձի յար չիլիս,
Մեղք աշխարքս անցո՞ւմ է։
ՀԱ 464

771

Ջազգի քարը դառնում է,
Աղջիկ տըղին առնում է։

772

Ոսկիս չիԹԹե խաղի յե,
Ի՛ն ինչ կ'ըսե՝ Քոզ ըսե,
Ցարը ճահախս յաղին է։
ԲՆԱ 623

***

Կաղբա քարերն աղի յե,
Տես՝ ... աղի յա։

773

Մառնուս ակը մավի յե,
Ա՛ խ՞նչ դըժվար տարի յե.
Շան աղջըկներ, բան բանեցեք,
Կարդըվելու տարի յե։
ՀԱ 459
Համմա. Հաց կըԹխեմ դարի յա։

774

Մատիդ մատնիք մավի յե,
Աղջի՛, եդ ինչ դավի յե.
Սերն ի՞նչ է, սավդեն ինչ է,
Ես պարի դայլեն ինչ է։
ԱՀ 136

775

Հաց եմ Քըխե(լ), դարի յե (յա, յեր),
Իմ յարը սաֆարի յե (յա, յեր).
Մեռնիմ սաֆար գընալուդ,
Խոսքերըդ չաքարի յե (յա, յեր)։
ԱԳ 96. ՋԲ 35

123. *Հաց իմ Քըխե, դարի յե,*
Ցար ունիմ, սափարի յե.
Սափար գընալուդ մեռնիմ։
ԹՄԿ 62

3. *Սաֆար երԹալուդ մեռնիմ։*
ՓՀ 160

34. *Սաֆար գընալուն մեռնիմ,*
Խոսքերը չաքարի յա։
ՏԽ 215

3. *Ցար ջան, սաֆարիդ գուրբա...*
ՌՄ 116

123. *Ալիր եմ մաղել, դարի յա,*
Իմ յարըս սաֆարի յա.
Ցար, քու սաֆարին մատաղ։
ԱՀ 141

***

Մեր հանդերը դարի յա,
Իմ աղբեր սաֆարի յա։
Աղբեր, սաֆարիդ մատաղ,
Խոսքերըդ չաքարի յա։

23. *Ցարըս ել սաֆարի յա.*
Ցար, քու սաֆարիդ մատաղ։
3. *Սաֆար գընալուդ մատաղ։*

776

Գյուլընկներըդ դարի յե,
Կաքավներըդ մավի յե.
Ցերևք որ է չեմ տեսել,
Գիտեմ՝ սխտոր տարի յե։
ԱԵ 202

***

Մեր արտերը դարի յե,
Կաքավները մարի յե,
Ես քանի ու չեմ տեսել,
Թամամ սխտոր տարի յե։

2. *Կաքավները տարի յե։*

777

Ես տարին չա՛ռ չոր տարի չէ,
Կերած հացներըս գարի չէ.
Իմ քոռացած սեվ բախտիցը,
Անուշ յարըս սաֆարի չէ:

Տի 222

778

Ջարի գլուխ մերի չէ,
Ջարի տահը գարի չէ.
Ղայրաթ երեք, աղջկներ,
Նըշանվելու տարի չէ:

ԱՋ 389

779

Իմ յարը սիրացու չէ (յա),
Հատուկ տեբտեբացու չէ (յա).
Մազերը վոր վեր անէ,
Մի գեղի քյոխվացու չէ (յա).

ԲՍ 124. Տի 257

780

Անուշ մերիկ, գարդ մի՛ անե,
Նաղլի հարսիդ ապիղ պահե,
Ջուրի աստված ինձ ազատե:

Տի 115

***

Սխատակ ձին նալն ի՞նչ կ՚անե,
Տես՝ Բոզ ձի չեմ, նալն ինչ անեմ:

781

Սալդըթի մեր լըվացք կ՚անե,
Շուշպեն ալեսրընին տանե,
Սալդատ տըղին ազատ անե:

Տի 115

***

Ջաղացս ալուր կ՚անե,
Տես՝ Ջաղաց կ՚աներ ալուր:

782

Իգդիրու սարերը դուման ե,
Մաքոյիս հալը յաման ե:
(Կրկնակ)

Տի 253

***

Իգդիրու սարերը դուման ե.
Սալդատը եղել ա գյադուկը,
Սալդատը եղել ա Ալաջեն:
(Կրկնակ)

ՌՄ 136

783

Լեռները ձուն կուգա, ովան
դուման ե,
Ցարեն զատվողին հալը յաման ե.
Ցես ալ ի՞նչ ըսիմ, որըս լըման ե:

ԲՆԲ 680

784

Լալան քյնից դին անե,
Մըրը վըրթիերը դեն անե,
Հըրան կյամ ա իմ յարը,
Կոխկես նըստե, սեր անե:

ԱԺԼ 48

«Լալան դնաց դին անե,
Մեր հորթերը դեն անե.
Հրեն գալիս ե իմ յարը,
Կողքիս նստի, սեր անեն»:

785

Սըրտիդ մեջը բոստան ցանե,
Ծաղիկն ու Թուփը լավ բան ե.
Ցես եղ կուգամ հոտ քաշելու,
Աբռըսունքովըս ջըրելու:

Տի 217

786

Եսոր մութ ու լուս կ՚ենե,
Տանտեր եկեր՝ դուրս կ՚ենե.
Ով վոր չի գա եղա պար,
Մեռնի իր յար, կըտրի ճար:

ԱՀ 138

787

Կըռընկիլ պես վիզդ երկեն ե,
Դյարդանըդ երկու քիլ լեն ե.
Ձեր ոջախը չեն ու չեն ե:
ՏԽ 166

788

Ցար կայնի՝ լըվացք կ'ենեն,
Խըռով և մացի քենե.
Ցար արի՛ ու յար դընա,
Իանե խըռով մի՛ մընա.
Մեռնիմ քու բաժին–բոյին,
Ռու մաղուչ Թոսուն սոյին:

***

Իմ ուղածը դեղեն ե,
Տես՝ դարաֆիլը դեղին ե:

789

Ցար բընողի սիրա սեր չելնե,
Ցար սիրողի սիրտ յեղ չելնե:
ՎՄՍ. 44

790

Դոյնար, դոյնար, դոյնար ջան,
Դոն–դոն, դոնդիկն ե,
Թաղավորի զոնքիկն ե:
(Կրկնակ)
ԱԴ 165

791

Իմ հարսըս հենց ես տանն ե,
Ըստեղ նըստած կար կ'անե.
Բաղդադու սեվ չալիկը
Ինձի չուխա կըկարե:
ԲՍ 145

792

Ցնրկինքըն ամպել ե (ր), լինչ անուչ
Քոն ե (ր),
Գամ, դընանեն անցընեմ, հոգյակըս
հոն ե (ր):
ՀՄԽՄ. 10

2· Եկա, դընանեն անցա,
Ջանանըս հոն եր:
ԺԽ 22

***

Ցերկինքը ամպեր եր, լ՞ինչ անուչ
Քոն եր.
Եկա, դընանեն անցա, Ջանանըս հոն
եր.
Երեցա, խոբվեցա, աս լ՞ինչըղ բակ
եր.
Գընը, դասլիկ խային, յար չեղար
մեղի:
ՋՔ 21

34· Երեցա, վառեցա, ես լ՞ինչըղ
տուն եր.
Գընա, դասլիկ խային, յար չեղար
ինձի:
ՏԽ 97

234· Կայնա, մայիլ յեղա, Ջան
աղջիկս հոն եր.
Երեցա, խոբվեցա, ես լ՞ինչըղ
բան եր.
Սիրուն, ասուված սիրես, դիս
մի՛ լացըներ:
ՆՀՋ 85

234· Կայնա, մայիլ եղա,
Ջանանըս հոն եր.
Այրըվա, կըրակվա, ես լ՞ինչըս
բան եր.
Ցար, եղ քու դարդերըդ, իմայի
աչքերըդ:
ԱԵ 209

234· Կայնա, մայիլ եղա, Ջանանըդ
հոն եր.
Տո՛ յար, ասուվածդ սիրես,
դուշդ մի՛ բանա.
Սիրով սովդաքյար եմ, յես չեմ
դիմանա:
(Աչուղական)
ՀԺԵ 96

***

Գուճուր աղջիկ, մի՛ Թոնե,
Տես՝ Գուճուր աղջիկ մի՛ Թոնի:

793

Բարճիս երեսը նըշխուն է,
Ջուրջըս անունը Դըշխուն է.
Ինձի սիրող երկին տըղեն,
Աստված վըկա, չաշխուն է:
Տի 239· ԲՍ 130

794

Սարին են դոլը ձյուն է,
Ես դոլըս հավքի բուն է.
Հըրես յեկըն իմ յարը
Շելակը թավ թավ հուն է:
ԱԳ 265

795

Նանչե՛, կըռունկ, կանչե՛, քանի
դարուն է,
Ղարիբներուն սիրտը դունտ դունտ
արուն է.
Կանչե՛, կըռունկ, կանչե՛, ձենըդ
բարակ է,
Ցարիս լեզուն թաղա մեղրած
կարագ է.
Կըռունկ, եղած տեղըդ չայիր—
չիմանա է,
Աչխարհքը արեգակ, ընձի դուշման է:
Տի 86· ԺԻ 22
Տես՝ ... Ձանըդ բարակ է:
Տես՝ ... Ձենըդ բարակ է:

***

Կանչե՛, կըռունկ, կանչե՛, քանի
դարուն է,
Ղարիբներու սիրտը դունդ դունդ
արուն է.
Ֆու իմած տեղըդ չայիր—չիմանա է,
Աչխարհին արեւակ, ինձի դուշման է:
Կանչե՛, կռունկ, կանչե՛ բարձր
սարերին,
Գնացեր եմ ղարիբ երկիր, վախեմ
մեռնելեն.
Մի՛ լա, մարիկ, մի՛ լա, չես ղարիբ
տեղ եմ,
Վաթանիս հողի ջըրին չես կարոտցեր
եմ:
ՋԲ 34

796

Բիւլբիւլը կ'կանչե՝ ասոր դարուն է,
Մի՛ խոսիք, մարկըներ, սըրտիկս
արուն է,
Սիրական յար մ'ունիմ, ան ալ
հեռուն է:
ՀՄ 461

Տես՝ Բիւլբիւլն ալ կու կանչե բաղչե
բարի պես:

797

Սեվ հավի ձուն փուրն է,
Իմ յարը Գյանջու կուռն է.
Գյանջա, քու սարը փուլ դա,
Բալքի իմ յարը ռուն դա:
ԳՀ 164

1· Սեվ հավի ձուն փորն է:
ԱԴ 171
Տես՝ Ջրի են կուռը յանջա:

798

Լե բըխոլելե.
Անուշ յար Ջան, դըռնեն դուս արի,
աչե՛,
Ես իմ ցիվան Ջանըս քեզի փեշքաշ է:
(Կրկնակ)
Տի 255

799

Ցարը իրիկուն կ'աչե,
Վոր ինձի իր քովը քաչե.
Վա՛յ անիծվի քու հերը,
Վոր քեզ պես ինձ չըմաչե:
ԲՍ 153

800

Ուրադը փեսին կըտաչե,
Սերըդ իմ սիրտը կը մաչե,
Բարակ սըրտով ինձի աչե:
ՋԲ 19· ԺԻ 14

801

Բաղչի բոլորը դամիչ է,
Ջերբա լիքը քիշմիչ է,
Աղջի, ճրպագը լուս տու,
Ջիբիս քիշմիշը դուս տու։

ԱԶ 389

***

Բաղ ըմ ունեմ դամուշ է,
Տես՝ Բաղչի բոլոր դամիչ ա։

***

Ծառին տակը մըչմիչ է,
Տես՝ Իմ քարի տակ կա չուչա։

***

Մեվ ամպերը պարզում չէ,
Տես՝ Մթընաել ա, պարզում չի։

802

Բոբիկ մի՛ քելե, վուշ է,
Սիրունիկ, պապղ անուշ է։
(կրկնակ)

ՀՄեՆ. 42· կԾե 1

Տես՝ Ջուն գնեմ Թավեն խաչեմ։

803

Բրլրուլ ես, մի խաղ կանչե,
Մարալի պես տաղ կանչե.
Նալանի յար, քեզ մեռնիմ,
Թող աչխարքը ամանչե։

ԲՍ 127

804

Մարանը մեծցեր է, պապա կու
կանչե,
Ան տեսնող կըտրիճը սըրտեն կու
հառչե,
Մարիկ, ելի՛ դուն ալ ատուծու
կանչե՛։

ՀՍ. 460

805

Դուռնիվեր ես կայներ, դըրկածըդ
մանչ է,
Հադածըդ սերաս եր, վըրան
կանանչ է,
Քեզ տեսնող կըտրիճը սըրտեն կու
հառչե։

ՀՍ. 415

2—3· Հադածդ սերաս եր, վրան
կանաչ է.
Քեզ տեսնող կտրիճն ալ սրտեն
կուհառչե։

ԲՆՍ. 101

***

Առավոտուն կ'ելլես, դըրկածըդ
մանչ է,
Հադածըդ չերաս, վրան կանաչ է։
(Հարս տանելու)

ԲՆՍ. 557

806

Ուռի ծառը կանանչ է,
Ջարդ ու բարիդ ճանանչե։
Գող մարդկանցից հեռացիր,
Վար խիղճըդ քեղ չըտանջե։

ԲՍ 154

807

Ծառի քոքը կանանչ է,
Ցարը յարին ճանանչ է.
Ինչքան վոր նեղ տեղ ընկնիս,
Մուրը կարապետին կանչե։

ԱԴ· 169

1· Ծառի տակը կանանչ է։

808

Ջաղրը մ'ունիմ, կանանչ է,
Մեկը դուխ-դուլու մանչ է.
Ըռախին բարի բան չի,
Գինին խմե՛, խաղ կանչե։

34· Մենծ հարսը աղեկ բան չե,
Պզտիկ հարսը վար կանչե:
ԱՓ 167

***

Ձայլը մ'ունիմ, կանանչ ե,
Մէջու մարդը ճանանչ ե.
Բախի խըմելն լավ բան չե,
Դինի խըմի', խաղ կանչե:
ԲՆԱ 201

123· Ձադիր մ'ունինք, կանանչ ե,
Մէջի մարդիկ ճանանչ ե.
Աբաղ խըմել լավ բան չե:

809

Մեր արեվը շատ կանանչ ե,
Նաչալնիկը մեզ կըկանչե,
Ջյասիբ տըղին հեչ չի ճանչե:
(Զինվորի)
Տի 115

810

Ճայլի բոլոր կանանչ ե,
Տունըդ մեղի ճանանչ ե.
Մեռնիմ շամամ ծրծերիդ,
Իմ դարդ քեզի այան չե:
ԱԴ 170

23· Տունը մեզի ճանանչ ե.
Թուխով շամամը կանչե:
ՌՄ 117

234· Տունը մեզի ճանանչ ե.
Հեռու յես, ցավըս չիտես,
Դարդըս քեզի այան չե:
Տի 170

Տես՝ կանաչ արտի քենաբը:
Տես՝ ... ճանա(ն)չ եր:

811

Սերն ի՞նչ ե, սավտեն ի՞նչ ե,
Ես պարի ղայդեն ի՞նչ ե.
Բանճըր ծառ, քաղցը պըտուղ,
Չեմ հասնի, ֆայդեն ի՞նչ ե:
ՌՄ 129· Տի 145

Սեյն ի՞նչ ա, սավդան ի՞նչ ա,
Ա պայիս ղայդան ինչ ա.
Բանճըյ ծայ, քաղցըյ պըտուղ,
Ոյ չիմ հասնի, ֆայտան ի՞նչ ա:
(Խոտորջըի)
Տի 106

Սերն ի՞նչ ե, սավդան ի՞նչ ե,
Ես խաղի ղայդան ի՞նչ ե.
Բանճըր ծառ, անուշ պըտուղ,
Չեմ հասնի, ֆայտան ինչ ե:
ԱԳ 97

Տես՝ Մատիդ մատնիք մավի չե:

***

Սերն ի՞նչ ե, սեվդան ի՞նչ ե,
Թուղթին ի՞նչ ե, խալեմն ի՞նչ ե.
Բարճըր ծառ, անուշ պըտուղ,
Չիմ հասնիր, ֆայտան ի՞նչ ե:
ՀԱ 463

Սերն ի՞նչ ե, սավդան ի՞նչ ա,
Կըլրիճ, քու սավդան ի՞նչ ա.
Մառը բարս, մեյվան ա քարս,
Ձառք չ'ատնիր, ֆայդան ի՞նչ ա:
ԲՆԳ 519

(... Մառը բարճր, մեյվան քաղցըր,
Ձեռք չի հասնիր, ֆայդան ի՞նչ ա):

***

Սերն ի՞նչ եր, սավդեն ի՞նչ եր,
Ի՛նչ, յար, քո ղայդեն ի՞նչ եր.
Ղալամդաշ չարմա ունքեր,
Չը պաչես՝ ֆայդեն ի՞նչ եր:
ԱՓ 345

2· Եղ բանի ղայդեն ի՞նչ եր:

***

Կաղղվան ձորի մէջ է,
Տես՝ Երևման ձորամիջին:

812

Հայլուս ևռևը մոռ է,
Տևսեք՝ յարըս Տիկոռ է.
Յարխս հինա դործ ունիմ:
Շալկումինին իրա քոմն է:

ՀԾԵ 118

813

Վանքի բոլոր մանդրը նուռ է,
Սավդալի յինք, չասեք՝
ծուռ է.
Սէր ու սավդին խիստ մըրմուռ է,
Ցերկիր կ՚ասեն՝ իմ յար ծուռ է:

ԺԽ 72

Տես՝ Զայլ ափը մանդրը ուռ:
Տես՝ ... Ծուռ եր:

814

Արի, յար, արի, քև բան չեմ ասե,
Վալլահ կըմեռնիմ, խոցեաս ի խասե:
(Կրկնակ)

ՎՍՍ 61· 62· 63

***

Վսոր (եչուց) ուրբաթ է, պաս է:
... ուրբաթ ու պահս է,
Տես՝ ... Պաս ա:

815

Կաղաչեմ, ինձի լըսե,
Արի արտասունքըս սըրբե,
Դանակ ըմ դու ինձի տո՛ւ,
Ցեառով ըսե՝ մի՛ մորթե:

ԱՋ 384

816

Ղուբինի դռչակ տակըս է,
Ղուբինի յորդան վըրես է.
Ինալի բարձը դըլախս է.
Շեկ աղջիկը ծոցես է:

ԱԴ 171

817

Իմ յարը հոս է, հոս է,
Ցարխս թշերը նուշ է.
Աստված սիրող բան չըսե,
Մեկ ու ճար է, ախոռս է:

ԱՆ 201

Հմմտ. Ցարըմ եմ գըտել, աոս ա:

818

Զանեքիդ տակը փոս է,
Մազ երեսիդ փըշոշ է.
Գեչ մարդուն սիրուն կընիկ,
Պագել մի՛ տա, ախոռս է:

ԱԵ 203

819

Նըստած տեղըս լեռ է, առջևըս
ծով է,
Երթացած ճամբաղ կըրակ ու հով է,
Մարխամ Ածամար քինար է, քոլ է:

ԲՆԲ 680

820

Ջաղըրի տակը հով է,
Ակղի՛կ, դու ինձի դուվ՛,
Ճըգնավորին հավուղը,
Հագել ես դանավուղը:

ԱԳ 103

821

Ծառներուն տևին հով է,
Իմ խևլքըս տըղուն քով է.
Քանի տըղան պընաց նե,
Անցուցած որըս սեվ է:

ԲՆԳ 635

822

Ելիս ու նաղըդ չատ չատ ե,
Հետու մընալըդ վատ ե.
Քեզ համար ղոր ու դիշեր
Վառվող Լիվանն մի հատ ե:
ՏԽ 152

Քեզ համար որ ու դիշեր
Վառվող սըրտն մի հատ ե:
ՀԺԵ 118

823

Կըտրիճ, Թևվերդ քրչտե,
Շուն չեխ կողեն բըշտե.
Մենծ ու պըղտիկ խըտ հիտրաց,
Դու մեկ դըրբով կորչտե:
ԲՍ 137

824

Հարավ քամի, դու դընա, արե,
Կարիբիս տես, խաբրիկ մ'առ, արե,
Աբի', յար, արե', խըռտով մի' կենար,
Մուտ ու փուտ դունի մալ մարդու
չմնար:
ՀԺԵ 44

825

Ցարըս մի դու քյանդար ե,
ԵՒռածըս մինու ճար ե.
Յոթ–ըռ.ւսաթով մի Լիվան.
Ինձ սիրուն սիրահար ե:
ԲՍ 138

826

Կանչեմ՝ յար, արե, կանչեմ՝ դոթի, արե,
Իմ սըրտի դարդեր խորովե, արե:
(Կրկնակ)
ՎՍՍ 41

827

Աբառերն ամեն բխար ե,
Իմ յար Թամա խխար ե.
Աբառերն ամեն խըճերով,
Իմ յար նախշուն բըճերով:
ԱՀ 138

828

Ստ'ղ, կաբմունջըդ կամար ե,
Տըղա', քու սիրտըդ քար ե,
Ցնա չիտեմ իմ մուբարըս,
Սերն ասածու համար ե:
ԱՋ 384

829

Ձեր տունը կամար կամար ե,
Նախշուն ողեն ինձ համար ե.
Քեզ պես Լահել–Լիվան տըղեն
Սաղ աշխարքին բարաբար ե:
ՏԽ 239

830

Հո'յ նարե, հո'յ նարե,
Զուխես տամ, դու կարե:
(Կրկնակ)
ԱԴ 166

831

Ալագյազ բանճըր սար ե,—
Վոչ եղներ եման մարիկը,
Սիրած սիրածի չեն տալում.—
Ղարիբ եմ, տեղըս քար ե:
Հիվանդ եմ, չատ անճար եմ.
Հետու տեղ մարիկ մ'ունեմ,
Թևվ չունիմ, վոր հասնեյի:
ՀԺԵ 116

832

Ես սարը բարձըր սար ե,
Ժամ են կանդնել սև քարե.
Ցարըս՝ աղբորս բարեբար՝
Ես մեր դեղի ռանչպար ե:
ԲՍ 138

833

Վերեվ կ'աչեմ— բանճըր սար ե,
Ներքեվ կ'աչեմ— մանդըր քար ե.
Աչքակը մոր մեկուճար ե:
Շորորա', Սալաթ, չորորա:
ՋԲ 23

***

Այ տղա, դու խաղով արև,
Տես՝ Այ տղա դու քաղումն ա՛րէ:

834

Հետ արև՛, եղնիկ, հետ արև,
Դարդ չունիմ, զարդին տեր արև:
(Կրկնակ)

ՀԺԵ 54

835

Ըխպրին հըղեն ա քարե,
Բաղես տոունը չըփարե,
Ադա, մին խաբար ղարկե՛,
Ախեր նրդյարան յես՝ մըեռե:
4· Ես ա քյընելն ա մին տարե:

ԱԺԵ 45

«Աղբուրի ուղին և քարե,
Բաղիս դուռը չաւլարե.
Ադա, մի խաբար ուղարկիր,
Ախր նիդյարան յես մեռա»:

836

Անծեղն ալ կու կանչե, խշալլահ խեր է,
Մարիկ, ելիր կայնե, աղոթքըդ ըրե.
Քեըվանն եկավ, անցավ,
քու սըղադ ո՞ւր է:

ԲՆԲ 680

837

Բարձըր բարձըր լեռներ է,
Սըրտիս ցավը բըռներ է.
Երկու սըրտանց սերերը,
Չեն տար անդուռ մարերը:

ԲՆԱ 804

Ա՛ս ինչ բարս բարս*) լեռներ ա,
Սըրտիս ցավը բըռներ ա.
Երկու սիրած յարերը,
Իրարու չեն տար մարերը:

ԲՆԳ 519

*) Բարձր:

838

Ժամուն բոլոր չայիը է,
Բևլորտիքը պայիը է.
Գաշնէք, ըսնէք իմ աղբոր՝
Կարգըվելու տարի յե:

ԲՆԲ 39

Դուռիս առջին պայիը է,
Ջոբս ևթրաջը չայիը է.
Աչխատեցեք, աղջիկներ,
Հարս ըլալու տարի յե:

ԱԲ 167

839

Մտուի քամին ուղը է,
Ցարիս ընջևր բոլոր է.
Ղըրկին Թիֆլիզ գըրելու,
Սիրարս փորիս մոլոր է:

ԱԵ 203

840

Լուանակը նոր է, նոր է,
Ցարիս երես կըլոր է.
Կըլոր երեսին մեռնիմ,
Հաղինը ալվան չոր է:

Յ· Կլոր սուրաթին մեռնիմ:

ՏԻ 196· ԲՄ 123

841

Ցարդի տարեր ծաղկունանք է,
Մէջի քարերն ակնունանք է.
Իրդարեց յես դարձող մարդին
Տըված խոսքը ամրանք է:

ՏԻ 82

842

Ծղրիկ, ադջիկ, Հերիքնազ,
Վեր կալ ձեռըդ, ածե սազ.
Մենք բիթունքըս կ՚աննենք ատղ,
Վոր քեզանով անենք հազ:

ԱԴ 171

843

Արաղն բերել ա ավազ,
Գրլխիդ ունիս վոսկե մազ.
Ցնկ ինձ սիրե՛, իմ քով յկվ,
Բոլ ա ման դաս դյավազ:
ԲՍ 131

844

Արազ, Արազ, խան Արազ,
Բինդյուխց բըխան Արազ.
Ընկել եմ յես քու ծոցը,
Մի՛ տար մանիման, Արազ:
ՀՄԽԱ. 35

***

Արազ, Արազ խան Արազ,
Գետերու սուլթան Արազ:
ԱՀ 134

Տես՝ Ղաչղա քուռակ հեծեր եմ:

845

Աբա՛ղ, Արա՛ղ, Ջա՛ն Արազ,
Բինդյուխց բըխած Արազ.
Կ՛ուզեմ երթամ յարոջըս խուր,
Արազ, ինձի ճամբա տուր:
ՎՍԲ 57

***

Ա՛խ, Ջա՛ն Արազ,
Վա՛խ, ելման Արազ,
Մի ճամբա տուր,
Երթամ յարիս հյուր:
(Կրկնակ)
ՀՄԽԱ. 35

846

Նըշան տըվի զառակին քեզ,
Իմ պաղն և առել երես.
Համբարձումին դըբի նաշ,
Ախոլած, խըղճալ չըդիտես:
ԲՍ 125

847

Արազ դեռ մեջ ճիկ, մեջ քեղ,
Ճար չըկա, վոր դամ մոտ քեզ.
Փառչամըդ Թոզ վոր բըռնեմ,
Շուտով դամ, քեղ հասնեմ:
ՎՍԲ 57

Տես՝ Ա՛խ, Արազն և չատ վարար:

848

Թոյ Թոյ, Թոյ Թոյ Նարդիվ,
Երեվանա կուզամ յես.
Թոյ Թոյ, Թոյ Թոյ Նարդիվ,
Բերդի տըկեն ընցա յես,
Սըրբ Ովաննես խամբուրեց գիս:
ՎՍՍ. 42

849

Թո՛յ, Թո՛յ, Թո՛յ, Ներդիվ,
Զայրի կըռունկ երկենվիվ.
Կա՛կո, մա՛րե, կարդե՛ գիս.
Զիս մի՛ տար Վանա խոյին,
Կ՛երթա չարչին, մոռնա գիս.
Զիս մի՛ տար տիրացու մարդուն,
Կ՛երթա ժամտուն, մոռնա գիս.
Զիս մի՛ տար դյուղդար մարդու,
Փետ կըտաշա, մոռնա գիս.
Զձի տու դործավոր մարդու,
Մըքուք թալա, պաքա գիս:
ՎԺԵԲ 10

***

Համ դյուլ, համ վարդ, համ նարդիվ,
Ծովու կըռունկ երկենվիվ.
Ունո՛, բարո՛, կարդա գիս,
Թուշար մարդու մի տար գիս:
ՎԺԵՍ. 10. 13

***

Համ դյուլ, համ վարդ, համ նարդիվ,
Դյուլի կըռունկ երկենվիվ,
Կակե՛, մամե՛, կարդա գի՛ս.
Համ դյուլ, համ վարդ, համ նարդիվ,
Նախրորդ մարդու մի՛ տար գիս,

Կ'երթա նախիր, մոռնա դիս։
Համ դյուլ, համ վարդ, համ նարդիլ,
Գյուլի կըռուննկ երկննվիդ,
Կակի', մամե', կարդա' դիս.
Մանճկալ մարդու մի' տա դիս,
Մանճ կը բըռնա մոռնա դիս։
Համ դյուլ, համ վարդ, համ նարդիլ
և այլն.

Կարդացվըրի մի' տար դիս,
Դիրք կ'առնի ձեռ, մոռնա դիս։
... Սուլեար մարդու մի' տար դիս.
Սոլ կըկարի մոռնա դիս.
... Թյուլյար մարդու մի' տար դիս,
Ոսկի խամբա, մոռնա դիս։
... Զորան մարդու մի' տար դիս,
Կ'երթա սար դաշտ, մոռնա դիս։
... Ախյաք մարդու դու տուր դիս,
Մըքուր թալա, պազա դիս։
(Պարերգ)

Ծվ. 42

***

1–11 Համ դյուլ, համ վարդ, համ նարդիլ,
Գուլի կրուսկ երկննվիդ։

Հծե 80

***

Մարե', ձի մի' տա սարկավագին,
երթա սաղմոս, մոռնա դիս.
Մարե', ձի տո'ւ խնյաքին,
Թալի մըքյուք, սիրի դիս,
Ծորնն ելնի, դըրկի դիս։

ՎՍՍ 47

850

Սայեդ կարմիր զանավուդ,
Դու մանիս խորտա նավրուդ,
Քու դեմն հալա ինչոր բուդ։

Տե 165

851

Ելեր ես կ'երթաս կը հանդը,
Եկար, ընկար մեր եղ ճանկը.
Կայներ՝ կ'ենես մանչու փանդը.
Կայնի', Ֆիդան բոյիդ դուրբան։

ՋԲ 19

852

Բաղչումը բացվել ա վարդը,
Մարդ չըդիտե իմ սեվ դարդը.
Հախ Աստանից խընդրել եմ՝
Որ չըտեսնի նըհախ մարդը։

Տե 159

853

Բացվել ա բաղչանուն վարդը,
Աբքել ա դրախտին զարդը։

Կժե 47

854

Ինտոնի ձեռի վարդը,
Ապրի Աչխենի մարդը.
Ծորտա եր Աչխենը,
Կոլտա եր Աչխենը։

Տե 185.

855

Թառամել ա իմ վարդը,
Մեռել ա սիրած մարդը.
Են որից ել ըսկըսած՝
Ել չեմ քաշել իմ զարդը։

ԲՄ 134

856

Արազի ափի ղազը,
Ասում եմ մուխամբազը.
Ինձի սիրի', աղջիկ չեն,
Ինձ այրեց քո եչմ ու նազը։

ԲՄ 153

857

Վերեվըն անցավ ղազը,
Ձեռքիցըդ կ'առնեմ սազը.
Իմ դեմ վատ չըխոսաս,
Կը պոկեմ դըլխիդ մազը։

123. Ցերկընքեն անցավ ղազը.
Աչըդն ածեց իր սազը.
Աղջիկ, չատ մի' խոսալ։

858

Ելել եմ Ալադյազը,
Չեմ առնի մալամազը։
ՌՄ 97

859

Հարսնեաուսը զենին ղազը,
Կը հիտեն, ա՛խ, հարսին մազը.
Հարսը ու լա բազե–բազի,
Փեսան ալ ու քաչե նազը։
(Հարսանեկան)
ԲՆԱ 332

860

Բաղչան էլեր խորոզը,
Բաղչի քարը· լոլոզ է։
Կ'ուղեմ հալալ մի սիրեմ,
Ըընդիկ եղնա քոլոզը։
ՀՀ 325

861

Ոչխարը փըռվե դուզը,
Ջոկեք իմ ալադյոզը.
Մ'եչքեն քաչեք յայըզը,
Սըրբեք երեսի թոզը։
ԱԸ 143

***

Ոչխարն արել եմ դուզը,
Ջոկել եմ ղարադյոզը.
Աղուխըդ ղարկի՝ նախշեմ,
Թաւի տուր քյանքյուվիդ Թոզը։
ՌՄ 109· Տի 237·
ԱԴ 165

2· Սիրել եմ ալադյոզը։
34· Եյլուղըդ ղըրկա՝ նըխշեմ,
Թաւի տամ չյաքուվիդ Թոզը։
ԱՔ 341

14· Ոչխարս արել եմ դուզը·
Թաւի տուր քյաքուվիդ Թոզը։
ՔՀ 159

***

Վոչխարն ելալ ա դիւզը,
Ջոկեցեք ալադյոզը·
Իմ հեր քեզ աղջիկ չի տա,
Սըրբի երեսիդ Թոզը։
ԱԴ 262 ԲՄ 132

34· Շան տըղա, չատ մի՛
խոսա,
Սըրբա՛ երեսիդ Թոզը։

***

Վոչխարն ելավ են դուզը,
Վեր ելավ վոննի Թոզը·
Ցար, քու քըթակըդ վեր կալ,
Թաւի տամ քյանքյուվիդ Թոզը։
ԱԴ 264

2· Հաղել եմ ղանավուզը։

***

Վոչխարս արել եմ դուզը,
Ջոկել եմ ղարադյոզը·
Ցայլուխըդ ղարկի՝ նըխշեմ,
Վարդով լըցնեմ, քե բախշեմ։
ԱՋ 375

***

Ոխչարն արեր եմ դեզը,
Ջոկեր եմ ալադյոզը·
Լայլուխ ողորկ նըխշեմ,
Թաւի տուր քյանքյուվիդ Թոզը։
ՀԺԲ 122

34· Նախշուն լայլուխն ինձ տուր,
Թաւիքըմեմ մաղերիդ Թոզը։

***

Նախիրը կայներ և դիւզը,
Կանչե կը ղարադյոզը·
Ղըրկե՝ մահրամազ լըմամ,
Առնեմ քյանքյուվիդ Թոզը։
ԱԴ 96

12· Նախբին ելեր և դուղը,
Դայներ և զարադյողը:
ՀԾե 83

123· Ոչխարն իջել և դիւղը,
Ջոկել եմ զարադյողը·
Մանչ, տո՛ւ մայրամադ վըլամ:
ԱԳ 103

862

Լուսավորչա հավուղը,
Հագել եմ դանավուղը·
Եկնք երթանք են դուղը,
Ցես չեմ առնի են կուղը:

34· Եպ ծառերի խաֆիցը,
Գրնանք իջնանք են դուղը:
(Վ· արի՛ք գրնանք են դուղը):

***

Ճըղնավորի հավուղը,
Հագել ես դանավուղը·
Երթանք ելնենք են դուղը,
Քեզի կ՛առնեմ յալասուղը:

863

Ճըրատը դըրի(ր) թաթը,
Դու կերար հարամ կաթը:
2· Դու կերուկ հարամ կաթը:

864

Հագնը իմ լաթը,
Ծոցիս սըհաթը·
Սիրեր եմ, կ՛առնեմ թավաղը,
Լուսե հավատը:
ՀԾե 114

865

Մեր գըռան կառավաթը,
Ճարխս դոշի սրհաթը·
Գիշերնեըն երազ գալուս
Տարալ կյանքիս գըվաթը:

866

Գախանում եմ կընջիթը,
Հագած եմ լավ խաս չիթը·
Երընեկ կըտամ են որին,
Վոր կ՛ընկնեմ յարխս ճիտը:
(Գաղհանի)
ԱԺԱ 69

867

Եկավ սալդըթի թուղթը,
Մուրթ Գեվորքի լավ ուխտը,
Մենք ենք երկու ջուխտը·
Գընա, բարով յետ արի:

Բաղըրնու տեղն արան,
Վեց տըղա ջուկին, տարան,
Տերևըը կապին վարամ·
Գընա, բարով յետ արի:

Ղարաբինա չի ծալվի,
Ջարախանեն չի պարսլի,
Բաղըրնու սալդաթնեը,
Հեչ մի քաղաք չի ճարվի:
ՀԾե 118

868

Սարան *) վեր կը դանք հարթը,
Կըքաղենք դաստա վարդը·
Ցես քըղեցի**), դու տարար,
Մըշալա՛ մեջի մարդը:
ԱՋ 382

*) Սարից: **) Գաղեցի:

869

Սիսպտակ դոշիդ անդին խալը,
Մի խմացիր դու իմ հալը,
Ջեմ ուզում աշխարհի մալը:
ՏԽ 167

870

Փրուված և նախշուն խալը,
Եկել ա մեր մարալը·
Աղբեր Ջան, դու խոսք արա,
Հարցըու իմ յարխս հալը:
ԲՄ 135

***

Ա՛յ տըղա, դընա կալը,
Տես՝ Տըղա, դընա, կալը տես։

871

Ելեր ես, կ՛երթաս կը կալը,
Բարով մաշես դըլխուդ չալը·
Երեսեդ կը կաթե խալը։
ՋԲ 19

872

Ցենոքի դըռան կալը,
Վառա վառոյի տալը·
Վառո՛, փեչերըդ երվավ,
Ծաղնով փըլավը բերվավ։

873

Դարըն անցա են կալը,
Ի՞նչ կ՛անեմ դունյի մալը·
Տըղեն տե՛ս, աղչիկը տուր,
Թող ըսկի չըլնի հալը։
ԱԲ 345

1· Ես դարն անցա են կալը։
124· Ճամբուն եմ եթում կալը,
Ջորս կողմըս դյուլի բաղը·
Ջահնամ թե չըլնի հալը։

Տես՝ Ցեղն անցա են յանը։

874

Դուրս կը գամ Լասահն կալը,
կը երեվա Բաքվա սարը·
Ջանս քեզ մատաղ, խաղեյին,
Ուղարկի՛ իմ բալա յարը։
ԱԴ 114

875

Գըլխիդ չալը,
Բըկիդ խալը, խանբաջի,
Դու սիրուն ես,
Քանց քու տալը, խանբաջի։
(Կրկնակ)

876

Հագել եմ ալը,
կայներ եմ կալը·
Թաու բոյիդ մատաղ,
Նըշանլու յարը։
ԱԲ 337

Հագել իր չալը,
կայնել իր կալը·
Ցես քեզի դուրբան,
Սիրելի յարը։

877

Թալանն եկավ, Թուխնից տարավ
իմ (վ· մեր) մալը·
Ջյաֆուրն եկավ, ղարկից տարավ
իմ (վ· մեր) մալը։
(Կրկնակ)
ԿԺԵ 20· ՏԻ 258

878

Ձին քըցել ա վոտի նալը,
Դու չես տեսնում իմ խեղճ հալը·
Առանց քեզ ու քու ընկերին՝
Ի՞նչ կ՛անեմ աշխարհի մալը։
ՏԻ 237

879

Բոզ ճիուն վոտի նալը,
Ինձ վառեց դոշիդ խալը·
Երնեկ կուտամ են ավուր,
Ցես դու կ՛երթանք մեր կալը։

***

Բոզ ճին ի՞նչ անըմ նալը,
Տես՝ Բոզ ճի յեմ, նալն ի՞նչ անեմ,

880

Բարակ մեջքիդ քիրման չալը,
Դու կ՛ուժես աշխարքի մալը,
Ցես հարցընի յարիդ հալը։
ՏԻ 87

881

Ժամի դըռան ավելը,
Ճև չնմ առնի բարևվը·
Եկավ Իդիրա դոշունը,
Երթամ, ջոկնմ լավևրը:

882

Աբաղի տիվի դոլը,
Զուկ ելա, ընկա թոռը·
Հնբրա աղջիկ չեր տա,
Ջըցևցիր քարիդ դոռը:

883

Եկեք քընանք ևն ոխը,
Ըլըլտխա կլոխը·
Ով ինձանից քեզ ասի,
Լեք որորոց վրնչ տեսնի:
ԱԶ 373

***

Վե՛վ դընաց յարիս ոթախը,
Տեռ՝ ... ոթաղը:

884

Եկեք քինանք ևն ոխը,
Գյուլբուդաղա դիլոխը·
Ճարը յարից հանողը
Հանևնք կարճկին դիլոխը:
ԱԶ 379

885

Եկեք քինանք ևն ոխը,
Գյուլպուտաղին կիլոխը·
Ամեն ծառան մին փըշատ,
Իմ յարին եոմբը չատ:
ԱԳ 262· ԲՄ 135

886

Ճեկեք քյընինք ևն ոխը,
Գյուլբուդաղա դըլոխը·
Աչըդը տղամարդ մըռռավ,
Ճեր ըլավ ծըբևնե ծոխը:
Ա.ժ.Ք. 86

«Ճեկեք գնանք ևն ուխտը,
Վարդ աղբյուբի գլուխը·
Աչուդը տղամարդ մեռավ,
Վեր ելավ ծիրանի ծուխը»:

887

Մահիսին կըշինիմ ըրևս ոխը,
Ճեր կընի Ղարաբանեն քրթեն ծոխը·
Մին ինձ տըվեք դուշմանին տղեն,
Տիւս ոնին աչքեն թոխը:
Ա.ժ.Ը 31

«Մայիսին կըշինեմ արաբիս չծակը,
Վեր կընի Ղարաբանի քթի ծուխը·
Մի ինձ տվեք թշնամու տղին,
Դուրս անեն աչքի թուխը»:

888

Խորեմ իմ դուշմնի գլուխը,
Զրկըտրեր մեր տան ծուխը·
Դիլաք կ'ենիմ աստըծուց,
Որ կըտրի ուր (իր) տղյի ծուխը:
ԲՄ 143

889

Ճար մ'ունիմ բուլանուխը,
կըտրեց ան մեր տան մուխը·
Մոհլաթ անց ա կացեր,
Ճարըս խոշ յար ա դըտեր:
ԲՄ 132

890

Շատ քաղցըր է սիրածը,
Չի սաղանուն հարվածը·
Ինձ սիրուհուց հանողը
Ուրացեր իր աստվածը:
ԱՔ 340

891

Լուսընկի բակը,
Մեր սելի ակը·
Ըսոր կամեցինք
Ճարիս պըսակը:
Հժե 111

892

Ոչխարն արել եմ բակը,
Դեմ տըվել սելի ակը.
Ով իմ սիրածըս առնի,
Չի վերի դըլխի Թագը:
ՊՄՎ 105

1. Ոչխարս արել եմ բակը:
ԱԺՄ 58

***

Ոչխարն երի բակը,
Դեմ արի սելի ակը.
Վավ որ իմ սիրածն առնի,
Զըվերև դըլխու Թագը:
ՀԺԵ 118

4. Զըվերև դըլխու Թագը:

***

Ոչխարն երեց բակը,
Դեմ տըվի սելի ակը.
Ով որ իմ սիրածն առնի,
Զըվայրե դըխի Թագը:
ԱԴ 166

Վոչխարը կ'անի բակը,
Դեմ կ'անի սելի ակը.
Ով իմ սիրածը սիրի,
Սեվ ըլի դըլխի Թագը:

***

Ես ի՞նչ լավ ա մեր բամբակը,
Տես՝ Հով ա կանում ի՞նչ տակը:

893

Ոչխարն եմ երեր բակը,
Դեմ տըվե սելի ակը.
Ծոթը տարի սիրեցի,
Ցես ընկա քու կըրակը:
ԱՃ 196

894

Ջոբան, արի մեր բակը,
Հերըս դընուց քաղաքը.
Մեռնիմ ասկի բեզերիդ,
Մըտնենք հալալի տակը:

895

Ցես նըստել եմ աղբրի ակը,
Ջաղել եմ հոնի խակը.
Ով իմ լավըս չի առե,
Վոչ տեսնու վորդու Թագը:
ԱԺՄ 58

896

Ցարի բելակի ապագի կոճակը,
Սչունը փարին, դըբին վիճակը:

897

Ցես ի՞նչ կ'անեմ ամակը,
Ըստացել եմ նամակը.
Բախտիկըս դանդատ կ'անեմ,
Ինավար ե արևդակը:
ԲՄ 147

898

Ժամանակ ժամի տակը,
Կողբա աղբյուրի ակը.
Սիրած սիրածի չենե տա,
Տերտերն ա մեղքի տակը:

899

Մի՛ մըտնի ամպի տակը,
Սրի՛ մըտի մեր բակը.
Ջամխհեր անդին քարեց՝
Մենակ դու յես Թանդ ակը:
ՑԽ 153

900

Արե՛վ, կաց ամպի տակը,
Շողդ մի՛ ջըցի մեր բակը.
Ֆանի յարըս կըշտես ա,
Մեզ մի՛ տա դու խեթ ակը:

Տես՝ Ամպել ե ամպի տակին:
ՏԽ 218

901

Իմ աղբեր ծառի տակը,
Սաղմուսը կըռան տակը.
Սաղմուսը դեր է դառե,
Լիպուն բըլբուլ է դառե:
ԹՄԿ 61
Տես՝ Աղբերըս նըռան տակին:

902

Կըգյընիմ ծառն տակը,
Կըքաղիմ բարեն խակը.
Վրեբ խոսկ ասաս, տանիս վրեչ,
Սըքով անիմ ոսեռ թաղը:
Ա.ԺԼ 27

Կըգնամ ծառի տակը,
Կըքաղիմ բարի խակը.
Վոր խոսք ասաս, տանես վոչ,
Սեվ անեմ ուսիդ թաղը»:

903

Նըռաեր է պատի տակը,
Կրվելլա մանուռ տակը.
Աչքով, ընքով կըկանչե
Պալաս ընկոզին տակը:
ՀՀ 324

904

Կայնել ես պատի(ն) տակը,
Ցավս կը մտանուդ տակը.
Իմ կարած արտախինըս
Դըրել ես ֆասիդ տակը:
Ա.Գ 102· ԲՍ 137

14· *Կայներ ես պատատակը·*
Դըրեր ես ֆեսիդ տակը:
ՀԺԵ 83

23· *Դըրել ես մանուկ տակը·*
Ճարխս ղըրկած Թալիկը:
ՀԺԵ 125

234· *կանայէ եր մատիդ տակը·*
Եղ իմ ղըրկած նըշանն է,
Դըրել ես չապխիդ տակը:
Ա.Ե 202

3· *Իմ տըված արտախինը:*
Ա.Զ 389

905

Հով ա կանաչի տակը,
Ես ի՞նչ լավ ա մեր բամբակը·
Եկար մեր ղըռնով անցար,
Չասիր՝ արի մեր բակը:
Ա.Ը 441

13· *Հով ա ծառների տակը·*
Կուժըն ուախս դուս ելա:

***

Ես ի՞նչ լավ ա մեր բամբակը,
Հով ա կանաչի տակը·
Եկա, մոտովդ անց կացա,
Չասիր՝ արի մեր բակը:
ՀԺԵ 123

906

Սիրտըս ընկավ կըրակը,
Ել ի՞նչ անեմ դանակը.
Ոտարի դեչ խոսքերը
Մարեց ումբիս ճըրագը:
Ա.Զ 385

907

Գընացի սարը սանկը),*
Փուչն ըլավ ալի ծոնկը)·*
Ցես դու մեկ բաղում պիտենք
Ցես բուրվառ, դու խոնկո):*
Ա.Զ 378
*) *Սուռնկը· ծոնկը· խունկը:*

908

Ամբարի տակի մուկը,
Ցես չեմ առնի դեղնուկը·
Դեղնուկը սըրտովըս չի,
Շորերը վըրովըս չի:

909

Սարերի սինճը,
Կաթին ու բըրինճը·
Գըրոջըս տարան,
Դարն եկավ ինճը:
ԺԵ 20

910

Գընացի բաղը, ըսպանի ոձը,
Գըլուխը զարկի ասկի քորցը։
ԿԺԵ 54

911

Ղուշ եղի՛, արի՛ բաղը,
Դառի՛, արի՛ մեր թաղը։
Ճուլց տուր խեղճ մոլորածիս
Մարմառ դուխդ չափաղը։
ՏԽ 247

912

Մըտնում ես բաղը։
Կաքավչորրորա,
Աստ քու խաղը,
Ըարիդ որորա։

913

Կայնել ես բաղը,
Ձերդում ես տաղը։

914

Ղուշ ըլնեմ, դամ ձեր բաղը,
Ուտեմ ձեր հացն ու աղը։
Աստված սիրես, մի՛ պահի
Ինձանից խոսքի սաղը։
ՏԽ 192

915

Բըլբուլ, արի՛ մեր բաղը,
Աստ իմ յարի խաղը։
Խաղիդ միջով բարևըրս՝
Հասցըրու յարիս թաղը։
ՏԽ 246· ԲՄ 124

916

Վարդ եմ քըցել մեր բաղը,
Բաղալջ չինել չարմաղը։
Քոռանան քու մի աչքը,
Մոռացար հացն ու աղը։
ԲՄ 133

917

Վա՛յ լե լե լե, վա՛յ լո լո լո։
Երթանք մեր բաղը,
Անենք մեր խաղը։
(Կրկնակ)
ԱԴ 165· ՌՄ 109·
ՏԽ 178

918

Աղջիկ, դընանք մեր բաղը,
Պոկենք չամամիդ թաղը։
Եղ երեսիդ չաֆաղը
Հանել ա սըրտիս դաղը։
ՔՀ 164

13· Աղջի՛, արի՛ մեր բաղը։
Քո երեսի չաֆաղը։
ՌՄ 92· ԲՄ 129

123· Աղջի՛, դընանք մեր բաղը,
Պոկենք չամամի թաղը։
Քո երեսիդ վարաղը։
ԱԴ 264

123· Յաղջի՛, յեկ դընանք բաղը,
Պոկենք չամամի թաղը։
Քու երեսիդ չափաղը։
ԱՋ 377

3· Եղ երեսիդ չափաղը։

919

Մեր վոչխարի յաթաղը,
Գըլխիս դընեմ փափախը։
Ջանդուրուկըդ յետ ձըդես,
Երեսիդ տես չափաղը։

920

Վե՞վ դընաց յարիս ոթաղը,
Վե՞վ պըրծուց կանաչ պուրթաղը։
Վո՞վ կանչեց իմ յարիս խաղը։
ՋԲ 19

921

Նաշ են տանում մեր թաղը,
Չի մընում խոսքիս սաղը։
Ասում են՝ յարըդ մեռել ա,
Իսկ յես կանչում եմ հաղը։
ԲՄ 153

922

Աղջի՛, յոր կ'ոնկս) դյուլբիդ ճաղը,*
Կ'անկս անհամ չուրվին աղը·
Բա վըներ քյնդ յաղ մարթ տանե,
Հո՞ւ յոր կ'ոնե սըրտես դաղը:
ԱԺԼ 41

*) կըվներցնես, վներ կ'ուզես:

923

Կողրա բներցին աղը,
Սըրտես քաշեցին դաղը·
Ինդ հետ ենքան չեմ խոսա,
Բարով ըլլե՛ք յայլաղը:
ՍԲ 343

924

Երևսիդ քըրտինք չաղը,
Ինդալ և սըրտես դաղը·
Աբի՛ երթանք մեր բաղը,
Դուս տանք չամամի թաղը:

925

Երեվընու կուղար աղը,
Ինդի տարան դյուլի բաղը,
Ինդեցիր չամամն ու թաղը:
ՋԲ 19

926

Դուքնի մկի արաղը,
Թամամել ա թարաղը·
Հըրես կըղա իմ յարը,
Վըրեն կապած յարաղը:
ԱԺՄ 52

927

Նախիրը եկավ դեղը,
Մըտի՛ իմ քըցած տեղը·
Գըլուխըդ դեր կըռնևրես,
Ջըհավրի սըրտես յեղը:
ՏՒ 216

928

Ի՞նչ է, ասա, իմ մեղը,
Հալվել ա սըրտես յեղը·
Ինդ ու բաղչա յես (յեմ) արել
Երկու ծըծիդ մեջտեղը:

34· Երկու ծըծիդ մեջտեղը
Ինդչա ու բաղ ես արել,
Դոսա ու դուշմանի մեջին·
Լացըս ծիծաղ ես արել:
(Դու ինձ լայաղ ես արել):

929

Ինդ ոստանը ջըրած տեղը
Ամեղը թեղած տեղը·
Ինդարար տարեք իմ յարին,
Հեն եմ իր դըրած տեղը:
ԲՄ 138

***

Են ի՞նչ դեղը, են ի՞նչ տեղը,
Տես՝ Մոկաց սարեր, պետ պետ
քարեր:

930

Կաթը փըռել եմ հով տեղը,
Աբի՛, ինձի տար ձեր դեղը·
Ո՞ւրտեղ ղըրկեմ քեզի համար
Ձեռովս եփած ճըվածեղը:
ՏՒ 223

931

Ինչուս դեղի մեջտեղը,
Ինդամայեց մեծ չեյիը,
Թորկեց դիս լաց ու չիվան,
Ինդարար տարավ մեծ բեիը·
Տարան, տարան իմ յարը,
Տարան իմ մեկ ու ճարը·
Ինդարար արեք Սարոյին,
Տարան խորտա Մարոյին:
ԿԺԵ 25

932

Կայնել ես բանձըր տեղը,
Հալեցիր սըրտիս յեղը·
Ինձ հալ ու մաշ անելով՝
Քըցեցիր ես նեղ տեղը:
ՏԻ 209

933

Տիգրան աղի մատի ողը,
Սուիոյ վերցին, դրին հողը:
ԿԺԵ 41

934

Գուբիանը վարի հողը,
Ղավալը կ'ածի փողը·
Հով ընձանան քե ասի,
Վեչ ընկնի ոխնած հողը*):
ԱՋ 374
*) Վոչ ընկնի որհնած հողը:

935

Սեդրակի բաղում ածում են փողը,
Թե ինձի չառնես, չուտ մըռնես հողը:

936

Աղջի՛, երթանք մեր խամը,
Դասատով բըռնեմ քու ծամը·
Երնեկ կուտամ են որը,
Իրար հետ մըռնենք ժամը:

937

Ցես գընացի մեր ժամը,
Տեսա վարագած չամը·
Ախլքըս գընաց, վոր տեսա՝
Գըլխիդ տասներկու ծամը:
ԱՋ 379

938

Ջուր ե գալի արխըմը,
Աբըրչում ե չարխումը·
Ցես են թավատ յար կ'ուղեմ,
Ջամարթ ելնի խալխըմը:
ՀԺԵ 134

***

Ջուր ա գընում արխումը,
Դու կանգնել ես չարխումը·
Են որին երնեկ կըտամ,
Ջամարդ կանգնես խալխումը:

12· Ջուր ե գընում արխումը,
Աբըրչում ա չարխումը:
ՔՀ 164· ՏԻ 139

2· Աբըրչում ե չարխումը:
ՌՄ 118

2· Աբըրչումն ե չարխումը:
ԱԴ 165

Ջուր ե գընում արխումը,
Աբրեչում ե չարխումը·
Գըլուխըս դըլխիդ դուրբան,
Ջամարդ կանգնիս խալխումը:
ԹՄԿ 63

***

Ա՛յ արխումը, արխումը,
Դու կայնել ես չարխումը·
Գըլուխըս դըլխիդ դուրբան,
Ջան մարդ կայնի՛ խալխումը:
ԱԸ 139

24· Աբրեչումի չարխումը·
Ջամարդ կաղնի խալխումը:
ԱԺՈ 50

939

Նալն ու մեխը կըրակումը,
Ալման ճոթը մըկրատումը·
Սերը սիրածեն հանողին՝
Թաքը թըխոցի գըրատումը:
ԱԳ 269· ԲՍ 141

940

Ղուշը կըծըվվա բաղումը,
Կանաչ խըյար թաղումը·
Իմ ախպեր հըշտեղ տըեսեր,
Դարյաղն ոսեն բաղումը:
ԱԺԸ 30

941

Ղուշը կրծըվիվա բաղումը,
Կանանչ խըյար Թաղումը.
Մին դասատա յես գյոռվ բնդի,
Իմ յարին վըլխաղումը:
ԱԺԼ 30

***

Ղուշը ծըկըլտա բաղումը
Կանանչ խխորը Թաղումը.
Ցես մին սաքաթ սուրտա ալըտի
Իմ յարին ոթխումը:
Ա.Գ 263

942

Մեր բաղումը, բաղումը,
Մանուշակի Թաղումը.
Կամքիր վարդը ինչ անե
Թըշերիդ յարխաղումը:
ԱՋ 381

943

Բիւլբիւլը կանչեց բաղումը,
Գոնըս տարավ վըռնչ տըեղումը.
Կանչի՛, բիւլբիւլ ըմ, կանչի,
Տըեռավ քու դարը տան չի:

«... Գոնըս տարավ վռչ տեղումը...
Թեկուզ քու տերը տան չի»:

944

Գուլը գալին Թուշումը,
Ձեռնը սիժան գուշումը.
Իմ յարին ըշտեղ տեսար,
Շատչվա գալին Թուշումը:
Ա.Գ 263

***

Կայնել ես դու կամընջումը,
Տես՝ Դուն կայներ ես կամընջին:

945

Ցեղ եմ հալել Թասումը,
Վարդավարի պասումը.
Ա՛ աղա, քի վո՞րդի սիրեցի,
Ժամի աղաքի դասումը:
ԱԺԱ 52

Ա՛յ ասըմը, ասըմը,
Ներսան գինին Թասըմը.
Ցես քի վո՞րդի սիրեցի,
Վարթևլորի պասըմը:
ԱԺԱ 50

946

Կարմիր գինին Թասումը,
Ցես եմ քո հավասումը.
Ցե՞րբ կը տաքնան աղչկերք,—
Վարդավառի պասումը:
ՀՄԽԱ 40

***

Ղասումը, հա՛յ Ղասումը,
Կարմիր գինին Թասումը.
Աղչկերք յե՞րբ կը տաքնան,—
Վարդևլորի պասումը:

1· Հըրես եկավ Ղասումը:
34· Աղչկերքը յե՞րբ
կուտքանան,—
Վարդևլերի պասումը:
ԱԸ 142
34· Տըղերքը յերբ կկոտորվեն,—
Վարդևլերի պասումը:
ԱԸ 142·
124· Հա՛յ ասում է, ասում է,
Կարմիր գինին Թասում է.
Վարդավառի պասում է:

***

Ցե՞րբ կըբացվեն աղչիկները,—
Վարդավառի պասինը:
ՎԺԵԲ 14
Հմմտ. Ա՛յ, ասի նա, ասի նա:

947

ԳուԹանըս հողերումը,
Իմ յարըս չոլերումը.
Գըլուխըս դուրբան կըլամ,
Մի՛ ման գա չոքերումը:

***

Գուբանըս աքերումը,
Իմ յարըս ցելքերումը.
Ջեզ ղուրբան, իմ սիրուն յար,
Ման մի՛ դա շոքերումը:

948

Իմ աղբերը են անցումը,
Գուբանի եղնանցումը.
Գիր եմ դրել, ուղարկել,
Վաղաս ա Համբարձումը:

ԱՋ 380

949

Թամքու տենակ թամքումը,
Թառ յըղոնեդյ վանքումը.
Իմ յարը հըյշտեղ տըեսեր,—
Շուշվա ղըլեն չամքումը:

Ա.Ժ.Ի. 47

950

Թուրն ու Թըլվանք Թամքումը,
Դուն աղունակ իս վանքումը.
Ցխս մե պըտուկ յար ունիմ,
Երեվանա խալխումը:

ԹՄԿ 61

951

Թուր ու Թըլվանք Թամքումը,
Ջուխտ աղունակ վանքումը.
Մեռնիմ սիրական յարիս,
Ինքը քաղքի ճամփումը:

Ա.Ժ.Ա. 54

952

Ցայլի կասեմ վանքումը,
Ջինարին արանքումը:

***

Անցա Ղարսա վաքանը:
Տես՝ Արաղն անցա են վաքան:

953

Եկան դըրեցին ճիանը,
Տաճկից եկավ մեր գիանը:

954

Ղարսա բերդի պըլանը,
Ղուկաս կայնել դըռանը.
Մեր Նազլուն գարբ ա կանգնել,
Աստված կանդնի կըռանը:

955

Հորա Ջան, քո պըլանը,
Խաղում եմ քո դըռանը.
Գալղղի մուրայը տուր,
Իմ սըրտի սիրածը տուր:

12. Ոզա Ջան, քո պըլանը,
Հաղում եմ քու դըռանը:
34. Կողբեցեք գարբ են կանգնել.
Դու կաղնես իմ կըռանը:

956

Մեր արտերի բիանը,
Ցխս չեմ առնի պիյանը.
Ովոր ինձ տա պիյանը,
Աստված անի դիվանը:

***

Առիլ եմ այս տեղանը:
Տես՝ ... տեղվանը:

957

Ցելն անցա են յանը,
Նոր տեսա Ֆիդան յարը.
Տըղին տես, աղջիկը տուր,
Ինչ անեմ անշահ մալը:

ՍՓ 339

124. Սարն ընցի են յանը,
Ինչ անեմ տխուն մալը.
Ջեյնեմ Թե չըլի հալը:

Հ.Ժ.Ե 123

Տես՝ Դարըն անցա են կալը:

958

Են հինէ մարդ ա տըռանը,
Սաղ ու թրխանդյ կուռանը.
Ա՛ղուչունա յեկած տըղա,
Մըրսաս աջի կուռանը:
ԱԺԻ 45

959

Ջանջո խանի դըռանը,
Խամուր կուռքի կըռանը:
ՓՇ 72

960

Են տըղան են դըռանը,
Թուխ յափընջին կըռանը.
Շուռ տըվավ, տունը մըռավ,
Աչքըս մընաց կըռանը:
ԱՋ 373

961

Լեռնեըսուն խոր տեղվանը,
Ջուր դոլեր և սեղանը:
Սիրտը եղեր աղվընիկ,
Չի կենար աս տեղանը:
ԲՆԱ 624

***

Ասիլ եմ այս տեղանը,
Ջուր դոլեր փոս տեղանը:
ԲՆԳ 677

962

Ղոլիցը բերեմ ծիրանը,
Ֆոլիցը բերեմ դիրանը.
Լավ դյուլում ասող աղջիկ,
Անուշ կենա բերանըդ:
ԱՋ 375

963

Ելել ես, կ'երթաս որանը,
Կոտրեցավ սեղից մատանը,
Իմ սըրտից սիրած յարանը:
ԲՆԲ 525

964

Խորտա ե(ր) (մեր) Աշխենը,
Կոլոտ ե(ր) (մեր) Աշխենը:
(Կրկնակ)
ՀՄԽԲ 26. ՌՄ 63
ՏԽ 184

***

Խորտա եր մեր Աշխեն,
Կոլոտ եր մեր Աշխեն,
Սիրուն եր մեր Աշխեն:
(Կրկնակ)
ԲՆԱ 566

965

Ուրբաթ խոսացի, շաբաթ իրկունը.
Հեղնաբոխ տարա Կարոյի տունը:
ԺԽ 21

966

Կիրակմուտ իրիկունը,
Ցօրըս եկավ մեր տունը.
Խոլվաթ չեր ենտեղ մեղի,
Մըտել ենք հավաբունը:
ՀՄԽԲ 25

Կիրակմուտաք իրիկունը,
Աբի դընանք մեր տունը.
Թե ընտեղ խոլվաթ չեյավ,
Կըմըտնենք հավաբունը:
ՏԽ 177

967

Բուխերկի կողքի ձունը,
Անուշ եր հոր տան քունը.
Բարով կուգար աշունքը,
Ֆեղի տանեմ մեր տունը:
ՀԺԵ 119

968

Մարեըրին թերթևի ձունը,
Բաղեըրին ալման հունը.
Իմ յարըս մին խոսք ասեց,
Կոտրեց սըրտիս տունը:
ԱԳ 267. ԲՄ 147

969

Մարգի մէջի խղճունը,
Ցողի, ծաղ, գընա տունը։
Ցաւիդ աչքը ճամբու յա,
Չի տանում անուշ քունը։

123. Արտի յեղրի խղճունը,
Նանի ծաղ երթամ տունը,
Ցաւիս աչքը ճամբին ա։
3. Մայրիդ աչքը ճամբին ա։

970

Սեվ է չոբանի չունը,
Չեր ուտնի յարիս քունը.
Ջահիլ եյի, չիտեյի,
Վո՛ր մահլին է ձեր տունը։
Տխ 252

234. Տարել ա յարիս քունը.
Ցես զարիբ եմ, չեմ գիտի,
Շանց տըվիք յարիս տունը։
234. Չի տանում յարիս քունը.
Զարիբ եմ, չեմ ճանաչում,
Ջուլյց տըվիք յարիս տունը։

971

Նըստեր է Թոնրատունը,
Երեսը կարմիրատուն է.
Իգամ աչքիդ ի մոտենամ,
Եղնամ հոգուդ ի տունը։
ՀՀ 324

972

Հես ա չինել ես տունը,
Չի տանի ղըշան քունը.
Մի թասով գինի բերիք,
Շընհավորեմ ես տունը։

973

Ես մեր տունը, բարձր տունը,
Դուն ատրար իմ անուշ քունը։
ԿԺԵ 61

974

Անտոնի ձիու բաշը,
Աչխանին դըբին նաշը։
ՌՄ 63. Տխ 185

975

Շինել են աղիղիս նաշը,
Ել վո՞նց ծածկեմ չաղաշը.
Առավոտուց իրիկուն
Լացն է իմ հացն ու ճաշը։
ԲՍ 127

Կայնել ես դուռն բաշը,
Տես՝ կայնել ես ձեր դուռն բաշ։

976

Հարըրբանի դամեչը,
Հերիք բըռնես իմ վեչը.
Ես քեզի առնողը չեմ,
Կըմանիս մեր սև եչը։

977

Դորել է դուքինին եչը,
Չեմ առնի յարին դեչը։

978

Ոչխարն երեր եմ դ՞ոչը,
Գինիկի լեզուն խոշ է.
Ես մեռնիմ պըղտի յարին,
Ամանաթ յարը բոշ է։
ԱԳ 97. ԲՍ 148

123. Ոչխարը զարկի դ՞ոչը,
Գըղտիկի լեզուն խոշ է.
Մեռնիմ պըղտիկի լեզվին։
ԱՋ 390

979

Մեր բաղչի ճերմակ ղուչը,
Իմ յարի դուխած թուչը.
Ցես իրանեն վարդն ուզի,
Ինչն ինձի տըվավ փուչը։
ՀԺԵ 125

980

Ներխուն ա ներխուն ղուշը,
Կարմիր ա յարխս թուշը.
Վա՛յ, ջուրըն դա, ինձ տանի,
Վտառը ծակել ա փուշը:
ԲՕ 157

981

Վարդևանն ելավ դաշը,
Հարուքին դըրին նաշը.
Նարաթ տարեք հայրիկին,
Թաւիել են դուռը, բաշը:

982

Երեվրնաւ կուգա նուշը,
Ջու ձեռքը կա ոսկե գուշը,
Աբի պաղնեմ կարմիր թուշը:
ՋԲ 19

983

Ծիրան եմ քաղել նուշը,
Պըտղընգիս վարդի փուշը.
Փունջ կապեմ, ապըրըմ տամ,
Պաչ անեմ կարմիր թուշը:
Ա.ԺՄ. 55

984

Քաղեցի խոտը, մաղըս ե փուշը,
Աբսենը պաչեց Հեղնարի թուշը:
ԺԽ 21

***

Կայնել ես բաղի մեջը,
Տես՝ Ա՛յ ոզա, դու բաղի
մեջին:

***

Կաքաւ եմ քարամեջը,
Տես՝ կաքաւ եմ քարամիջին:

985

Ի՞նչ ես կայներ ուեյրին մեջը,
Դեսքնուր առնեմ, ելլեմ խեչը.
Գըրկելու ե բարակ մեջքը,
Պաղնելու ե ալ երեսը:
ՌՆՄ. 671

***

Կաղզման ձորին մեջը,
Տես՝ երեվան ձորամիջին:

986

Առել եմ ձեռքս փունջը,
Թաք եմ կացել ես քունջը.
Վոր պատուեն, թիքա անեն,
Ցես չեմ առնի են մունջը:
ՀՄԽԲ 25

123· Ձեռքս առել եմ փունջը,
Ցարխս հետ մըտել քունջը,
Թիքա–թիքա վոր անեն:
Տ

987

Պապոքի ծառը ելավ ծիծեռը,
Հեղնարը բըռնեց Աբսենի ձեռը:
ԺԽ 22

***

Մուշնըվա ջուրն եր առուը,
Տես՝ ... առուն ա:

988

Ձեռներըդ խաչել, կայնել ա դուռը,
Երեսը կարմիր, նըման եր նուռը:
ԺԽ 21

989

Ցարըս կայնել ե դուռը,
Գառիկն ե դրել նուռը.
Աստված սիրես, պատ ըմ առուր,
Ախըր յես եմ քու դուլը:
ԱՆ 204

***

1—4· Տընեն ելար, կայնար ի պատ,
Քու ձեռ իզեր ջուխտակ ի նուռ,
Աստված սիրես, ձի պատ ըմ առուր
(առու):
ՀԺԽ 81

***

Ընչի՞ դըրիր եղ դո՛ւռը,
Գոտիկըդ դըրիր նուռը.
Ցես կայնա ջաղլի դուռը,
Ընչի՞ կայնար կըտուրը:
ՀԺԵ 116

Հմմտ. Իմ յարը դուռն ա դըրել:

990

Բաց արի բաղի դուռը,
Ուղեցի խոնչա նուռը.
Խոնչա նուռը ի՞նչ անեմ,
Ուղեցի յարիս կուռը:
ԱՋ 381

Դընացի բաղիս դուռը,
Դուս բերան չըհանուռը.
Շըհանուռը ի՞նչ անեմ,
Ուղում եմ յարիս կուռը:
ԱՋ 382

Կըքյինիմ բաղես տոռնը,
Պիրիմ մին սինի նոռնը.
Սինի նոռնը հի՞նչ անիմ,
Կ'ողիմ իմ յարեն կոռնը:
ԱԺԸ 27

991

Ոխտը ոթախ մի դուռը,
Ցընծում ա միջի նուռը.
Իմ սիրելի բըլբուլը,
Ընկել ա դրոնե դուռը:
ԱԺԱ 62

992

Ուռի կրջարդեն դուռը,
Ջիմ հասնիր փեղքին դուռը.
Ցես քեզի մատնիս տրվի,
Խասաբխանեչին դուռը:
ԲՆԱ 624

993

Ենոր եկա ձեր դուռը,
Սիրտս մըտավ քո սուրը.
Երնեկ եսոր ինձ հյուր գաս,
Քո ձեռովը ինձ ջուր տաս:

994

Աղջի, արի մեր դուռը,
Քեզ կըտամ Գյանջա նուռը.
Երնեկ կըտամ են որը,
Վոր կըրրոնեմ քո կուռը:

995

Աչնանը բուռնի կը ուռը,
Քեղի տեսա ժամի դուռը,
Գըլուխըդ կախ, ճիտըդ ծուռը:
ՋԲ 20

996

Ջաղացի աչկի կուռը,
Կը ցընծար միջի դյուռը.
Վա՛յ, իմ սիրած բիւլբիւլը,
Քաչեցին խանի դուռը:

34. Վա՛խ, իմ սիրած բըլբուլը
Քաչել են խանի դուռը:
3. Ա՛խ, իմ սիրած բիւլբիւլին:
ՏՒ 179

1. Ջաղացի յեսի կուռը:
ՌՄ 135. ԲՍ 123

***

124. Ջաղացիս աչոյ կուռը,
Կը գընկա միջի դյուռը.
Քարչեցին խանի դուռը:
ՔՀ 162. ԱԴ 168

Ջաղջի աչի դյուռը,
Կը ցընծա մեջի դյուռը.
Եղ իմ սիրած բիւլբիւլը
Քաչել են խանի դուռը:
ՀԺԵ 120

Ջաղացի աչի կուռը,
Կը ծընծա միջի դյուռը.
Վա՛յ, իմ մեկիկ ախպորը՝
Քաչած ա մելքի (վ. խանի)
դուռը:

997

Անց կենամ դեսի կուրը,
Բաղնեմ մի դաստա նուրը.
Ով իմ սիրածն ինձ չի տա,
Կըքաշեմ քյոխվի դուրը:
ԱԴ 165

14. Անցնեմ դեսի են կուրը:
Կըքաշեմ խանի դուրը:
ՏՆ 226
4. Կըքաշեմ խանի դուրը:
ՔՀ 163

Գեսի են դոլը հուրը,
Բաղնեմ մի դաստա նուրը.
Ով իմ սիրածն ինձ չը տա,
Կը քաշեմ խանի դուրը:
ՍՋ 380

998

Արադն անցա են կուրը,
Բաղնեցի Գյանջա նուրը.
Ցես չեմ առնի են ծուրը,
Ինձ կըքըցնեմ Սեվ ջուրը:

1. Արադն անցա Ղարսա կուրը:
4. Կ'ելթամ, կընկնեմ Սև ջուրը:

123. Ա՛յ, ես կուրը, են կուրը,
Բաղել եմ Գյանջա նուրը.
Ցես ես ծուրը չեմ առնել:
ԱԺԱ 50

999

Առուն անցա են կուրը,
Բաղեցի դաստա նուրը.
Իմ սիրածն ինձ տըվեք,
Աչքըս չըմընա են դուրը:
1. Անցա ճամբու կուրը:

1000

Ա՛խ, ես կուրը, են կուրը,
Բաղեցի գյանջու նուրը.
Ցես իմ սիրածը չառա,
Աչքըս մընաց են դուրը:
ՌՄ 112

1001

Ջըրի են կուռն, ես կուրը,
Բաղել եմ դաստա նուրը.
Սիրել եմ, տանել պըտեմ,
Թող տանեն չահի դուրը:
ԱԺԱ 60

1002

Ջըրիս են կուռն, ես կուրը,
Բաղեցի թևիշով նուրը.
Ցես չեմ ուղում եղ նուրը,
Ինձ տարեք իմ յարի դուրը:
ԱԺԱ 60

1003

Երեվընու կուպա նուրը,
Դու կայներ ես դեմի դուրը,
Հարուր մանեթ կուտամ չուրը:
ՋԲ 20

23. Ինձի տարան քեհուն դուրը,
Հարուր մանեթ տըվի չուրը:
ՋԲ 19

***

Երեվանու բերին նուրը,
Բենգի տարան ժամի դուրը,
Հարուր մանեթ տըվի չուրը:
ԱԵ 206

2. Ինձի տարան դլալնու դուրը:
ՏՆ 87

1004

Ձեռիս ա դինու թասը,
Եկավ հասավ մեծ պասը.
Վոր ինձ կախեն՝ չեմ ուսիլ
Ցես են վոսպով սըպասը:
ՏՆ 199

1005

Դու հադեր ես ալվան խասը
Բարով մաչես դըլխիդ ֆասը,
Քու ոանեըուդ դեղին մասը:
ՋԲ 19

1006

Աղվոր մին և կայներ դրանը կեսը,
Շարեր ոսկի ս՛ արծաթ ձրդեր
երեսը.
Հազար ոսկի կ՛արժե, աղվոր, քու
տեսը:
ՀՍ. 416

***

Աղվոր մըն և կայներ դրանը կեսը,
Աչոք ունոք կ՛ընե՝ եկո՛ւ մեր ներսը.
Ոսկի քամար մն և կապեր, կըզբխտե
մեջքը.
Հազար ոսկի կընե աղվորին տեսքը:
ԲՆՍ. 334

1007

Ելեր ես, կայներ ես դուսը,
Մազերդ ձրդեր ես հուսը.
Երեսդ կաթե կը լուսը:
ՋԲ 18

1008

Գընա, արի, ման արի,
Լուսնյակի լուսը,
Արտերի բուսը.
Կոմսոմոլ աղջիկ
Չի մընա դուսը.
Վոր մընա դուրսը,
Չի անցնի կուրսը:

1009

Մազերիդ սըրտուռ հուսը,
Թափեց աչքերիս լուսը.
Աչքերիս դեղ ու դարման
Գըտի ընկի վո՞ր բուսը:
Տի 149

1010

Հարսնը քյընեց կալավը,
Կյըմքըրի տըվավ հալավը.
Ըսդից Թա մին յես յեչի,
Ճարըն ընդավ կյոլավը:
ԱԺԸ 20

«Հարսը դնաց կալովը,
Կարմրի տըվավ հալավը.
Ուզեց Թե մին յես նայի,
Ճարըն ընկավ կուլովը»...

***

Աղջիկը քընաց կալավը,
Գըսպդի տըվավ հալավը.
Ոզեց վոր մեռ յեչի.
Նշանածն ընկավ կոլավը:
ԲՕ. 142

***

Են տըղան քյընեց կալավը,
(Իմ յարը քյընեց կալավը).
Հըեսկեն*) ընկավ քոլավը,
Ասից Թա մին յես յեչի
Նըշանածն ընդավ կյոլավը:
ԱԺԵ 45

*) Հեսկին:

***

Ախչի, քինի** կալավը,
Կիրմիրի կոտա հալավը.
Կ՛ասիս Թա դըպ՛եդ յեչիս,
Մին տըղա կ՛ընդնե կոլավդ:
ԱՒ 112

**) Գնա:

1011

Հենց վոր ծագի արեվը,
Ֆեզի ղըրկեմ բարեվը.
Իմանամ՝ դուս իմ յարն ես,
Ելնեմ, ելնեմ վերեվը:
ՀՄԽԱ. 30

124. Նոր ա ծագկել արեվը,
Ո՞ւմ հետ ղըրկեմ բաքեվը.
Ելնեմ, ելնեմ սարերը:

***

Ալավոտը արեվը,
Նամակ ղըրկես՝ բարեվը.
Ղըրկած նամակիդ մեռնեմ,
Կ՛առնեմ, կ՛ելնեմ վերեվը:
Տես՝ արեվ նոր ա ծագկիր ա:

1012

Առավոտուն ցաթեց կարմիր արեվը,
Սղկեկ, բեր պաղնեմ ունքերդ վերեվը,
Սասված պահե սիրականիդ արեվը:
ԲՆՍ. 671

1013

կարբի ընկել ա հովը,
Ծարըս ընկել ա ծովը.
Առաված սիրեք, չահէլնեը,
Ինձ քըցնէք յարիս քովը:
ԲՍ 137

***

Ամպը քըցել ա հովը,
Տես՝ Սև ամպը քըցել ա հով:

1014

Ջրնել եմ ամպի հովը,
Պրատել եմ խորունկ ծովը.
Եսոր կաց ու համբերի,
Եղուց արի իմ քովը:
Տի 193

1015

Կաղըվլանու ամպի հովը,
Փերուշան ես, հալիդ դուրբան.
Վարդիկհերի վանքի քովը
Բռնած խաղցած պարիդ դուրբան:
ՌՄ 120

24. *Փերուշան ես, հալիդ մատաղ.*
Բըռնած խաղցած պարիդ մատաղ:
Տի 108

***

Ջուարի ամպի հովը,
Ուխտ եթալու հազար մովը,
Բըռնած խաղցած խաղիդ դուրբան:
ՀԺԵ 117

Տես՝ «Բու ազդր ջեյրան ե գաթիխ»...
«Ամպ ու քյամանին պընդած»:
«Հազել եմ ալվան ռախտը»:
«Ջեռնեցդ դրել եմ հինեին»:

1016

Կայնել եմ ամպի հովը,
Աղջիկ, արի իմ քովը.
Ջուռով մի դըժվացընի,
Տանի, քըցի սև ծովը:
Տի 170

1017—8

Ոդուն քաշեց սարի հովը,
Տերսխեն Տեր-Ղուկասովը:
ԿԺԵ 36

1019

Սիրտ, ինչ ենեմ քու խետը,
Ջոր առուն կապիր գետը.
Ոդին մեռնելով յետը,
Թող խերը չերթա խետը:
ՀԺԵ 110

1020

Հազել եմ ալվան ռախտը,
Դիլբար, ընկա յետ քու բախտը,
Սեյրանից յետ գալած վախտը:
(Աշուղական?)
ՌՄ 120. Տի 109

1021

Ջուրը խըմեցի, դըրեցի տախտը,
Սիրել եմ, կառնեմ, ես և իմ բախտը:

1022

Ջայլերին մեկի ծիլ խոտը,
Պալտկի անուշ հոտը.
Կոտրի դուշմընի ոտը,
Ձիդուց դեր իմ մոտը:
ՀԺԵ 122
1. Ջայլերի ճըլախոտը:

***

Սարի վըրի (վ. դըլախ) ծիլ խոտը,
Ջան ոըղի անուշ հոտը.

Ախ՝ կանչեմ իմ մոտը,
Կոտրի դուշմանի վոտը:

***

Ալագյազի ծիլ խոտը,
Շան տըղի անուշ հոտը.
Ուզի՝ կանչի իմ մոտը,
Կոտրեր դուշմանի վոտը:
3. *Աաա՝ թող դա իմ մոտը:*

***

Ջըրի միջի ճիլ խոտը,
Ջան տըղի անուշ հոտը.
Ջրի միջին հավուզ ե,
Հաղինըդ դանավուզ ե:
ՌՄ 99. *ԱԴ* 165

Տես՝ Ջրի միջի ճլախոտ:

1023

Սարեն վեր եկա արտը,
Քաղեցի դաստով վարդը.
Իմ սիրածը չըտըվին,
Մեռներ սարքի մարդը:

1024

Ելեր ես, երթաս կը արտը,
Ճակատըդ դըրեր ես վարդը,
Դու վառեցիր գեղի մարդը:
ՋԲ 19

1025

Մեր տան կըշտի կանաչ արտը,
Հեչ չիմացար դու իմ դարդը,
Ձեռդ առել ես կարմիր վարդը:
ՏԽ 99

1026

Ախր երթանք մեր արտը,
Քաղենք բոլորի վարդը.
Ով որ ինչ կուզե՝ ասե,
Դու յես իմ սիրած մարդը:

1027

Մեր բաղի Թաղա բարը,
